



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ
3(107) 2022






ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ
3(107)2022



ISBN 1829-1155

Խմբագրական խորհուրդ՝

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ, Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ֆ. ԹՈԽՅԱՆ,
Ա. ԹՈՒՆՅԱՆ, Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ, Յ. ՆԱԶԱՐՅԱՆ, Է.
ՇԱԹԻՐՅԱՆ, Ա. ՎԱՂԱՐՇՅԱՆ

Գլխավոր խմբագիր՝

Ի.գ.թ., դոցենտ Ա. Փխրիկյան

Խմբագիր՝

Ս. Խաչատրյան

Տեղեկագրում տպագրվող գիտական հոդվածներն ամբողջությամբ արտահայտում են հեղինակների դիրքորոշումներն ու վերլուծությունները և չեն նույնանում Մահմանադրական դատարանի սլաշտոնական դիրքորոշումների հետ: Մահմանադրական դատարանը սլաշտասխանատվություն չի կրում հոդվածների հեղինակների արտահայտած կարծիքների համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

- ՄԱՐԶՊԵՏՆԵՐԻ ՆՈՐՄԱՏԻՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԱՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ –
Ա. ՂԱՄԲԱՐՅԱՆ, Ռ. ԽԱՆԴԱՆՅԱՆ9
- ՉՃԱՆԱԶՎԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ) - **Վ. ԴԱՎԹՅԱՆ**.....43
- ՊԵՏԱԿԱՆԱՍՏԵՂԾ ՀՌՉԱԿԱԳՐԵՐԻ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ –
Ա. ՓԽՐԻԿՅԱՆ, Ֆ. ԱՂԱՔԵԿՅԱՆ55
- ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ –
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Շ. ԳՐԻԳՈՐՅԱՆ72
- ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆ. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ –
Լ. ՀԱԿՈՐՅԱՆ, Է. ԱՍՐԻՅԱՆ84
- ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՀԱՏՈՒԿ ՄԱՍՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՆՑԱՆՔԸ ԾԱՆՐԱՅՆՈՂ ՈՐՈՇ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՄԵԿՆԱՔԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ –
Ս. ՅՈՒՉԲԱՇՅԱՆ, Ս. ՀԱԿՈՐՅԱՆ96
- ԵՐԵՒԱՅԻ ՏԵՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԽՈՉԸՆԴՈՏԵԼՈՒ ՀԱՆՑԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱՎՈՐ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ –
Դ. ՕՀԱՆՅԱՆ110
- ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՏ ՑՈՒՑՄՈՒՆՔ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ (ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ) - **Ա. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ**120

3(107)2022
 ◆ յԵՂԵԿԱՅԻ
 ◆ ՏԵՂԵԿԱՅԻ
 ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

- ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԻ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ – Հ. ՍԱՐԿԻՍՈՎ129

II. ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (1652-1666)

- «ԽԱՂԱՂ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1652, 31 մայիսի 2022 թվականի)142
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ149
- 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՔՍԱՏՈՒՐՔԵՐԻ (ՀԱՄԱՐԺԵՔ ԱՅԼ ՏՈՒՐՔԵՐԻ, ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ) ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԵԳՐԵԼՈՒ ԵՎ ԲԱՇԽԵԼՈՒ, ԴՐԱՆՔ ՈՐՊԵՍ ԵԿԱՄՈՒՏ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՐՅԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՄԱՏԵՂ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1653, 31 մայիսի 2022 թվականի)158
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ165
- ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 3-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1.2-ՐԴ ՄԱՍԻ, 79-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 7-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 3(107)/2022

ՕՐԵՆՍԳՐՔԻ 287-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝
 ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
 ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ
 (ՍԴՈ – 1654, 31 մայիսի 2022 թվականի)174

- ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ
 ՎՐԱ՝ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 9-ՐԴ ԵՎ
 9.1-ԻՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
 ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1655, 1 հուլիսի 2022 թվականի)199
- 2018 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-ԻՆ ԴՈՒՇԱՆԲԵՆՈՒՄ
 ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԽԱՂԱՂ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՏԻԵՋԵՐԱԿԱՆ
 ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ
 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ» ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
 ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
 ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1656, 12 հուլիսի 2022 թվականի)222
- 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-ԻՆ ԵՎ ՄԱՐՏԻ 18-ԻՆ
 ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ
 ՎԵՐԱԿԱՌԻՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
 ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ
 ԶՈՐՐՈՐԴ ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
 ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
 ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
 ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ
 (ՍԴՈ – 1657, 12 հուլիսի 2022 թվականի)225
- 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 12-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
 ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ՀԱՄԱԴԱՇՆՈՒԹՅԱՆ
 ՄԻՋԵՎ՝ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12-Ի՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
 ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ՀԱՄԱԴԱՇՆՈՒԹՅԱՆ
 ՄԻՋԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ
 ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ
 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
 ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
 ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1658, 12 հուլիսի 2022 թվականի)231

5 ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԿԻ ◆ 3(107)/2022

- «ԵՎՐԱՄԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԻ ՄԵՋ ՄՏՆՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1659, 12 հուլիսի 2022 թվականի)237
- ՊԱՐԳԵՎ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 1226-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1660, 12 հուլիսի 2022 թվականի)242
- ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 15-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1661, 27 սեպտեմբերի 2022 թվականի)262
- 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 9-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1662, 4 հոկտեմբերի 2022 թվականի)279
- «ԵՎՐԱՄԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՈՎ ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ԴՐԱՄԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՀԱՆՑԱՎՈՐ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ՍՏԱՅՎԱԾ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆԸ (ԼՎԱՑՄԱՆԸ) ԵՎ ԱՀԱՔԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆԸ ՀԱԿԱԶԴԵԼՈՒ ՈԼՈՐՏՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1663, 4 հոկտեմբերի 2022 թվականի)284

- «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1664, 4 հոկտեմբերի 2022 թվականի)290
- «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՀԵՏԱԳԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱՎԻԳԱՑԻՈՆ ԿԱՊԱՐԱԿՆԻՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1665, 4 հոկտեմբերի 2022 թվականի)298
- ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ ԱՌՆՎԱՁՆ ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 121-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1666, 11 հոկտեմբերի 2022 թվականի)304
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ա. ԽԱՁԱՏՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ325

III. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԵՐԵՎԱՆՈՒՄ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ330
- ԴԱՏԱՎՈՐ ՎԱՀԵ ԳՐԻԳՈՐՅԱՆՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՐԱՎԱՖՐԻԿՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹՈՂ ԴԱՏԱՎՈՐ, ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ԱԼՔԻ ԶԱՔՍԻՆ...332

3(107)/2022
 ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 ՏԵՂԵԿԱՏՎԻ

- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏԿԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ.....334
- ՍԴ ՆԱԽԱԳԱՀԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ Է ՀՂԵԼ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀԻՆ.....336
- ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀՈՒՇԱԳԻՐ.....338

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԵՐՆԴԻ ՀԵՏ

- ԴԱՏԱՎՈՐ ՎԱՀԵ ԳՐԻԳՈՐՅԱՆՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ «ԱՄՍՈՒՄՅԻՆ ԴՊՐՈՑ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ..339

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

- ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ.....340
- ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....342
- ՀԱՅ-ՆԻԴԵՐԼԱՆԴԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՂ ԾՐԱԳՐԻ ԱՄՓՈՓԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ.....344

3(107)2022



ՏԵՂԵԿԱԳԻՐ



ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ



ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ

Հայ-ռուսական համալսարանի
իրավունքի փեսության
և սահմանադրական իրավունքի
ամբիոնի վարիչ,
իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան



ՌԱՖԻԿ ԽԱՆԴԱՆՅԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի դատավոր,
Հայ-ռուսական համալսարանի իրավունքի
փեսության և սահմանադրական իրավունքի
ամբիոնի ավագ դասախոս,
իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ,
Հայ-ռուսական համալսարանի դոկտորանտ

**ՄԱՐԶՊԵՏՆԵՐԻ ՆՈՐՄԱՏԻՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ
ՆԿԱՏԱՄԲ ԴԱՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ
ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Ամփոփագիր

Սույն աշխատանքում քննարկվում են ՀՀ-ում մարզպետների (այսուհետ՝ մարզպետի) կողմից նորմատիվ իրավական ակտի (որոշում) ընդունման իրավասությունը և դատական վերահսկողությունը ՀՀ վարչական դատավարությունում: Մարզպետի կողմից նորմատիվ իրավական ակտի ընդունման օրենսդրական կարգավորման իրավական վերլուծությունը հնարավորություն տվեց բացահայտել կարգավորումներում առկա էական թերությունները:

Սույն աշխատանքի նպատակն է մարզպետի ակտերի ընդունման գործունեության համապարփակ վերլուծության միջոցով պարզել այն իրավական հիմքերը, որոնք որոշում են տարածքային կառավարման մարմինների վերաբերյալ օրենսդրության կատարելագործման ուղղությունը, իրավական գործունեության իրավական կարգավորման խնդիրները:

Հայտնաբերված խնդիրների ուսումնասիրությունն իրականացվել է օրենսդրության սահմանման միասնական մոտեցում հաստատելու, դրա դատավարական բնույթը նշելու և իրավունքի նորմերի ստեղծումը կարգավորող օրենսդրությունը բարելավելու նպատակով:

Ուսումնասիրության շրջանակներում վերլուծվել են նորմատիվ ակտերի ընդունման կանոնների և կարգի վերաբերյալ առկա օրենսդրական պահանջները, ուսումնասիրվել են գիտական աշխատանքները, հաշվի են առնվել ժամանակակից իրավաստեղծ պրակտիկայի առանձնահատկությունները: Նորմատիվ իրավական ակտերի ընդունման գործընթացն ուսումնասիրվել է հետևյալ փիլիսոփայական մոտեցումների, ինչպես նաև ընդհանուր գիտական (վերլուծություն և սինթեզ, ընդհանրացում, համակարգի վերլուծություն, արստրակցիա և այլն) և ճանաչողության մասնավոր գիտական մեթոդների (ձևական-իրավական, իրավական մեկնաբանության մեթոդ) հիման վրա: Մի շարք գիտական մեթոդների օգտագործման արդյունքում ձեռք է բերվել համակարգային գիտելիքներ մարզպետի կողմից ընդունվող նորմատիվ ակտերի էության վերաբերյալ:

Հիմնաբառեր. նորմատիվ ակտ, անհատական իրավական ակտ, որոշում, մարզպետ, գործադիր իշխանություն, ՀՀ վարչական դատարան:

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Մարզպետի նորմատիվ որոշումներ ընդունելու իրավասությունը մինչև 2018 թ.

Մինչև 2018 թ. սահմանադրական փոփոխություններով պայմանավորված բարեփոխումները, մարզպետի կողմից նորմատիվ իրավական ակտ (որոշում) ընդունելու իրավասությունը կասկածի տեղիք չէր տալիս. այն պաշտոնապես ճանաչված էր: Այսպես՝ «Իրավական ակտերի մասին» 2002 թ. ՀՀ օրենքի 6-րդ հոդվածում թվարկված էին նորմատիվ իրա-

վական ակտեր ընդունելու իրավասություն ունեցող սուբյեկտները, որոնց շարքում նախատեսված էր նաև մարզպետը: Մարզպետի որոշումները գերատեսչական ակտեր էին¹:

Մոտեցումը փոխվեց 2018 թ. ՀՀ իրավական համակարգում կատարված փոփոխությունների ընթացքում, երբ սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի առանձին անդամներ նոր խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասը փորձեցին մեկնաբանել այնպես, թե իբրև ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ ընդունելու իրավասությամբ օժտված են հանրային իշխանության այն մարմինները, որոնք ՀՀ սահմանադրությամբ ունեն նման իրավասություն: Իրավաբան գիտնականների միջև այս հարցի շուրջ ծագեցին տարածայնություններ, որի պայմաններում Օրենսդիրը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 2018 թ. ՀՀ օրենքով խուսափեց թվարկել, թե որ մարմիններն են իրավասու ընդունել ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:

1.2. Մարզպետի որոշումներ ընդունելու մասին օրենսդրական կարգավորումը 2018 թ. հետո

Օրենսդիրը «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանել է, որ մարզպետն ընդունում է որոշումներ: Օրենքով հստակեցված չէ, թե մարզպետն ինչ բնույթի (տեսակի) որոշումներ կարող է ընդունել՝ միայն ներքին և անհատակա՞ն, թե՛ նաև արտաքին ազդեցությամբ նորմատիվ բնույթի որոշումներ²: Բնականաբար, այս հարցի համար հիմնարար նշանակություն ունի ՀՀ սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի մեկնաբանությունը, որի վերաբերյալ, ինչպես նշվեց, հայ իրավագետների մոտեցումները կիսվել են:

Իրավաբանների մի մասը (Գ. Դանիելյան, Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան, Թ. Շաքարյան) կարծում է, որ ՀՀ սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասից բխում է, որ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ կարող են ընդունել ինչպես սահմանադրի կողմից նման

¹ Ուժը կորցրել է 07.04.2018 թ.:

² Իրավական ակտերը ներքին-անհատական-նորմատիվ տեսակների խմբավորելիս հիմք ենք ընդունել «Իրավական ակտերի մասին» 2002 թ. ՀՀ օրենքի և դրան հաջորդած՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 2018 թ. ՀՀ օրենքի կարգավորումները:

լիազորությամբ ուղղակիորեն օժտված մարմինները, այնպես էլ Օրենսդրի կողմից լիազորված և Սահմանադրությամբ նախատեսված մարմինները¹, իսկ մյուս մասը (Վ. Պողոսյան, Ն. Սարգսյան, Գ. Հովհաննիսյան) կարծում է, որ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ կարող են ընդունել միայն Սահմանադրությամբ նախատեսված այն մարմինները, որոնց Սահմանադիրն է վերապահել ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ ընդունելու իրավասություն² (այս մեկնաբանությունը պայմանական կանվանենք «գերմանական մոդելի» մեկնաբանություն):

Վերջին խումբ հեղինակները փորձում են առավելապես գերմանական սահմանադրական ավանդույթներով և պատմական առանձնահատկություններով պայմանավորված կարգավորումները ներմուծել ՀՀ սահմանադրական համակարգ, սակայն այդ ռեցեպցիան կատարում են հատվածային եղանակով, որը բացասական է ազդում ՀՀ պետական կառավարման համակարգի արդյունավետության, իսկ երբեմն նույնիսկ՝ գործունակության վրա: ՀՀ սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի «գերմանական մոդելի» մեկնաբանության խոցելի կողմերի մասին կարելի է ներկայացնել մի շարք փաստարկներ, սակայն այժմ միայն համառոտ նշենք, որ Սահմանադիրը չէր կարող նպատակ հետապնդել սահմանել ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելու հարցում այնպիսի կարգավորումներ, որոնք կզրկեին Օրենսդրին Սահմանադրությամբ մատնանշված (նախատեսված) մարմիններին, օրինակ՝ մարզպետներին, իրենց գործառույթներն իրականացնելու ներդաշնակ միջոց (լիազորություններ) վերապահելու հնարավորությունից: Եթե Սահմանադրությամբ նախատեսված որևէ մարմնի գործառույթի իրականացման ներդաշնակ միջոցը նորմատիվ բնույթի ակտերի ընդունումն է, ապա Սահմանադիրը չէր կարող սահմանել այնպիսի կարգավորում, որը կխեղաթյուրեր «գործառույթ-ինստիտուտ-լիազորություն» սահմանադրական եռամիասնության ներդաշնակությունը (այս մասին հաջորդիվ):

¹ Դանիելյան Գ., Իրավաստեղծ գործունեություն և իրավաբանական տեխնիկա. ուսումնական ձեռնարկ: Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2021, էջեր 33-34, Պետության և իրավունքի տեսություն: Գիտ. խմբ. Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան, 3-րդ հրատ.: Եր., 2018, էջեր 452-453:

² Պողոսյան Վ., Սարգսյան Ն., Հայաստանի Հանրապետության 2015 թ. խմբագրությամբ սահմանադրությունը. համառոտ մեկնաբանություններ: Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2016, էջեր 29-30, Հովհաննիսյան Գ., Ընդհանուր իրավագիտություն և իրավաբանական մեթոդաբանություն: Եր., 2020, էջ 115:

1.3. Մարզպետի՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ ընդունելու իրավասությունը ՀՀ սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի տեսանկյունից

Մարզպետը ՀՀ սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի տեսանկյունից իրավասու է ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր, եթե Օրենսդիրը նրան նման լիազորություն վերապահի: Նախ՝ մարզպետը ՀՀ սահմանադրությամբ նախատեսված մարմին է, քանի որ ՀՀ սահմանադրության 160-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված է մարզպետի նշանակման և ազատման կարգը, նրա սահմանադրական գործառույթը: Երկրորդ՝ մարզպետը «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով լիազորված է ընդունելու որոշումներ, այդ թվում՝ նորմատիվ բնույթի (այս մասին՝ հաջորդիվ):

Ընդ որում, ՀՀ սահմանադրական համակարգի տեսանկյունից մարզպետին ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելու իրավասությամբ օժտելը բնական է, քանի որ մարզպետն ըստ էության «տարածքային կառավարություն է», այսինքն՝ մարզպետի գործառույթները և լիազորությունները ՀՀ կառավարության գործառույթների և լիազորությունների հիմնական մասի տարածքային առումով խտացված և կոնցենտրացված արտահայտությունն են: Պարզապես ՀՀ կառավարությանը ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ ընդունելու լիազորությամբ օժտել է Սահմանադիրը, իսկ մարզպետին՝ Օրենսդիրը:

Մարզպետի՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ ընդունելու իրավասության լրացուցիչ հիմնավորումների նպատակով պետք է պարզել, թե մարզպետն ինչ սահմանադրական գործառույթ է իրականացնում և արդյոք դրա համար նա պետք է օժտված լինի նորմատիվ որոշումներ ընդունելու հնարավորությամբ:

ՀՀ սահմանադրության 160-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մարզպետները համակարգում են պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեությունը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: Արդյո՞ք ենթաօրենսդրական նորմատիվ իրավական կարգավորումը համակարգման գործառույթի իրականացման ներդաշնակ (անհրաժեշտ) միջոց է:

2. Նորմատիվ որոշումներ ընդունելու մարզպետի իրավասության հիմնավորումները

2.1. Նորմատիվ որոշում ընդունելու մարզպետի իրավասության սահմանադրական և օրենսդրական հիմնավորումները

2.1.1. Նորմատիվ որոշում ընդունելու հնարավորությունը՝ որպես մարզպետի համակարգման գործառույթի իրականացման ներդաշնակ միջոց

(a) Համակարգման գործառույթը նորմատիվ իրավական ակտերով իրականացնելը դոկտրինում: Ռուսական վարչական իրավունքի հեղինակավոր մասնագետների խումբը, ամփոփելով գործադիր իշխանության մարմինների նորմատիվ իրավական ակտերի բովանդակությունը, այդ մարմինների նորմատիվ իրավական ակտերով կարգավորվող հարաբերությունների ցանկում նշում են նաև կառավարչական հարաբերությունների տարբեր մասնակիցների գործունեության համակարգումը (կոորդինացումը): Նշված հեղինակները եզրակացնում են, որ Ռուսաստանի գործադիր իշխանության մարմինները համակարգման (կոորդինացման) գործառույթն իրականացնում են նաև նորմատիվ իրավական կարգավորման միջոցով¹: Ընդունելի է նաև տեսության մեջ արտահայտված հետևյալ մոտեցումը.

«Կառավարման նորմատիվ իրավական ակտերի արժեքն այն է, որ պետական իշխանության մարմիններին տրամադրվեն իրենց գործառույթների իրականացման համար անհրաժեշտ լծակներ: Կորցնելով վարչական նորմատիվ իրավական ակտեր արձակելու լիազորությունը՝ պետական իշխանության մարմինները չեն կարողանա երաշխավորել իրենց վերապահված գործառույթների պատշաճ կատարումը²»:

¹ Ују мшаһн տե’u Исполнительная власть в России. История и современность, проблемы и перспективы развития / Под ред. Н.Ю. Хамановой. - М.: Новая правовая культура, 2004:

² Кадетова А.Д. Органы исполнительной власти Российской Федерации в системе субъектов правотворчества // Вестник Университета имени О. Е. Кутафина. - 2019. - № 6 (58). - С. 187-188.

ՍԱՀՄԱՆԱՂՐԱՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ ◆ ՏԵԴԵԿՎԱԳԻՐ ◆ 3(107)2022

Այսպիսով, ռուսական վարչական իրավունքի պրակտիկայում և դոկտրինում անվիճելի է, որ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական կարգավորումը պետական կառավարման ոլորտում համակարգման գործառույթի իրականացման բնական միջոցներից է:

(b) *Մարզպետի համակարգման գործառույթի իրականացման իրավական ձևերը*: Մարզպետը համակարգման գործառույթ իրականացնելու համար պետք է օժտված լինի այդ գործառույթին ներդաշնակ լիազորություններով: Համակարգման գործառույթը և դրանից բխող լիազորությունները մարզպետը կարող է իրականացնել ինչպես կազմակերպական, այնպես էլ իրավական ձևերով, այդ թվում՝ իրավական ակտեր ընդունելու միջոցով:

Մարզպետի կողմից պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների (այսուհետ՝ տարածքային ստորաբաժանումներ) գործունեությունը համակարգելու արդյունավետ իրավական միջոցը տարածքային ստորաբաժանումների համար պարտադիր կատարման ենթակա կանոններ սահմանելն է:

Հարց է ծագում՝ մարզպետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի տեսանկյունից, տարածքային ստորաբաժանումների գործունեությունը համակարգելու գործառույթն իրականացնելու համար ինչ տեսակի իրավական ակտեր ընդունելու լիազորությամբ պետք է օժտված լինի՝ միայն լրկալ (ներքին) և անհատակա՞ն, թե՞ նաև նորմատիվ իրավական ակտեր¹: Գործնականում, մարզպետները համակարգման գործառույթից բխող որոշ իրավական ակտեր, որոնք ակնհայտորեն անհատական բնույթի չեն, զարմանալիորեն որակում են որպես անհատական իրավական ակտեր, կամ պարզապես շրջանցում են իրավական ակտի տեսակը նույնականացնելու հարցը: Օրինակ՝ Լոռու մարզպետը 16.03.2020 թ. ընդունել է «ՀՀ Լոռու մարզի կորոնավիրուսային հիվանդության (COVID19) բերովիից երկրորդային դեպքով (կլաստերային դեպքեր) պայմանավորված արտակարգ իրավիճակների արձագանքման պլանը հաստատելու մասին» № 327-Ա որոշումը (այսուհետ՝ Պլանը հաստատելու մասին որոշում)²: Մարզպետը, Պլանը հաստատելու մասին որոշման մեջ «Ա» տառով նշում կատարելով, այն

¹ Իրավական ակտերի՝ ՀՀ օրենքով տրված դասակարգումը չի համապատասխանում դոկտրինալ առումով իրավական ակտերն ըստ բնույթի՝ անհատական և նորմատիվ տեսակների, իսկ ըստ գործողության շրջանակի՝ ընդհանուր, տարածքային և լրկալ իրավական ակտերի դասակարգման հետ:

² <http://lori.mtad.am/files/legislation/45200.pdf>

համարել է անհատական իրավական ակտ¹, մինչդեռ հաստատված պլանի բովանդակությունն ուսումնասիրելու պարագայում ակնհայտ է դառնում, որ այն որևէ աղերս չունի անհատական իրավական ակտի հետ, քանի որ այն հասցեագրված է ոչ թե անհատապես որոշված պաշտոնատար անձի կամ անձանց, այլ չանհատականացված ինստիտուտներին՝ տարածքային ստորաբաժանման ղեկավարներին: Պետական մարմնի տարածքային ստորաբաժանման կոնկրետ ղեկավարին տրված հանձնարարականը կհամարվեր անհատական իրավական ակտ, եթե հանձնարարականով սահմանված վարքագծի կանոնն իր բնույթով վերաբերեր անհատապես որոշված պաշտոնատար անձին, այսինքն՝ վարքագծի կանոնն իր բովանդակությամբ անբաժանելի լիներ հասցեատիրոջ անձից: Այս իմաստով դժվար է անհատական համարել Մարզպետի հաստատած Պլանի 27-րդ կետը, որով ՀՀ անվտանգության ծառայության Սահմանապահ գործերի, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության, Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի, ՀՀ ոստիկանության համար սահմանել է պարտադիր կատարման ենթակա վարքագծի կանոններ՝ պլանավորել և գնահատել պետական սահմանի անցման կետերում արտակարգ իրավիճակներին պատրաստվածությունը և իրականացվող միջոցառումները, վեր հանել բացերը և մշակել պլան դրանք արագ ուղղելու համար:

Ի դեպ, առանձին մարզպետներ, համանուն Պլանը հաստատելու մասին որոշումը «անհատական - նորմատիվ - ներքին» տեսակների միջև ընտրությունից խուսափելու նպատակով, շարժվել են Պլանը հաստատելու որոշման բնույթի (տեսակի) մասին լռելու պարզունակ ճանապարհով: Օրինակ՝ Արմավիրի մարզպետը 16.03.2020 թ. ՄՈ/82-2020 որոշմամբ հաստատել է Պլանը² և, հակառակ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջին, Պլանը հաստատելու որոշման հերթական համարից անմիջապես հետո դրա բնույթի մասին որևէ նշում չի կատարել:

¹ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի հերթական համարից անմիջապես հետո իրավական ակտում իրավական ակտն ընդունող մարմինը «Ն» (նորմատիվ) տառով նշում է կատարում դրա նորմատիվ բնույթի մասին: Այլ իրավական ակտերում ակտի բնույթի մասին նշումը կատարվում է «Ա» տառով՝ անհատական իրավական ակտի դեպքում, «Լ» տառով՝ ներքին (լոկալ) իրավական ակտի դեպքում:

² <http://armavir.mtad.am/files/legislation/45453.pdf>

Այսպիսով, Լոռու մարզպետի № 327-Ա որոշումը, անկախ որոշման հեղինակի տված որակումից, անհատական իրավական ակտ չէ, ուստի պետք է պարզել, թե «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի տեսանկյունից այդ որոշումն ինչ տեսակի ակտ է՝ ներքին¹, թե՞ նորմատիվ:

Այս հարցին պատասխանելու համար սկզբունքային է, թե **համակարգման գործառույթի շրջանակներում** մարզպետի և պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների հարաբերությունները վարչական հարաբերություններ են, թե՞ ոչ: Բանն այն է, որ ՀՀ պոզիտիվ իրավունքի տեսանկյունից **ներքին (լոկալ) իրավական ակտով** վարքագծի կանոն է սահմանվում այն անձանց խմբի համար, որոնք դա ընդունող մարմնի հետ (...) **վարչական հարաբերությունների մեջ** են («Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ):

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում գործածվող «վարչական հարաբերությունն» հասկացությունը հնարավորություն չի տալիս հստակ կողմնորոշվելու՝ պետական կառավարման ոլորտում այն հասկացվում է միայն ներգերատեսչական վարչական հարաբերությունների կտրվածքով (օրինակ՝ մարզպետի և մարզպետարանի ծառայողների հարաբերությունները), թե խոսքը նաև գերատեսչական և վերգերատեսչական հարաբերությունների մասին է: Այս հարցում փոքր-ինչ որոշակիություն մտցնելու նպատակով հարկադրված ենք քննարկելու համակարգման գործառույթի համատեսական նշանակության որոշ հարցեր:

Համակարգման գործունեությունը, անկասկած, իշխանական գործունեություն է, ուստի համատեղ գործունեության մասնակիցները պետք է ենթարկվեն համակարգող սուբյեկտի կամքին¹, սակայն «պետական իրավասու մարմինների կառավարչական գործունեության բոլոր տեսակներում իշխողականության աստիճանը նույնը չէ: Օրինակ՝ դոկտորինում համակարգման գործունեության դեպքում իշխողականության աստիճանը բնութագրվում է որպես «կրճատված» իշխողականություն²: Իսպանական իրավունքի դոկտորինում նույնպես նշվում է, որ համակարգման դեպքում

¹ Стуканов А. Законность в деятельности органов административной юрисдикции // Законность. - 1998. - № 12. - С. 10.

² Максуров А.А., Макаров И.И. Координация в праве. Монография. - Ярославль: ЯФ МФЮА, 2012. - С. 36.

համակարգող մարմնի գերիշխող դիրքը համակարգվողի նկատմամբ շատ ավելի ընդգծված է, սակայն Իսպանիայի սահմանադրական դատարանը տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության համակարգման վերաբերյալ 27/1987 որոշմամբ նշել է.

«Համակարգումը չի կարող ունենալ վերահսկողության ձև կամ ենթադրել համակարգվող մարմնի հիերարխիկ կամ քվազի հիերարխիկ ենթակայություն: Համակարգումը պետք է ներառի համակարգող և համակարգվող մարմնի համապետել գործունեությունը, պետք է հաշվի առնվի համակարգվող մարմնի դիրքորոշումը, որը պետք է ունենա որոշումներ կայացնելու որոշակի ազատություն: Սա բացառում է համակարգումը բացառապես համակարգվող մարմնի համար իմպերատիվ կարգադրությունների ձևակերպման միջոցով իրականացնելու հնարավորությունը»¹:

Իրոք, պետական կառավարման ոլորտում, ի տարբերություն ներգերատեսչական ստորաբաժանումների գործունեության համակարգման (օրինակ՝ մարզպետի կողմից մարզպետարանի տարբեր ստորաբաժանումների գործունեության համակարգման), տարբեր պետական կառավարման մարմինների գործունեությունը համակարգելու գործառույթին խիստ ենթակարգային հարաբերությունները բնորոշ չեն: Այսպես՝ մարզպետի և գործադիր իշխանության այլ մարմինների տարածքային ստորաբաժանումների (օրինակ՝ մարզպետի և ոստիկանության տարածքային ստորաբաժանման ղեկավարի) միջև հարաբերությունները ո՛չ ներգերատեսչական են, ո՛չ էլ վերգերատեսչական. դրանք գերատեսչական հարաբերություններ են: Այս առումով ընդունելի է վարչական իրավունքի գիտության մեջ առկա հետևյալ մոտեցումը.

«Այն դեպքերում, երբ համակարգող սուբյեկտների համակարգման լիազորությունները պարունակում են ոչ թե վերգերատեսչական, այլ գերատեսչական ենթակայության հարաբերության տարրեր, դրանք իրականացվում են ոչ թե «իշխանություն-ենթակայության» դասական

¹ **Комлев Е.Ю.** Координация деятельности местных органов власти в России и Испании: сравнительно-правовое исследование // Вестник Российского университета дружбы народов. Серия: Юридические науки. - 2022. - Т. 26. - № 3. - С. 641, 642.

ՍԱԳՄԱՆԱՐԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐՈՒՄ
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ 3(107)/2022

ծանցում, այլ կրում են հատուկ «համակարգող երանգավորում», որոնք ուղղված են համաձայնեցմանը¹»:

Այսպիսով, համակարգումն առավելապես ներհատուկ է կառավարչական այն հարաբերություններին, որտեղ դասական ենթակայության հարաբերությունները բացակայում են²:

Ընդ որում, վարչական իրավունքի հայ մասնագետները պետական կառավարման ոլորտում կոնցենտրացիայի սկզբունքի համատեքստում նշում են.

«Մարզպետները մարզերում համակարգման գործառույթ կարող են իրականացնել այն պատճառով, որ կենտրոնական մարմինների (նախարարություններ և այլն) տարածքային ծառայությունները մարզային մարմիններում համախմբված են և այդքանով ստորադասված՝ մարզպետին»³:

Հեղինակները չեն հաստակեցնում, թե մարզային մարմիններում համախմբված ասելով ինչ նկատի ունեն: Եթե խոսքն այն մասին է, որ կենտրոնական մարմինների (օրինակ՝ նախարարությունների) տարածքային ծառայությունները համախմբված են մարզպետարանի կառուցվածքում՝ որպես նրա ստորաբաժանումներ, ապա դրանք այդքանով, անկասկած, ստորադասված են մարզպետին: Օրինակ՝ մարզպետարանի կառուցվածքային ստորբաժանումները՝ քաղաքաշինության վարչությունը, գյուղատնտեսության և բնապահպանության վարչությունը, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությունը, առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունը, կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը, անկասկած, ստորադասված են մարզպետին:

¹ **Максуров А.А., Макаров И.И.** Координация в праве. Монография. - Ярославль: ЯФ МФЮА, 2012. - С. 39-40.

² Ասվածը չի վերաբերում ճգնաժամային իրավիճակներին, քանի որ այս ոլորտի մասնագետներն իրավացիորեն նշում են. «Ճգնաժամային իրավիճակներում նույնիսկ համակարգման գործունեության «կրճատված» իշխողականությունն էականորեն ուժեղանում է»: **Максуров А.А.** Координация деятельности субъектов права в условиях кризиса. - Инфра-М, 2022. - С. 49:

³ Հայաստանի Հանրապետության ընդհանուր վարչական իրավունք: Խմբ.՝ **Թովմասյան Հ., Լուխթերիանդ Օ., Մուրադյան Գ., Պողոսյան Վ., Ռայմսեր Վ., Ռուբել Ռ.:** Եր., 2011, էջ 98:

Եթե խոսքն այն գործադիր իշխանության մարմինների ստորաբաժանումների մասին է, որոնք դուրս են մարզպետարանի կառուցվածքից, օրինակ՝ ՀՀ ոստիկանության տարածքային ստորաբաժանումը, ապա մարզպետը համակարգման գործառույթի շրջանակներում թեև նրանց նկատմամբ ունի «կրճատված» իշխողականություն, սակայն նրանց միջև դասական ենթակայության (ստորադասության) հարաբերությունները բացակայում են:

Այսպիսով, համակարգման մասնակիցները թեև պետք է ենթարկվեն համակարգող սուբյեկտի կամքին, սակայն կազմակերպական առումով միմյանց ոչ ենթակա գերատեսչությունների միջև դասական «իշխանություն-ենթակայություն» հարաբերությունները բացակայում են: Նման իրավիճակում պետության իրավակարգը պետք է հնարավորություն նախատեսի, որպեսզի պետական կառավարման ոլորտում համակարգող սուբյեկտը կազմակերպական առումով իրեն ոչ ենթակա մարմիններին իր կամքը փոխանցի այնպիսի իրավական ձևով, որը համակարգման մասնակիցներին իրավաբանորեն կկաշկանդի:

Եթե վերադառնանք բուն քննարկվող հարցին, ապա կախված «վարչական հարաբերություններ» հասկացության մեկնաբանությունից, այն կարող է ունենալ երկու պատասխան:

Առաջին՝ եթե ներքին (լոկալ) ակտերի համատեքստում («Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում) գործածվող «վարչական հարաբերություն» եզրույթի բովանդակությունը փորձենք բացահայտել «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքով սահմանված պետական կառավարման համակարգի մարմինների վարչաիրավական ենթակայության տեսանկյունից, ապա կստացվի, որ պետական կառավարման մի շարք մարմինների տարածքային ստորաբաժանումները, օրինակ՝ ՀՀ ոստիկանության կամ ՀՀ ազգային անվտանգության ծառայության մարզային ստորաբաժանումները, մարզպետին ենթակա չեն և այդ իմաստով նրանց միջև վարչական հարաբերություններ չեն ծագում, ուստի նրանց գործունեությունը համակարգելու նպատակով մարզպետը պետք է ընդունի նորմատիվ իրավական ակտեր¹:

¹ Համեմատության համար նշենք, որ որոշ նախարարություններ օժտված են վերգերատեսչական բնույթի լիազորություններով, որոշ գործառույթներ իրականացնում են

Երկրորդ՝ Եթե ներքին (լոկալ) ակտերի համատեքստում «վարչական հարաբերություն» եզրույթի բովանդակությունը փորձենք բացահայտել «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի տեսանկյունից, ապա պարզ կլինի, որ որոշ հարաբերություններում մարզպետի և տարածքային կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների ղեկավարների միջև համակարգման գործառույթի շրջանակում առկա է վարչաիրավական «կրճատված» ենթակայություն, այնքանով, որքանով օրենքով մարզպետն իրավասու է հանձնարարություններ տալ մեկ այլ պետական մարմնի տարածքային ստորաբաժանման ղեկավարին: Օրինակ՝ մարզպետն իր իրավասության սահմաններում կարող է հանձնարարականներ տալ մարզում արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառների պետական կառավարման համակարգի մարմնի տարածքային ստորաբաժանման ղեկավարին («Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ): Եթե հիմք ենք ընդունում, որ մարզպետի և նշված մարմինների միջև առկա են վարչաիրավական ենթակարգային հարաբերություններ, ապա մարզպետի՝ մեկ այլ մարմնի տարածքային ստորաբաժանման ղեկավարին հասցեագրված հանձնարարականը կամ որոշումը պետք է համարել ներքին իրավական ակտ:

Այսպիսով՝ **համակարգման գործառույթի շրջանակներում** մարզպետը կարող է ընդունել պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների ղեկավարների համար պարտադիր կատարման ենթակա իրավական ակտեր, որոնք «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի տեսանկյունից ոչ թե անհատական, այլ ներքին (լոկալ) կամ նորմատիվ ակտեր են: Եթե նույն հարցը դիտարկենք իրավաբանական դոկտրինի տեսանկյունից, ապա այդ ակտերը՝ ըստ գործողության ոլորտի լոկալ են (գործում են մարզի տարածքում), սակայն

տվյալ նախարարության համակարգի մեջ չմտնող օբյեկտների նկատմամբ: Այդ գործառույթը կարող է լինել համակարգող՝ առանձին վերցված նախարարությունների գործողությունների անհամաձայնեցվածությունը հաղթահարելու համար: Միջնուղային համակարգման էությունն այն է, որ համակարգվող օբյեկտները կազմակերպական առումով համակարգող սուբյեկտին ենթակա չեն, սակայն իրենց գործողությունները պետք է համաձայնեցնեն նրա հետ: Մինչույն ժամանակ, համակարգող սուբյեկտները կարող են համակարգման նպատակով ընդունել համակարգման օբյեկտների համար պարտադիր միջոցներ: Դա կոչվում է գործառույթային միջնուղային կարգավորում: Այս մասին տես **Чиркин В.Е.** Публичное управление: Учебник. - М.: Юристъ, 2004. - էջեր 187-188:

ըստ բնույթի՝ նորմատիվ ակտեր են (տարածվում են չանհատականացված թվով անձանց նկատմամբ):

Միննույն ժամանակ, «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքում սահմանված են մարզպետի այնպիսի լիազորություններ, որոնք կարող են իրականացվել միայն արտաքին ներգործությամբ նորմատիվ որոշումների միջոցով:

2.1.2. Նորմատիվ որոշում ընդունելու հնարավորությունը՝ որպես մարզպետի՝ օրենքով նախատեսված լիազորությունների իրականացման միջոց:

Մարզպետի՝ օրենքով նախատեսված որոշ լիազորությունների իրականացումը ենթադրում է արտաքին ներգործություն, որի ապահովման միջոցը նորմատիվ որոշումներն են: Ընդ որում, տվյալ դեպքում խոսքը գնում է հենց «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի տեսանկյունից նորմատիվ որոշումների մասին: Այսպես՝ «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն.

«Մարզպետը քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառներում՝ բնակչությանը ներգրավում է քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման, տարերային և տեխնածին աղետների հետևանքների վերացման աշխատանքներին»:

Հարց է ծագում՝ մարզպետն այս լիազորությունն իրականացնելու նպատակով ի՞նչ բնույթի որոշում պետք է ընդունի՝ մարզի ամեն մի աշխատունակ բնակչին հասցեագրված անհատական որոշում, թե՞ մարզի բնակչության համար (արտաքին ներգործությամբ) համապարտադիր (նորմատիվ) որոշում: Անկասկած ողջախոհությունից բխում է, որ այս լիազորությունը կարող է իրականացվել առավելապես նորմատիվ որոշում ընդունելու միջոցով: Ընդ որում, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի **182.5.-րդ հոդվածի** 9-րդ մասում՝ քաղաքացիական պաշտպանության միջոցառումների, վթարավերականգնողական և այլ անհետաձգելի աշխատանքներին սահմանված կարգով ներգրավումից հրաժարվելու համար սահմանված է պատասխանատվություն: Այս արգելքը խախտելու դեպքում անձին վարչական պատասխանատվության են-

ՍԱՀՄԱՆԱՐԿՎԱԿԱՆ ՂԱՏԱՐՈՒՄ 3(107)2022

թարկելու համար սկզբունքային է նաև այն հարցը, թե մարզպետը մարզի աշխատունակ բնակիչներին ինչ կարգով է ներգրավել աշխատանքներին:

Մեկ այլ օրինակ: «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն.

«Մարզպետին առողջապահության բնագավառում «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքի 20.2-րդ հոդվածով սահմանված կարգով կայացնում է կարանտին սահմանելու մասին որոշում»:

«Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքի 20.2-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ և 4-րդ ենթակետի համաձայն.

«Կարանտին սահմանելու մասին որոշման մեջ նշվում են նաև՝ (... 4) անհատական պաշտպանության միջոցների օգտագործման պահանջը, 5) անհրաժեշտ կանխարգելիչ, հակահամաճարակային և սահմանափակող միջոցառումների ցանկը, սահմանափակող միջոցառումների կիրառման կարգը, դրանց կիրառման ժամկետը, կազմակերպումն ու իրականացումն ապահովելու համար պատասխանատու մարմինները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի»:

Թերևս անվիճելի է, որ մարզպետի սահմանած՝ անհատական պաշտպանության միջոցների օգտագործման պահանջը կամ կանխարգելիչ, հակահամաճարակային և սահմանափակող միջոցառումների ցանկը մարզի՝ անորոշ (չանհատականացված) թվով բնակչությանը հասցեագրված (արտաքին ներգործությամբ) վարքագծի պարտադիր կանոններ են, որոնց ամրագրման միակ համարժեք ձևը նորմատիվ որոշումն է:

Եթե հիմք ընդունենք ՀՀ սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի այն մեկնաբանությունը, ըստ որի՝ մարզպետը չի կարող ընդունել ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ, ապա կստացվի, որ նա զրկվում է օրենքով նախատեսված որոշ լիազորություններ իրականացնելու գործնական հնարավորությունից:

2.2. Օրենսդրի կամքի բացահայտումը երկրորդական աղբյուրների միջոցով

3(107)2022

◆ ՍԵՂՈՒԿՅԱՆ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՂԱՏԱԳՐԱՆ

Ինչպես նշվեց, «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված է, որ մարզպետն ընդունում է որոշումներ: Օրենսդիրը գիտակցաբար չի կոնկրետացրել, թե մարզպետի որոշումները, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի եզրութաբանությամբ, կարող են լինել անհատական և ներքին, թե նաև արտաքին ներգործություն ունեցող նորմատիվ որոշումներ: Այն որ Օրենսդիրը գիտակցաբար չի սահմանել մարզպետի որոշումների տեսակը (օրենսդրի որակյալ լուրջություն), ապացուցվում է այն հանգամանքով, որ «Տարածքային կառավարման մասին» օրենքի նախագծի քննարկման ժամանակ «e-draft.am» պաշտոնական հարթակում կոնկրետ քաղաքացին առաջարկել էր Նախագծում սահմանել, որ մարզպետն ընդունում է անհատական, նորմատիվ և ներքին ակտեր, սակայն Նախագծի հեղինակներն¹ առաջարկի վերաբերյալ նշել էին.

«Մարզպետի կողմից ընդունվող որոշումների տեսակները նշելու անհրաժեշտությունը բացակայում է: Օրենքի նախագծում նշված ձևակերպումը ենթադրում է առաջարկությամբ նշված բոլոր տեսակի որոշումների ընդունում»²:

ՀՀ կառավարությունը և ՀՀ ազգային ժողովն առնվազն լուրջամբ ընդունել են Նախագծի հեղինակների՝ մարզպետի կողմից ոչ միայն անհատական և ներքին, այլ նաև նորմատիվ որոշումներ ընդունելու հնարավորության մասին մոտեցումը, քանի որ ՀՀ կառավարությունը Նախագիծը նույն խմբագրությամբ ուղարկել է ՀՀ ազգային ժողով, իսկ վերջինս էլ այն ընդունել է: Եթե ՀՀ կառավարությունը և ՀՀ ազգային ժողովը համաձայն չլինեին վերոնշյալ մոտեցման հետ, ապա կհաղթահարեին Նախագծի հեղինակների՝ մարզպետի կողմից նորմատիվ որոշումներ ընդունելու մասին «e-draft.am» հարթակում արտահայտված պաշտոնական դիրքորոշումը: Նախագծի հեղինակների մոտեցումը հաղթահարելու եղանակներից մեկը կարող էր լինել այն, որ ՀՀ կառա-

¹ Նախագիծը մշակվել է Տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից: Նախագծերի մշակմանն օժանդակել է Արդարադատության նախարարության «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամը: Տե՛ս <https://www.e-draft.am/projects/961/justification> (20.11.2022):

² «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի նախագծի ամփոփաթեթը: Տե՛ս <https://www.e-draft.am/projects/961/digest> (20.11.2022):

վարությունում կամ ՀՀ ազգային ժողովում հստակեցվեր, որ մարզպետն ընդունում է միայն անհատական և ներքին իրավական ակտեր:

Վերոգրյալը հիմք է տալիս կարծելու, որ Օրենսդիրը մարզպետին, իր գործառույթների և լիազորությունների իրականացման նպատակով, վերապահել է ոչ միայն անհատական և ներքին, այլ նաև նորմատիվ որոշումներ ընդունելու իրավասություն:

2.3. Մարզպետի նորմատիվ որոշումների մասին դոկտրինալ դիրքորոշումը

Հայկական իրավագիտության մեջ նույնպես առկա է մոտեցում այն մասին, որ մարզպետն իրավասու է ընդունելու նորմատիվ բնույթի որոշումներ: Այսպես՝ վարչական իրավունքի մասնագետ Գ. Դանիելյանը նշում է.

«Հայաստանի Հանրապետության մարզպետների նորմատիվ որոշումների գործողությունը տարածվում է միայն տվյալ մարզի, իսկ Երևանի քաղաքապետի նորմատիվ որոշումների գործողությունը՝ միայն Երևան քաղաքի վարչական տարածքի վրա»¹:

Վարչական իրավունքի փորձառու մասնագետը, ով կողմնակից է ՀՀ սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի այն մեկնաբանությանը, ըստ որի՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր կարող են ընդունել նաև Սահմանադրությամբ նախատեսված և օրենքով լիազորված մարմինները, իրավացիորեն խոսում է մարզպետի նորմատիվ որոշումների մասին:

Այսպիսով, հիշատակված հիմնավորումները բավարար են ցույց տալու, որ մարզպետի գործառույթների և լիազորությունների իրականացման գործունակությունը հաճախ կախված է այդ լիազորությունները նորմատիվ որոշումների միջոցով իրականացնելու հնարավորությունից: Այնուամենայնիվ, մարզպետների ընդունած որոշումների պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ գործնականում նրանք՝ նորմատիվ որոշումներ ընդունելու իրավասության վերաբերյալ չունեն միասնական մոտեցում:

¹ Դանիելյան Գ., Իրավաստեղծ գործունեություն և իրավաբանական տեխնիկա. ուսումնական ձեռնարկ: Եր., «Տիգրան Մեծ» հրատ, 2021, էջ 191:

Մարզպետի որոշումների տեսակը (բնույթը) նույնականացնելու հարցում ձևավորված հակասական պրակտիկան կարող է պայմանավորված լինել գործադիր իշխանության կենտրոնական մարմիններում պաշտոններ զբաղեցնող՝ ՀՀ սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի «գերմանական մոդելի» մեկնաբանման կողմնակիցների դիրքորոշմամբ, որի հետևանքով մարզպետներն ստիպված են իրավական ակտի տեսակը (բնույթը) որակելու հարցում դիմել աճապարարությունների, օրինակ՝ նորմատիվ կամ լոկալ իրավական ակտը՝ որպես անհատական ակտ որակելով կամ այս հարցը լուծությամբ շրջանցելով: Միևնույն ժամանակ՝ մարզպետները 2018 թ. հետո չեն կաշկանդվել առանձին որոշումներ պաշտոնապես որակել որպես նորմատիվ բնույթի ակտեր:

3. Մարզպետի կողմից նորմատիվ որոշումներ ընդունելու պրակտիկան

3.1. Մարզպետարանի ենթակայության տակ գտնվող կազմակերպությունների գործադիր մարմինների ընտրության մրցույթի անցկացման ընթացակարգը հաստատելու մասին որոշման նորմատիվ բնույթը

Մարզպետարանների ենթակայության տակ գտնվող կազմակերպությունների գործադիր մարմինների ընտրության կարգը սահմանում է մարզպետը: Այս դեպքում նույնպես ծագում է այն հարցը, թե մարզպետն ինչ բնույթի որոշմամբ պետք է հաստատի մրցույթի կարգը: Նկատի ունենալով, որ այդ կարգն իրավունքներ և պարտականություններ է առաջացնում մարզպետի վարչական ենթակայության ներքո չգտնվող անորոշ թվով անձանց (թեկնածուների) համար, ուստի բարդ չէ բարձրացված հարցին տալ հետևյալ պատասխանը. մրցույթի կարգը հաստատելու մասին մարզպետի որոշումն իր բնույթով նորմատիվ է: Այս տեսանկյունից պատահական չէ, որ տևական ժամանակ մարզպետները նման կարգերը հաստատելիս իրենց որոշումները պաշտոնապես որակել են որպես նորմատիվ ակտեր, դրանց նախազգծերը ներկայացվել են պետական իրավական փորձաքննության, ստացել են պետական գրանցում և պաշտոնապես հրապարակվել են («Իրավական ակտերի մասին» 2002 թ. ՀՀ օրենքի 33-րդ հոդված): Օրինակ՝ ՀՀ Վայոց ձորի

ՍԱՀՄԱՆԱՐԴՐՎԱԿԱՆ ՂԱՏԱՐՎԱԿԱՆ 3(107)2022

մարզպետը 19.05.2016 թ. № 40-Ն որոշմամբ հաստատել է Վայոց ձորի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) մրցույթի անցկացման ընթացակարգը: Այս պրակտիկան շարունակվել է նաև 2018 թ. հետո: Օրինակ՝ ՀՀ առողջապահության նախարարը 22.09.2022 թ. № 59-Ն **հրամանով**, իսկ Սյունիքի մարզպետը՝ 04.10.2022 թ. № 391-Ն **որոշմամբ** հաստատել են մարզպետարանի ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) մրցույթի հայտարարության տեքստը և մրցույթի հավակնորդներին ներկայացվող պահանջները (այս մասին հաջորդիվ):

3.2. Տեղական ինքնակառավարման մարմնի ընտրություն նշանակելու մասին որոշման նորմատիվ բնույթը

«ՀՀ ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 120-րդ հոդվածի 2.2-րդ մասի համաձայն.

«Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի հերթական ընտրությունները նշանակում է մարզպետը քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 70 օր առաջ՝ իր որոշման մեջ նշելով ընտրակարգը (համամասնական կամ մեծամասնական), հիմք ընդունելով տվյալ համայնքում ընտրողների թվի վերաբերյալ պետական լիազոր մարմնից նախապես ստացված տեղեկատվությունը»:

Մարզպետը տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն ի՞նչ տեսակի որոշմամբ պետք է նշանակի: Դոկտրինալ առումով դժվար չէ ապացուցել, որ ընտրություն նշանակելու ակտն անորոշ թվով անձանց համար իրավունքներ և պարտականություններ առաջացնող արտաքին ներգործություն ունեցող ակտ է, այն նույնիսկ «Նորմատիվ

¹ <http://syunik.mtad.am/files/legislation/56688.pdf>

իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի տեսանկյունից է համարվում նորմատիվ բնույթի ակտ: ՀՀ օրենսդիրն ընդունել է, որ ընտրություն նշանակելու որոշումը նորմատիվ իրավական ակտ է: Այսպես՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն.

«Փորձաքննության չեն ենթարկվում հանրաքվե կամ ընտրություններ նշանակելու վերաբերյալ նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև ընտրությունների ժամանակահատվածում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նորմատիվ իրավական ակտերի նախագծերը» (ընդգծումը՝ հեղ.):

Պատահական չէ, որ ՀՀ նախագահը, որը ՀՀ սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի «գերմանական մոդելի» մեկնաբանության տեսանկյունից նույնպես չունի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ ընդունելու իրավասություն, գործնականում ընտրություն և հանրաքվե նշանակելու մասին հրամանագրերը որակել է որպես նորմատիվ իրավական ակտեր: Այսպես՝ ՀՀ նախագահը 09.02.2020 թ. ՆՀ-32-Ն հրամանագրով նշանակել է ՀՀ սահմանադրության փոփոխությունների հանրաքվե, իսկ 10.05.2021 թ. ՆՀ-99-Ն հրամանագրով նշանակել է Ազգային ժողովի արտահերթ ընտրություն: ՀՀ նախագահը, սույն հրամանագրերում «Ն» տառով նշում կատարելով, դրանք իրավացիորեն որակել է նորմատիվ իրավական ակտեր:

Մինչդեռ մարզպետները տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ նշանակելու մասին որոշումները որակում են որպես անհատական իրավական ակտեր: Օրինակ՝ ՀՀ Շիրակի մարզպետը 13.07.2022 թ. № 374-Ա որոշմամբ նշանակել է Անի համայնքի ավագանու ընտրություն¹, իսկ ՀՀ Լոռու մարզպետը 06.08.2022 թ. № 424-Ա որոշմամբ նշանակել է Թումանյան համայնքի տեղական ինքնակառավարման մարմնի ընտրություններ²:

Հասկանալի է, որ մարզպետների ընդունած այս որոշումները որևէ կապ չունեն անհատական իրավական ակտերի հետ, դրանք և՛

¹ http://shirak.mtad.am/files/legislation/55790.pdf?fbclid=IwAR1GJGVaH7hs2nZfdd8QHysVnb5B59p061KjJFt6u_wyVIQYoerud969Jlk
² http://lori.mtad.am/files/legislation/50975.pdf?fbclid=IwAR2e1Vg3q5NI96JTECCs_9sCtRphR0Lipme58ZCHgyYWX65FTgSo4V74-_zE

ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԿԱՆ ՂԱՏԱՐՈՒՄ 3(107)/2022

դոկտրինայ, և՛ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի տեսանկյունից նորմատիվ իրավական ակտեր են:

3.3. Մինչև 2018 թ. ընդունած նորմատիվ իրավական ակտերն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումների նորմատիվ բնույթը

Մինչև 2018 թ. մարզպետներն ընդունել են բազմաթիվ նորմատիվ որոշումներ, սակայն 2018 թ. հետո նորմատիվ որոշումներ ընդունելու հարցի վերաբերյալ առկա տարածայնությունների պայմաններում նրանց առջև ծագել է այն հարցը, թե նախկինում ընդունած նորմատիվ որոշումներն ի՞նչ բնույթի ակտով պետք է ուժը կորցրած ճանաչել: Այս պարագայում, ի հակադրություն ՀՀ սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի «գերմանական մոդելի» մեկնաբանության և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի անցումային դրույթներում ամրագրված 46-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորման, օբյեկտիվ իրականությունն իր համար հարթել է բնական ճանապարհը: Մի շարք պետական մարմինների պաշտոնատար անձինք, օրինակ՝ ՀՀ ոստիկանության պետը, ՀՀ ազգային անվտանգության ծառայության պետը, մարզպետները, նախկինում ընդունած նորմատիվ որոշումներն ուժը կորցրած են ճանաչել նորմատիվ իրավական ակտերով: Սա եղել է ընդհանուր պրակտիկա: Օրինակ՝ Վայոց ձորի մարզպետը 12.02.2021 թ. № 17-Ն որոշմամբ ուժը կորցրած է ճանաչել № 40-Ն որոշումը¹:

Իհարկե այս դեպքում կարելի է նշված պաշտոնատար անձանց մեղադրել, որ նրանք խախտել են «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի դրույթը, սակայն այս պրակտիկան այնքան տարածված էր, որ ստիպում է մտածել, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով նախատեսված անցումային կարգավորումը պարունակում է համակարգային սխալ, քանի որ այն գործնականում կենսունակություն ձեռք չբերեց:

3.4. Մարզպետի և պետական կառավարման այլ մարմինների համարեղ որոշումների նորմատիվ բնույթը

¹ <http://vdzor.mtad.am/files/legislation/49451.pdf>

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **համատեղ նորմատիվ իրավական ակտն** օրենքով ուղղակի նախատեսված դեպքում ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ ընդունելու իրավասություն ունեցող երկու կամ ավելի մարմինների համատեղ ընդունած նորմատիվ իրավական ակտն է:

Այս բնորոշումից հստակ է, որ համատեղ նորմատիվ իրավական ակտեր կարող են ընդունել միայն ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ ընդունելու իրավասություն ունեցող սուբյեկտները:

Ռուսական վարչական իրավունքի դոկտրինում նշվում է, որ վերջին շրջանում զգալի ուշադրություն է դարձվում տարբեր կառավարման մարմինների համակարգման և վերահսկման գործունեության ուժեղացմանը: Այս պայմաններում ակտիվացել է գործադիր իշխանության մի քանի մարմինների համատեղ կառավարման որոշումներ ընդունելու պրակտիկան, որոնք ծառայում են ընդհանուր և միասնական նպատակին հասնելուն¹:

Այս հարցում հետաքրքիր է ՀՀ առողջապահության նախարարի և Սյունիքի մարզպետի՝ մեկ փաստաթղթով ընդունված ակտը: Այսպես՝ ՀՀ առողջապահության նախարարը 22.09.2022 թ. № 59-Ն հրամանով, իսկ Սյունիքի մարզպետը՝ 04.10.2022 թ. № 391-Ն որոշմամբ հաստատել են մարզպետարանի ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) մրցույթի հայտարարության տեքստը և մրցույթի հավակնորդներին ներկայացվող պահանջները²:

Նախ՝ ՀՀ առողջապահության նախարարը և Սյունիքի մարզպետը վերոնշյալ մրցույթի հայտարարության տեքստը և մրցույթի հավակնորդներին ներկայացվող պահանջները հաստատել են մեկ միասնական փաստաթղթով, սակայն այդ ակտն էքսպլիցիտ չի որակվել որպես համատեղ հրաման: Ավելին՝ ՀՀ առողջապահության նախարարն այդ կանոնները հաստատել է հրամանով, իսկ մարզպետը՝ որոշմամբ: Այնուամենայնիվ, ակնհայտ է, որ տվյալ դեպքում նրանք փաստացի ընդունել են համատեղ

¹ Исполнительная власть в России. История и современность, проблемы и перспективы развития / Под ред. **Хамановой Н.Ю.** - М.: Новая правовая культура, 2004. - С. 105.

² <http://syunik.mtad.am/files/legislation/56688.pdf>

հրաման, սակայն, այդ ակտի անվանումը համատեղ հրաման չդնելով, ամենայն հավանականությամբ փորձել են շրջանցել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգավորումները:

Երկրորդ՝ Սյունիքի մարզպետը 04.10.2022 թ. № 391-Ն որոշումն իրավացիորեն համարել է նորմատիվ իրավական ակտ, քանի որ այն տարածվում է մարզպետարանի հետ աշխատանքային, քաղաքացիա-իրավական կամ վարչական հարաբերությունների մեջ չգտնվող կամ նրա ծառայություններից կամ աշխատանքներից չօգտվող անձանց խմբի՝ մրցույթի հավակնորդների համար:

3.5. Քաղաքացիների ընդունելության կարգը հաստատելու մասին որոշման բնույթը

ՀՀ արագաճոտնի մարզպետը 11.05.2022 թ. № 178-Լ որոշմամբ հաստատել է ՀՀ Արագածոտնի մարզպետարանում քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը¹: Նշված որոշման մեջ ամրագրված վարքագծի կանոնների մեծ մասը, ըստ գործողության ոլորտի, ներքին իրավական ակտեր են, քանի որ հասցեագրված են մարզպետարանի աշխատակիցներին, սակայն այս որոշմամբ նախատեսված են կանոններ, որոնք վերաբերում են քաղաքացիներին: Այսպես՝ Կարգի 14-րդ կետի համաձայն՝ դիմում ներկայացրած քաղաքացին ընդունելության պետք է ներկայանա անձամբ, անձը հաստատող փաստաթղթով: Այս կանոնն իր բնույթով նորմատիվ է, քանի որ վերաբերում է մարզի բոլոր բնակիչներին:

4. Մարզպետի նորմատիվ որոշումների իրավաչափության նկատմամբ դատական վերահսկողությունը

4.1. Պատմական տեսանկյունը

Ինչպես նշվեց, մինչև 2018 թ. սահմանադրական բարեփոխումները, մարզպետի կողմից նորմատիվ որոշումներ ընդունելու հարցը կասկածի տեղիք չէր տալիս: Նման հնարավորությունն ամրագրված էր «Իրավական ակտերի մասին» 2002 թ. ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով, իսկ նույն օրենքի 4-րդ հոդված 2-րդ մասում մարզպետների, Երևանի քաղաքապետի որոշումները կամ կարգադրությունները համարվում էին գերատեսչական ակտեր:

¹ <http://aragatsotn.mtad.am/files/legislation/55049.pdf>

Մարզպետի նորմատիվ իրավական ակտերի օրինականության (իրավաչափության) նկատմամբ դատական վերահսկողությունն ամրագրված էր 2007 թ. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով¹: Այսպես՝ նշված օրենսգրքի 135-րդ հոդվածում նախատեսված էր դրույթ, ըստ որի՝ ՀՀ վարչական դատարանին ընդդատյա են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց նորմատիվ իրավական ակտերի վիճարկման վերաբերյալ հետևյալ գործերը (...) **գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի**, համայնքի ավագանու, համայնքի ղեկավարի որոշումների՝ դրանց համեմատ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ ակտերին (բացի Հայաստանի Հանրապետության սահմանադրությունից) համապատասխանությունը վիճարկելու վերաբերյալ գործերը: Ինչպես նշվեց, մարզպետի որոշումները «Իրավական ակտերի մասին» 2002 թ. ՀՀ օրենքով դիտվում էին որպես գերատեսչական ակտեր, այսինքն՝ Օրենսդիրը հստակ սահմանել էր, որ ՀՀ վարչական դատարանն իրավասու է ստուգելու մարզպետի նորմատիվ որոշումների՝ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտերին համապատասխանությունը:

ՀՀ իրավական համակարգի 2018 թ. բարեփոխումներից հետո մարզպետի նորմատիվ որոշումները ՀՀ վարչական դատավարության կարգով վիճարկելու հնարավորության հարցը միանշանակ կարգավորում չստացավ:

4.2. Մարզպետի որոշումների իրավաչափության նկատմամբ դատական վերահսկողության հարցի քննարկումը ՀՀ ազգային ժողովում

14.11.2019 թ.-ին ընդունվեց «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքը, որտեղ մարզպետի որոշումները դատական կամ վարչական կարգով վիճարկելու մասին դրույթ նախատեսված չէր: Մինչդեռ դրան նախորդող իրավական ակտում՝ ՀՀ նախագահի «ՀՀ մարզերում պետական կառավարման մասին» 06.05.1997 թ. № ՆՀ-728 հրամանագրի 1.6.-րդ կետում սահմանված էր, որ մարզպետի՝ օրենսդրությանը հակասող որոշումները և կարգադրություններն ուժը կորցրած են ճանաչվում վարչապետի կամ դատարանի որոշմամբ²:

¹ Ուժը կորցրել է 07.01.2014 թ.:

² Ուժը կորցրել է 09.04.2018 թ.:

ՀՀ ազգային ժողովում «Տարածքային կառավարման մասին» օրենքի նախագծի քննարկման ժամանակ պատգամավորը բարձրացրել է մարզպետի որոշումների՝ դատական կարգով վիճարկելու հարցը: Այսպես՝ Նախագծի քննարկման ժամանակ պատգամավորը կատարել է հետևյալ դիտարկումը.

Մարզպետարանների գործունեության կարգը սահմանող՝ տարածքային կառավարման վերաբերյալ նախագահի հրամանագրով ամրագրված էր նախկինում, որ մարզպետի՝ օրենքին հակասող որոշումները վերացվում են վերադասի, այս դեպքում կառավարչական հարաբերությունների օրենքով վերադասը վարչապետն է, կամ դատական կարգով: Այսպես դատական կարգը վերացվել է: Մենք փոխում ենք մեխանիզմները, թե՞ ամրագրում ենք, որ միայն պետք է վերացվի վերադասության կարգով, այսինքն՝ վարչապետի կողմից՝:

Զեկուցողն այս դիտարկման վերաբերյալ նշել է.

«Դա չենք կարող փոխել, որովհետև դատական կարգով վերացումն այս կամ այն կերպ կա, և դա չի կարող փոխվել»²:

Սույն քննարկումից պարզ չէ՝ խոսքը մարզպետի անհատական, թե նաև նորմատիվ որոշումների նկատմամբ դատական վերահսկողության մասին է: Մարզպետի անհատական որոշումները՝ որպես վարչական ակտեր, անկասկած, կարող են դատական կարգով վիճարկվել: Այնուամենայնիվ, Օրենսդիրը 21.01.2020 թ. «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքում ավելացրեց 7.1-րդ հոդվածը, որի համաձայն.

¹ ՀՀ Ազգային ժողովի յոթերորդ գումարման երրորդ նստաշրջան. սղագրություն № 9, 01.10.2019 //

[http://www.parliament.am/transcript.php?AgendaID=3734&day=01&month=10&year=2019&lang=arm#01.10.2019:](http://www.parliament.am/transcript.php?AgendaID=3734&day=01&month=10&year=2019&lang=arm#01.10.2019)

² ՀՀ Ազգային ժողովի յոթերորդ գումարման երրորդ նստաշրջան. սղագրություն № 9, 01.10.2019 //

[http://www.parliament.am/transcript.php?AgendaID=3734&day=01&month=10&year=2019&lang=arm#01.10.2019:](http://www.parliament.am/transcript.php?AgendaID=3734&day=01&month=10&year=2019&lang=arm#01.10.2019)

«Վարչապետին կամ Կառավարությանը սույն օրենքով նախատեսված ենթակա մարմինների և դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև մարզպետների վարչական ակտերը, գործողությունները կամ անգործությունը կարող են բողոքարկվել ակտն ընդունած մարմին կամ դատական կարգով»:

Նշված հոդվածում հստակ խոսվում է մարզպետի վարչական ակտերի բողոքարկման մասին, իսկ մարզպետի նորմատիվ որոշումների իրավաչափության նկատմամբ դատական վերահսկողության հարցը մնում է վիճելի նաև 2013 թ. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի կարգավորումների տեսանկյունից:

4.3. Մարզպետի նորմատիվ որոշումների իրավաչափության նկատմամբ դատական վերահսկողության հիմնախնդիրը ՀՀ վարչական դատավարությունում

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ ՀՀ վարչ. դատ. օր.) 191-րդ հոդվածում ուղիղ նախատեսված չէ մարզպետի նորմատիվ որոշումների վիճարկման մասին դրույթ, սակայն դրանից ինքնին չպետք է եզրակացնել, որ դրա իրավաչափության դատական ստուգումը բացառվում է: Այս հարցը կապված է երկու առավել ընդհանուր խնդրի հետ.

Նախ՝ պետք է պարզել, թե իրավակիրառողն ինչպե՞ս է ընկալում նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ ինստիտուտի էությունը, ինչպե՞ս է մեկնաբանում ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածը:

ՀՀ վարչական դատարանում գերակայում է ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածի տառացի մեկնաբանությունը, որի համաձայն՝ ՀՀ վարչական դատավարության կարգով կարող են վիճարկվել բացառապես ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածում թվարկված նորմատիվ իրավական ակտերը: Այս հոդվածի տառացի մեկնաբանման արդյունքում ստացվում է անտրամաբանական իրավիճակ: Այսպես՝ ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածում բնականաբար չեն հիշատակվում այն մարմինների ակտերը, որոնք օրենքով չունեն ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելու լիազորություն: Իսկ եթե գործնականում ենթաօրենսդրական

ՍԱՀՄԱՆԱՊՐՈՎԿՎԱԼ ՂԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ◆ 3(107)/2022

նորմատիվ իրավական ակտ ընդունելու լիազորություն չունեցող որևէ պետական մարմին, դուրս գալով Սահմանադրությամբ և օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակից, այնուամենայնիվ ընդունի **փաստացի** նորմատիվ բնույթի որոշում, ապա այդ նորմատիվ բնույթի որոշման իրավաչափությունը ձևական դատական վերահսկողության շրջանակներում չի կարող ստուգվել: Այս վիճակի անտրամաբանականությունն այն է, որ դատական ստուգման կարող են ենթարկվել պետական այն մարմինների ակտերը, որոնք ունեն ենթաօրենսդրական նորմատիվ ակտեր ընդունելու լիազորություն, իսկ այն պետական մարմինները, որոնք առհասարակ չունեն ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելու լիազորություն, փաստացի դուրս են մնում դատական նորմավերահսկողությունից: Նման մոտեցումը հակասում է **նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության նկատմամբ դատական վերահսկողության ինստիտուտի էությունը:**

Իրավաստեղծ լիազորություն չունեցող պետական մարմնի կողմից նորմատիվ բնույթի որոշում ընդունելը «ultra vires¹» հայեցակարգի խախտում է, ուստի՝ Դատարանները պետք է հնարավորություն ունենան «inexistence²» իրավական չափանիշի հիման վրա ստուգելու այդ որոշման իրավաչափությունը:

Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության նկատմամբ դատական վերահսկողության ինստիտուտի իմաստն այն է, որ դատարանը հնարավորություն ունենա ձևական և նյութական չափանիշներով ստուգել գործադիր իշխանության մարմինների ակտերի իրավաչափությունը, այդ թվում՝ ստուգել, թե տվյալ պետական մարմինն ուներ արդյոք նորմատիվ բնույթի իրավական ակտ ընդունելու լիազորություն:

Այսպիսով՝ եթե ՀՀ վարչական դատարանը նախապատվություն տա ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածի **ոչ թե** տառին, այլ **նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության նկատմամբ դատական վերա-**

¹ ultra vires - լիազորություններից դուրս:

² Inexistence - գոյություն չունեցող: Ֆրանսիական վարչական իրավունքում «Inexistence»-ը վարչական մարմնի ակտերի ստուգման հիմքերից է: Այն վերաբերում է վարչական գործողության գոյություն չունենալուն: Որոշ ոլորտներ այնքան կարևոր են, որ կասկածի տակ են դնում ենթադրյալ գործողության կամ որոշման բուն գոյությունը: Դրա օրինակ է ոչ պատշաճ անձի կամ լիազորություն չունեցող անձի կողմից որոշում կայացնելը: Այս մասին տե՛ս Գаллиган Д., Полянский В.В., Стариков Ю.Н. Административное право: история развития и основные современные концепции. - М.: Юристъ, 2002:

հսկողության ինստիտուտի էությանը, ապա համապատասխան դիմումի առկայության դեպքում պետք է ստուգի մարզպետի նորմատիվ բնույթի որոշման իրավաչափությունը (նույնիսկ եթե մարզպետի որոշումը ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածում հիշատակված չէ)¹:

Երկրորդ՝ այս դեպքում ՀՀ վարչական դատարանը կրկին պետք է որոշի, թե ՀՀ սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի որ մեկնաբանությունն է հիմք ընդունում: Եթե այն հիմք ընդունի այդ հոդվածի «գերմանական մոդելի» մեկնաբանությունը, ապա պետք է մարզպետի որոշումը ստուգի միայն ձևական չափանիշի տեսանկյունից: Այս դեպքում Դատարանը պետք է կատարի երկու գործողություն:

1) Դատարանը պետք է ստուգի մարզպետի վիճարկվող որոշումն իր բովանդակությամբ փաստացի նորմատիվ՞, թե՞ անհատական կամ ներքին իրավական ակտ է:

2) Դատարանը եթե հաստատված համարի, որ մարզպետի որոշումն իր բովանդակությամբ իրոք նորմատիվ իրավական ակտ է, ապա, հիմք ընդունելով ՀՀ սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի «գերմանական մոդելի» մեկնաբանությունը, պետք է փաստի, որ մարզպետը, նորմատիվ բնույթի որոշում ընդունելով, դուրս է եկել իր լիազորություններից և այդ որոշումը՝ որպես *ultra vires* ակտ, պետք է ճանաչի անվավեր:

Եթե ՀՀ վարչական դատարանը հիմք ընդունի ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի այն մեկնաբանությունը, ըստ որի՝ Օրենսդիրը ևս կարող է Սահմանադրությամբ նախատեսված մարմիններին, այդ թվում՝ մարզպետին լիազորել ընդունել նորմատիվ որոշումներ, ապա Դատարանը կարող է մարզպետի նորմատիվ որոշումը ստուգել ոչ միայն ձևական, այլ նաև՝ նյութական չափանիշների հիման վրա:

¹ ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածը 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունից և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո փոփոխության չի ենթարկվել: Այդ հոդվածում որպես դատական վերահսկողության օբյեկտ նշված է «գերատեսչական նորմատիվ իրավական ակտեր» ձևակերպումը: «Իրավական ակտերի մասին» 2022 թ. ՀՀ օրենքով մարզպետի որոշումները գերատեսչական ակտեր էին, սակայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում նման հասկացություն չի գործածվում:

ՍԱՀՄԱՆԱՐԿՎԱԿԱՆ ՂԱՏԱՐՎԱՆ 3(107)2022

5. Եզրակացություններ

ՀՀ սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի տեսանկյունից՝ մարզպետը, որպես Սահմանադրությամբ նախատեսված մարմին, իրավասու է ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր, եթե Օրենսդիրը նրան վերապահել է նման լիազորություն: ՀՀ սահմանադրական համակարգի տեսանկյունից մարզպետին ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելու իրավասությամբ օժտելը բնական է, քանի որ մարզպետն ըստ էության «տարածքային կառավարություն է», այսինքն՝ մարզպետի գործառույթները և լիազորությունները ՀՀ կառավարության գործառույթների և լիազորությունների հիմնական մասի՝ տարածքային առումով խտացված և կոնցենտրացված արտահայտությունն են:

Պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեությունը համակարգելու գործառույթի շրջանակներում մարզպետը կարող է ընդունել այդ ստորաբաժանումների ղեկավարների համար պարտադիր կատարման ենթակա իրավական ակտեր, որոնք «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի տեսանկյունից ոչ թե անհատական, այլ ներքին (լոկալ) կամ նորմատիվ ակտեր են:

Գործնականում մարզպետի որոշումների տեսակը (բնույթը) նույնականացնելու հարցում մարզպետարաններում ձևավորվել է հակասական պրակտիկա, սակայն հանդիպում են մի շարք դեպքեր, երբ մարզպետներն ընդունում են որոշումներ, որոնք կա՛մ պաշտոնապես, կա՛մ փաստացի նորմատիվ իրավական ակտեր են:

ՀՀ իրավական համակարգի 2018 թ. բարեփոխումներից հետո մարզպետի նորմատիվ որոշումները ՀՀ վարչական դատավարության կարգով վիճարկելու հնարավորության հարցը միանշանակ կարգավորում չի ստացել: ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածում ուղիղ նախատեսված չէ մարզպետի նորմատիվ որոշումների վիճարկման մասին դրույթ, սակայն դա ինքնին չի նշանակում, որ դրա իրավաչափության դատական ստուգումը բացառվում է:

ՀՀ վարչական դատարանը գործնականում պետք է նախապատվություն տա ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածի ոչ թե տառին, այլ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության նկատմամբ դատական վերահսկողության ինստիտուտի էությանը և ստուգի մարզպետի՝

նորմատիվ բնույթի որոշման իրավաչափությունը (նույնիսկ եթե մարզպետի որոշումը ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածում հիշատակված չէ):

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

ՀՀ սահմանադրություն (2015 թ. դեկտեմբերի 6-ի փոփոխություններով):
«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2002 թ. ապրիլի 3-ին. ուժը կորցրել է 21.03.2018 թ. ՀՕ-180-Ն):

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենք (ընդունվել է 2018 թ. մարտի 21-ին):

ՀՀ Վարչական դատավարության օրենսգիրք (ընդունվել է 2013 թվականի դեկտեմբերի 5-ին):

«Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2019 թվականի նոյեմբերի 14-ին) (նախագծի ամփոփաթեթ՝ <https://www.e-draft.am/projects/961/digest>):

ՀՀ Լոռու մարզպետի 16 մարտի 2020 թ. թիվ 327-Ա որոշում՝ «ՀՀ Լոռու մարզի կորոնավիրուսային հիվանդության (covid-19) բերովից երկրորդային դեպքով (կլաստերային դեպքեր) պայմանավորված արտակարգ իրավիճակների արձագանքման պլանը հաստատելու մասին»:

Տե՛ս <http://lori.mtad.am/files/legislation/45200.pdf>:

ՀՀ Արմավիրի մարզպետի 16 մարտի 2020 թ. թիվ ՄՀ/82-2020 որոշում՝ «ՀՀ Արմավիրի մարզի մակարդակով կորոնավիրուսային վարակի բերովի (COVID-19), բերովից երկրորդային դեպքերով (COVID-19) (կլաստերային դեպքեր) պայմանավորված արտակարգ իրավիճակների արձագանքման պլանները հաստատելու մասին»:

Տե՛ս <http://armavir.mtad.am/files/legislation/45453.pdf>:

ՀՀ Սյունիքի մարզպետի 04 հոկտեմբերի 2022 թ. թիվ 391-Ն որոշում՝ «ՀՀ Սյունիքի մարզպետարանի ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի հայտարարության տեքստը, մրցույթի հավակնորդներին ներկայացվող պահանջները հաստատելու, ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի հունիսի 10-ի թիվ 31-Ն և ՀՀ Սյունիքի մարզպետի 2013 թվականի հունիսի 28-ի թիվ 101-Ն համատեղ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին»:

Տե՛ս <http://syunik.mtad.am/files/legislation/56688.pdf>:

ՍԱՀՄԱՆԱՂՈՒՄԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ◆ 3(107)2022

«Հ Շիրակի մարզպետի 13.07.2022 թ. № 374-Ա որոշում՝ «ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու հերթական ընտրություն նշանակելու մասին»:

Տե՛ս http://shirak.mtad.am/files/legislation/55790.pdf?fbclid=IwAR1GJGVa_H7hs2nZfdd8QHysVnb5B59p061KjJFt6u_wyVIOYoeud969Jlk:

«Հ Լոռու մարզպետի 06.08.2022 թ. № 424-Ա որոշում՝ «ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրություններ նշանակելու մասին»:

Տե՛ս http://lori.mtad.am/files/legislation/50975.pdf?fbclid=IwAR2e1Vg3q5_NI96_JTECCs9sCtRphR0Lipme58ZCHgyYWX65FTgSo4V74-_zE:

«Հ Վայոց ձորի մարզպետի 12 փետրվարի 2021թ. թիվ 17 որոշում՝ «ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2010 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 85-Ն և 2016 թվականի մայիսի 19-ի թիվ 40-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին»:

Տե՛ս <http://vdzor.mtad.am/files/legislation/49451.pdf>:

«Հ Արագածոտնի մարզպետի 11 մայիսի 2022 թ. թիվ 178-Լ որոշում՝ «ՀՀ Արագածոտնի մարզպետարանում քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ Արագածոտնի մարզպետի 2008 թվականի հուլիսի 17-ի թիվ 51-Ա կարգադրությունը ուժը կորցրած ճանաչելու մասին»:

Տե՛ս <http://aragatsotn.mtad.am/files/legislation/55049.pdf>:

Դանիելյան Գ., Իրավաստեղծ գործունեություն և իրավաբանական տեխնիկա. ուսումնական ձեռնարկ: Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2021թ., 249 էջ:

Թովմասյան Հ., Լուխթերհանթ Օ., Մուրադյան Գ., Պողոսյան Վ., Ռայմսեր Վ., Ռուբել Ռ., Հայաստանի Հանրապետության ընդհանուր վարչական իրավունք. ուսումնական ձեռնարկ: Եր., «Հարավային Կովկասում իրավական և դատական բարեփոխումների համար խորհրդատվություն» Գիտ. հրատ., 2011 թ., 424 էջ:

Հովհաննիսյան Գ., Ընդհանուր իրավագիտություն և իրավաբանական մեթոդաբանություն: Եր., 2020 թ., 448 էջ:

Դամբարյան Ա., Մուրադյան Մ., Պետության և իրավունքի տեսություն: Երևան «Լուսաբաց հրատարակչություն», 3-րդ լրամշակված հրատ., 2018., 688 էջ:

Պողոսյան Վ., Սարգսյան Ն., Հայաստանի Հանրապետության 2015 թ. խմբագրությամբ սահմանադրությունը. համառոտ մեկնաբանություններ: Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2016թ., 448 էջ:

Галлиган Д., Полянский В.В., Стариков Ю.Н. Административное право: история развития и основные современные концепции. - М.: Юристъ, 2002. - 410 с.

Кадетова А.Д. Органы исполнительной власти Российской Федерации в системе субъектов правотворчества // Вестник Университета имени О.Е. Кутафина (МГЮА). - 2019. - № 6 (58).

Максуров А.А., Макаров И.И. Координация в праве. Монография. - Ярославль: ЯФ МФЮА, 2012. - С. 36.

Максуров А.А. Координация деятельности субъектов права в условиях кризиса. Инфра-М, 2022. – 260 с.

Комлев Е.Ю. Координация деятельности местных органов власти в России и Испании: сравнительно-правовое исследование // Вестник Российского университета дружбы народов. Серия: Юридические науки. - 2022. - Т. 26, № 3. - С. 634-654.

Стуканов А. Законность в деятельности органов административной юрисдикции // Законность. - 1998. - № 12. - С.10.

Чиркин В.Е. Публичное управление: учебник. - М.: Юристъ, 2004. - 475 с.

Хаманева Н.Ю. Исполнительная власть в России. История и современность, проблемы и перспективы развития. - М.: Новая правовая культура, 2004. - 568 с.

НОРМАТИВНЫЕ РЕШЕНИЯ МАРЗПЕТОВ И СУДЕБНЫЙ КОНТРОЛЬ В АДМИНИСТРАТИВНОМ СУДОПРОИЗВОДСТВЕ РА

Аннотация

В данной работе обсуждаются полномочия марзпетов по принятию нормативно-правовых актов (решений) и судебный контроль в административном судопроизводстве РА.

Правовой анализ законодательного регулирования принятия марзпетами нормативно-правовых актов (решений) позволил выявить имеющиеся в нем существенные недостатки.

Цель данной работы - посредством всестороннего анализа деятельности исполнительных органов РА по принятию нормативных актов выяснить те правовые основы, которые определяют направление и последовательность совершенствования законодательства исполнительных органов, задачи правового регулирования правовой деятельности.

Исследование выявленных проблем проводилось с целью установления единого подхода к определению законодательства, указания его процессуального характера и совершенствования законодательства, регулирующего создание норм права.

В рамках исследования проведен анализ действующих процессуально-правовых предписаний о правилах и порядке создания нормативных правовых актов, изучены научные труды ученых о природе правотворчества, учтены особенности современной правотворческой практики.

Процесс принятия нормативных актов изучается на основе философских подходов (диалектического материализма, логического позитивизма, критического рационализма и др.), общенаучных методов познания (анализа и синтеза, обобщения, системного анализа, абстрагирования и др.) и частнонаучных методов познания (конкретно-социологического, формально-юридического методов, метода юридического толкования). В результате использования совокупности научных методов получено системное знание о сущности принятия нормативного акта марзпетами.

Ключевые слова: нормативный акт, индивидуальный правовой акт, решение, марзпет, исполнительная власть, Административный суд РА.

MARZPET'S (GOVERNORS') REGULATORY DECISIONS, AND THE JUDICIAL CONTROL IN THE ADMINISTRATIVE PROCEEDINGS

Annotation

This paper discusses the authority of marzpets of the Republic of Armenia in adaption of a regulatory legal act (decision), and the judicial control in administrative proceedings. The legal analysis of the legislative regulation of the marzpet's adoption of a regulatory legal act (decision) revealed significant shortcomings in the regulation.

The purpose of this work is to find out, (through a comprehensive analysis of the procedures of the adoption of regulatory acts of executive bodies in the Republic of Armenia) the legal foundations that determine the direction and sequence of improving the legislation of executive bodies, and also shortcomings of legal regulation of legal activity.

The study of the identified problems was carried out with the aim of establishing a unified approach to the definition of legislation, indicating its procedural nature and improving legislation regulating the creation of legislative norms.

Within the framework of the study, the analysis of the existing procedural and legislative requirements regarding the rules and order for the creation of normative legal acts, the scientific works of scientists on the nature of law-making and the peculiarities of modern law-making practice were studied and taken into account.

The process of adoption of normative acts is implemented on the basis of the following philosophical approaches: (dialectical materialism, logical positivism, critical rationalism, etc.), general scientific (analysis and synthesis, generalization, system analysis, abstraction, etc.) and private scientific methods of cognition (concrete sociological method, formal legal method, method of legal interpretation). As a result of using a set of scientific methods, in depth knowledge of the essence of the adoption of a regulatory act by a marzpet was obtained.

Keywords: Normative act, individual legal act, Decision, Marzpet, Executive power, Administrative Court of the Republic of Armenia.



VAHE DAVTYAN

*D.Sc. (Political Science)
 Associated Professor at UNESCO Chair of
 Human Rights,
 Democracy and Political Science,
 Brusov State University*

**FOOD SECURITY IN UNRECOGNIZED STATES
 IN THE CONTEXT OF INTERNATIONAL LAW
 (THE EXAMPLE OF THE REPUBLIC OF ARTSAKH)**

Annotation

In the paper, the basic problems of ensuring the food security of the unrecognized states are studied. It is revealed that the food security of the unrecognized or partially recognized states remains a little-studied problem. It is shown that unrecognized states are more exposed to risks and threats to food security because of the low level of subjectivity as well as limited trade and economic ties with the world markets. The issues of food security of the Republic of Artsakh (Nagorno-Karabakh Republic) that arose as a result of a large-scale war with Azerbaijan in 2020 are presented. The main approaches and principles to the definition of the concept of "food security" are analyzed, and features of assessing the significance of food security in international law are identified. The main achievements of the Republic of Artsakh in the field of ensuring food security, including the main economic indicators of the unrecognized republic, are also analyzed. It is revealed that as a result of the transfer of more than 95 thousand hectares of arable land to Azerbaijan, Artsakh faced serious risks of a shortage of grain, wheat, and other crops. It is established that for the consistent implementation of anti-crisis programs

in the field of food security, it is necessary to form a special responsible state institution.

Keywords: food security, unrecognized state, international law, Republic of Artsakh, Armenia, war, agriculture, trade.

Introduction

The concept of "food security" was introduced by the International Food and Agriculture Organization of the United Nations (FAO) in the mid-1970s. The emergence of this concept was due to the growth of food production in developed countries and, at the same time, the spread of mass starvation in the countries of the "third world". The Universal Declaration on the Elimination of Hunger and Malnutrition notes that the acute food crisis, which has particularly hit the people of developing countries, where most of the world's hungry and malnourished people live and where more than two-thirds of the world's population produces about a third of the world's food - a discrepancy that threatens to worsen further over the next ten years - not only has serious socio-economic consequences but also seriously threatens the most basic principles and values associated with the right to life and human dignity, as embodied in the Universal Declaration of Human Rights^[1]. It is especially difficult to ensure food security in unrecognized states due to their communication limitations, in particular, in foreign trade activities.

Literature Review

Theoretical aspects of global food security are considered in the study by P. Pinstруп-Andersen. In it, the author attempts to define the concept of "food security" in comparison with "nutrition security" ^[7].

The study conducted by Chinese authors G. Cheng and M.D. Zhu "The impact of COVID-19 on food security: Trend, impact, and countermeasures" is devoted to the problems of ensuring food security in the context of the COVID-19 pandemic ^[8].

As a result of our research, we found that the issues of food security in unrecognized states are not in the focus of researchers. The article

Khomenko Ya.V., Mizevich R.S., Balykin O.L. "State mechanism for managing food security" is of particular interest ^[9].

Food security: Assessment criteria

Article 10 of the Declaration of Social Progress and Development defines the elimination of hunger and malnutrition as a key challenge in ensuring human rights ^[2].

In 1966, the UN adopted the International Covenant on Economic, Social and Cultural Rights, the 11th article of which proclaimed the right to adequate food and the right to be free from hunger. At the same time, the document underlined the obligations of states to take the measures necessary to improve the methods of production, preservation, and distribution of food through the full application of technical and scientific knowledge and through the dissemination of information on the principles of nutrition, as well as to ensure the equitable distribution of the world's food supply depending on the need ^[3].

Eradicating extreme poverty and overcoming hunger are also considered challenges in the UN Millennium Development Goals (MDGs) ^[4]. However, as noted in the report of the MDG Gap Task Force, in some cases, MDGs indicators show a discrepancy between the ambitions reflected in the targets and the progress shown by these indicators ^[5].

There are various approaches to the definition of the category "food security," which are mainly based on food imports, either on self-sufficiency or on a combination of imports and own production. In general, food security is achieved by providing physical and economic access to safe and sufficient food.

The 1996 World Food Summit adopted the following definition of food security: food security exists when all people, at all times, have physical and economic access to sufficient, safe and nutritious food to meet their nutritional needs and preferences for an active and healthy lifestyle ^[6].

Thus, two key components of ensuring food security are highlighted: *physical and economic accessibility*.

Physical accessibility implies the availability of food in the country in the required volume, their stable supply. At the same time, the role of the state

is especially emphasized as a guarantor of uninterrupted food supplies, as well as the state is responsible for the formation of food stocks.

Economic accessibility implies that every citizen of the state, regardless of age, gender, status, etc., has a sufficient level of income to purchase a set of minimum consumer basket.

With the evolution of the term "food security," in the mid-1990s, the term "nutrition security" was introduced. Food consumption at the household or individual level and how food is used by humans – those issues are at the center of the concept of food security. Based on the conceptual framework of UNICEF, in 1995, the International Food Policy Research Institute proposed its definition. In accordance with it, nutrition security can be defined as the appropriate level of nutrition in terms of proteins, calories, vitamins, and minerals of all household members at any time^[6].

The 39th session of the Committee on World Food Security (Rome, 15-20 October 2020) underlines food security as an important challenge. The Committee stated that the term "food and nutrition security" most conceptually and deeply reflects the unity of the goal of integrated development, which is to promote the effective implementation of policies and program actions. At the same time, in their report, the experts of the Committee note that there is no consensus among member states regarding the use of this combined term: some states doubt the appropriateness of its use for the reason that the political consequences of this decision for specific countries are not assessed^[6].

The problems of food security in Artsakh

The problem of ensuring food security of unrecognized states remains outside the scope of the research ^[9]. At the same time, it is obvious that unrecognized states are more exposed to risks and threats to food security due to the low level of subjectivity and, consequently, limited trade and economic ties with the outside world. If, when assessing the level of a country's food security, we take as a basis the presence of a convergent development of domestic production and the presence of imports, then we must inevitably state a priori a low level of food security in unrecognized or partially recognized states. This problem has an emphasized

ՍԱՀՄԱՆԱՐԴՐՈՒԿԱԿԱՆ ՂԱՏԱՐՈՒՄ 3(107)2022

interdisciplinary character and should be investigated using legal, economic, and political science methods.

To assess the current state of the food situation in Artsakh, it is necessary to turn to the features of socio-economic development, as well as external trade and economic relations of the unrecognized Republic.

In July 2014, the Russian TV channel RBC titled the Republic of Artsakh the "Transcaucasian tiger" due to its rapid economic growth ^[10]. At the end of 2015, economic growth in the Republic amounted to 9.1%, in 2016 - 9.2%, while in 2007, this indicator was 8.8%, and in 2008, a significant breakthrough was done with the achievement of 14.3% economic growth. On average, since 2000, the growth of the Artsakh economy is 10.5%.

In 2019, the economy of Artsakh grew by 10.3%. In dollar terms, in pre-war 2019, gross domestic product (GDP) reached \$713 million. At the same time, the Covid-19 pandemic also affected the Artsakh economy: in the first half of 2020, the Republic's GDP decreased by 1.5% compared to the same period of the previous year ^[11]. As follows from the World Bank data, with a GDP of \$716 million, at current prices, the Republic of Artsakh is one of the smallest economies in the world, behind Samoa (\$851 million) and Vanuatu (\$917 million) ^[12].

Trade is traditionally one of the most dynamically developing areas of the Artsakh economy. About 90% of the subjects of business registered in the Republic are representatives of trade and services.

In 2019, the volume of exports of Artsakh amounted to \$283 million, and imports amounted to \$373.1 million. Thus, the negative trade balance amounted to \$90 million. Compared to 2018, the volume of foreign trade in 2019 increased by 18.2%, while exports - by 40.1%, imports - by 5.7%. The negative trade balance decreased by 40.3% ^[13].

Due to non-recognition, the Republic of Artsakh carries out foreign trade through legal entities registered in Armenia, and enters the international market with the inscription "made in Armenia". The main export directions of Artsakh, sold through the territory of the Republic of Armenia, are goods of food, machine-building, woodworking industries, as well as building materials. Among the main export items are carpets, leather shoes, capacitors, cognac, wines, vodka, canned fruits, and vegetables. In

general, goods from Artsakh are exported to the CIS countries, mainly to Armenia and Russia (95%), China, Italy, France, Iran, and the UK.

One of the important areas of the Artsakh economy is traditional agriculture. Over the past two decades, a high level of self-sufficiency in potatoes, vegetables and fruits, berries, grapes, small cattle meat, and eggs has been ensured in Artsakh. In terms of self-sufficiency, Artsakh has traditionally had above-average levels of milk, dairy products, cattle meat, as well as wheat and corn. This picture has undergone major changes due to the large-scale military operations in Artsakh in September-November 2020, which ended with the transfer of key economic, including agricultural, territories to Azerbaijan.

In recent years, the Republic of Artsakh has considered the need to introduce a food safety system that must comply with international standards. In the Law of the Republic of Artsakh "On Ensuring Food Security" ^[14] (2003), as well as in the Law "On Food Safety" (2007) ^[15], healthy nutrition, ensuring food safety are presented as a key challenge for the development of the food security system. The Government of Artsakh has repeatedly stated the need to apply the principle of "from farm to fork" or "from field to table" as a single system. To create this system, one structure should concentrate all functions related to the safety of products of plant and animal origin, at all stages of the food chain - from production to final consumption. This would exclude the duplication of these functions by other structures, and would also contribute to their more efficient implementation. The application of this principle was initially considered in the context of increasing the export of locally produced products of the Republic of Artsakh. In general, it can be stated that over the past 20 years (2000-2020), Artsakh has managed to significantly improve its food security by creating the necessary legislation for this.

The Republic of Artsakh, as a result of the war with Azerbaijan in September-November 2020, faced a whole range of national security problems, including food security.

As a result of the war, which ended with the transfer to Azerbaijan of territories of great economic, transport, and logistic importance, the agricultural potential of Artsakh was sharply reduced. In accordance with

ՍԱԽՄԱՆՈՒՄԻՆԿԱԿԱՆ ՂԱՏԱՐՈՒՄ 3(107)2022

the tripartite agreement signed on the night of November 10 on a complete ceasefire in the conflict zone, Agdam, Kashatagh (Lachin), and Karvachar (Kelbajar) regions were transferred to Azerbaijan. It was also stated that the parties should stop at the positions they held at the time of signing the tripartite agreement. Taking into account the advance of the Azerbaijani-Turkish armed forces, territories in the Martuni, Martakert and other regions of the Republic of Artsakh, the region of Hadrut, as well as the city of Shushi also passed to Azerbaijan. In general, the territorial losses of Artsakh are estimated at 9 thousand km².

At the same time, Artsakh lost about 95,000 hectares of arable land, which will inevitably lead to a reduction in agricultural production. Because of the establishment of a new interstate border and military infrastructure in Armenia, agricultural land has also been reduced, especially pastures. This situation can be assessed as a threat to the food security of both Armenia and Artsakh.

Up to 550-600 thousand tons of grain is consumed annually in Armenia and Artsakh, while pre-war Artsakh produced about 25-30% of this volume. In recent years, the production of grain and legumes in Artsakh has reached an average of 150,000 tons. In particular, in 2019, it reached 118,000 tons. Obviously, in the post-war realities, Artsakh found itself in a state of food and, in particular, grain shortage. It should be noted that on the indicated 95 thousand hectares of land that passed to Azerbaijan, sowing was carried out annually on 70 thousand hectares, 50 thousand of which, in turn, were used for the cultivation of grain crops ^[16]. About 450 hectares of the territories transferred to Azerbaijan were used for growing legumes. This represents about 30% of the arable land used for growing legumes.

It is important to emphasize that the cultivation of grain crops in Artsakh was mainly carried out in the Kashatagh, Hadrut, Askeran and Martakert regions, in small amounts - near Shushi and Shaumyan ^[10]. Thus, taking into account the transfer of these territories to Azerbaijan, it can be stated that Artsakh lost about 90% of grain production. Consequently, the task of ensuring the food security of Artsakh should be solved through the establishment of imports.

According to statistics, in 2019, about 199 thousand grains and legumes were produced in Armenia, which is 41.2% lower than in 2018. Thus, the level of grain self-sufficiency in Armenia is falling from year to year: in 2014 it was 48.7%, and in 2018, it was 31.2%. Thus, Armenia is forced to provide itself with grain mainly through imports, carried out mainly from Russia (up to 90%). In the current situation, an increase in imports becomes inevitable due to the need to supply grain also in Artsakh.

In 2020, the sown area in Armenia amounted to 222.2 thousand hectares. According to the Agricultural Union of Armenia, this means that more than half of the country's arable land is used for other purposes ^[17]. To solve this problem, it is necessary, firstly, to increase the productivity of used lands through the implementation of large-scale public-private partnership programs in the field of agriculture, support for business entities involved in this industry, as well as the consistent introduction of innovative, high-tech technologies in agriculture.

For the implementation of these programs, it is extremely important to form the main responsible state institution. Therefore, today, in the face of more than tangible threats to food security both in Armenia and Artsakh, it seems necessary to restore the Ministry of Agriculture, which was liquidated in 2019, in the structure of the Government of the Republic of Armenia ^[18]. This is obviously one of the key institutional challenges to the national security of Armenia and, consequently, Artsakh.

Conclusions

1. Ensuring the food security of the unrecognized states remains a little-studied problem. At the same time, unrecognized states are more exposed to risks and threats to food security due to the low level of subjectivity and, consequently, limited trade and economic ties with the outside world. This problem is of interdisciplinary nature and should be investigated using legal, economic and political methods.

2. One of the important directions of the economy of the Republic of Artsakh is traditional agriculture. Over the past two decades, Artsakh has insured a high level of self-sufficiency in potatoes, vegetables and fruits, berries, grapes, small cattle meat, and eggs. In terms of self-sufficiency,

Artsakh has traditionally had above-average levels of milk, dairy products, cattle meat, as well as wheat and corn. This picture has undergone major changes due to the large-scale war in Artsakh in September-November 2020, which ended with the transfer of key economic, including agricultural, territories to Azerbaijan.

The problems of food security in unrecognized states must be considered in the context of international law in order to ensure natural human rights. Obviously, this problem is relevant for the population of the Republic of Artsakh, which is in a state of humanitarian catastrophe after a large-scale war in 2020.

References

1. Universal Declaration on the Eradication of Hunger and Malnutrition. the World Food Conference convened under General Assembly resolution 3180 (XXVIII) of 17 December 1973; and endorsed by General Assembly resolution 3348 (XXIX) of 17 December 1974.
2. Declaration on Social Progress and Development. Adopted by General Assembly resolution 2542 (XXIV), 11 December 1969.
3. International Covenant on Economic, Social and Cultural Rights. Adopted by General Assembly resolution 2200A (XXI). 16 December 1966.
4. UN Millennium Development Goals. URL: <https://www.un.org/millenniumgoals/> (accessed: 14.12.2022).
5. Taking Stock of the Global Partnership for Development (Report of the Task Force on Measuring Gap on Achieving the MDGs). UN, New York, 2015. (in Russ.) URL: <https://www.un.org/en/millenniumgoals/summary2015.pdf> (accessed: 14.12.2022).
6. Committee on World Food Security (39th session, Rome, 15-20 October 2012) (in Russ). URL: <http://www.unscn.org/files/cfs/MD776R.pdf> (accessed: 14.12.2022).
7. Pinstrup-Andersen P. Food security: definition and measurement *Food Sec. 1*, 5–7 (2009).
8. Cheng, G.Q.; Zhu, M.D. The impact of the COVID-19 on food security: Trend, impact and countermeasures. *China's Rural Econ.* 2020, 425, 16–23. (In Chinese).
9. Khomenko Ya.V., Mizevich R.S., Balykin O.L. State mechanism for managing food securit. *Bulletin of the Institute of Economic Research.* – 2017. – N1. – p. 24.

- 10.RBC: Nagorno-Karabakh can be called the "Transcaucasian tiger": URL: <https://artsakhpress.am/rus/news/3406/> (accessed: 14.12.2022).
- 11. World Bank national account data. URL: https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.CD?most_recent_value_desc=false (accessed: 14.12.2022).
- 12. Davtyan V., Harutyunyan A., Samvelyan L. Foreign trade problems of the NKR under the conditions of the transport blockade // 21st century. 2017. No. 3 (44). P. 86-87.
- 13. In 2019, the volume of foreign trade amounted to about 315 billion drams. URL: <https://artsakhpress.am/arm/news/121942/> (accessed: 14.12.2022).
- 14. NKR Law on Ensuring Food Security (adopted March 19, 2003).
- 15. NKR Law on food safety (adopted on June 20, 2007).
- 16. 50,000 hectares of grain in Artsakh passed to Azerbaijan. the issue of food security. URL: <https://hetq.am/hy/article/124985> (accessed 14.12.2022).
- 17. Statement of the Agricultural Union of Armenia. URL: <https://anau.am/ru/> (accessed: 14.12.2022).
- 18. On Making Amendments and Additions to the RA Law "On the Structure and Activities of the Government". Adopted on May 8, 2019.

3(107)2022



ՏԵՂԵԿԱԳԻՐ



ՍԱՀՄԱՆԱՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐՎԱՆ

**ՉՃԱՆԱԶՎԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԵՆԱՅԻՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ
(ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ)**

Ամփոփագիր

Ուսումնասիրվել են չճանաչված պետությունների պարենային անվտանգության ապահովման հիմնախնդիրները: Բացահայտվել է, որ չճանաչված կամ մասամբ ճանաչված պետությունների պարենային անվտանգությունը մնում է թերուսումնասիրված խնդիր: Ցույց է տրվել, որ չճանաչված պետություններն ավելի շատ են ենթարկվում պարենային անվտանգության ռիսկերի և սպառնալիքների՝ սուբյեկտայնության ցածր մակարդակի, ինչպես նաև արտաքին շուկաների հետ սահմանափակ առևտրատնտեսական հարաբերությունների պատճառով: Ներկայացված են Արցախի Հանրապետության (Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն) պարենային անվտանգության խնդիրները, որոնք ծագել են 2020 թ. Ադրբեջանի կողմից սանձազերված պատերազմի հետևանքով: Վերլուծվել են «պարենային անվտանգություն» հասկացության սահմանման հիմնական մոտեցումներն ու սկզբունքները: Բացահայտվել են միջազգային իրավունքում պարենային անվտանգության

կարևորության գնահատման առանձնահատկությունները: Ներկայացվել են պարենային անվտանգության ապահովման ոլորտում Արցախի Հանրապետության հիմնական ձեռքբերումները: Սահմանվել է, որ ավելի քան 95 հազար հեկտար գյուղատնտեսական հողատարածք Ադրբեջանին փոխանցելու արդյունքում Արցախը կանգնել է հացահատիկի, ցորենի և այլ մշակաբույսերի պակասորդի լուրջ ռիսկերի առաջ: Հիմնավորվել է, որ պարենային անվտանգության ոլորտում հակաճգնաժամային ծրագրերի հետևողական իրականացման համար անհրաժեշտ է ձևավորել հատուկ պետական ինստիտուտ, ինչպես նաև կատարելագործել օրենսդրական դաշտը:

Հիմնաբառեր. պարենային անվտանգություն, չճանաչված պետություններ, միջազգային իրավունք, Արցախի Հանրապետություն, պատերազմ, գյուղատնտեսություն, առևտուր:

ПРОДОВОЛЬСТВЕННАЯ БЕЗОПАСНОСТЬ НЕПРИЗНАННЫХ ГОСУДАРСТВ В КОНТЕКСТЕ МЕЖДУНАРОДНОГО ПРАВА (НА ПРИМЕРЕ РЕСПУБЛИКИ АРЦАХ)

Аннотация

В статье рассмотрены основные проблемы обеспечения продовольственной безопасности непризнанных государств. Выявлено, что продовольственная безопасность непризнанных или частично признанных государств остается малоизученной проблемой. Показано, что непризнанные государства в большей степени подвержены рискам и угрозам продовольственной безопасности из-за низкого уровня субъектности, а также ограниченности торгово-экономических связей с внешними рынками. Представлены проблемы продовольственной безопасности Республики Арцах (Нагорно-Карабахской Республики), возникшие в результате широкомасштабной войны с Азербайджаном в 2020 г. Проанализированы основные подходы и принципы определения понятия «продовольственная безопасность». Выявлены особенности оценки значения продовольственной безопасности в международном праве. Представлены основные достижения Республики Арцах в сфере обеспечения продовольственной безопасности. Установлено, что в

результате передачи Азербайджану более 95 тысяч гектаров земли сельскохозяйственного назначения Арцах столкнулся с серьезными рисками дефицита зерна, пшеницы и других культур. Установлено, что для последовательной реализации антикризисных программ в сфере продовольственной безопасности необходимо формирование специального ответственного государственного учреждения, а также развитие законодательного поля.

Ключевые слова: продовольственная безопасность, непризнанные государства, международное право, Республика Арцах, Армения, война, сельское хозяйство, торговля.



ԱԼԻՆԱ ՓԻՐԻԿՅԱՆ

Իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ



ՖԵՆՅԱ ԱՂԱԲԵԿՅԱՆ

Հայ-ռուսական համալսարանի
Իրավունքի և քաղաքականության
ինստիտուտի «Իրավաբանություն»
ուղղության 4-րդ կուրսի ուսանողուհի

**ՊԵՏԱԿԱՆԱՍՏԵՂԾ ՀՈՉԱԿԱԳՐԵՐԻ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ**

Ամփոփագիր

Հոդվածը նվիրված է պետականաստեղծ հոչակագրերի
իրավաքաղաքական նշանակության հիմնահարցերին՝ հետխորհրդային
հանրապետությունների սահմանադրական դատարանների նախադե-
պային իրավունքի լույսի ներքո: Ներկայացվում է պետականաստեղծ
հոչակագրերի ընդհանուր բնութագիրն ու վերջիններիս վերաբերյալ
հիմնական գիտական մոտեցումները: Հեղինակներն իրավահամեմա-
տական վերլուծություն են կատարում՝ ներկայացնելով և մեկնաբանելով
Հայաստանի Հանրապետության, Լատվիայի և Մոլդովայի սահմա-
նադրական դատարանների այն որոշումները, որոնցում Բարձր դատա-

րաններն անդրադարձել են պետականաստեղծ հռչակագրերի իրավաբանական բնութագրին:

Հեղինակները գտնում են, որ պետականաստեղծ հռչակագրերը սահմանադրական իրավունքի լիարժեք աղբյուր են, որոնք արտացոլում են հասարակական հարաբերությունների արժեքանական և համակարգային փոփոխությունները և հիմք են հանդիսանում նոր իրավակարգի կառուցման համար: Հեղինակները սույն ակտերը համարում են վերսահմանադրական ակտեր, որոնցում արտացոլված արժեքներն ու սկզբունքները գերակայում են այլ օրենսդրական ակտերի՝ այդ թվում Սահմանադրության նկատմամբ:

Հիմնաբառեր. պետականաստեղծ հռչակագիր, *contra constitutionem* վարքագիծ, *constituent power*, սահմանադրական ինքնություն, սահմանադրական արդարադատություն:

1. Պետականաստեղծ հռչակագրերի բնութագիրը:

Անկախության հռչակագրերը, հատուկ լինելով պետության կյանքի անցումային շրջաններին, օժտված են իրավաքաղաքական մեծ ներուժով: Ինքնին անկախության հռչակագիրն իրավաքաղաքական պետականաստեղծ փաստաթուղթ է, որն ամրագրում է պետականության հիմնարար սկզբունքներն ու նպատակները, պետական քաղաքականության համար ուղեծրային նշանակություն ունեցող արժեքները:

Հիմք ունենալով հասարակական հարաբերությունների համակարգային փոփոխությունները՝ անկախության հռչակագրերն ընդունվում են որպես **constituent power** հիմնարար ուժի ինքնաիրացման արդյունք և ուղղված են հասարակական գիտակցությանը և արտացոլում են վերջինումս տեղի ունեցող իրավաքաղաքական մտքի վերարժևորումը:

Անկախության հռչակագրերը **contra constitutionem** վարքագծի հետևանք են, որոնցով մերժվում է գործող իրավակարգը և սկիզբ է դրվում նոր իրավակարգի կառուցմանը: Չնայած գործող օրենսդրությանը հակասելուն՝ վերջիններիս համար իրավունքի աղբյուր են ծառայում հասարակության նյութական պայմանները, որոնց շրջանակներում հասարակական-պետական կյանքի վերարժևորումն այնքան խորքային բնույթ է կրում, որ սպառում է գործող իրավակարգը. վերջինս փաստացի գործում է այնքանով, որքանով համապատասխանում է հասարակության պետաիրավական նոր մտածողության տրամաբանությանը:

ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐՈՎՈՒՄ 3(107)2022 ♦ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ

Պետականաստեղծ հռչակագրերն իրավաքաղաքական բնույթ ունեն. եթե գիտական շրջանակներում հռչակագրերի իրավաբանական ուժի վերաբերյալ կարծիքները կտրուկ հակասական են, ապա այս ակտերի քաղաքական ազդեցիկ ներուժը քննարկման առարկա չէ: Գրականության մեջ առաջարկում են դասակարգել հռչակագրերը իրավականի և քաղաքականի¹, սակայն իրավական և քաղաքական սկզբերի նման տարանջատումը խորթ է հռչակագրերի պետականահենք էությանը: Ցանկացած պետականաստեղծ հռչակագիր իրավական և քաղաքական սկզբերի յուրօրինակ համակցություն է. այլ հարց է, որ իրավական և քաղաքական կարգավորումների ծավալներն են տարբեր: Մի հռչակագրում գերակշիռ կարող է լինել իրավական սկիզբը, մյուսում՝ քաղաքականը, սակայն ցանկացած պարագայում երկուսն էլ առկա են, եթե խոսքը գնում է պետականաստեղծ հռչակագրերի մասին²:

Պետականաստեղծ հռչակագրերի կարգավորման առարկա են հանդիսանում երեք տիպի հասարակական հարաբերություններ. անցումային շրջանի կարևորագույն հասարակական հարաբերությունները, որոնք հին օրենսդրությամբ չեն կարող կարգավորվել, իսկ նորը դեռ չկա; հին իրավակարգից նորին անցման և նոր պետականության ստեղծմանն առնչվող հարաբերությունները:

Առաջին տիպի հարաբերությունները կարգավորող նորմերը պետականահենք նշանակություն չունեն և պետաիրավական նոր արժեքներին համահունչ իրավակարգավորումների բացակայության պայմաններում ժամանակավորապես կարգավորում են պետական կարևոր նշանակություն ունեցող որոշակի հասարակական հարաբերություններ: Երկրորդ տիպի հարաբերությունները կարգավորող նորմերը ուղղված են հին և նոր իրավահամակարգերի գործողությունների հարաբերակցության և վերջիններիս միջև առաջացող հակասությունների կարգավորմանը, այլ կերպ՝ կոլիզիոն կարգավորումներ են:

Այսպես, ՀՀ 10.12.1990 թ.-ի ««Հայաստանի անկախության մասին» հռչակագրին համապատասխան ընդունված օրենսդրական ակտերի մա-

¹ Винников А.Ю. «К вопросу о правовых основаниях классификации деклараций», URL: <https://cyberleninka.ru/article/n/k-voprosu-o-pravovyh-osnovaniyah-klassifikatsii-deklaratsiy>

² Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների հռչակագիրը (սոյեմբերի 2, 1917 թ.) հռչակում էր ժամանակավոր կառավարության կազմը: Սրանով իսկ սահմանափակվում էր վերջինիս նշանակությունը, հետևապես այս հռչակագիրը պետականահենք նշանակություն չունի, իսկ վերջինիս կարգավորումները կրում են միայն ժամանակավոր բնույթ:

սին» սահմանադրական օրենքի համաձայն՝ մինչև ՀՀ սահմանադրության ընդունումը դադարեցվում էր ՀԽՍՀ սահմանադրության այն դրույթների գործողությունը, որոնք հակասում են ՀՀ Գերագույն խորհրդի կողմից «Հայաստանի անկախության մասին» հռչակագրի հիման վրա ընդունված օրենքներին¹: Սույն օրենսդրական կարգավորումը յուրօրինակ կոլիզիոն նորմ է, որը ՀԽՍՀ սահմանադրությունից բարձր է դասում ոչ միայն Հռչակագիրը, այլ նաև Հռչակագրի հիման վրա ընդունված օրենքները:

Նորմերի երկրորդ տեսակը վերաբերում է նոր ստեղծվող պետականության հիմունքներին: Այս տեսակի նորմերում ամրագրվում են պետականության հիմնարար նպատակներն ու սկզբունքները, պետական քաղաքականության հիմնական ուղիները, պետաիրավական այլ արժեքները, պետության ձևը, կառավարման տեսակը, մարդու հիմնական իրավունքները և այլն:

Այսպես, շնորհիվ այս նորմերի պետականահենք բնույթի՝ վերջիններս ընկնում են իրավակարգի հիմքում՝ կանխորոշելով պետականության ստեղծման և զարգացման հիմնական ուղիները և զբաղեցնում իրենց տեղը սահմանադրական իրավունքի աղբյուրների շարքում:

Գիտության մեջ պետականաստեղծ հռչակագրերի՝ իրավաբանական ուժով օժտված լինելու և սահմանադրական իրավունքի աղբյուր լինելու շուրջ միատեսակ մոտեցում չկա: Հեղինակաների մի խումբ, առաջնորդվելով պոզիտիվիստական իրավագիտակցության ստանդարտներով, կտրականապես ժխտում է հռչակագրերի՝ իրավաբանական ուժով օժտված լինելու փաստը՝ համարելով դրանք զուտ պատմական նշանակության ակտեր: Վերջիններս սովորաբար հիմնվում են այն փաստի վրա, որ պետականաստեղծ հռչակագիրը՝ որպես նորմատիվ-իրավական ակտի ձև, օրենսդրության մեջ նախատեսված չէ²: Սակայն տարօրինակ կլիներ պատկերացնել մի իրավական համակարգ, որը նախատեսում է իր ոչնչացման համար ընդունվող ակտի ձև: Սույն ակտերը հանդես են գալիս որպես բացառապես *contra constitutionem* իրավական վարքագծի արդյունքում ընդունված *ultra vires* ակտեր:

¹ ««Հայաստանի անկախության մասին» հռչակագրին համապատասխան ընդունված օրենսդրական ակտերի մասին» սահմանադրական օրենք, 10.12.1990 թ. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=71>

² Տե՛ս **Логвинова И.В.** «О политико-юридическом значении деклараций», URL: <https://cyberleninka.ru/article/n/o-politiko-yuridicheskom-znachenii-deklaratsiy>

Հեղինակների մի խումբ ճանաչում է հոչակագիրը որպես սահմանադրական իրավունքի աղբյուր, սակայն, այնուամենայնիվ, այս հարցում նույնպես մոտեցումները տարբերվում են: Ս.Ա. Ավագյանը նշում է, որ հոչակագրերը քաղաքական ուժեղ ազդեցությամբ են օժտված և ուղղված են ոչ միայն «ստեղծվողի» կարգավիճակին, այլ առաջին հերթին հասարակական գիտակցությանը և պարունակում են հասարակական հարաբերությունների սահմանադրական ձևակերպումը¹:

Մ.Վ. Բագլայը նույնպես գտնում է, որ հոչակագիրը սահմանադրական իրավունքի աղբյուր է, սակայն հոչակագրի ընդունումն օրենսդրական համապատասխան մեխանիզմի բացակայության պայմաններում արդարացում է «այն ինչ արգելված չէ օրենքով՝ թույլատրված է» սկզբունքով: Հեղինակի սույն եզրահանգման հետ համաձայն չենք, քանզի սահմանադրական իրավունքին, որպես հանրային իրավունքի ճյուղի, սույն սկզբունքը բնորոշ չէ, այն հատուկ է մասնավոր իրավունքի ճյուղերին՝ որպես դիսպոզիտիվ իրավակարգավորման գերակայման արտացոլում²:

Ինչ վերաբերում է 1990 թվականի օգոստոսի 23-ին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունված Հայաստանի անկախության մասին հոչակագրին, նշենք, որ մեր գնահատմամբ՝ Անկախության հոչակագիրն ընդունվելուց հետո, հատկապես 1995 թ. Սահմանադրության ընդունմամբ, ժամանակի ընթացքում հասարակական ընկալման տեսանկյունից որոշակիորեն անցավ այսպես ասած երկրորդ պլան, ընդ որում թե՛ պատմաքաղաքական, թե՛ իրավական առումով:

Երբ խորին համոզմամբ այն մեզանում դեռևս դիտարկվում է որպես կենդանի գործող փաստաթուղթ, հետևաբար՝ նաև սահմանադրական իրավունքի գործող աղբյուր, զուտ շնորհիվ այն հանգամանքի, որ մեր Սահմանադրության հեղինակները ժամանակին Սահմանադրության նախաբանում ուղղակիորեն հղում տվեցին և վկայակոչեցին այն՝ դրանով իսկ ուղղակիորեն կամ անուղղակիորեն այն դարձնելով Սահմանադրության անբաժանելի մաս:

Եվ այսօր Սահմանադրության նախաբանը հանդիսանում է այն նուրբ զարկերակը, որը կարելի է ասել ապահովում է Անկախության հոչակագրի՝

¹ **Авакьян С.А.** Конституционное право России: Учебный курс. - В 2-х т. - 4-е изд., перераб. и доп. - М.: Норма-ИНФРА-М., 2010. - Т. 1. - С. 76-77.

² **Баглай М.В.** Конституционное право Российской Федерации: Учебник. - М.: Норма: ИНФРА-М, 2011. - С. 38.

որպես գործող իրավական ակտի կարգավիճակը և թույլ չի տալիս այն դարձնել զուտ պատմական փաստաթուղթ:

2. Անկախության հռչակագրերը՝ սահմանադրական դատարանների իրավավերլուծական մտքի առարկա:

2.1 Հայաստանի անկախության մասին հռչակագիրը ՀՀ սահմանադրական դատարանի նախադեպային իրավունքում:

Դիտարկելով Սահմանադրության նախաբանը և Հայաստանի անկախության մասին հռչակագիրը /այսուհետ նաև՝ Անկախության հռչակագիր/ որպես մեկ միասնական անքակտելի ամբողջություն և անդրադառնալով իր գործունեության տարբեր տարիներին ՀՀ սահմանադրական դատարանի վերաբերմունքին /անդրադարձին/ այդ իրավական ակտերին կարելի է դիտարկել մի հետաքրքիր օրինաչափություն:

ՀՀ սահմանադրական դատարանն իր գործունեության ողջ ընթացքում այդ փաստաթղթերին անդրադարձել է իր եզակի որոշումներում, կարելի է ասել՝ բացառիկ դեպքերում, սակայն այդ բոլոր որոշումները վերաբերել են Հայաստանի Հանրապետության համար կարևորագույն, պատմական առումով շրջադարձային համարվող խնդիրների լուծմանը¹:

2.1.1. Սահմանադրության նախաբանին և կոնկրետ Անկախության հռչակագրին Սահմանադրական դատարանն անդրադարձ կատարեց 2010 թվականի հունվարի 12-ի ՍԴԴ-850² հայտնի որոշմամբ, երբ քննու-

¹ Մասնավորապես, առաջին անգամ Սահմանադրական դատարանը հղում կատարեց և առանձնակի կարևորեց Սահմանադրության նախաբանը և հատկապես դրանում ամրագրված՝ քաղաքացիական համերաշխության հաստատման անհրաժեշտությունն իր 2003 թվականի ապրիլի 16-ի ՍԴԴ-412 որոշման մեջ, երբ քննության առարկան 2003 թվականի նախագահի ընտրությունների արդյունքների վիճարկումն էր: <https://concourt.am/decision/decisions/sdv-412.htm>

² Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումը «2009 թվականի հոկտեմբերի 10-ին Ցյուրիխ քաղաքում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին» և «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին» արձանագրություններում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով, 12 հունվարի 2010 թ.:

https://concourt.am/decision/decisions/633eb2d1e11e6_sdv-850.pdf

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 3(107)2022

թյան առարկա դարձավ այսպես կոչված հայ-թուրքական արձանագրություններում ամրագրված պարտավորությունների սահմանադրականության հարցը: Այս որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրեց, որ

“5. ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին» արձանագրության դրույթները Հայաստանի Հանրապետության օրինաստեղծ ու իրավակիրառական պրակտիկայում, ինչպես նաև միջպետական հարաբերություններում չեն կարող մեկնաբանվել ու կիրառվել այնպես, որը կհակասի ՀՀ Սահմանադրության նախաբանի դրույթներին և Հայաստանի անկախության մասին հռչակագրի 11-րդ կետի պահանջներին”:

Ըստ էության իր պրակտիկայում առաջին անգամ ՀՀ սահմանադրական դատարանն այս որոշմամբ ոչ միայն անկախության հռչակագիրը դիտարկեց որպես զուտ սահմանադրական իրավունքի աղբյուր, այլ ուղղակիորեն ցույց տվեց **Սահմանադրություն-Սահմանադրության նախաբան-Անկախության հռչակագիր** անքակտելի կապը և դրանց միասնությունը՝ որպես մեկ ամբողջական սահմանադրական ակտ:

Թե ինչ եղավ այս որոշումից հետո, բոլորին հայտնի է, ավելի քան համոզված ենք, որ պատմաքաղաքական այդ ելքի վրա իր ուրույն ազդեցությունն ունեցավ նաև հենց ՀՀ սահմանադրական դատարանի հիշյալ որոշումը:

2.1.2. Հաջորդ և այս պահի դրությամբ դեռևս վերջին դեպքը, երբ Սահմանադրական դատարանն անդրադարձ է կատարել այս խնդրին, 2021 թվականի ապրիլի 29-ի ՍԴՈ-1590² որոշումն էր, որի քննության առարկան, ըստ էության եթե կարճ ձևակերպենք, Սահմանադրական

¹ Ըստ Հայաստանի անկախության մասին հռչակագրի 11-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգնում 1915 թվականին Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործին:

² Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումը «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Ազգային ժողովի կանտոնակարգ» սահմանադրական օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ մասերի, 5-րդ հոդվածի 2-րդ մասի 4.2-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով, 29 ապրիլի 2021 թ.: <https://www.concourt.am/decision/decisions/sdv-1590.pdf>

ՍԱՀՄԱՆԱՐԴՐՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 3(107)2022

փոփոխությունների համար նախատեսված մի շարք ընթացակարգերի սահմանադրականության հարցն էր: Եվ կրկին քննության առարկա էր տվյալ պատմական ժամանակաշրջանում հանրային կյանքի համար հույժ կարևոր և լայն հասարակության կողմից ոչ միանշանակ ընկալվող իրադարձություն:

Չնայած այն հանգամանքին, որ այս որոշումը միանշանակ չընկալվեց հասարակության կողմից, մեր գնահատմամբ դրանում ամրագրվեց մի կարևորագույն իրավական դիրքորոշում:

Սահմանադրական դատարանն իր որոշման 5.2 կետով Սահմանադրության 1,2,3 և 203 անփոփոխելի դրույթների հետ մեկտեղ Սահմանադրության անփոփոխելի դրույթ ճանաչեց նաև Սահմանադրության նախաբանը: Իսկ ըստ «Սահմանադրության նախաբանի» «Սահմանադրությունն ընդունվել է՝ հիմք ընդունելով Հայաստանի անկախության մասին հռչակագրում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքները և համազգային նպատակները: Այսպիսով՝ «Սահմանադրական դատարանը Հռչակագրի՝ հայոց պետականության հիմնարար սկզբունքներ և համազգային նպատակներ արտացոլող նորմերը ճանաչեց որպես սահմանադրական անփոփոխելի նորմեր:

Այդ որոշման ընդունումից հետո որոշ մասնագետներ միանշանակ չընկալեցին այս իրավական դիրքորոշումը, ընդհուպ պնդեցին, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէ այսպիսի արձանագրումներ անել:

Այնուամենայնիվ պետք է ընդունել, որ մինչ այդ պահը Սահմանադրության նախաբանի անփոփոխելի բնույթի հիմնավորումները մնում էին տեսական մոտեցումների տիրույթում և դրա ուղղակի նորմատիվ ձևակերպումը տրվեց միայն «Սահմանադրական դատարանի հիշյալ որոշմամբ:

Մեր կարծիքով՝ այս իրավական դիրքորոշումը, ըստ իր ոչ միայն իրավական, այլ նաև պատմաքաղաքական ազդեցության, վերջին տասնամյակի կարևորագույն դիրքորոշումն էր, որ ամրագրվել է «Սահմանադրական դատարանի կողմից, և եթե հետագա իրավակիրառ և իրավաստեղծ պրակտիկայում ապահովվի դրա անշեղ կենսագործումը, այն հնարավորություն կտա հետագայում ապահովել թե՛ Սահմանադրության նախաբանի և թե՛ հետևաբար՝ Անկախության հռչակագրի

անձեռնմխելիությունը՝ պատմաքաղաքական ցանկացած շրջադարձային իրավիճակներում:

Այս առումով պետք է նշել, որ Սահմանադրական դատարանն իր այս ձևակերպման առումով շատախոս չի գտնվել և որևէ կերպ չի հիմնավորել, թե ինչ է ընկած եղել իր այս իրավական դիրքորոշման հիմքում: Այս առումով առավել հետաքրքրական են այս որոշման վերաբերյալ առանձին դատավորների հայտնած հատուկ կարծիքների վերլուծությունները: Դրանցով մենք հնարավորություն ենք ստանում անուղղակի կերպով հասկանալ, թե ինչ գաղափարներով և դատողություններով են առաջնորդվել նշված որոշման ընդունմանը մասնակցող դատավորները:

Մասնավորապես հետաքրքրական են հետևյալ ձևակերպումները.

«Սահմանադրության նախաբանն արտահայտում է Հայաստանի Հանրապետության առաջին սահմանադրի՝ Հայ ժողովրդի իղծերը, նպատակները (հայրենիքի հզորացումը և բարգավաճումը, սերունդների ազատությունը, ընդհանուր բարեկեցությունը և քաղաքացիական համերաշխությունը), սկզբունքները և այն արժեքները, որոնք ընկած են Սահմանադրության ընդունման նպատակների և շարժառիթների հիմքում:...

(...) Եթե որևէ իրավական դրույթ անփոփոխելի է, ապա առավել ևս չի կարող փոփոխելի լինել դրա հիմքը և ընդունման նպատակները:...

Սահմանադրության նախաբանի անփոփոխելիության արձանագրմամբ սահմանադրական արդարադատության տիրույթում Սահմանադրության դրույթների անփոփոխելիության կամ հավերժության որակով դիտարկելու է նաև «Հայաստանի անկախության հռչակագրում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքները և համազգային նպատակները»՝ Սահմանադրության նորմերի մեկնաբանման և սահմանադրաիրավական վեճերի լուծման ընթացքում»¹:

¹ 2021 թվականի ապրիլի 29-ի ՍԴԻ-1590 որոշման վերաբերյալ Սահմանադրական դատարանի դատավոր Վ.Մ. Գրիգորյանի (համընկնող) հատուկ կարծիքը: https://concourt.am/pdf/uploads/6206579b809b2_sdv-1590-grigoryan.pdf

Ամփոփելով, կարող ենք փաստել, որ Հայաստանի Անկախության հռչակագիրը տարիների ընթացքում թեկուզ և դանդաղ քայլերով սահմանադրական արդարադատության իրականացման ընթացքում կամ դրա արդյունքում մի կողմից իր դիրքերն է ամրապնդել որպես Սահմանադրության անբաժանելի և անփոփոխելի մաս հանիսացող իրավական փաստաթուղթ, մյուս կողմից՝ ինքնին հանիսացել է այն գործիքը, որին դիմել է Բարձր դատարանն ամեն անգամ, երբ կարիք է եղել առնվազն իրավական դաշտում թուլացնել առկա հասարակական լարվածությունը:

2.2 Լատվիայի ՍՍՀ Գերագույն խորհրդի 1990 թ.-ի մայիսի 4-ի հռչակագիրը՝ Լատվիայի Հանրապետության անկախության վերականգնման մասին:

Լատվիայի անկախության հռչակագրով Հանրապետությունում ստեղծվեց օրենսդրության գործողության դուալիստական մոդել, որի պայմաններում համատեղվում էր հին և նոր իրավակարգերի գործողությունը: Սակայն նման համադրման արդյունքում անխուսափելիորեն առաջանում էին հակասություններ, որոնց լուծման համար հռչակագիրը նախատեսում էր կոլիզիոն նորմեր:

Լատվիայի անկախության վերականգնման հռչակագիրը վերականգնում է Լատվիայի 1922 թ. սահմանադրության գործողությունը, այնուհետև կասեցնում է այն՝ բացառությամբ այն հոդվածների, որոնք ըստ այդ Սահմանադրության կարող են փոփոխվել միայն համաժողովրդական հանրաքվեի միջոցով: Միևնույն ժամանակ՝ հնարավոր է համարում խորհրդային Լատվիայի օրենսդրության գործողությունն այնքանով, որքանով այն չի հակասում 1922 թ.-ի Սահմանադրության անփոփոխելի հոդվածներին: Հին և նոր իրավակարգի բաղադրատարրերի միջև առաջացած հակասությունների լուծման լիազորությամբ էր օժտվում Լատվիայի սահմանադրական դատարանը:

Հետագայում, Լատվիայի սահմանադրական դատարանն իր՝ 29.11.2007 թ.-ի որոշմամբ ընդգծեց, որ Հռչակագիրը համապարտադիր, իրավաբանական ուժով լիարժեքորեն օժտված իրավական ակտ է՝ անկախ այն հանգամանքից, որ վերջինիս ընդունման հիմքերը և կարգը օրենսդրությամբ նախատեսված չեն: Սահմանադրական դատարանը կարող է քննարկել օրենքների՝ Լատվիայի անկախության վերականգնման

հոչակագրին համապատասխանելու հարցը: Այդ թվում՝ ցանկացած նորմատիվ-իրավական ակտ կարող է գնահատել Հոչակագրի նախաբանին համապատասխանելիության տեսանկյունից, քանի որ վերջինս հանդիսանում է Հոչակագրի անբաժանելի մաս: Սահմանադրական դատարանը որոշման մեջ նշում է, որ սահմանադրական իրավունքի տեսանկյունից Հոչակագիրը կարգավորում է հիմնարար խնդիրներ, ինչի շնորհիվ հոչակագրային նորմերն իրենց բնույթով սահմանադրական նորմեր են՝ օժտված իրավաբանական ուժով: Հոչակագրային նորմերի սույն բնութագիրը սահմանադրական իրավունքի տեսանկյունից օբյեկտիվ է և չի կարող վիճարկվել՝ սահմանադրական իրավունքում հոչակագրին ընդունելու համապատասխան ընթացակարգի բացակայության հիմնավորմամբ¹:

2.3 Մոլդովայի Հանրապետության անկախության մասին հոչակագիրը, 27.08.1991 թ.

Մոլդովայի անկախության մասին հոչակագիրը Մոլդովայի սահմանադրական դատարանի որոշումներից մեկում հայտնվել է վերջինիս ուշադրության կիզակետում այն բանից հետո, երբ հակասություն ի հայտ եկավ Հոչակագրի և Մոլդովայի սահմանադրության միջև:

Գործի նախապատմությունը կայանում էր նրանում, որ համաձայն Սահմանադրության՝ Մոլդովայի պետական լեզուն մոլդովերենն է, որը գործում է լատինատառ գրաֆիկայի հիման վրա: Միննույն ժամանակ Սահմանադրության նախաբանը հղում է կատարում Հոչակագրին՝ համարելով վերջինս ժողովրդի՝ սուվերեն պետականություն ստեղծելու կամաարտահայտության արդյունք:

Սահմանադրական դատարանը, իր 2013 թվականի դեկտեմբերի 5-ի² որոշման մեջ վերլուծելով ի հայտ եկած հակասությունը, նշում է, որ դիմումը վերաբերում է Հոչակագրի, Սահմանադրության և Սահմանադրության նախաբանի հարաբերակցությանը, և վերջիններիս անվանում է փոխկապակցված սահմանադրական նորմեր և սկզբունքներ: Դատարանը նշում է, որ Հոչակագիրը հանդիսանում է Մոլդովայի

¹ Տե՛ս **Гамбарян А.С.** «Декларация о независимости Армении: непроходимая гарантия охраны государственности» // Юридический аналитический журнал. - 2020. - 15(2). - С. 39.

² Постановление Конституционного Суда Республики Молдова от 5 декабря 2013 года. //URL: <https://constcourt.md/ccdocview.php?tip=hotariri&docid=476&l=ru?tip=hotariri&docid=476&l=ru> (07.10.2022)

իրավաքաղաքական հիմքը, վերջինիս «ծննդյան վկայականը» և կանխորոշում է Մոլդովայի «սահմանադրական ինքնությունը»: Մինչ Սահմանադրության ընդունումը Հռչակագիրը հանդիսանում էր պետական համակարգի ձևավորման և հանրապետության սահմանադրական ռեժիմի որոշման միակ և անմիջական սահմանադրական հիմքը:

Այս մասում Սահմանադրական դատարանը Հռչակագրի նորմերի անմիջական գործողության հարց է բարձրացնում՝ նշելով, որ Սահմանադրության և ընթացիկ օրենսդրության բացակայության պայմաններում Հռչակագիրը եղել է հասարակական-պետական կարգի սահմանադրական ռեժիմի որոշման միակ և անմիջական սահմանադրաիրավական աղբյուր:

Սահմանադրական դատարանը նշում է, որ Հռչակագիրը սահմանադրական արժեքների լակոնիկ համակարգ է, ինչից և բխում է Մոլդովայի ղեկավարության իշխանության լեգիտիմությունը:

Մինչ այդ, Դատարանը, իր 2013 թվականի ապրիլի 22-ի №4 որոշմամբ անդրադառնալով Սահմանադրության նախաբանի իրավական բնութագրի հարցին, նշել է, որ Նախաբանի դրույթները իմպերատիվությամբ են օժտված և անկախ աղբյուր է հանդիսանում այն նորմերի համար, որոնք անմիջականորեն Սահմանադրությամբ նախատեսված չեն, սակայն բխում են Նախաբանից:

Սահմանադրական դատարանն իր՝ 2013 թվականի դեկտեմբերի 5-ի որոշմամբ բանաձևում է նախաբանի սահմանադրական «կրեդոն».
«Նախաբանի նպատակը կայանում է ոչ միայն իրավունքների երաշխավորման կամ իրավական փաստարկների առաջ բերման, այլ նաև հասարակության ֆունդամենտալ արժեքների հաստատման մեջ»:

Այնուամենայնիվ, Դատարանի դիրքորոշումների մեջ առկա է ակներև հակասություն. մի կողմից որոշման մեջ նշվում է, որ «Սահմանադրության նորմերը, որոնք արտացոլված են Անկախության մասին հռչակագրի մեջ, չեն կարող չհամապատասխանել... Հռչակագրի սահմաններին: ... Լինելով Մոլդովայի Հանրապետության պետական սրտեղծ ակտ՝ Հռչակագիրը չի կարող ենթարկվել որևէ փոփոխությունների կամ լրացումների: ... Օժտված է «անխախտելի կլաուզուլա»-ի կարգավիճակով, քանի որ կանխորոշում է քաղաքական համակարգի սահմանադրական ինքնությունը: Վերջինիս սկզբունքների փոփոխությունը կնշանակեր սույն ինքնության ոչնչացում»¹:

¹ Տե՛ս նույն տեղում՝ կետ 88, էջ 18:

Դատարանը գտնում է, որ Հոչակագիրն ի սկզբանե սահմանադրական բլոկի անձեռնմխելի տարր է և օրենսդիրը չի կարող ընդունել որևիցե մի դրույթ, որը կհակասի Հոչակագրին:

Միևնույն ժամանակ, Դատարանը հավասարեցնում է Սահմանադրության և հոչակագրի իրավաբանական ուժը՝ պնդելով, որ քանի որ Սահմանադրությունը արտացոլում և երաշխավորում է հոչակագրային արժեքները՝ նրանք պետք է դիտարկվեն որպես միաստիճան նորմեր, որոնց միջև առաջացող հակասությունները պետք է լուծվեն նորմերի մեկնաբանման միջոցով: Սակայն, եզրափակիչ մասում Դատարանը, վերջնական գնահատական տալիս, եզրափակում է՝ նշելով. «Անկախության մասին հոչակագրի և Սահմանադրության տեքստերի միջև հակասություն առաջանալու դեպքում պետք է գերակայի Անկախության մասին հոչակագիրը»:

Ինչպես նաև, Բարձր դատարանը մատնանշում է հոչակագրի իրավական անձեռնմխելիությունը՝ բացառելով վերջինիս փոփոխման որևէ հնարավորություն:

Միևնույն ժամանակ հետաքրքրական է այն, որ Մոլդովայի անկախության մասին հոչակագիրն ընդունվել է օրենքի տեսքով, ինչը՝ ըստ Մոլդովայի սահմանադրական դատարանի 2013 թ.-ի դեկտեմբերի 5-ի որոշման՝ արված էր սույն ակտին պետական իշխանության մարմնի կայացրած պաշտոնական ակտի իրավաբանական ուժով օժտելու, ինչպես նաև միջազգային ճանաչման համար: Գտնում ենք, որ Դատարանի դիրքորոշումներում առկա է հակասություն. մի կողմից առաջ է քաշում հոչակագրի անձեռնմխելիությունը, անփոփոխելիությունը և մատնանշում վերջինիս վերօրենսդրական, վերպետական բնույթը, մյուս կողմից՝ արդարացնում է հոչակագրի՝ օրենքի ձևով կաղապարումը՝ կելզենյան բուրգի մեջ այն «տեղավորելու» համար, ինչի կարիքը չկա, քանի որ հոչակագրի իրավաբանական ուժով օժտված լինելն օբյեկտիվ իրականություն է՝ անկախ այն հանգամանքից՝ ունի պոզիտիվ իրավունքին բնորոշ իրավական ակտի ձև, թե ոչ:

Գտնում ենք, որ նման մոտեցումը հղի է իրավունքի անհարկի պոզիտիվիզացմամբ: Անկախության պետականաստեղծ հոչակագիրն իր իրավաստեղծագործական և իրավաձևավորիչ պոտենցիալի շնորհիվ՝ ձևական-իրավաբանական մեթոդիկայի տեսանկյունից իրավաբանական ուժով օժտվելու կարիք չունի: Այս առումով նույնպես Դատարանի

դիրքորոշումներում առկա է հակասություն: Հռչակագիրն իր համընդգրկուն, պետականաստեղծ և իրավաձևավորիչ բնույթի շնորհիվ չի տեղավորվում իրավական ակտերի Կելզենյան բուրգի տրամաբանության մեջ: Եվ, առհասարակ, նմանաբնույթ իրավունքի աղբյուրների բնույթը չպետք է արհեստականորեն սահմանափակել՝ կաղապարելով վերջիններին՝ ժամանակի և տարածության մեջ պետության իրավաքաղաքական կյանքում զարգացման և ինքնադրսևորվելու պոտենցիալը: Մեր խորին համոզմամբ՝ նման մոտեցումն ավելորդ պոզիտիվիզմի դրսևորում է:

Դատարանը սահմանադրական բլոկի նորմերի փոխկապակցված մեկնաբանմամբ ուղղակիորեն կոլիզիոն կանոն է սահմանել, որը համապատասխանում է «Lex superior» կոլիզիոն կանոնի տրամաբանությանը: Սրանով իսկ Բարձր դատարանը հաստատում է, որ Անկախության հռչակագրի պետականահեռք նշանակություն ունեցող նորմերը իրավական համակարգում ավելի բարձր ուժով են օժտված, քան օրենսդրության մնացյալ բաղադրիչները, այդ թվում՝ Սահմանադրությունը և վերջինիս նախաբանը:

Եզրահանգում: Այսպիսով, հետխորհրդային հանրապետությունների Սահմանադրական դատարաններն իրենց մի շարք որոշումներում հստակ արտահայտում են այն դիրքորոշումը, որ անկախության հռչակագրերը հանդիսանում են սահմանադրական իրավունքի լիակատար աղբյուր և շնորհիվ իրենց վերսահմանադրական պետականահաստատ էության՝ իրենցում պարունակվող հիմնարար սկզբունքներն ու արժեքները գերակայում են պետական քաղաքականության թե՛ ներքին, թե՛ արտաքին ասպարեզներում:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. Հայաստանի անկախության մասին հռչակագիր/ 23.08.1990 թ. : URL: <https://www.gov.am/am/independence/>
2. «Հայաստանի անկախության մասին» հռչակագրին համապատասխան ընդունված օրենսդրական ակտերի մասին» սահմանադրական օրենք, 10.12.1990 թ.: URL: <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=71>

3. Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումը «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ մասերի, 5-րդ հոդվածի 2-րդ մասի 4.2-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով, 29 ապրիլի 2021 թ.: <https://www.concourt.am/decision/decisions/sdv-1590.pdf>

4. 2021 թվականի ապրիլի 29-ի ՍԴԴ-1590 որոշման վերաբերյալ Սահմանադրական դատարանի դատավոր Վ.Մ. Գրիգորյանի (համընկնող) հատուկ կարծիքը:

URL: https://concourt.am/pdf/uploads/6206579b809b2_sdv-1590-grigoryan.pdf

5. Постановление Конституционного Суда Республики Молдова от 5 декабря 2013 года.

URL:<https://constcourt.md/ccdocview.php?tip=hotariri&docid=476&l=ru?tip=hotariri&docid=476&l=ru>

6. **Авакьян С.А.** Конституционное право России: Учебный курс. - В 2 т. - 4-е изд., перераб. и доп. - М.: Норма-ИНФРА-М., 2010. - Т. 1. - С. 76-77.

7. **Баглай М.В.** Конституционное право Российской Федерации: Учебник. - М.: Норма: ИНФРА-М, 2011. - С. 38.

8. **Винников А.Ю.** «К вопросу о правовых основаниях классификации деклараций».

URL:<https://cyberleninka.ru/article/n/k-voprosu-o-pravovyh-osnovaniyah-klassifikatsii-deklaratsiy>

9. **Гамбарян А.С.** «Декларация о независимости Армении: непроходимая гарантия охраны государственности» // Юридический аналитический журнал. – 2020. - 15(2). - С. 39.

10. **Логвинова И.В.** «О политико-юридическом значении деклараций»,

URL: <https://cyberleninka.ru/article/n/o-politiko-yuridicheskom-znachenii-deklaratsiy>

ПОЛИТИКО-ПРАВОВОЕ ЗНАЧЕНИЕ ДЕКЛАРАЦИЙ О СОЗДАНИИ ГОСУДАРСТВА В ПРЕЦЕДЕНТНОМ ПРАВЕ КОНСТИТУЦИОННОГО СУДА

Аннотация

Статья посвящена вопросам политико-правового значения деклараций о создании государства в свете прецедентного права конституционных судов постсоветских республик. В статье представлена общая характеристика деклараций о создании государства и основные научные подходы в связи с этим. Авторы на основании проведенного ими сравнительно-правового анализа представляют и комментируют те решения Конституционных Судов Армении, Латвии и Молдовы, в которых Высокие суды обратились к юридической характеристике деклараций о создании государства.

Авторы считают, что декларации о создании государства являются полноценным источником конституционного права, отражают аксиологические и системные изменения общественных отношений и являются основой построения нового правового строя. Авторы считают настоящие акты надконституционными актами, отраженные в которых ценности и принципы имеют верховенство над другими законодательными актами, в том числе над Конституцией.

Ключевые слова: декларация о создании государства, поведение contra constitutionem, constituent power, конституционная самобытность, конституционное правосудие.

POLITICAL-LEGAL SIGNIFICANCE OF STATE-MAKING DECLARATIONS WITHIN THE FRAMEWORK OF THE CASE LAW OF THE CONSTITUTIONAL COURT

Annotation

The article is devoted to the main issues of political-legal significance of state-making declarations in the light of the case law of the constitutional courts of the post-Soviet republics. The common characteristics of state-

making declarations and the main scientific approaches thereof are referred to this. The authors conduct a comparative-legal analysis, presenting and construing the decisions of the constitutional courts of the Republic of Armenia, Lithuania and Moldova, in which the high courts addressed the legal characteristics of state-making declarations.

The authors consider that the state-making declarations are full-fledged source of the constitutional law, which reflect the axiological and systemic changes in public relations, and serve as basis for establishing new legal order. The authors consider that these acts are considered as supra-constitutional, and the values and principles reflected therein prevail other legislative acts, including the constitution.

Keywords: state-making declarations, behavior contra constitutionem, constituent power, constitutional dignity, constitutional justice.



ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ՍԴ նախագահի խորհրդական,
իրավունքի մագիստրոս, քաղաքական
գիտությունների թեկնածու, դոցենտ



ՇՈՂԵՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության
կադրերի վարչության հրահանգիչ,
իրավագիտության մագիստրոս

3(107)2022

◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

**ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ**

Ամփոփագիր

Սույն հետազոտության հիմնական նպատակն է առանձնացնել մարդու հիմնարար իրավունքներից և ազատություններից մեկի՝ տեղեկատվության ազատության, սահմանափակման սահմանադրաիրավական հիմքերը:

Ուսումնասիրելով միջազգային փորձը և արտակարգ իրավիճակներում տեղեկատվության ազատության հնարավոր սահմանափակումների դեպքեր՝ քննարկվել է նաև Սահմանադրությամբ նախատեսված ճգնաժամային կառավարման համապետական երկու իրավական ռեժիմներից (արտակարգ դրություն և ռազմական դրություն) զատ՝ արտակարգ իրավիճակի իրավական ռեժիմի նախատեսումը:

◆ ՍԱՀՄԱՆԱՐՊՎԱԿԱՆ ՂԱՏՎՈՒԹՅԱՆ

Հիմնաբառեր. տեղեկատվություն, ազատություն, սահմանափակում, իրավունք, արտակարգ իրավիճակ, իրավական ռեժիմ, համավարակ:

Ամրագրելով քաղաքացիների և իրավաբանական անձանց տեղեկատվական իրավունքները, հաստատելով ինքնիշխան ժողովրդավարության պայմաններում դրանց ազատ իրականացման սկզբունքները՝ պետությունը պարտավոր է ապահովել նաև հասարակության շահերի և անհատի իրավունքների պաշտպանությունը, ինչը, հատուկ դեպքերում, ենթադրում է տեղեկատվության ազատության որոշակի սահմանափակումներ:

«Սահմանափակում» եզրույթը մեկնաբանվում է որպես սահման, պայման, հանգամանք, արգելք, խոչընդոտ, որոշակի կանոնների պահպանում, որոնք սահմանափակում են որոշակի իրավունքներ, գործողություններ, նեղացնում, նվազեցնում հնարավորությունների, գործողությունների շրջանակը¹:

Իրավական սահմանափակումն առաջին հերթին ոչ օրինական արարքի օրինական զսպումն է, որը պայմաններ է ստեղծում հակասությունների գործողությունների՝ օրենքով ամրագրված սահմանների մեջ ներառման համար: Որպես իրավական կարգավորման միջոցներ՝ իրավական սահմանափակումները կիրառվում են օրենսդրության բոլոր ճյուղերում:

Իրավունքների և ազատությունների սահմանափակումներն անձի (քաղաքացու) իրավունքների և ազատությունների՝ օրենքով ամրագրված սահմաններ են, որոնք արտահայտվում են արգելքներով, պարտականություններով, պատասխանատվությամբ, միջամտությամբ, որոնց պարտադիր առկայությունը նախորոշված է սահմանադրորեն ճանաչված արժեքների պաշտպանության անհրաժեշտությամբ, և որոնց նպատակն է ապահովել անհրաժեշտ հավասարակշռությունը անհատի, հասարակության և պետության շահերի միջև²:

Ըստ Ա.Գ. Վաղարշյանի՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումը, Սահմանադրությամբ ամրագրված և սահմանադրված կոնկրետ իրավունքի կամ ազատության բովանդակության

¹ Տե՛ս **Даль В.И.** Толковый словарь живого великорусского языка. - М., 2002. - С. 536; Словарь синонимов русского языка. - М., 1986. - С. 305; **Ожегов С.И., Шведова Н. Ю.** Толковый словарь русского языка. - М., 1997:

² Տե՛ս **Паламарчук А.В.** Свобода информации и законность: теория и практика. Монография. - М., 2013:

նեղացումը, նվազեցումը, բացառումն է պետության կողմից՝ ինչ-ինչ կարևոր շահերից ելնելով:

Հասարակության զարգացումն անխուսափելիորեն ծնում է իրադրություններ, որոնք պահանջում են պետությունից սահմանափակել մարդու իրավունքները: Ինչպիսիք սակայն այն է, թե ինչ հիմքերով, ինչ ժամանակով և ինչ շրջանակներում կարելի է և պետք է դա արվի: Այս ոլորտում կամայականությունը և չարաշահումներն անթույլատրելի են¹:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա) 10-րդ հոդվածը սահմանում է, որ տեղեկատվության տարածման իրավունքի իրացումը նույն սուբյեկտի վրա դնում է պարտականություններ և պատասխանատվություն, այսինքն համաձայն Եվրոպական Կոնվենցիայի՝ տեղեկատվության ազատ տարածման իրավունքի սահմանափակումները ոչ միայն հնարավոր են, այլ նաև պարտադիր: Համաձայն նույն հոդվածի՝ սահմանափակումներն անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով²:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային համաձայնագրի 19-րդ հոդվածի 2-րդ կետը երաշխավորում է ամեն տեսակի տեղեկատվություն որոնելու, ստանալու և տարածելու ազատությունը: Նույն հոդվածի 3-րդ կետը, 2-րդ կետով նախատեսված իրավունքից օգտվելիս, հատուկ պարտականություններ և պատասխանատվություն է դնում, ինչը կապված է որոշ սահմանափակումների հետ, որոնք անհրաժեշտ են՝

¹ Տե՛ս **Վաղարշյան Ա.Գ.**, Մարդու իրավունքների ու ազատությունների կենսագործման և սահմանափակման սահմանադրական նորամուծությունները (համակարգային և ձևական իրավաբանական մեկնաբանություն), http://www.yso.am/files/01A_Vagharshyan-1516337765-.pdf:

² Տե՛ս European Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms, Rome, 1950:

ա) այլ անձանց իրավունքներն ու հեղինակությունը հարգելու համար,
բ) պետական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության պահպանության համար¹:

Տեղեկատվության հասանելիության սահմանափակման չափանիշները և սկզբունքները սահմանող կարևոր փաստաթուղթ է «Ազգային անվտանգության և տեղեկատվության իրավունքի միջազգային սկզբունքներ» փաստաթուղթը, որը մշակվել է 2013 թ. Ցվանեում (Հարավային Աֆրիկա):

«Ցվանեի սկզբունքներ» միջազգային փորձագիտական փաստաթղթի 3-րդ սկզբունքի համաձայն՝ տեղեկատվություն ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել ազգային անվտանգության հիմքով միայն այն դեպքում, եթե կառավարությունը կարողանա ապացուցել, որ սահմանափակումը՝

ա) նախատեսված է օրենքով. օրենքը պետք է լինի մատչելի, միանշանակ, պետք է կազմված լինի նպատակային և հստակ, որպեսզի անհատները հասկանան, թե ինչպիսի տեղեկատվություն կարող է չտրամադրվել, ինչպիսի տեղեկատվություն պետք է տարածել, իսկ տեղեկատվության տրամադրման հետ կապված որ գործողություններն են պատժելի:

բ) անհրաժեշտ է ժողովրդավարական պետությունում. Սահմանափակումը պետք է համապատասխանի համաչափության սկզբունքին և պետք է լինի վնասից պաշտպանվելու համար նախատեսված հասանելի նվազագույն սահմանափակող միջոցը: Սահմանափակման կիրառումը չպետք է խախտի տեղեկատվություն ստանալու իրավունքի բուն էությունը:

գ) ազգային անվտանգության օրինաչափ շահի² պաշտպանության համար է. ազգային անվտանգության հիմքով հրապարակման համար արգելման ենթակա տեղեկատվության նեղ կարգերը պետք է հստակորեն սահմանվեն օրենքով³:

¹ Տե՛ս International Covenant on Civil and Political Rights, (Adopted and opened for signature, ratification and accession by General Assembly resolution 2200A (XXI) of 16 December 1966 entry into force 23 March 1976):

² «Ազգային անվտանգության օրինաչափ շահը» նշանակում է այնպիսի շահ, որի բուն նպատակը և առաջնային ազդեցությունն ուղղված է ազգային անվտանգության պահպանությանը՝ միջազգային և ազգային օրենքներին համապատասխան: Ազգային անվտանգության շահն օրինաչափ չի համարվում, եթե դրա իրական նպատակը կամ առաջնային ազդեցությունն ուղղված են ազգային անվտանգությանը չառնչվող որևէ շահի պաշտպանությանը:

³ Տե՛ս Global principles on national security and the right to information, Tshwane, 2013:

Ահաբեկչության դեմ պայքարի համատեքստում ՋԼՄ-ներում խոսքի և տեղեկատվության ազատության վերաբերյալ հռչակագիրը, որն ընդունվել է 2005 թ.-ի մարտի 2-ին ԵԽ նախարարների կոմիտեի կողմից, անդրադառնում է տեղեկատվության ազատությանը՝ մասնավորապես պետական իշխանություններին կոչ անելով զանգվածային լրատվամիջոցներին տրամադրել համապատասխան տեղեկատվություն, չսահմանել մամուլում խոսքի և տեղեկատվության ազատության նոր սահմանափակումներ, բացառությամբ, եթե դրանք խիստ անհրաժեշտ և համաչափ են ժողովրդավարական հասարակությունում, և գործող օրենքներն ու այլ միջոցառումները բավարար չեն: Հռչակագրում նաև նշվում է, որ լրագրողներին պետք է մատչելի լինի մշտապես թարմացվող տեղեկատվություն, ինչը պետական մարմինները պետք է ապահովեն խոսնակներ նշանակելու և մամուլի ասուլիսներ կազմակերպելու միջոցով: Սակայն, երաշխիքների հետ մեկտեղ, Հռչակագիրը սահմանում է նաև որոշակի սահմանափակումներ՝ կապված անմեղության կանխավարկածի, անձնական կյանքի անձեռնմխելիության, այլոց իրավունքների պաշտպանության հետ¹:

ՍԱՀՄԱՆԱՐԴՐՎԿԱՆ ՂԱՏՎՈՒՄ 3(107)2022

Ճգնաժամի դեպքում արտահայտվելու ազատության և տեղեկատվության ազատության պաշտպանության վերաբերյալ ԵԽ նախարարների կոմիտեի ուղեցույցը (ընդունվել է 2007 թ.-ի սեպտեմբերի 26-ին), ժողովրդավարական պետության գործունեության կարևոր գործառույթներից մեկը համարելով լրատվության ազատության գործոնը՝ անդրադարձել է ճգնաժամային իրավիճակներում լրատվական մասնագետների աշխատանքային պայմաններին՝ պարտավորեցնելով անդամ պետություններին ճգնաժամային իրավիճակներում լրագրողի համար ապահովել անձնական անվտանգություն, ազատ տեղաշարժվելու և տեղեկատվության ազատության իրավունքների իրացում: Ուղեցույցը նաև երաշխիքներ է սահմանում, որպեսզի ճգնաժամային իրավիճակներում անհարկի չսահմանափակվեն խոսքի և տեղեկատվության ազատության իրավունքները, ինչպես նաև սահմանում է, որ պետական մարմինները, լրատվամիջոցները, ազգային կամ միջազգային կառավարական և ոչ կառավարական կազմակերպությունները ձգտեն ապահովել խոսքի և

¹ St’u Declaration on freedom of expression and information in the media in the context of the fight against terrorism, 2005:

տեղեկատվության ազատության պաշտպանությունը ճգնաժամի պայմաններում¹:

Համավարակով պայմանավորված՝ ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ մի շարք այլ երկրներում արձանագրվեցին տեղեկատվության ազատության սահմանափակման նոր դեպքեր:

2020 թվականի իր՝ «Ժողովրդավարությունը արգելափակման պայմաններում» զեկույցում Freedom House-ը պարզել է, որ 192 երկրներից 91-ը որպես համաճարակի պաշտոնական արձագանքման մաս որոշակի սահմանափակումներ են կիրառել լրատվամիջոցների նկատմամբ:

Մի շարք պետություններ օրենքներ և միջոցներ ներդրեցին՝ փորձելով պաշտպանել երկրի անվտանգությունը, սակայն այդ կանոնակարգերից որոշներն օգտագործվել էին լրատվամիջոցներին սահմանափակելու կամ ճնշելու համար:

2020 թ.-ի ապրիլի 1-ին Human rights watch-ը հրապարակեց «COVID-19 և մարդու իրավունքները» զեկույցը, որում անդրադառնալով խոսքի ազատության և տեղեկատվության մատչելիության ապահովման իրավունքին, ընդգծել է, որ «...մարդու իրավունքների համատեքստում, հաշվի առնելով COVID-19-ը, ենթադրվում է, որ ողջ բնակչությունը պետք է արժանահավատ և արդիական տեղեկատվություն ստանա վարակի, ծառայությունների մատուցման մատչելիության, ծառայությունների մատուցման դադարեցման և իշխանությունների՝ համաճարակին արձագանքելու այլ ուղղությունների մասին»²:

Համավարակով պայմանավորված՝ եվրոպական երկրներից գրեթե ոչ մեկը չի կիրառել տեղեկատվության ազատության իրավունքի սահմանափակումներ (այդ թվում՝ Գերմանիան, Միացյալ Թագավորությունը, Իռլանդիան, Ֆրանսիան, Լատվիան, Նիդերլանդները, Շվեյցարիան, Իսպանիան, Պորտուգալիան, Իտալիան և Ուկրաինան): Ավելին, մի շարք ժողովրդավարական երկրներ, մասնավորապես, Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը, Կանադան, Նիդերլանդները, ԱՄՆ-ը, Միացյալ Թագավորությունն ու Լատվիան կոչ են արել բոլոր պետություններին շարունակել պաշտպանել ՁԼՄ-ների մատչելիությունը և տեղեկատվության

¹ Տե՛ս Guidelines on protecting freedom of expression and information in times of crisis (Adopted by the Committee of Ministers on 26 September 2007 at the 1005th meeting of the Ministers' Deputies):

² Տե՛ս Human Rights Dimensions of COVID-19 Response, <https://www.hrw.org/news/2020/03/19/human-rights-dimensions-covid-19-response>:

ազատ փոխանցումը՝ նշելով, որ անհանգստացած են որոշ պետությունների՝ համաճարակային ճգնաժամն անկախ ԶԼՄ-ների նկատմամբ չհիմնավորված սահմանափակումներ կիրառելու նպատակով օգտագործելու ջանքերով:

Տեղեկատվության ազատության իրավունքի սահմանափակումներ չկիրառեցին նաև համաճարակի դեմ պայքարի բավականին հաջողված փորձ ունեցող այնպիսի պետություններ, ինչպիսիք են Իսրայելը, Նոր Զելանդիան, Թայվանը, Հարավային Կորեան և Սինգապուրը, իսկ Կանադան, Ֆինլանդիան, Էստոնիան առհասարակ չեն նախատեսում տեղեկատվության ազատության իրավունքի սահմանափակման հնարավորություն արտակարգ իրավիճակների պայմաններում: Կանադայի օրենսդրությունը նույնիսկ սահմանում է դրա արգելքը, ըստ որի՝ սահմանափակող լիազորությունները չպետք է օգտագործվեն տեղակատվության ազատության սահմանափակման, գրաքննության համար: Ուկրաինայի օրենսդրությունը տեղեկատվության ազատության իրավունքի սահմանափակման հնարավորություն սահմանում է բացառապես հասարակական կարգի զանգվածային խախտումների, Ղազախստանի օրենսդրությունը՝ սահմանադրական կարգի տապալման վտանգի, Ռուսաստանի օրենսդրությունը՝ այդ և համանման հիմքերով (զինված ապստամբությունների, ահաբեկչությունների) հայտարարված արտակարգ դրությունների պայմաններում, և չեն սահմանում նման հնարավորություն աղետների, համավարակների և համանման հիմքերով հայտարարված արտակարգ դրությունների պայմաններում¹:

«Սահմանադրությունը, ելնելով համաշխարհային սահմանադրական պրակտիկայից, նույնպես սահմանում է իրավունքների և ազատությունների սահմանափակման կարգը և հիմքերը:

2015 թ. սահմանադրական բարեփոխումների արդյունքում արմատական վերանայման ենթարկվեց հիմնական իրավունքների սահմանափակումների կարգավորումը: Դա վերաբերում է ինչպես հիմնական իրավունքների սահմանափակման հիմնական ձևի՝ օրենքի վերապահման ամրագրմանը, այնպես էլ՝ սահմանափակումների հիմքերին: 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը հրաժարվել է հիմնական իրավունքների ընդհանուր սահմանափակումներից՝ նախատեսելով յուրաքանչյուր հիմնական իրավունքի սահմանափակման առանձին

¹ St’u Human Rights Checklist, <https://www.hrw.org/hy/news/2020/06/05/340770>:

հիմքեր, ինչը թույլ է տալիս հաշվի առնել յուրաքանչյուր հիմնական իրավունքի սահմանափակման առանձնահատկությունները¹:

Ի շահ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության ՀՀ սահմանադրությամբ կարող են սահմանափակվել՝ հաղորդակցության ազատության և գաղտնիության իրավունքը (33-րդ հոդվածի 2-րդ կետով), անձնական տվյալների պաշտպանության իրավունքը (34-րդ հոդվածի 4-րդ կետով), կարծիքի արտահայտման ազատությունը (42-րդ հոդվածի 3-րդ կետով), տեղեկություններ ստանալու իրավունքը (51-րդ հոդվածով):

Համաձայն Սահմանադրության 76-րդ հոդվածի («Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումներն արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ»)՝ ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես կասեցվել կամ լրացուցիչ սահմանափակումների ենթարկվել միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակը՝ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնված միջազգային պարտավորությունների շրջանակներում: ՀՀ սահմանադրության 33, 34, 42 և 51-րդ հոդվածները արտակարգ կամ ռազմական դրության պայմաններում սահմանափակվող իրավունքների շարքին են դասվում:

Սահմանադրության 76 հոդվածի իմաստով սահմանափակման հիմքերը երկուսն են՝ ռազմական կամ արտակարգ դրությունը:

Ինչպես գիտենք, Սահմանադրության 119 և 120-րդ հոդվածները նախատեսում են ճգնաժամային կառավարման համապետական երկու իրավական ռեժիմներ՝ ռազմական դրություն և արտակարգ դրություն: Ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ գործադիր մարմիններն իրենց ակտերով միջնորդավորում են սահմանափակման կիրառումը

¹ Տե՛ս Պողոսյան Վ., Սարգսյան Ն., «Հայաստանի Հանրապետության 2015 թ. խմբագրությամբ սահմանադրությունը. համառոտ պարզաբանումներ»: Երևան, Տիգրան Մեծ հրատ., 2016 թ., էջ 26:

կոնկրետ հարաբերություններում: Սահմանադրության ուժով ռազմական և արտակարգ դրության իրավական ռեժիմները սահմանվում են օրենքով¹:

«Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ արտակարգ դրություն հայտարարվում է միայն ՀՀ սահմանադրական կարգին անմիջական վտանգ սպառնալու դեպքում, ներառյալ՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելու կամ տապալելու, իշխանությունը զավթելու փորձերը, զինված խռովությունները, զանգվածային անկարգությունները, բռնի գործողություններով ուղեկցվող ազգային, ռասայական, կրոնական հակամարտությունները, ահաբեկչական ակտերը, հատուկ նշանակության օբյեկտների գրավումը կամ շրջափակումը, անօրինական զինված միավորումների ստեղծումը և գործունեությունը, արտակարգ իրավիճակները²:

Սակայն, ի տարբերություն սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելու կամ տապալելու, իշխանությունը զավթելու փորձերի, արտակարգ իրավիճակները համաճարակներն ու աղետները միանգամայն տարբեր են՝ հակված են ունենալ այլ ազդեցություններ և պահանջում են այլ արձագանքներ: Ուստի որոշ սահմանադրություններ (Լեհաստանի, Հունգարիայի, Արցախի Հանրապետության և այլն), տարբերակում են արտակարգ իրավիճակները՝ ռազմական և արտակարգ դրության իրավական ռեժիմներից զատ նախատեսելով նաև արտակարգ իրավիճակի իրավական ռեժիմ:

Արտակարգ իրավիճակի տարանջատումը արտակարգ դրության իրավական ռեժիմից ենթադրում է արտակարգ իրավիճակի ռեժիմի Սահմանադրությամբ ամրագրում, ինչն էլ իր հերթին ենթադրում է Սահմանադրության ուժով ռեժիմը կանոնակարգող օրենքի սահմանում: Ինչպես ռազմական կամ արտակարգ դրության վերաբերյալ օրենքները, այնպես էլ արտակարգ իրավիճակի իրավական ռեժիմի մասին օրենքը պետք է նախատեսի հիմնական իրավունքներն ու ազատությունները ժամանակավորապես կասեցնելու կամ լրացուցիչ սահմանափակումների ենթարկելու միջոցառումներ: Սահմանափակման պայմանները, սահմա-

¹ Տե՛ս ՀՀ սահմանադրություն (06.12.2015 թ., ուժի մեջ է մտել 22.12.2015 թ., ՀՀՊՏ 2015.12.21):

² Տե՛ս «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենք (21.03.2012թ., ուժի մեջ է մտել 05.05.2012 թ., ՀՀՊՏ 2012.04.25/21(895), հոդվ. 473):

նափակման գործադիր սուբյեկտներն ու օբյեկտները, եղանակներն ու ժամկետները պետք է նույնպես հստակորեն սահմանված լինեն օրենքով:

Նկատի ունենալով նաև, որ երկրում աղետի գրանցման դեպքում կամ գտնվելով դեպքի, պատահարի վայրում կամ ստանալով տեղեկատվություն վերջիններիս սպառնալիքի մասին՝ Կառավարության, պետական կառավարման համապատասխան մարմինների, մարզպետների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների համար արտակարգ իրավիճակ հայտարարելու որևէ իրավական հիմք (լիազորություն, պարտավորություն), չափանիշ կամ չափորոշիչ օրենքով սահմանված չէ, կախված արտակարգ իրավիճակի բնույթից (տեղական, համայնքային, մարզային, հանրապետական)՝ արտակարգ իրավիճակի ռեժիմ հայտարարելու, ինչպես նաև սահմանափակումներ կիրառելու լիազորությունները կարող են դրվել լիազոր մարմնի ղեկավարի, տարածքային կառավարման մարմինների ղեկավարների, տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների և ՀՀ վարչապետի վրա:

Ամփոփելով՝ կարող ենք գալ այն եզրահանգմանը, որ թեև արտակարգ իրավիճակների պայմաններում տեղեկատվության ազատությունը որոշակիորեն սահմանափակվում է, սակայն մի շարք պարտադիր ինստիտուցիոնալ գործընթացներ դեռևս կարգավորված չեն: Մասնավորապես, արտակարգ իրավիճակների իրավական ռեժիմի բացակայության պայմաններում չկա հստակ կարգավորում այնպիսի կարևոր ընթացակարգերի, ինչպիսիք են՝ արտակարգ իրավիճակ հայտարարելու և իրավական ռեժիմ հաստատելու պատասխանատու մարմինների լիազորություններն ու գործառույթները, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում կիրառվող սահմանափակումներն ու միջոցները:

Ստեղծված պայմաններում կարծում ենք, որ խիստ կարևոր է նշված գործընթացների իրավական ամրագրումը և իրավական հենքերի ստեղծումը, ինչը թույլ կտա արտակարգ իրավիճակների պայմաններում հստակ կարգավորել ոչ միայն տեղեկատվական հոսքերի կառավարման գործընթացները, այլ նաև՝ արտակարգ իրավիճակների հաղթահարման ողջ գործընթացը:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. ՀՀ սահմանադրություն (06.12.2015 թ., ուժի մեջ է մտել 22.12.2015 թ., ՀՀՊՏ 2015.12.21):
2. «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենք (21.03.2012 թ., ուժի մեջ է մտել 05.05.2012 թ., ՀՀՊՏ 2012.04.25/21(895) հոդվ. 473):
3. Declaration on freedom of expression and information in the media in the context of the fight against terrorism, 2005.
4. European Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms, Rome, 1950.
5. Global principles on national security and the right to information, Tshwane, 2013
6. Guidelines on protecting freedom of expression and information in times of crisis (Adopted by the Committee of Ministers on 26 September 2007 at the 1005th meeting of the Ministers' Deputies).
7. International Covenant on Civil and Political Rights, (Adopted and opened for signature, ratification and accession by General Assembly resolution 2200A (XXI) of 16 December 1966 entry into force 23 March 1976).
8. **Պողոսյան Վ., Սարգսյան Ն.**, «Հայաստանի Հանրապետության 2015 թ. խմբագրությամբ սահմանադրությունը. համառոտ պարզաբանումներ», Երևան, Տիգրան Մեծ հրատ., 2016 թ.:
9. **Վաղարշյան Ա.Գ.**, Մարդու իրավունքների ու ազատությունների կենսագործման և սահմանափակման սահմանադրական նորամուծությունները (համակարգային և ձևական իրավաբանական մեկնաբանություն), http://www.yasu.am/files/01A_Vagharshyan-1516337765-.pdf:
10. **Даль В.И.** Толковый словарь живого великорусского языка. - М., 2002; Словарь синонимов русского языка. - М., 1986; **Ожегов С.И., Шведова Н. Ю.** Толковый словарь русского языка. - М., 1997.
11. **Паламарчук А.В.** Свобода информации и законность: теория и практика. Монография. - М., 2013.
12. Human Rights Dimensions of COVID-19 Response, <https://www.hrw.org/news/2020/03/19/human-rights-dimensions-covid-19-response>
Human Rights Checklis, <https://www.hrw.org/hy/news/2020/06/05/340770>.

КОНСТИТУЦИОННО-ПРАВОВЫЕ ОСНОВЫ ОГРАНИЧЕНИЙ СВОБОДЫ ИНФОРМАЦИИ В УСЛОВИЯХ ЧРЕЗВЫЧАЙНЫХ СИТУАЦИЙ

Аннотация

Основной целью данного исследования является выделение конституционно-правовых оснований ограничения одной из основных прав и свобод человекам - свободы информации.

В ходе изучения международного опыта и случаев возможных ограничений свободы информации в чрезвычайных ситуациях рассмотрено также обеспечение чрезвычайного правового режима, кроме предусмотренных Конституцией двух общенациональных правовых режимов антикризисного управления - правовых режимом военного положения и чрезвычайного положения.

Ключевые слова: информация, свобода, ограничение, право, чрезвычайная ситуация, правовой режим, пандемия.

CONSTITUTIONAL BASIS FOR RESTRICTION OF FREEDOM OF INFORMATION DURING EMERGENCY SITUATIONS

Annotation

The main goal of this research is to highlight the constitutional and legal basis for restricting one of the fundamental human rights and freedoms: freedom of information.

Studying the international experience and cases of possible restrictions on freedom of information in emergency situations, apart from the two nationwide legal regimes of crisis management provided by the Constitution (state of emergency and martial law), the provision of the legal regime of emergency was also discussed.

Keywords: information, freedom, limitation, right, emergency situation, legal regime, pandemic.



ЛИЛИЯ АКОПЯН

Начальник юридического управления
Центральной избирательной комиссии РА,
доцент кафедры теории права и
конституционного права
Института права и политики
Российско-армянского университета,
преподаватель кафедры
Академии государственного управления РА,
кандидат юридических наук, доцент



ЭЛЕН АСРИЯН

магистр права

◆ 3(107)2022

◆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

◆

ՄԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

**ГРАЖДАНСКАЯ ИНИЦИАТИВА:
КОНСТИТУЦИОННОЕ ЗАКРЕПЛЕНИЕ И ВОЗМОЖНОСТИ
РЕАЛИЗАЦИИ**

Аннотация

В статье обсуждаются основополагающие вопросы института гражданской инициативы, которые были предусмотрены в рамках конституционных изменений, принятых референдумом 6 декабря 2015 года.

В статье рассматриваются перспективы практического применения института гражданской инициативы с целью более упрощенного и продуктивного применения данного института и обсуждаются в контексте развития электронной демократии. Отмечается, что посредством внедрения института гражданской инициативы участие граждан в законотворческой

деятельности может содействовать многостороннему отображению реальных потребностей общества и по возможности систематизированному сопоставлению разнообразных интересов отдельных граждан или групп.

Одновременно отмечается, что установленный Конституцией РА чрезмерно высокий ценз относительно количества граждан, имеющих право выступать с гражданской инициативой, а также усложненный процесс сбора подписей, установленный Конституционным законом РА «О референдуме», на данный момент исключают широкое применение и возможности превращения данного института в средство разрешения практических задач, придавая институту гражданской инициативы формальный характер.

Ключевые слова: законодательная инициатива, гражданская инициатива, народная инициатива, прямая демократия, электронная демократия, законотворчество, референдум.

В демократических государствах провозглашается идея принадлежности власти народу. Самым важным правовым инструментом для осуществления народом своей власти являются институты прямой демократии. Среди последних референдум имеет особое значение как механизм с особым учетом демократии, формирования гражданского общества и создания правового государства, которое обеспечивает немедленное принятие решений народом.

Международный опыт референдума демонстрирует тенденцию роста его роли в конституционно-правовой практике государств. В Республике Армения институт референдума еще не получил широкого применения. Республика Армения не имеет богатого опыта проведения национальных и местных референдумов. В Армении проводились национальные референдумы исключительно по вопросу принятия либо изменения Конституции при условии, что до 2015 года это был единственный способ принятия либо изменения Конституции. Местный референдум в третьей Республике Армения был проведен лишь однажды – по вопросу объединения нескольких общин в одну. Однако референдум не единственный способ прямого волеизъявления народа. Правовые способы прямого выражения воли народа можно разделить на три группы:

1. Институты прямой демократии, которые полностью олицетворяют суверенную волю народа (например, выборы, принятие закона на референдуме);

2. Институты прямого выражения воли народа, функциональное значение которых обусловлено правовыми, политическими и культурными особенностями народа и которые не предоставляют юридической возможности напрямую влиять на процесс принятия решений (гражданская инициатива, петиция, опрос общественного мнения, собрания, шествия, демонстрации, пикет, публичные дискуссии и публичные слушания и др.);

3. Институты прямой демократии, которые, хотя и применяются в некоторых странах, неприемлемы в условиях современного демократического государства (например, отзыв парламентариев и т. д.).

В рамках конституционных изменений, принятых референдумом 6 декабря 2015 года, Конституция РА, наряду с иными формами прямой демократии, впервые закрепила институт гражданской инициативы.

В профессиональной литературе право гражданской инициативы закреплено как право определенного числа граждан, имеющих избирательные права, предъявить парламенту, другим представительным органам или электорату предложение по принятию, изменению либо отмене Конституции, закона или любого другого акта.

Как показывает практика зарубежных стран, институт гражданской инициативы постепенно набирает популярность во всем мире. В настоящее время этот институт работает в таких странах, как Швейцария, Литва, Латвия, Словения, Польша, Румыния, Португалия, Италия и т. д. В соответствии с Лиссабонским договором институт гражданской инициативы с некоторыми особенностями был введен в Европейском союзе. Здесь, однако, судьба проекта гражданской инициативы зависит от Европейской комиссии, которая может утвердить или отклонить его¹.

Гражданская инициатива может быть реализована как на национальном, так и на местном уровне. Например, в Польше минимум 100 тысяч избирателей, имеющих право голоса, могут выступать с данным предложением, в Испании – 500 тысяч избирателей, имеющих право голоса, а в Литве – 50 тысяч граждан. Есть также довольно много государств, где институт гражданской инициативы не закреплен на общенациональном

¹ Сухорукова О.О. Особенности реализации законодательной инициативы в законодательном процессе РФ // Проблемы юридической науки в условиях современного социально-экономического развития России: Материалы межрегиональной научно-практической конференции студентов, молодых ученых, аспирантов, преподавателей. - Ростов-на-Дону, РИНХ, 2010. - С. 111.

уровне, но действует на местном уровне. Использование института на местном уровне предусмотрено, например, в Российской Федерации, где может быть зарегистрирована инициативная группа, состоящая из 3% жителей муниципалитета с правом голоса¹.

Народная законодательная инициатива делится на два вида: несформулированная и сформулированная. В первом случае инициативная группа представляет проект соответствующего акта представительному органу, а во втором – общую рекомендацию для обсуждения законодательным органом. Институт сформулированной народной законодательной инициативы существует, например, в Италии и Польше.

Есть и другие институты, так сказать «стимулирующие» участие граждан в законотворчестве, самыми распространенными из которых являются публичные дебаты по законопроектам, встречи депутатов с избирателями. И хотя эти институты могут внести большой вклад в вопросе социальной эффективности законопроектов и принятия социумом этих законопроектов, однако несмотря на сходство с гражданской инициативой эти институты не могут заменить гражданскую инициативу, так как в отличие от этих институтов, в случае гражданской инициативы общество само решает содержание законопроекта, открывая более широкие возможности для отражения общественного интереса и позиции в нем.

В контексте вышеуказанных современных тенденций, по нашему мнению, внедрение в Республике Армения института гражданской инициативы было оправданным и может стать дополнительной гарантией укрепления основ демократии. В частности, в соответствии с частью 6 статьи 109 Конституции РА пятьдесят тысяч граждан, обладающих избирательным правом, имеют право предложить Национальному Собранию проект закона в порядке гражданской инициативы, а в соответствии с частью 1 статьи 202 Конституции РА право инициировать принятие или изменение Конституции, наряду с иными субъектами, имеют 200 тысяч граждан, обладающих избирательным правом².

При этом с появлением института гражданской инициативы возникает

¹ **Волкодаева Н.А.** Народная законодательная инициатива Российской Федерации и необходимость ее правового регулирования // Проблемы права. – Челябинск. – 2010. – № 3. – С. 46.

² Конституция Республики Армения, принята 5 июля 1995 года (с изменениями от 6 декабря 2015 года).

ряд вопросов, которые вкратце можно сгруппировать в два коротких вопросительных слова: как и сколько.

Первый вопрос касается порядка и механизмов реализации гражданской инициативы. Конституция РА содержит лишь несколько кратких замечаний о процедуре реализации гражданской инициативы. Одним из таких положений является положение, изложенное в части 1 статьи 204 Конституции РА: «Действительность подписей участников гражданской инициативы подтверждается Центральной избирательной комиссией». Из этого определения можно сделать вывод лишь о том, что Конституция в рамках гражданской инициативы рассматривает в качестве подтверждения участия граждан в гражданской инициативе какой-либо способ сбора подписей, предоставляя возможность установления конкретного механизма (традиционный (бумажный) или электронный или любой иной) сбора подписей в рамках закона. Согласно Конституционному закону Республики Армения «О референдуме» (далее – Закон), который определяет подробную процедуру сбора подписей, сбор подписей осуществляется путем подписания соответствующих бланков на местах (в Законе указываются конкретные места, где можно проводить сбор подписей) или в электронном виде (статья 13 Закона)¹. В случае сбора подписей на бланках заполняются паспортные данные подписавшего, бланк подписывается данным гражданином и возвращается лицу, осуществляющему сбор подписей (сбор подписей на месте осуществляется представителем инициативной группы при обязательном участии соответствующего публичного служащего, а также осуществляют нотариусы в нотариальных конторах), а в электронном виде электронный бланк подписывается с помощью электронной идентификации.

В связи с вышеизложенным проблемы имеются, к сожалению, и с первым и со вторым способом сбора подписей.

Прежде всего Закон устанавливает излишние ограничения в отношении мест, где может быть организован сбор подписей, а также обязательное присутствие публичного служащего, ответственного за подлинность самого процесса сбора подписей. Очевидно, что такие ограничения способны сильно воспрепятствовать реализации права на гражданскую инициативу и дальнейшему становлению этого института в Армении. Помимо этого,

¹ Конституционный закон Республики Армения «О референдуме», принят 23 мая 2018 года.

традиционные методы сбора подписей граждан, проверка подлинности и утверждение являются очень трудоемким и дорогостоящим процессом для реализации гражданской инициативы. Более того, их неэффективность способна поставить под сомнение весь процесс, направленный на реализацию права на гражданскую инициативу. С этой точки зрения понятно стремление законодателя на этапе уже сбора подписей обеспечить определенные гарантии в обеспечении подлинности и действительности поданных подписей путем установления таких «ограничений», как специальные места для сбора подписей, присутствие ответственного лица, подтверждающего, по сути, подлинность подписи гражданина, который подписывается в его присутствии. В то же время соразмерность подобного рода ограничений является спорной. На наш взгляд, в современных условиях с развитием информационно-коммуникационных технологий применение этого института может быть организовано гораздо проще и эффективнее, обсуждая перспективы развития гражданской инициативы в контексте развития электронной демократии. Главная цель электронной демократии на мировой арене состоит не в том, чтобы заставить граждан пользоваться информационными технологиями, а в использовании технологий с целью улучшения участия и демократического управления.

Радикальный подход к вопросу об электронной демократии предполагает принятие государственных решений гражданами с использованием информационных технологий (принятие законов, электронные референдумы). Согласно этой теории, информационные технологии помогут способствовать постепенному переходу от представительной демократии к прямой демократии, в которой граждане будут не выбирать политических деятелей, а непосредственно участвовать в реализации государственной политики путем определения конкретных вопросов (например, утверждать государственный бюджет или отклонять, назначать или не назначать должностного лица и т.д.). И это может быть сделано напрямую через Интернет, а не путем избрания тех или иных лиц, принятие решения которыми невозможно проконтролировать или прогнозировать в будущем. В свете сказанного еще Ж. Руссо настаивал на том, что демократия несовместима с представительными институтами, поскольку верховная власть народа является неотъемлемой и непередаваемой¹.

¹ Руссо Ж.Ж. Об общественном договоре, или Принципы политического Права. Книга 2. Глава 1, URL: <http://lib.ru/FILOSOF/RUSSO/prawo.txt>

В современном мире применение электронной демократии в рамках развития информационных технологий позволяет сэкономить как время, так и материальные ресурсы в отношении между гражданами и государством и значительно повысить уровень участия граждан в деятельности демократических институтов, одним из проявлений которых является сбор подписей в электронном виде для участия в гражданской инициативе. Однако и здесь проблем много. Так, нынешняя редакция Закона признает способом присоединения к гражданской инициативе в электронной форме идентификацию через электронные подписи. В настоящее время лишь часть населения Армении имеют идентификационные карты, и лишь часть из них – электронные подписи, что позволяет утверждать, что исходя из армянских реалий электронный способ присоединения к инициативе предоставляет практическую возможность лишь небольшому числу граждан.

Обращаясь к вопросу «сколько», то есть определению минимального количества граждан, необходимых для поддержания гражданской инициативы, следует отметить, что в мировой практике по этому вопросу нет единого подхода. Обязательным для всех стран является лишь требование подписей исключительно тех граждан, которые обладают избирательным правом.

Существует два подхода к определению конкретного числа граждан, необходимых для поддержки гражданской инициативы: абсолютное число (Беларусь – 50 000 избирателей, Черногория – 6000 избирателей) и определенный процент от общего числа избирателей (Коста-Рика – 5%, Доминиканская Республика – 2%) или определение по дробям (Австрия – 1/6, Латвия – 1/10).

Конституцией и Законом РА установлены абсолютные числа для различных проявлений института гражданской инициативы (например, 50 000, 200 000, 350 000 граждан с избирательным правом и др.). Остается открытым вопрос о том, каков критерий определения минимального количества граждан для каждого проявления института гражданской инициативы в рамках законодательства РА.

Считаем, что эти числа, предусмотренные Конституцией Республики Армения и Законом, с учетом таких факторов, как численность населения Республики Армения, темпы миграционных процессов в Армении, отсутствие правовой возможности участия в подобного рода мероприятиях за пределами государства, являются весьма существенным препятствием для

реализации института гражданской инициативы, и определение такого высокого порога делает практически невозможным становление института гражданской инициативы в Республике Армения. К такому выводу приводит также сравнительный анализ. Так, порог в 50 000 граждан, обладающих избирательным правом, установлен, например, в Италии, где постоянное население составляет около 60 миллионов (в Армении постоянное население составляет около 3 миллионов).

Обобщая вышеизложенное, следует подчеркнуть, что установленные Конституцией РА, а также Конституционным законом «О референдуме» Республики Армения требования и условия реализации права гражданской инициативы практически исключают возможность широкого использования этого института и придают институту чисто формальный характер. Считаем, что для становления в Армении института гражданской инициативы и обеспечения условий для его реального применения необходим пересмотр механизмов, процедур и технических условий реализации права гражданской инициативы.

В то же время следует учитывать тот факт, что институт гражданской инициативы в рамках конституционного регулирования в Армении был внедрен лишь в качестве противовеса институтам представительной демократии, а вовсе не для подмены институтов представительной демократии. Об этом прямо было сказано еще в Концепции конституционной реформы, в которой в связи с институтами непосредственной демократии было сказано: «Принимая тот факт, что представительная демократия в современном мире – основная форма реализации демократии, тем не менее в контексте конституционно-правовых разработок роль непосредственной демократии следует преимущественно рассматривать в плоскости сдерживания и противовешивания институтов представительной демократии. Наивысшая задача в том, чтобы максимально использовать воздействие прямой демократии в качестве противовеса при осуществлении государственной власти. В частности, она должна быть направлена на то, чтобы не позволить представительной власти осуществить невзвешанные шаги, способные отрицательно повлиять на демократические процессы»¹.

¹ Концепция конституционных реформ Республики Армения /разработана специализированной комиссией по конституционным реформам при Президенте Республики

Таким образом, самым существенным в данном вопросе оказывается соблюдение баланса, способного, с одной стороны, уберечь от чрезмерных требований, ограничений, необходимых процедур, сопутствующих реализации права гражданской инициативы, которые способны усложнить реализацию права на гражданскую инициативу до такой степени, что будет искажена сама суть этой формы прямой демократии, а с другой стороны, обеспечить надлежащее, соразмерное и разумное регулирование механизмов реализации права на гражданскую инициативу с тем, чтобы не допустить произвола и злоупотребления правом, исключить спекуляции в вопросе реализации гражданской инициативы, так как подобные негативные явления в итоге способны дискредитировать такую форму прямой демократии и, в конечном счете, привести к утрате гражданами доверия к данному демократическому институту. На наш взгляд, любой существенный пробел в регулировании механизмов реализации права гражданской инициативы способен создать почву для злоупотреблений как со стороны органов публичной власти, так и со стороны граждан, обладающих правом гражданской инициативы (или групп, имеющих влияние на них)¹.

Список использованной литературы и нормативно-правовых актов

1. **Сухорукова О.О.** Особенности реализации законодательной инициативы в законодательном процессе РФ // Проблемы юридической науки в условиях современного социально-экономического развития России: Материалы межрегиональной научно-практической конференции студентов, молодых ученых, аспирантов, преподавателей. - Ростов-на-Дону: РИНХ, 2010. - С. 111.
2. **Волкодаева Н.А.** Народная законодательная инициатива Российской Федерации и необходимость ее правового регулирования // Проблемы права. – Челябинск. – 2010. - № 3. - С. 46.
3. Конституция Республики Армения, принята 5 июля 1995 года (с изменениями от 6 декабря 2015 года).

Армения/. - Ереван, октябрь 2014 г. - С. 43. Источник: <http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumner/hayecakarg.pdf>.

¹ **Акопян Л., Макарян Ц.** Гражданская инициатива: форма прямой или представительной демократии в Республике Армения? // «Հանրային կառավարում» հանդես. – 2018. - N 3-4. - С. 142-143.

4. Конституционный закон Республики Армения «О референдуме», принят 23 мая 2018 года.
5. **Руссо Ж.Ж.** Об общественном договоре, или Принципы политического Права. Книга 2. Глава 1, URL: <http://lib.ru/FILOSOF/RUSSO/prawo.txt>
6. Концепция конституционных реформ Республики Армения /разработана Специализированной комиссией по конституционным реформам при Президенте Республики Армения, Ереван, октябрь 2014 г. - С. 43. Источник: <http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumner/hayecakarg.pdf>
7. **Акопян Л., Макарян Ц.** Гражданская инициатива: форма прямой или представительной демократии в Республике Армения? // «Հանրային Կարգավորում» հանդես. – 2018. - N 3-4. - С. 142-143.

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՆԱԽԱԾԵՆՈՒԹՅՈՒՆ. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ամփոփագիր

Հոդվածում քննարկվում են հիմնարար խնդիրներ քաղաքացիական նախաձեռնության ինստիտուտի վերաբերյալ, որը ներդրվել է 2015 թվականի դեկտեմբերի 6-ին կայացած հանրաքվեի արդյունքներով ընդունված սահմանադրական փոփոխություններով:

Հոդվածում դիտարկվում են քաղաքացիական նախաձեռնության ինստիտուտի գործնական կիրառման հեռանկարները՝ այս ինստիտուտի առավել պարզեցված և արդյունավետ կիրառման նպատակով՝ քննարկելով այն էլեկտրոնային ժողովրդավարության զարգացման համատեքստում:

Նշվում է, որ քաղաքացիական նախաձեռնության ինստիտուտի ներդրմամբ քաղաքացիների մասնակցությունը օրինաստեղծ գործունեությանը կարող է նպաստել հասարակության իրական կարիքների բազմակողմանի արտացոլմանը և առանձին քաղաքացիների կամ խմբերի տարատեսակ շահերի հնարավորինս համակարգված համատեղմանը:

Միաժամանակ նշվում է, որ քաղաքացիական նախաձեռնությամբ հանդես գալու իրավունքով օժտված քաղաքացիների թվաքանակի վերաբերյալ ՀՀ սահմանադրությամբ ամրագրված չափազանց բարձր շեմը, ինչպես նաև «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված ստորագրությունների հավաքագրման բարդեցված գործընթացն այս պահին բացառում են տվյալ ինստիտուտի մասշտաբային կիրառումը և դրա վերածումը գործնական խնդիրների լուծման միջոցի՝ քաղաքացիական նախաձեռնության ինստիտուտին հաղորդելով ձևական բնույթ:

Հիմնաբառեր. քաղաքացիական նախաձեռնություն, օրենսդրական նախաձեռնություն, հանրաքվե, ժողովրդական նախաձեռնություն, անմիջական ժողովրդաիշխանություն, էլեկտրոնային ժողովրդավարություն:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐՎԱՆ ◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ◆ 3(107)/2022

CIVIL INITIATIVE CONSTITUTIONAL ENFORCEMENT AND METHODS OF IMPROVEMENT

Annotation

The article discusses the key issues related to the legal and constitutional establishment of the institute of civil initiative of submitting draft laws in the light of the constitutional changes that were adapted through the referendum of December 6, 2015.

In order to enable and manage a more simplified application of this institute, the prospects of practical application of the institute of civil initiative are discussed in the general context of the development of electronic democracy.

The article underlines that engaging citizens in the making of laws through the implementation of the institute of civil initiative can greatly promote the process of reflecting the needs of the society more comprehensively and the process of coordinating the diverse interests of individual citizens as systematically as possible.

Meanwhile, the article notes that the extremely high threshold of the number of citizens who are entitled to submit draft laws upon popular initiative established under the RA Constitution, as well as the complex procedures of collecting signatures established under the RA Constitutional Law “On Referendum,” are still excluding the chances of this institute to be applied more widely and to become a means of solution of practical issues, thus giving the institute of popular initiative more of a formal nature.

Key words: Civil initiative, Legislative initiative, citizens’ initiative, popular initiative, direct democracy, electronic democracy, referendum.



ՍԱՄՎԵԼ ՅՈՒՋԲԱՇՅԱՆ

Երևան քաղաքի առաջին արդյանի
ընդհանուր իրավասության դատարանի
դատավոր,
իրավաբանական գիտությունների
թեկնածու



ՍԱՄՎԵԼ ՀԱԿՈՒՅԱՆ

ՀՀ սահմանադրական դատարանի
իրավախորհրդատվական վարչության
փորձագիտական-վերլուծական բաժնի
գլխավոր մասնագետ,
Հայ-ռուսական համալսարանի
մագիստրանտ

**ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ ՀԱՏՈՒԿ ՄԱՍՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՆՑԱՆՔԸ ԾԱՆՐԱՑՆՈՂ ՈՐՈՇ
ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ**

Ամփոփագիր

Սույն հոդվածը նվիրված է ՀՀ քրեական օրենսգրքում սահմանված՝ արարքը ծանրացնող որոշ հանգամանքների մեկնաբանությանը: Մեր կարծիքով, որոշ որակյալ հատկանիշներ ներկայումս կարող են խնդրահարույց լինել, քանի որ դրանց ձևակերպումներից ամբողջապես հնարավոր չէ պարզել օրենսդրի կամքը: Դեռևս նոր ՀՀ քրեական օրենսգրքի բավականաչափ հղկված չլինելու պայմաններում սույն հոդվածն էլ ավելի արդիական է դառնում, քանի որ դրանում առաջ

◆ 3(107)2022

◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

◆ ՍԱՀՄԱՆԱՐԴՐՎԱԿԱՆ ՂԱՏԱԿՐԱՆ

քաշված մոտեցումներն ու եզրահանգումները կարող են ուղենիշ հանդիսանալ իրավակիրառ պրակտիկա ձևավորելու հարցում:

Հիմնաբառեր. արարք, որակում, ծանրացնող հանգամանք, հարմարեցված առարկա, անօգնական, անչափահաս:

Քրեական վարույթի շրջանակներում ենթադրյալ հանրորեն վտանգավոր արարքին ճիշտ քրեաիրավական գնահատական տալը քրեական օրենքի կիրառման առանցքային փուլն է: Արարքի ճիշտ որակումից է կախված ինչպես հետագա ամբողջ քննությունը, այնպես էլ անձի նկատմամբ կատարված հանցանքին համաչափ, արդարացի քրեական պատասխանատվություն, պատիժ ու քրեաիրավական ներգործության այլ միջոցներ կիրառելու սկզբունքների պահպանումը:

Թեև գիտական վերլուծության և կիրառման պրակտիկայի ընթացքում բացահայտվեցին 2003 թվականի օգոստոսի 1-ից գործողության մեջ դրված ՀՀ քրեական օրենսգիրքի (այսուհետ՝ հին Օրենսգիրք) որոշ նորմերի թերություններ, այդուհանդերձ, դրանց մի մասի ճշգրիտ կիրառումը հնարավոր էր դարձել միատեսակ մեկնաբանության առկայության պայմաններում:

Գործող ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ գործող Օրենսգիրք) կարևորագույն արժանիքներից է հայեցողական մոտեցումների ու գնահատողական հայեցողությունների մինիմալացումը, այդուհանդերձ, օրենսգրքերի համեմատաիրավական ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ իրավակիրառ պրակտիկայում որոշ նորամուծություններ կարող են բարդություններ առաջացնել՝ տարաբնույթ մեկնաբանությունների ու գնահատման անհստակության պատճառով: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է հանցագործությունները որակյալ դարձնող հատկանիշներին:

Վերոնշյալ հայեցողության (խոսքը գնում է ՀՀ քրեական օրենսգրքում ամրագրված գնահատողական հասկացությունների մասին) շրջանակներում իրականացվող մեկնաբանությունը կամայական լինել չի կարող, այն ենթադրում է հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների օրենսդրական նկարագրում ամրագրված գնահատողական հասկացությունների համակողմանի վերլուծություն¹:

¹ Տես՝ Վարդապետյան Ա. և Բեգոյան Լ., «Հանցագործությունների որակման առանձնահատկությունները գնահատողական հասկացություններ (հատկանիշներ) պարունակող

(...) հանցանքը պետք է հստակ սահմանված լինի օրենքով: Այս պայմանը բավարարված կհամարվի այն դեպքում, երբ անձը համապատասխան դրույթի ձևակերպումից, անհրաժեշտության դեպքում դատարանների մեկնաբանության օգնությամբ, կարողանա հասկանալ, թե հատկապես որ գործողությունների ու անգործության համար է նա ենթակա պատասխանատվության¹:

Նույնիսկ իրավական նորմի առավելագույն հստակությամբ ձևակերպման դեպքում դատական մեկնաբանությունը չի բացառվում: Իրավադրույթների պարզաբանման և փոփոխվող հանգամանքներին՝ զարգացող հասարակական հարաբերություններին դրանց համապատասխանեցման անհրաժեշտությունը միշտ էլ առկա է: Հետևաբար, օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձականացվել՝ նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով²:

Սույն հոդվածի շրջանակներում կանդիդատանք գործող Օրենսգրքի հատուկ մասով նախատեսված՝ արարքը ծանրացնող մի քանի հանգամանքների մեկնաբանությանը, որոնք կարող են ուղենիշ հանդիսանալ դրանք պրակտիկայում կիրառելու հարցում:

«Ձեռքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ» վերաբառությամբ հանցանքը ծանրացնող հանգամանքի վերաբերյալ:

Քննարկվող ծանրացնող հանգամանքը սահմանված է գործող Օրենսգրքի 166, 167, 191, 192, 194, 198, 252, 297, 315, 316, 318, 319, 452, 454, 468, 475, 486, 490, 492, 493, 495, 506, 518, 519, 520 և 521-րդ

հանցակազմերում («*գործող քրեական օրենսգրքի և նոր օրենսգրքի համեմատական վերլուծություն*») վերատառությամբ հոդվածը: Երևան, «Պետություն և իրավունք», էջ 24:

Հասանելի է հետևյալ հղումով՝ http://ysu.am/files/Vardanyan_Begoyan_23-34.pdf

¹ Տե՛ս **Մարկոսյան Մ.**, «Քրեական օրենսգրքում հանցանքը ծանրացնող հանգամանքների նախատեսման ընդհանուր հարցերի շուրջ» վերատառությամբ հոդվածը. «Բանբեր Երևանի համալսարան», 2014 թ., թիվ 3 (144), էջ 24, որտեղ հղում է կատարվում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Կոկինակիսն ընդդեմ Հունաստանի գործով վճռին // «Մարդու իրավունքների եվրոպական դատարան», Վճիռների ժողովածու: Եր., 2003, էջ 365:

² Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2016 թվականի մայիսի 3-ի ՍԴՈ-1270 որոշումը:

Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.concourt.am/decision/decisions/sdv-1270.pdf>

հողվածներում, որտեղ, մեր կարծիքով, խնդրահարույց է «նախապես պատրաստված կամ հարմարեցված» հասկացությունը:

«Նախապես» բառի ստուգաբանության համաձայն՝ այն նշանակում է նախօրոք, վաղօրոք, կանխապես, որևէ բանից առաջ: Այս համատեքստում հարկ է վկայակոչել հին Օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասը, որտեղ «նախապես» բառի բովանդակությունը բացահայտվում էր որպես «մինչև հանցագործությունը սկսելը»: Վերոգրյալ բառի բացատրությունը համադրելով քրեաիրավական արարքի հետ՝ ակնհայտ է դառնում, որ որևէ առարկայի կամ միջոցի պատրաստումը կամ հարմարեցումը պետք է նախորդի հանցակազմի օբյեկտիվ կողմին՝ առանց ժամանակային չափորոշիչի առկայության: Այլ խոսքով՝ հանցավորը պետք է նախապես՝ հանցակազմի օբյեկտիվ կողմի գործողությունը կատարելուց առաջ, պատրաստի կամ հարմարեցնի որևէ առարկա կամ միջոց՝ հանցավոր մտադրությունն ի կատար ածելու նպատակով: Միևնույն ժամանակ հարկավոր չէ վերը հիշատակված մոտեցումն ընդունել ելակետային և համարել, թե քննարկվող ծանրացնող հանգամանքը բովանդակային առումով ամբողջությամբ բացահայտված է, քանի որ ամեն վարույթ, ելնելով դրանում առկա փաստական հանգամանքներից, ունի իր առանձնահատկությունները, ուստի ամեն վարույթով պետք է ցուցաբերել անհատական մոտեցում:

Այսպես. դիտարկենք օրինակ, երբ տուժողի առողջությանը ծանր վնաս է պատճառվել հանցագործության գործիք հանդիսացող երկաթե լինգով:

Այն պայմաններում, եթե հանցավորը նախապես իր հետ վերցրել է հարմարեցված¹ երկաթե լինգը տուժողի հետ առերեսվելու ժամանակ նրան մարմնական վնասվածք պատճառելու նպատակով, ապա այս իրավիճակում արարքը կարող է որակվել քննարկվող ծանրացնող հանգամանքով: Սակայն այլ է իրավիճակը այն դեպքում, երբ հանցավորը, չունենալով որևէ մեկին վնաս պատճառելու նախնական մտադրություն կամ դիտավորություն, նախապես իր մոտ չունենալով որևէ առարկա կամ միջոց, որոշակի հանգամանքներով պայմանավորված, այնուամենայնիվ, վնաս է հասցնում տուժողին՝ դեպքի վայրից վերցված առարկայով²: Այս

¹ Քննարկվող համատեքստում հարմարեցված կարող է համարվել օրինակ ձևափոխված, բիզերով ամրակցված լինգը:

² Նման դեպքերը լինում են հանկարծակի ծագած դիտավորության պայմաններում. որպես կանոն այն առաջանում է տուժողի կողմից դրսևորած հակաիրավական կամ

դեպքում արարքը ծանրացնող հանգամանքով որակելու համար նախ և առաջ պետք է պարզել.

- արդյո՞ք դեպքի վայրում առկա են եղել հանցավոր մտադրությունն ավարտին հասցնելու համար հնարավոր կիրառելի այլ՝ չհարմարեցված առարկաներ կամ միջոցներ,
- արդյո՞ք հանցավորը գիտակցել է առարկայի՝ արդեն իսկ հարմարեցված լինելու հանգամանքը և դրա լրացուցիչ հարմարեցման անհրաժեշտության բացակայությունը,
- արդյո՞ք դեպքի վայրից վերցված հարմարեցված առարկաները կամ միջոցներն օգտագործվել են բացառապես իրենց հարմարեցված լինելու հանգամանքով պայմանավորված:

Վերը հիշատակված ելակետերը գնահատելով փաստական հանգամանքերի հետ՝ կարող ենք արձանագրել հետևյալը.

- Այն պայմաններում, երբ հանցավոր մտադրությունն ավարտին հասցնելու համար դեպքի վայրից կարող է որպես հանցագործության գործիք ընտրել չհարմարեցված առարկա կամ միջոց, սակայն, ունենալով ընտրության իրական հնարավորություն, այնուամենայնիվ ընտրում է հարմարեցված առարկա կամ միջոց, ապա այս պարագայում, այլ փաստական հանգամանքների բացակայության դեպքում, արարքը կարող է որակվել քննարկվող ծանրացնող հանգամանքով, քանի որ ընտրության հնարավորության պայմաններում չհարմարեցված առարկայի կամ միջոցի «անտեսումը» վկայում է հանցավորի կողմից հենց հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրման դիտավորության մասին:
- Միևնույն ժամանակ չի կարելի բացառել այն դեպքերը, երբ իրադրության լարվածության կամ այլ հանգամանքներով պայմանավորված՝ հանցավորը դեպքի վայրում գտնվող առարկայի կամ միջոցի ընտրություն կատարելու հնարավորություն չի ունենում: Նման դեպքերում պետք է պարզել, թե տուժողին պատճառված վնասը արդյո՞ք հասցվել է առարկայի կամ միջոցի հենց հարմարեցված մասով: Եթե պատճառված վնասը հասցվել է հարմարեցված առարկայի կամ միջոցի չհարմարեցված մասով, ապա, վերոշարադրյալ փաստական տվյալների հաշվառմամբ, այս դեպքում քննարկվող

հակաբարոյական վարքագծի արդյունքում, իսկ հանցավորի գործողությունները լինում են դրանց ի պատասխան:

ՍԱՀՄԱՆԱՐԴՐՎԱԿԱՆ ՂԱՏԱՐՎԱԿԱՆ ԴՍՏԱՐՎԱԿԱՆ 3(107)2022

Ծանրացնող հանգամանքը բացակայում է, քանի որ, թեև հանցավորը ձևական առումով վնասը պատճառել է հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ, այնուամենայնիվ պետք է հաշվի առնել այն փաստը, որ վնաս պատճառելիս գործադրվել է հարմարեցված առարկայի կամ միջոցի չհարմարեցված մասը: Այլ խոսքով՝ եթե նույնիսկ առարկան կամ միջոցը հարմարեցված չլինեին, ապա հասցված վնասը կլիներ նույնական. դեպքի վայրից վերցված հարմարեցված առարկան կամ միջոցը չի օգտագործվել իր հարմարեցված լինելու հանգամանքով պայմանավորված:

Արարքի իրավական որակումը որոշելիս անհրաժեշտ է բացահայտել հանցավորի դիտավորության ուղղվածությունը՝ մանրամասն վերլուծության ենթարկելով գործի այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են հանցագործության գործիքը (...),¹ որպիսի հանգամանքով պայմանավորված՝ գործող Օրենսգրքի բավականաչափ «հղկված» չլինելու պայմաններում սույն մեկնաբանություններն էլ ավելի արդիական են դառնում:

Միննույն ժամանակ հարկ է հիշատակել հին Օրենսգրքի համապատասխան իրավակարգավորումը, համաձայն որի՝ որպես հանցանքը ծանրացնող հանգամանք հանդիսանում է նույն արարքը, որը կատարվել է զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ:

Հին Օրենսգրքի քննարկվող ծանրացնող հանգամանքը պրակտիկայում ստացել էր լայն կիրառություն, դրա վերաբերյալ առկա են մի շարք դատական մեկնաբանություններ, «Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներ, որպիսի հանգամանքով պայմանավորված՝ նորմի որոշակիացման անհրաժեշտությունն ըստ էության բացակայում էր:

Ամբողջացնելով «Ձենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ» ծանրացնող հանգամանքի վերաբերյալ վերը հիշատակված մեկնաբանություններն ու եզրահանգումները՝ կարծում ենք, որ հին Օրենսգրքի համապատասխան դրույթները վերականգնելը կարող է բացառել այն անորոշությունը, որն առկա է գործող Օրենսգրքում,

¹ Տե՛ս Վրեժ Ռուդիկի Հախվերդյանի վերաբերյալ «Վճռաբեկ դատարանի 2019 թվականի փետրվարի 7-ի թիվ ՏԴ1/0017/01/17 որոշման 16-րդ կետը:

Հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=13229323905402243

հակառակ դեպքում՝ սույն հոդվածում տրված մեկնաբանությունները կարող են ելակետ հանդիսանալ արարքը ճիշտ որակելու, այդպիսով՝ ճիշտ իրավակիրառ պրակտիկա ձևավորելու համար:

«Անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ» և «անչափահասի նկատմամբ» վերաբառությամբ հանցանքը ծանրացնող հանգամանքների հարաբերակցությունը.

Այսպես. գործող Օրենսգիրքը որպես արարքը ծանրացնող հանգամանք սահմանում է նույն արարքը, որը կատարվել է անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ: Գործող Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում բացահայտված է անօգնական վիճակում գտնվող անձի հասկացության բովանդակությունը, այն է՝ անձ, որն իր ֆիզիկական կամ հոգեկան վիճակով պայմանավորված ի վիճակի չէ դիմադրություն ցույց տալ կամ ղեկավարել իր արարքը կամ գիտակցել իր նկատմամբ կատարվող արարքի բնույթը, ինչպես նաև 12 տարին չլրացած անձը:

Սույն հոդվածում կարևոր ենք համարում սահմանազատել որպես անօգնական վիճակում գտնվող անձի 2 կոմպոնենտ՝

1) անօգնական վիճակում գտնվող անձ, որն իր ֆիզիկական կամ հոգեկան վիճակով պայմանավորված ի վիճակի չէ դիմադրություն ցույց տալ կամ ղեկավարել իր արարքը կամ գիտակցել իր նկատմամբ կատարվող արարքի բնույթը, և

2) անօգնական վիճակում գտնվող անձ, ում 12 տարին չի լրացրել:

Եթե առաջին կոմպոնենտի պարագայում օրենսդիրը հստակ բացահայտել է անձին անօգնական վիճակում գտնվող համարելուն ներկայացվող պահանջները, ապա երկրորդ կոմպոնենտը խնդրահարույց է այնքանով, որքանով 12 տարին չլրացած անձինք քրեաիրավական առումով համարվում են և՛ անօգնական վիճակում գտնվող, և՛ անչափահաս, ուստի այն դեպքում, երբ հանրորեն վտանգավոր ոտնձգություն է կատարվում 12 տարին չլրացած անձի նկատմամբ, կարող է իրավական հարց առաջանալ՝ արարքը որակել անօգնական վիճակում գտնվող անձի նկատմամբ կատարված, թե՛ անչափահասի, թե՛ երկուսը միասին՝ համակցությամբ:

Կարծում ենք, որ առավել ընդունելի կլինի արարքը որակել ոչ թե անօգնական վիճակում գտնվող անձի նկատմամբ կատարված՝ հիմք ընդունելով երկրորդ կոմպոնենտը, այլ՝ անչափահասի նկատմամբ կատարված, քանի որ անչափահաս եզրույթն իրենից ենթադրում է 18, այդ թվում՝ 12

ՍԱՀՄԱՆԱՐԴՐՎԱԿԱՆ ՂԱՏՄԱՆ 3(107)2022

տարին չլրացած անձանց: Այլ խոսքով՝ քրեաիրավական առումով անչափահաս եզրույթն ընդգրկում է նաև 12 տարին չլրացած անձանց:

Առաջին կոմպոնենտի առկայության պարագայում անօգնական վիճակում կարող են գտնվել ոչ միայն 12 տարին չլրացած՝ անչափահաս, այլ նաև չափահաս անձինք, ուստի այն դեպքում, երբ հանրորեն վտանգավոր ոտնձգություն կկատարվի այն անձի նկատմամբ, ում 12 տարին չի լրացել և այդ անձը, առաջին կոմպոնենտի համատեքստում, կհամարվի անօգնական վիճակում գտնվող, ապա այս դեպքում, ելնելով նախորդ եզրահանգումների տրամաբանությունից, արարքը պետք է որակել համակցությամբ՝ արարք, որը կատարվել է անօգնական վիճակում գտնվող անձի և անչափահասի նկատմամբ:

Ելնելով ֆիզիոլոգիական վիճակից՝ 12 տարին չլրացած անձը չի գիտակցում իր նկատմամբ կատարվող արարքի բնույթը, այդ թվում՝ դրա հանրորեն վտանգավոր լինելը, ուստի օրենսդրի մոտեցումն առ այն, որ 12 տարին չլրացած անձինք համարվում են անօգնական վիճակում գտնվող, կարող է դիտվել որպես պաշտպանության հավելյալ երաշխիք:

Օրենսդրի կամքի բացահայտման համատեքստում հարկ են համարում անդրադառնալ նաև գործող Օրենսգրքի՝ «Առողջությանը ծանր վնաս պատճառելը» վերտառությամբ 166-րդ հոդվածին, որի 2-րդ մասի 2-րդ կետը որպես որակյալ հանգամանք նախատեսում է՝ նույն արարքը, որը կատարվել է անչափահասի նկատմամբ: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ օրենսդիրը քննարկվող հոդվածում որպես արարքը ծանրացնող հանգամանք չի դիտարկել նույն արարքը անօգնական վիճակում գտնվող անձի նկատմամբ կատարելը, ուստի բոլոր այն դեպքերում, երբ 12 տարին չլրացած անձի առողջությանը ծանր վնաս կպատճառվի, արարքը պետք է որակել որպես անչափահասի նկատմամբ կատարված:

Մինևնույն ժամանակ հարկ ենք համարում արձանագրել, որ «Առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը» վերտառությամբ 167-րդ հոդվածում և «Առողջությանը թեթև վնաս պատճառելը» վերտառությամբ 171-րդ հոդվածում որպես որակյալ հանգամանք օրենսդիրը սահմանել է նույն արարքը անօգնական վիճակում գտնվող անձի նկատմամբ կատարելը, որպիսի հանգամանքով պայմանավորված անհասկանալի է օրենսդրի մոտեցումն առ այն, որ առողջությանը միջին և թեթև վնաս պատճառելու հանցակազմերում որպես որակյալ հատկանիշ

նախատեսված է նույն արարքը անօգնական վիճակում գտնվող անձի նկատմամբ կատարելը, սակայն առողջությանը ծանր վնաս պատճառելու հանցակազմում այն նախատեսված չէ:

Ի հիմնավորումն մեր կողմից առաջ քաշված այն եզրահանգման, որ 12 տարին չլրացած անձինք քրեաիրավական իմաստով համարվում են ոչ թե անօգնական վիճակում գտնվող, այլ անչափահաս, հարկ ենք համարում անդրադառնալ գործող Օրենսգրքի որոշ հանցակազմերին, որտեղ օրենսդիրը հստակորեն տարանջատել է անչափահաս և անօգնական վիճակում (մեր կողմից առաջ քաշված առաջին կոմպոնենտի համատեքստում) գտնվող անձանց՝ դրանք դիտարկելով որպես առանձին սուբյեկտներ:

Այսպես՝ գործող Օրենսգրքի 189-րդ հոդվածը կրում է «Երեխայի կամ անօգնական վիճակում գտնվողի թրաֆիքինգը կամ շահագործումը» վերտառությունը:

Գործող Օրենսգրքը չի բացահայտում երեխա հասկացության բովանդակությունը, սակայն միջազգային և ներպետական մի շարք իրավական ակտերում կարելի է հանդիպել երեխա հասկացության մեկնաբանությանը, համաձայն որի՝ երեխա է համարվում 18 տարին չլրացած ցանկացած անձ¹:

Նման պայմաններում կարելի է հետևություն կատարել առ այն, որ օրենսդիրը գործող Օրենսգրքի 189-րդ հոդվածում հստակ սահմանազատել է անչափահաս և անօգնական վիճակում (մեր կողմից առաջ քաշված առաջին կոմպոնենտի համատեքստում) գտնվող անձանց՝ նրանց դիտարկելով որպես հանրորեն վտանգավոր ոտնձգությունից տուժած առանձին սուբյեկտներ. հակառակ մոտեցման պարագայում օրենսդիրը քրեաիրավական առումով անչափահասին կդիտարկեր որպես 12 տարին լրացած և միևնույն ժամանակ 18 տարին չլրացած անձանց, սակայն նման մեկնաբանության մասին գործող Օրենսգրքը որևէ նորմ չի սահմանում:

Հակառակ մեկնաբանման պայմաններում կստեղծվի մի իրավիճակ, երբ գործող Օրենսգրքը կգտնվի հակասության մեջ «Երեխայի իրավունքների մասին» և «Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին» կոնվենցիաների, ինչպես նաև ՀՀ ընտանեկան օրենսգրքի հետ:

¹ Տե՛ս «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիա, 1989 թ., հոդված 1-ին, «Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին» կոնվենցիա, 1999 թ., 2-րդ հոդված, «ՀՀ ընտանեկան օրենսգրք», 41-րդ հոդված, մաս 1-ին:

Հետաքրքրություն է ներկայացնում նաև գործող Օրենսգրքի 191-րդ հոդվածը, որը որպես անօգնական վիճակում գտնվող անձի նկատմամբ ոտնձգություն կատարելը դիտարկվում է ոչ թե արարքի որակյալ հատկանիշ, այլ այն ուղղակիորեն ամրագրված է հոդվածի դիսպոզիցիայում, իսկ նույն արարքը անչափահասի նկատմամբ կատարելը դիտարկվում է որպես որակյալ հատկանիշ:

Այսպես. գործող Օրենսգրքի 191-րդ հոդվածը սահմանում է՝ մարդուն առևանգելը՝ անձին իր կամքին հակառակ կամ նրա կամքն անտեսելով կամ անօգնական վիճակն օգտագործելով այլ վայր տեղափոխելը (...): Նույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը որպես որակյալ հատկանիշ սահմանում է նույն արարքը անչափահասի նկատմամբ կատարելը:

Կարծում ենք՝ արարքը նման կառուցվածք ունեցող հանցակազմերով որակելիս պետք է առաջնորդվել նախորդիվ կատարված եզրահանգումներով. սույն հանցակազմի դեպքում արարքը կորակվի որակյալ հատկանիշով, եթե հանցագործության տուժողը հանդիսանում է մինչև 18, այդ թվում՝ 12 տարին չլրացած անչափահաս անձը, իսկ այն դեպքում, երբ անձը կգտնվի անօգնական վիճակում առաջին կոմպոնենտի համատեքստում, ապա արարքը ծանրացնող հանգամանքով չի որակվի:

Հատկանշական է, որ օրենսդիրը գործող Օրենսգրքի 198-րդ հոդվածում կարծես թե հրաժարվում է անօգնական վիճակում գտնվող անձ հասկացությունից և օգտագործում է 12 տարին չլրացած անձ հասկացությունը: Քննարկվող հոդվածի 4-րդ մասը սահմանում է՝ սեռական հարաբերությունը կամ սեքսուալ բնույթի այլ գործողությունները, այդ թվում՝ սեռական հարաբերության նմանակումը կամ սեռական կարիքները բավարարելը, որոնք կատարվել են 12 տարին չլրացած անձի նկատմամբ:

Ներկայացված նորմում օրենսդիրը, ընդգծելով տարիքային շեմը, սահմանազատում է ոչ միայն անօգնական վիճակում գտնվող անձանց անչափահաս անձանցից, այլև անուղակիորեն տարանջատում է անօգնական վիճակում գտնվող անձանց՝ մեր կողմից առաջ քաշված 2 կոմպոնենտների, որպիսի հանգամանքով պայմանավորված կարող ենք կատարել հիմնավորված հետևություն առ այն, որ սույն հոդվածում ի ցույց

է դրվում օրենսդրի «քողարկված» կամքը, որը կարելի է բացահայտել նմանօրինակ այլ իրավադրույթներում¹:

Առաջարկվող մոտեցումներին որպես հակափաստարկ կարելի էր մեջբերել մինչև ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-240-Ն օրենքը ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 198-րդ հոդվածի 5-րդ մասը, որի համաձայն՝ [198] հոդվածի իմաստով՝ անօգնական վիճակում գտնվող է համարվում հանցավորին դիմադրություն ցույց տալու կամ իր նկատմամբ կատարվող արարքի բնույթը գիտակցելու հնարավորությունից զրկված անձը կամ 12 տարին չլրացած անձը:

Նման իրավանորմի առկայության պայմաններում օրենսդիրը ուղղակիորեն արգելում էր 12 տարին չլրացած անձանց նկատմամբ կատարված հանրորեն վտանգավոր ոտնձգությունների դեպքում արարքը որակել անչափահասի նկատմամբ կատարված, քանի որ 12 տարին չլրացած անձը համարվում էր անօգնական վիճակում գտնվող: Ստացվում էր մի իրավիճակ, երբ մեր կողմից առաջ քաշված մոտեցումները կիրառելի չէին կարող լինել օրենսդրի կողմից ուղղակի արգելք սահմանելու պատճառով:

Սակայն 2022 թվականի հունիսի 9-ի՝ ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-240-Ն օրենքի 34-րդ հոդվածի ուժով խնդրո առարկա իրավանորմից հանվեց «12 տարին չլրացած անձը» հասկացությունը և այն շարադրվեց հետևյալ կերպ՝ [198] հոդվածի իմաստով՝ անօգնական վիճակում գտնվող է համարվում հանցավորին դիմադրություն ցույց տալու կամ իր նկատմամբ կատարվող արարքի բնույթը գիտակցելու հնարավորությունից զրկված անձը:

Նման կարգավորման պարագայում մեր կողմից առաջարկվող մոտեցումներն անխոչընդոտ կիրառվելու հնարավորություն են ստանում:

Գործող Օրենսգրքի 252, 260, 263, 297-րդ և այլ հոդվածներում արարքն անչափահասի նկատմամբ կատարելը որպես որակյալ հատկանիշ չի դիտվում, սակայն որպես որակյալ հատկանիշ օրենսդիրը նախատեսել է արարքն անօգնական վիճակում գտնվող անձի նկատմամբ կատարելը, ուստի այդ հանցակազմերում անչափահաս՝ 12 տարին չլրացած անձանց նկատմամբ կատարված արարքը պետք է որակել

¹ ՀՀ քրեական օրենսգրքի 201-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետում, 307-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում անօգնական վիճակում գտնվող անձ հասկացության փոխարեն օրենսդիրն օգտագործել է 12 տարին չլրացած անձ հասկացությունը:

ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԿԱՆ ՂԱՏՄԱՆ 3(107)2022

որպես անօգնական վիճակում գտնվող անձի նկատմամբ կատարված արարք, քանի որ, ինչպես արդեն նշեցինք, արարքն անչափահասի նկատմամբ կատարելը որակյալ հատկանիշ չի դիտարկվում:

Մեր կողմից առաջարկվող մոտեցումներից բացառություն են կազմում նման կառուցվածք ունեցող հանցակազմերը:

Իրավանդումները որոշակիացնելու, տարակարծությունները բացառելու, իրավապահ և դատական համակարգում ճիշտ պրակտիկա ձևավորելու նկատառումներից ելնելով՝ առաջարկում ենք.

- ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետից հանել «ինչպես նաև 12 տարին չըրացած անձը» բառակապակցությունը:
- Նույն արարքն անչափահասի նկատմամբ կատարելը դիտարկել որպես որակյալ հատկանիշ այն հանցակազմերում, որտեղ անօգնական վիճակում գտնվող անձի նկատմամբ կատարված արարքը համարվում է որակյալ հատկանիշ:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. ՀՀ սահմանադրական դատարանի 2016 թվականի մայիսի 3-ի ՍԴՈ-1270 որոշում: <https://www.concourt.am/decision/decisions/sdv-1270.pdf>
2. «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիա. Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993 թվականի հուլիսի 22-ից:
3. «Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին» կոնվենցիա (ՀՀ կողմից վավերացվել է ՀՀ Ազգային ժողովի 2005 թվականի մարտի 22-ի Ն-188-3 որոշմամբ, Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2005 թվականի ապրիլի 23-ից):
4. «ՀՀ ընտանեկան օրենսգրք». ընդունվել է 2004 թվականի նոյեմբերի 9-ին, ուժի մեջ է մտել 2005 թվականի ապրիլի 19-ին:
5. «ՀՀ քրեական օրենսգրք». ընդունվել է 2003 թվականի ապրիլի 18-ին, ուժի մեջ է մտել 2003 թվականի օգոստոսի 1-ին, ուժը կորցրել է 2022 թվականի հուլիսի 1-ին:
6. «ՀՀ քրեական օրենսգրք». ընդունվել է 2021 թվականի մայիսի 5-ին, ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին:
7. **Վարդապետյան Ա., Բեգոյան Լ.**, «Հանցագործությունների որակման առանձնահատկությունները գնահատողական հասկացություններ

(հատկանիշներ) պարունակող հանցակազմերում (« գործող քրեական օրենսգրքի և նոր օրենսգրքի համեմատական վերլուծություն»): «Պետություն և իրավունք», 2021 թ., թիվ 3 (91), ք. Երևան:

8. **Մարկոսյան Մ.**, «Քրեական օրենսգրքում հանցանքը ծանրացնող հանգամանքների նախատեսման ընդհանուր հարցերի շուրջ», «Բանբեր Երևանի համալսարան», 2014 թ., թիվ 3 (144), Երևան:

9. Հախվերդյան Վրեժ Ռուդիկի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2019 թվականի փետրվարի 7-ի թիվ ՏԴ1/0017/01/17 որոշում: http://datalex.am/?app=AppCase Search &case_id =13229323905402243

О ТОЛКОВАНИИ НЕКОТОРЫХ ЗАКРЕПЛЕННЫХ В ОСОБЕННОЙ ЧАСТИ УГОЛОВНОГО КОДЕКСА РА ОТЯГЧАЮЩИХ НАКАЗАНИЕ ОБСТОЯТЕЛЬСТВ

Аннотация

Данная работа посвящена некоторым закрепленным в Особенной части Уголовного кодекса РА отягчающим наказание обстоятельствам. На наш взгляд, некоторые отягчающие обстоятельства на данный момент могут быть проблематичными, поскольку по их формулировкам невозможно в полной мере определить волю законодателя. В условиях, когда новый Уголовный кодекс РА еще недостаточно отшлифован, эта работа становится еще более актуальной, поскольку изложенные в ней подходы и выводы могут стать ориентиром в формировании практики.

Ключевые слова: действие, квалификация, отягчающее обстоятельство, адаптированный предмет, беспомощный, несовершеннолетний.

ՍԻՅԱՆՆԱՂՂՈՎՈՒՄԻ ՆՅՈՒԹԵՐ 3(107)2022

**REGARDING THE INTERPRETATIONS OF
CIRCUMSTANCES AGGRAVATING THE CRIME
STIPULATED IN A SPECIAL PART OF THE CRIMINAL
CODE OF THE REPUBLIC OF ARMENIA**

Annotation

This study is dedicated to the interpretation of certain circumstances aggravating the act defined in the RA Criminal Code. In our opinion, some quality criteria can be problematic at the moment, because it is not possible to fully determine the will of the legislator from their wordings. In the conditions where the new RA Criminal Code is still not adjusted enough, this study becomes even more relevant, because the approaches and conclusions advanced therein can be a guideline in forming legal practice.

Keywords: act, qualification, aggravating circumstance, adapted subject, helpless, minor.



ԴԱՎԻԹ ՕՀԱՆՅԱՆ

«Նուսրիկանության պարեկային ծառայության պետի տեղակալ, նուսրիկանության մայր, իրավաբանական գիտությունների թեկնածու»

ԵՐԵՒԱՅԻ ՏԵՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԽՈՉԸՆԴՈՏԵԼՈՒ ՀԱՆՑԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱՎՈՐ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔԵՐԸ

Ամփոփագիր

Սույն հոդվածը նվիրված է երեխայի տեսակցության իրավունքը խոչընդոտելու հանցակազմի էության բացահայտմանը: Այս հանցակազմը համեմատաբար նոր է և նախատեսվել է «Քրեական օրենսգրքում 2017 թվականին: Այս իրավահարաբերությունների քրեականացումից հետո ներպետական պրակտիկայում առաջացան բազմաթիվ հարցեր: Իրավակիրառ մարմինները շատ դեպքերում դժվարանում են հստակ գնահատական տալ այդ հարցերին: Այդ իսկ պատճառով սույն հետազոտությունում հեղինակի կողմից առավելապես ուսումնասիրվել է ներպետական պրակտիկան: Մասնավորապես, հեղինակի կողմից ներկայացվել է քննարկվել են պրակտիկայում այս հանցակազմի գնահատման ժամանակ առաջացած խնդիրները: Վերջիններս հիմնականում մասնավոր իրավական բնույթի են: Հեղինակի կողմից ներկայացվել են երեխայի լավագույն շահին առնչվող իրավական մոտեցումները և առաջարկվել է առաջնորդվել հենց այդ շահով:

Հիմնաբառեր. երեխայի տեսակցություն, տեսակցության արգելք, երեխայի լավագույն շահ, տեսակցությանը խոչընդոտել, տեսակցության վայր:

«Քրեական օրենսգրքի 243-րդ հոդվածի համաձայն՝ երեխայի հետ բնակվող ծնողի կողմից երեխայի հետ չբնակվող ծնողի կամ այլ մերձավոր ազգականի և երեխայի միջև դատական կարգով սահմանված տեսակցության իրականացմանը մեկ ամսվա ընթացքում երեք կամ ավելի անգամ, ինչպես նաև մեկ տարվա ընթացքում հինգ կամ ավելի անգամ

ՍԱՀՄԱՆԱՂՈՒՄԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ◆ 3(107)2022

խոչընդոտելը կամ առանց տեսակցող ծնողի կամ այլ մերձավոր ազգականի նախնական համաձայնության՝ տեսակցության ժամերին այլ վայր տեղափոխելը պատժվում է տուգանքով՝ առավելագույնը տասնապատիկի չափով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատագրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:

Այս հանցագործության օբյեկտը երեխայի՝ իր ծնողների և մերձավոր ազգականների հետ կանոնավոր շփվելու, նրանց ճանաչելու իրավունքը, ինչպես նաև երեխայի հետ համատեղ չբնակվող ծնողի կամ մերձավոր ազգականների՝ երեխայի հետ կանոնավոր շփվելու իրավունքը պաշտպանող հասարակական հարաբերություններն են: Հանցագործության օբյեկտիվ կողմը դրսևորվում է երկրնտրելի արարքներից մեկի կատարմամբ, այն կարող է լինել ինչպես գործողությամբ, այնպես էլ անգործությամբ: Սուբյեկտիվ կողմից այս հանցագործությունը բնութագրվում է ուղղակի կամ անուղղակի դիտավորությամբ: Հանցագործության սուբյեկտը հատուկ է, որպես այդպիսին կարող է լինել երեխայի հետ համատեղ բնակվող ծնողը¹:

Սահմանվում են նաև որոշակի պայմաններ, որոնց միաժամանակյա առկայությունը պարտադիր է այս հանցագործությունն ավարտված ճանաչելու համար՝

1. այն կատարվում է երեխայի հետ բնակվող ծնողի կողմից,
2. երեխայի հետ չբնակվող ծնողի կամ այլ մերձավոր ազգականի և երեխայի միջև դատական կարգով առկա է սահմանված տեսակցության իրականացման կարգ,
3. կատարվել է տեսակցության խոչընդոտում կամ առանց տեսակցող ծնողի կամ այլ մերձավոր ազգականի նախնական համաձայնության՝ տեսակցության ժամերին այլ վայր տեղափոխում,
4. խոչընդոտելը կամ տեղափոխելը կատարվել է մեկ տարվա ընթացքում հինգ կամ ավելի անգամ, կամ կատարվել է մեկ ամսվա ընթացքում երեք կամ ավելի անգամ²:

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս: Ոստմնական ձեռնարկ/ **Դ. Ա. Թումայան, Կ. Հ. Հովհաննիսյան**, ՀՀ ոստիկանության կրթահամալիր: Եր., Լիմուշ, 2022, էջեր՝ 387-389:

² Տե՛ս նույն տեղը:

Առաջին հայացքից թվում է, թե քրեական իրավունքն այս հանցագործության մասով տվել է բոլոր պատասխանները: Միգուցե քրեական իրավունքի գնահատման, քրեաիրավական սկզբունքների և կառուցակարգերի տեսանկյունից այսքանը բավարար է, սակայն կան հարցեր, որոնք չեն գտնվում քրեական իրավունքի տիրույթում:

Բանն այն է, որ սույն հանցագործության քրեականացումից հետո իրավակիրառ պրակտիկայում առաջացան բազմաբնույթ հարցեր, որոնք կա՛մ ուղղակիորեն մասնավոր իրավական բնույթ ունեն, կա՛մ բխում են այդ դաշտից: Պրակտիկայում վարույթն իրականացնող մարմինները սույն արարքի քրեաիրավական գնահատականը տալիս հանդիպում են մի շարք խնդիրների, որոնք պարզաբանման կարիք ունեն: Օրեսնդիրն այս հանցակազմով, ըստ էության, սահմանում է դատական կարգով սահմանված տեսակցության խոչընդոտելը: Հարց է առաջանում՝ արդյո՞ք իրավակիրառ մարմինները պետք է բավարարվեն տեսակցության դատական կարգով, թե կարող են շեղվել դրանից: Այլ կերպ ասած՝ արդյո՞ք պետք է գնահատականի առարկա դառնան այն հանգամանքները, որոնք դուրս են սահմանված կարգից: Բավականին խնդրահարույց է նաև նորմում առկա առանց նախնական համաձայնության հասկացությունը: Այլ կերպ ասած՝ արդյո՞ք այդ համաձայնությունը երկկողմանի է, թե՞ խոսքը վերաբերում է զուտ մեկ ծնողի կողմից մյուսին տեղեկացմանը: Հարցերի շրջանակը կարծես թե անսպառ է: Դրա մասին է վկայում նաև ներպետական դատական պրակտիկան:

Այսպես՝ գործերից մեկով քաղաքացի Ժաննա Աբրոյանն արգելել է երեխային դուրս հանել, իսկ երեխան լաց է եղել, գտնվել է վատառողջ վիճակում: Հրավիրվել է բժիշկ, որը զննում անկացնելուց հետո տրամադրել է քաղվածք այն մասին, որ երեխան ունի բրոնխիտ: Մայրը՝ Ժաննա Աբրոյանը, մինչև երեխայի առողջական վիճակի լիարժեք կայունացումը մտավախություն է հայտնել, որ երեխայի վիճակը կվատթարանա, ուստի հնարավոր չի եղել կազմակերպել տեսակցությունը: Ժաննա Աբրոյանը հայտնել է, որ վեց ամիս ինքը չի կարողացել տեսակցել երեխային, թույլ չի տալու երեխային տանել, քանի որ նրան տանում են և ասում, որ մայրը վատն է, նոր բալիկ ունի և չի սիրում իրեն, մտավախություն ունի, որ երեխային կտանեն և չեն վերադարձնի: Նշել է նաև, որ թույլ կտա միայն տեսակցել երեխային իր ներկայությամբ իր տանը, բայց գիշերակացով տանել թույլ չի տա, քանի

ՍԱՀՄԱՆԱՐԴՐՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱԿ 3(107)2022

որ երեխան հաճախում է հոգեբանի մոտ, նրան պետք է տանի հերթական այցելության¹:

Մեկ այլ գործով քաղաքացի Սաթենիկ Արմենի Գրիգորյանը հրաժարվել է երեխային ներկայացնել տեսակցության՝ պատճառաբանելով, որ ստացել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը, համաձայն որի՝ տեսակցությունները պետք է կայանան յուրաքանչյուր երեք ամիսը մեկ, վերջին ամսվա վերջին տասը օրը, գիշերակացով: Գործի նյութերից ուղղակիորեն բխում է, որ Սաթենիկ Գրիգորյանին մի քանի անգամ պարզաբանվել է և նրա համար հասկանալի է եղել, որ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2021 թվականի մարտի 12-ի որոշումը դեռևս օրինական ուժի մեջ չի մտել և մինչ այդ կատարողական վարույթի մասնակիցները, այդ թվում՝ Սաթենիկ Գրիգորյանը պարտավոր են ղեկավարվել Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կատարողական թերթի պահանջներով, որպիսի պայմաններում վերջինը նույն հիմնավորումներով շարունակել է իր ոչ իրավաչափ վարքագիծը²:

Քաղաքացի Հասմիկ Ավագյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ ունենալով դատարանի կողմից դատական կարգով սահմանված տեսակցության հատկացման պարտականություններ, խուսափել է դատական կարգով սահմանված տեսակցության իրականացումից՝

¹ Տե՛ս Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԳԴ1/0015/01/22 2022 թվականի սեպտեմբերի 7-ի որոշումը: Հատկանշական է, որ սույն գործի շրջանակներում Ուղեկից հոգեբանական կենտրոն ՍՊ ընկերության փորձագետի կողմից տրվել է փորձաքննություն, որի համաձայն՝ Ռուստամ Ղազարյանի լիարժեք հոգեբանական զարգացման համար անհրաժեշտ է ապահովել Արտակ Ղազարյանի և Ժաննա Աբրոյանի հետ լիարժեք շփում, նրա դաստիարակությանը ծնողների լիարժեք մասնակցություն, Արտակ Ղազարյանի հորեղբոր դստեր հետ երեխայի շփման հնտեսիփության նվազում՝ վերջինիս կողմից մոր դերի ստանձնումը բացառելու և երեխայի ու մոր հուզական կապը վերականգնելու նպատակով, քանի որ ներկայում երեխան մշտապես գտնվում է Ա.Ղազարյանի ընտանիքում, կրում այդ ընտանիքի անդամների ամենօրյա հոգեբանական ազդեցությունը և նրա մոտ ընտանիքի վերաբերյալ պատկերացումներում տեղի են ունենում վերաձևավորումներ, այդ թվում Ա.Ղազարյանի հորեղբոր դստեր կողմից ակտիվ դերակատարության, երեխայի խնամքի և դաստիարակության դերակատարումը ստանձնելու պայմաններում երեխայի մոտ տեղի է ունենում ընտանիքի մոդելի աղճատում և մոր դերի վերապահում տվյալ անձին, ինչը հանգեցնում է Ժ.Աբրոյանի նկատմամբ հուզական կապվածության թուլացմանը և մերժողական վերաբերմունքին:

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԿԴ/0169/01/21 2022 թվականի մայիսի 11-ի որոշումը:

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴՍՏԱՐԱՆ 3(107)2022

մասնավորապես վերը նշված օրերին, անչափահաս երեխաների հետ բացակայել է տնից և իր գտնվելու վայրը չի հայտնել նախկին ամուսնուն, որպեսզի վերջինս հնարավորություն չունենա տեսակցել իր երեխաներին¹:

Բավականին հետաքրքիր է այն հարցը, թե արդյոք իրավաչափ է տեսակցությունն արգելելն այն դեպքում, երբ ծնողը չի կատարում իր պլիմենտային պարտավորությունները: Այսինքն կարո՞ղ է այդ հիքմով ծնողն արգելել սահմանված տեսակցությունը: Այս հարցին ՀՀ Վերաքննիչ դատարանը տվել է հակիրճ, բայց հստակ պատասխան՝ նշելով, որ Ա. Մամիկոնյանի կողմից պլիմենտային պարտավորությունների կատարման վերաբերյալ պաշտպանական կողմի դատողություններին, ապա նշված փաստը չի կարող քննության առարկա դառնալ սույն քրեական գործի շրջանակներում²: Ամբողջությամբ կիսում ենք Վերաքննիչ դատարանի այս եզրահանգումը: Մեր կարծիքով դրանք առանձին իրավահարաբերություններ են և փոխկապակցված չեն: Ավելին, պետք չէ նույնականացնել գույքային և անձնական ոչ գույքային հարաբերությունները, առավել ևս այն դեպքում, երբ ծնողը չի խուսափում, այլ պարզապես չունի հնարավորություն:

Մեկ այլ գործով տեսակցության խոչընդոտման պատճառ էր հանդիսացել այն հանգամանքը, որ ծնողը պարբերաբար բացակայել էր

ՍԱՀՄԱՆԱՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 3(107)2022

◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԱՐԴ/0019/01/20 2021թվականի հոկտեմբերի 21-ի որոշումը:

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության Վերաքննիչ դատարանի թիվ ԵԴ/1194/01/19 2022 թվականի դեկտեմբերի 05-ի որոշումը: Սույն գործի շրջանակներում անդրադառնալով վերաքննիչ բողոքում արված պատճառաբանություններին առ այն, որ գործի դատաքննության ընթացքում պաշտպանության կողմի ներկայացրած տեղեկանքի համաձայն՝ Նաիրա Շմավոնյանն աշխատում է Նորք ինֆեկցիոն ազգային կենտրոնում, որպես հերթապահ բուժքույր՝ 24 ժամ աշխատանքային հերթափոխով, որի ժամանակ նա օբյեկտիվորեն չէր կարող իրականացնել որևէ տեսակցություն կամ դրան խոչընդոտեր, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ձեռք բերված ապացույցների համատեքստում վերը նշված հանգամանքը չի կարող բավարար գնահատվել արձանագրելու համար, որ վերջինն օբյեկտիվորեն զրկված էր ապահովելու Ա. Մամիկոնյանի և դստեր տեսակցությունները, հաշվի առնելով նաև այն, որ Ն. Շմավոնյանը բազմակի անգամներ տեղեկացվել է տեսակցությունների տեղի և ժամանակի մասին, սակայն իր պարտավորությունները կատարելու ուղղությամբ որևէ գործողություն չի իրականացրել:

Վերաքննիչ դատարանն արժանահավատ չի համարում Ն. Շմավոնյանի հերթապահության մեջ գտնվելու պատճառով տեսակցություններին չներկայանալու մասին պաշտպանական կողմի պնդումները և փաստում, որ դրանք նպատակ են հետապնդում հիմքեր ստեղծել մեղազրվող արարքում ամբաստանյալին արդարացնելու համար:

Հայաստանի Հանրապետությունից: Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից վկայակոչված Մանուկ Ղազանչյանի՝ ԱՄՆ-ում բնակվելու և աշխատելու, Հայաստանում հաճախակի լինելու կամ չլինելու հանգամանքները խոչընդոտ չեն Մանուկ Ղազանչյանին երեխայի հետ իր բնակության վայրում, այն է՝ ք. Երևան, Մուրովական 25/4-րդ շենքի թիվ 13 բնակարանում տեսակցելու և շփվելու իրավունք տրամադրելու համար¹:

Ներպետական դատական պրակտիկան ևս վկայում է այս հանցակազմի ոչ միանշանակ և իրարամերժ լինելու մասին: Վերը նշված բոլոր դեպքերում ակնհայտ է մի բան, որ դատարանը չի կարող տեսակցության կարգ սահմանելով տալ բոլոր հարցերի պատասխանները: Դատական ակտի կայացումից հետո էլ ծագում են հարցեր, որոնք դատավորներն ի սկզբանե չեն կարող նախատեսել այն պարզ պատճառով, որ նույնիսկ կողմերը չեն կարող նախատեսել: Հետևաբար վարույթն իրականացնող մարմինները քրեաիրավական գնահատական տալիս չեն կարող սահմանափակվել միայն դատական կարգով: Դատական ակտով սահմանափակվելը, մեր կարծիքով, չի բխում ինքնին քննարկվող իրավահարաբերությունների էությունից: Ուստի ակնհայտ է, որ պետք է հաշվի առնվեն բոլոր հանգամանքները, որոնք կարող են այս կամ այն կերպ ազդեցություն ունենալ քրեաիրավական որակման վրա:

Այլ հարց է, թե ինչպես պետք է գնահատվեն այդ հանգամանքները և ինչպիսի չափանիշների հիման վրա: Թե՛ վերը նշված բոլոր օրինակները, թե՛ այս հարաբերությունները կարգավորող իրավական նորմերը, բոլորը կառուցված են մեկ սուբյեկտի՝ երեխայի շուրջ: Հետևաբար բոլոր հանգամանքները պետք է գնահատվեն հենց այս սուբյեկտի շահերից ելնելով: Այլ կերպ ասած՝ խոսքը գնում է երեխայի լավագույն շահի մասին: Հենց այս շահն է, որ ընկած է ամուսնաընտանեկան իրավահարաբերությունների հիմքում: Դրա մասին են վկայում նաև ՀՀ բարձրագույն դատական ատյանների իրավական դիրքորոշումները:

Արա Միրզախանյանն ընդդեմ Դիանա Խաչատրյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու և երեխաների բնակության վայրի շուրջ ծնողների համաձայնության բացակայության դեպքում երեխաների բնակության վայրը որոշելիս

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 14-ի որոշումը:

դատարանը պետք է համեմատական գնահատական տա և պատճառաբանի, թե որ ծնողի հետ բնակվելն է բխում երեխայի շահերից և նպաստում երեխայի դաստիարակությանն ու զարգացմանը¹:

Մարգարիտ Հովհաննիսյանն ընդդեմ Արթուր Թորոսյանի գործով ՀՀ Վճռաբեկ դատարանը, վերլուծելով ընտանեկան օրենսդրության նորմերը, եկել է հետևյալ եզրահանգման՝ Հայաստանի Հանրապետությունը երեխայի իրավունքների իրականացման և պաշտպանության գործընթացում պարտավոր է ելնել միմիայն երեխայի լավագույն շահերից, երեխային ապահովել բարեկեցության համար անհրաժեշտ հոգատարությամբ: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ **երեխայի շահ** կամ **երեխայի լավագույն շահեր** հասկացություններն իրավակիրառ պրակտիկայում պետք է ընկալվեն ու կիրառվեն հետևյալ երեք իմաստներով.

1) որպես երեխայի իրավունք. երեխան ունի իր լավագույն շահերի բացահայտման և դրանց առաջնային նշանակության տրամադրման իրավունք այն դեպքում, երբ իրավասու մարմնի կողմից կայացվող որոշումն առնչվում է երեխայի և այլ անձանց իրավունքներին ու շահերին, և առկա է դրանց հավասարակշռման անհրաժեշտություն,

2) որպես իրավական-մեկնաբանողական սկզբունք. երեխայի իրավական վիճակին առնչվող տարբեր մեկնաբանությունների և ընկալումների տեղիք տվող ցանկացած իրավական նորմ պետք է մեկնաբանվի և կիրառվի՝ ելնելով երեխայի լավագույն շահերի առավել ապահովման նկատառումից,

3) որպես ընթացակարգային կարգավորման կանոն. երեխային առնչվող որոշումների ընդունման ընթացքում պետք է բացահայտվի նաև երեխայի իրավունքների և շահերի վրա այդ որոշման հնարավոր ազդեցությունը²:

Սակայն ներպետական պրակտիկայում այս տեսանկյունից անկյունաքարային եղավ ՀՀ սահմանադրական դատարանի 05.10.2010 թվականի թիվ ՍԴՈ-919 որոշումը: Այս որոշմամբ դատարանը գտել է, որ օրենքներում օգտագործվող առանձին հասկացություններ չեն կարող ինքնաբավ լինել, և դրանց բովանդակությունը, բնորոշ հատկանիշների

¹ Տե՛ս թիվ 3-432(ՏԴ) քաղաքացիական գործով Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի 30.03.2007 թվականի որոշումը:

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի 01.04.2011 թվականի թիվ ԵԱԴԴ/1513/02/08 որոշումը:

ՍԱՀՄԱՆԱՐԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 3(107)2022

շրջանակը ճշգրտվում են ոչ միայն օրինաստեղծ գործունեության արդյունքում, այլ նաև՝ դատական պրակտիկայում: Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի՝ **Երեխայի շահ** հասկացությունը բարձրացվել է համընդհանուր ճանաչում ստացած **իրավական սկզբունքի** աստիճանի և ընտանեկան օրենսդրության հիմքում ընկած ինքնուրույն սկզբունք է: Ընդ որում, նշված հասկացությունը ենթակա է գնահատման յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ ելնելով տվյալ գործի բոլոր փաստական հանգամանքների համադրված վերլուծությունից:

Երեխայի դաստիարակությանը մասնակցելու և նրա հետ շփվելու ծնողի իրավունքը բխում է նաև Կոնվենցիայի 8-րդ հոդվածով ամրագրված՝ ընտանեկան կյանքի նկատմամբ յուրաքանչյուրի հարգանքի իրավունքի էությունից, որի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի տեսանկյունից երեխայի և ծնողների՝ միմյանց հետ շփվելու իրավունքն ընտանեկան կյանքի հիմնարար տարրերից մեկն է¹:

Վերոշյալ բոլոր իրավական դիրքորոշումները հանգում են նրան, որ երեխայի լավագույն շահը չի կարող որոշվել ընդհանուր բնույթի իրավական դատողությունների միջոցով և կախված է յուրաքանչյուր կոնկրետ գործի հանգամանքներից՝ հիմք ընդունելով երեխայի շահերի առաջնայնությունը: Միևնույն ժամանակ երեխայից առանձին բնակվող ծնողի ծնողական իրավունքների արդյունավետ իրացումն ապահովելու համար անհրաժեշտ է հաշվի առնել նաև տվյալ ծնողին առնչվող ուշադրության արժանի հանգամանքները, եթե դրանք հաշվի առնելը չի հակասում երեխայի լավագույն շահերին:

Ամփոփելով իրավակիրառ պրակտիկան, դրանում արտահայտված իրավական դիրքորոշումները, ձևավորված իրավական մոտեցումները՝ հանգում ենք այն եզրակացության, որ երեխայից առանձին ապրող ծնողի կողմից ծնողական իրավունքների իրականացման վերաբերյալ վեճեր քննելու յուրաքանչյուր դեպքում իրավակիրառ մարմնի խնդիրն է **բացահայտել երեխայի լավագույն շահերը՝ հաստատելով ողջամիտ հավասարակշռություն ծնողի իրավունքների և երեխայի լավագույն շահերի միջև:**

¹ St' u Eriksson v. Sweden գործով Եվրոպական դատարանի 22.06.1989 թվականի վճիռը, 58-րդ կետ:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. ՀՀ Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 14-ի որոշումը: http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=13229323905401450
2. ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ 3-432(ՏԴ) քաղաքացիական գործով 30.03.2007 թվականի որոշումը: http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=13229323905401819
3. ՀՀ Վճռաբեկ դատարանի 01.04.2011 թվականի թիվ ԵԱԴԴ/1513/02/08 որոշումը <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=68305>
4. Eriksson v. Sweden գործով Եվրոպական դատարանի 22.06.1989 թվականի վճիռը, 58-րդ կետ: <https://hudoc.echr.coe.int/fre#%7B%22itemid%22%3A%22001-110322%22%7D>
5. ՀՀ Վերաքննիչ դատարանի թիվ ԵԴ/1194/01/19 2022 թվականի դեկտեմբերի 05-ի որոշումը: http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=1125899906908544
6. ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԳԴ1/0015/01/22 2022 թվականի սեպտեմբերի 7-ի որոշումը: http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=33495522228659007
7. ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԿԴ/0169/01/21 2022 թվականի մայիսի 11-ի որոշումը: http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=16325548649308386
8. ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԱՐԴ/0019/01/20 2021թվականի հոկտեմբերի 21-ի որոշումը: http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=45880421204056426
9. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, Հատուկ մաս, Ոստմնական ձեռնարկ/ Դ. Ա. Թումասյան, Կ. Հ. Հովհաննիսյան, ՀՀ ոստիկանության կրթահամալիր: Եր., Լիմուշ, 2022:

ЧАСТНО-ПРАВОВЫЕ ОСНОВЫ СОСТАВА ПРЕСТУПЛЕНИЯ - ПРЕПЯТСТВОВАНИЯ ПРАВУ НА ОБЩЕНИЕ С РЕБЕНКОМ

Аннотация

Данная статья посвящена раскрытию сущности преступления - препятствования праву на общение с ребенком. Это преступление

является относительно новым и было внесено в Уголовный кодекс РА в 2017 году. После криминализации данных правоотношений в отечественной практике возникло много вопросов. Во многих случаях правоохранительные органы затрудняются дать четкую оценку этим вопросам. Именно поэтому в данном исследовании автор в основном изучил отечественную практику. В частности, автор представил и рассмотрел проблемы, возникшие при оценке данного преступления на практике. Последние носят в основном частно-правовой характер. Автор представил правовые подходы, касающиеся наилучших интересов ребенка, и предложил руководствоваться этим интересами.

Ключевые слова: общение с ребенком, запрет на общение, наилучшие интересы ребенка, препятствование общению, место общения.

PRIVATE LEGAL GROUNDS OF THE CRIME INTERFERING WITH CHILD VISITING RIGHTS

Annotation

This article is dedicated to revealing the nature of the crime of interfering the child's visitation rights. This crime is relatively new and was introduced in the RA Criminal Code in 2017. After the criminalization of these legal relations, many questions arose in domestic practice. In many cases, law enforcement agencies find it difficult to make a clear assessment of these issues. That is why in this research, the author mainly studied the domestic practice. In particular, the author presented and discussed the problems that arose during the assessment of this crime in practice. The latter are mainly of a private legal nature. The author presented the legal approaches related to the best interest of the child and suggested to be guided by that interest.

Keywords: Child visiting, visitation ban, best interest of the child, obstruct the visiting, visiting place:



ԱՐՄԻՆԵ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

*Երևան քաղաքի առաջին աստիճանի
ընդհանուր իրավասության
դատարանի դատավոր,
ՀՀ ոստիկանության
կրթահամալիրի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու*

**ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ
ՍՈՒՏ ՑՈՒՑՄՈՒՆՔ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ
(ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ
ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ)**

Ամփոփագիր

Հեղինակը հողվածի շրջանակներում քննարկել է սուտ ցուցմունք տալու համար քրեական պատասխանատվությանն առնչվող հարցեր: Անդրադարձել է քրեական արդարադատության ոլորտում սուտ ցուցմունք տալու քրեաիրավական առանձնահատկություններին: Առանձնահատուկ անդրադարձ կա մեղադրյալի կողմից սուտ ցուցմունք տալու համար քրեական պատասխանատվությանը՝ այն դիտարկելով մեղադրյալի պաշտպանության իրավունքի համատեքստում:

Հիմնաբառեր. սուտ ցուցմունք, քրեական պատասխանատվություն, մեղադրյալ, պաշտպանության իրավունք, օրենքի հետադարձ ուժ, արդարադատություն:

Անվիճելի է, որ սուտ ցուցմունք տալը, ի տարբերություն ցուցմունք տալուց հրաժարվելու, ավելի բարձր հանրային վտանգավորություն ունի, քանզի այն ոչ միայն խաթարում է արդարադատության բնականոն ընթացքը, այլ նաև պատկան մարմիններն անտեղի ժամանակ և/կամ ռեսուրս են ծախսում ցուցմունքի արժանահավատությունը ստուգելու, այս կամ այն վարկածը հերքելու կամ հաստատելու համար:

ՍԱԳՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 3(107)2022 ՏԵՂԵԿՎԱԳԻՐ

Միևնույն ժամանակ, ըստ մի շարք հեղինակների, պետության արձագանքը, ընդ որում ոչ միայն քրեաիրավական¹, շատ մեղմ է:

Սուտ ցուցմունք տալը, որպես հավաքական հանցագործություն, նախատեսված է թե՛ նախկին քրեական օրենսգրքով և թե՛ նոր քրեական օրենսգրքում:

Այն դասվում է արդարադատության դեմ ուղղված հանցագործությունների շարքին, ավելի կոնկրետ՝ քննարկվում է որպես մասնավոր անձանց կողմից արդարադատության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունների դեմ ուղղված արարք:

2003 թ. ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածը պատասխանատվություն էր նախատեսում քաղաքացիական կամ վարչական դատավարության գործով սուտ ցուցմունք տալու, քրեական գործով վկայի կամ տուժողի կողմից սուտ ցուցմունք տալու, քրեական կամ քաղաքացիական կամ վարչական դատավարության գործով փորձագետի կողմից ակնհայտ կեղծ եզրակացություն տալու, քաղաքացիական դատավարության գործով մասնագետի կողմից ակնհայտ կեղծ բացատրություն տալու, թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու, նոտարի կողմից իրավաբանական նշանակություն ունեցող փաստ հաստատելու գործով վկայի կողմից սուտ ցուցմունք տալու համար:

2021 թ. ընդունված և 2022 թ. հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում քաղաքացիական կամ վարչական գործով կամ վարչական վարույթով սուտ բացատրություն տալու կամ քրեական, քաղաքացիական կամ վարչական գործով կամ վարույթով սուտ ցուցմունք կամ փորձագետի կողմից կեղծ եզրակացություն կամ կարծիք տալու կամ թարգմանչի կողմից սխալ թարգմանություն կատարելու կամ նոտարի կողմից իրավաբանական նշանակություն ունեցող փաստ հաստատելու գործով վկայի կողմից սուտ ցուցմունք տալու համար, եթե դա էական նշանակություն է ունեցել գործի լուծման համար կամ խաթարել է գործի կամ վարույթի ընթացքը:

¹ Տե՛ս **Новиков С.А.** Наказание за лжесвидетельство: дискуссионные вопросы // Российский следователь. - М., 2006, էջեր 10-12: Հեղինակը նշում է նաև, որ իրավապահ մարմիններն առանձնակի հետևողականություն չեն դրսևորում սուտ ցուցմունք տալու հետևանքով իրենց կողմից կրած ծախսերի փոխհատուցման գործիքակազմին դիմելու առումով:

Մեջբերված իրավանորմերի համալիր վերլուծությունից բխում է, որ թե՛ նախկին և թե՛ ներկայիս կարգավորումներով սուտ ցուցմունք տալն ունի այլընտրանքային օբյեկտիվ կողմ:

Սույն հոդվածի շրջանակներում կանդրադառնանք քրեական արդարադատության ոլորտում սուտ ցուցմունք տալու քրեաիրավական և քրեադատավարական առանձնահատկություններին, անդրադարձ կատարվի հատկապես հավանական հանցանք կատարած անձի (այսուհետ նաև՝ մեղադրյալ) կողմից սուտ ցուցմունք տալու համար քրեական պատասխանատվության որոշ հարցերի:

Քրեաիրավական նախորդ կարգավորումներով սուտ ցուցմունք տալը քրեական պատասխանատվություն էր նախատեսում, *inter alia*, վկայի և տուժողի համար, սակայն մեղադրյալի համար բացառվում էր քրեական պատասխանատվությունը, քանզի օրենսդիրը քրեական արդարադատության ոլորտում որպես սուտ ցուցմունք տալու հատուկ սուբյեկտ նախատեսում էր միայն վկային և տուժողին: Ընդ որում, օրենսդրի նման տրամաբանությունը պայմանավորված էր նաև 1998 թ. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված այն դրույթով, որ մեղադրյալի վրա չի կարող որևէ պատասխանատվություն դրվել իր տված ցուցմունքների և բացատրությունների համար, բացի այն դեպքերից, երբ նա հայտարարել է հանցագործությանն ակնհայտորեն առնչություն չունեցող անձի կողմից հանցանք կատարելու մասին:

Օրենսդրի կամքի վերհանման պատմաիրավական մեթոդի կիրառմամբ առնվազն պարզ է, որ նոր կարգավորումներով մեղադրյալը կարող է լռել, իսկ եթե ցանկանում է իրացնել իր ցուցմունք տալու իրավունքը, ապա պարտավոր է հայտնել միայն հավաստի (ոչ սուտ) տեղեկություններ, այլապես նախատեսված է քրեական պատասխանատվություն ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածով: Նման պնդումը պայմանավորված է այն հանգամանքով, որ հոդվածի դիսպոզիցիայում բացակայում է սուբյեկտի մասով որևէ նշում (սուտ ցուցմունք տալու մասով), որն է իր հերթին ենթադրում է, որ այն անձինք, ովքեր քրեական արդարադատության ոլորտում կարող են հարցաքննվել, որի ընթացքում կարող են սուտ ցուցմունք տալ, կարող են ենթարկվել քրեական պատասխանատվության: Այլ կերպ, ի տարբերություն նախկին քրեական

ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԿԱՆ ՂԱՏԱՐՈՒՄ 3(107)2022

օրենսգրքի՝ նոր օրենսգիրքը որպես սուտ ցուցմունք տալու պոտենցիալ սուբյեկտ դիտում է նաև մեղադրյալին:

Հետևաբար, նոր քրեական օրենսգիրքը թեև «երաշխավորում է» մեղադրյալի կողմից ցուցմունք տալուց հրաժարումը, քանզի լռելու իրավունքը Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության բաղադրատարր համարվող երաշխիքներից է, սակայն քրեական պատասխանատվություն է նախատեսում, այդ թվում նաև մեղադրյալի համար, սուտ ցուցմունք տալու համար:

Դոկտրինում քննարկվում է ստի երկու տեսակ՝ պասիվ և ակտիվ¹:

Ամերիկացի հոգեբան Պոլ Էկմանը, որը զբաղվել է ստի հոգեբանության ուսումնասիրմամբ, արձանագրել է, որ սուտն առավել «հիմնավոր է» թվում, երբ միաժամանակ և՛ փաստերն են աղավաղվում (ակտիվ սուտ), և՛ որոշ հանգամանքների մասին չի բարձրաձայնվում (պասիվ սուտ)²:

Որոշ հեղինակներ գտնում են, որ պասիվ սուտը պետք է գնահատել ցուցմունք տալուց հրաժարվելու հանցակազմի համատեքստում: Կան նաև այլ տեսլականը կիսող հեղինակներ, որոնք գտնում են, որ որոշ պարագայում, երբ անձը լռում է որոշակի էական հանգամանքների մասին, դա գնահատման է ենթակա որպես սուտ ցուցմունք տալ³:

Այլ կերպ, սուտ ցուցմունք տալը որոշ դեպքերում կարող է դրսևորվել նաև լռելու միջոցով, երբ անձը ցուցմունք է տալիս, սակայն որոշ էական հանգամանքների մասին լռում է, որի պարագայում ավելի մեծ վնաս է հասցվում արդարադատության իրականացման ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններին:

Սակայն, կարծում եմ, որ որևէ պարագայում պասիվ ստի միջոցով սուտ ցուցմունք տալիս չի կարող բարձրացվել մեղադրյալին քրեական պատասխանատվության ենթարկելու հարց, քանզի հակառակ տրամաբանության դեպքում կխախտվի ՄԻԵԿ-ով երաշխավորված իր լռելու իրավունքը:

¹ Տե՛ս **Лавров А.П.** Умолчание как форма дачи заведомо ложных показаний // Труды Академии управления МВД России – 2019. – N 4/52/. – էջ 63:

² Տե՛ս **Ekman P.** *Psychologia Izhi. Obmani menya, esli smozhesh'*. SPb., 2010:

³ Տե՛ս **Дубинин Л.Г.** Методика расследования заведомо ложных показаний свидетеля и потерпевшего: дис. ...канд. юрид. наук. – М., 2010, էջ 111:

«Քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածի դիսպոզիցիայից չի բխում, որ սուտ ցուցմունք տալու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին նախազգուշացված լինելը, ի տարբերություն ցուցմունք տալուց հրաժարվելու, որտեղ հատուկ նշում կա նախազգուշացման մասին, անհրաժեշտ պայման է անձին քրեական պատասխանատվության ենթարկելու համար: Սակայն օրենսդիրը քրեական պատասխանատվության հնարավորության հարցը կապել է մեկ այլ հանգամանքի հետ: Մասնավորապես, հոդվածում նշված է, որ հանցակազմ կարող է ձևավորվել, եթե սուտ ցուցմունքն էական նշանակություն է ունեցել գործի լուծման համար կամ խաթարել է գործի կամ վարույթի ընթացքը: Հետևաբար ստացվում է, որ ոչ բոլոր դեպքերում է, որ եթե նույնիսկ փաստվի ցուցմունքի սուտ լինելը, անձը կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության: Ընդ որում, ցուցմունքի՝ գործի համար էական նշանակություն ունենալու (նաև գործի կամ վարույթի ընթացքը խաթարելու) հանգամանքը գտնվում է վարույթն իրականացնող մարմնի գնահատման տիրույթում:

Այլ կերպ՝ սուտ ցուցմունք տալու հանցակազմի առկայության կամ բացակայության հարցը քննարկելու համար կարևոր նախապայման է ցուցմունքի գնահատումը դրա՝ գործի լուծման վրա ազդեցության տեսանկյունից, որը կարող է կատարվել միայն «մայր» գործի քննության ավարտից հետո:

ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԿԱՆ ՂԱՏԱՐՈՒՄ 3(107)2022

- ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
- ◆ ՍԵՂԵԿՎՈՐ

Այս համատեքստում կարծում եմ՝ Կարեն Սարուխանյանի վերաբերյալ «Վճռաբեկ դատարանի 2010 թվականի թիվ ԼԴ/0301/01/09 գործով կայացված որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը, mutatis mutandis, կիրառելի է նաև նոր քրեաիրավական կարգավորումների ժամանակ հանցանք կատարած անձանց գործերով:

Prima fase խնդրահարույց կարող է համարվել մեղադրյալին սուտ ցուցմունք տալու համար քրեական պատասխանատվության ենթարկելն այն պայմաններում, երբ վերջինս «մայր» գործով քրեորեն հետապնդելի արարքը կատարել է նախորդ կարգավորումների ժամանակ, երբ, օրինակ, նախաքննության ընթացքում իրեն պարզաբանվել են 1998 թ. քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածով նախատեսված իրավունքները, այդ թվում պարզաբանվել է, որ իր վրա չի կարող դրվել որևէ պատասխանատվություն իր ցուցմունքի համար: Մինչդեռ գործի դատաքննության ընթացքում, երբ արդեն իսկ քրեականացվել է

մեղադրյալի կողմից սուտ ցուցմունք տալը, դատարանում մեղադրյալը սուտ ցուցմունք է տալիս: Կարծում եմ՝ խնդրո առարկա հարցը միայն առաջին հայացքից է խնդրահարույց: Մտահոգության կողմնակիցները որպես հակափաստարկ բերում են այն հանգամանքը, որ սահմանափակվում է մեղադրյալի իրավունք:

Քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսում է որոշակի երաշխիքներ մեղադրյալի համար, նման երաշխիքներ նախատեսելու գերնպատակն այն է, որպեսզի որևէ անմեղ անձ չենթարկվի քրեական պատասխանատվության: Ընդ որում անձին տրված որոշ իրավունքներ թույլ են տալիս նաև խուսափելու պատասխանատվությունից: Սակայն պետք է փաստել, որ քրեական պատասխանատվությունից խուսափելու ոչ բոլոր հնարավորություններն են ընդունելի: Այլ կերպ, երբ մեղադրյալը դիմում է օրենքով չարգելված բոլոր միջոցների, վերջինիս վարքագիծն արդարացված է: Իսկ նոր քրեական օրենսգրքով սուտ ցուցմունք տալու համար քրեական պատասխանատվություն նախատեսելով դրվել է սահման, որի համաձայն մեղադրանքից կարելի է պաշտպանվել բոլոր միջոցներով, բացի սուտ ցուցմունք տալու եղանակով¹: Որոշ հեղինակներ կարծում են, երբ անձի պաշտպանությունն իրականացվում է այլ անձանց, հասարակության, պետության շահերին վնաս պատճառելու սպառնալիքով, ապա այն պետք է գնահատել որպես իրավունքի չարաշահում²:

Որոշ երկրներ (Մեծ Բրիտանիա, ԱՄՆ), շեշտադրելով կողմերի իրական իրավական հավասարության և մրցակցության հանգամանքը, հանգել են այն եզրահանգման, որ ինչպես տուժողը, այնպես էլ մեղադրյալը պետք է ենթակա լինեն պատասխանատվության սուտ ցուցմունք տալու համար:

Նույնիսկ իրավական դոկտրինում քննարկվում է այն տեսակետը, որ սուտ ցուցմունք տալը մեղադրյալի իրավունքը համարելն անուղղակիորեն կասկածի տակ է դնում անմեղության կանխավարկածը, քանզի նման

¹ Թեև չի բացառվում նաև սուտ մատնություն կատարելու եղանակով պաշտպանվելիս քրեական պատասխանատվության հնարավորությունը, սակայն դա ուսումնասիրության այլ թեմա է, հետևաբար սույն հոդվածում անդրադարձ չի կատարվի:

² Տե՛ս **Куркеш Л.И., Асенок Б.В.** Заведомо ложные показания подозреваемого, обвиняемого: право или злоупотребление правом? // Вестник Академии МВД Республики Беларусь. - 2002 г., էջ 11:

պարագայում առաջնորդվում են այն թեզով, որ «եթե մեղադրյալի աթոռին է հայտնվել, ուստի շատ հավանական է, որ սուտ ցուցմունք կտա»¹:

Այս դիրքորոշումների համատեքստում արձանագրելով, որ ստելը չպետք է դիտարկել իբրև մեղադրյալի իրավունքը, միևնույն ժամանակ, սակայն, նախորդ կարգավորումներով նախատեսված չէր եղել քրեական պատասխանատվություն մեղադրյալի կողմից սուտ ցուցմունք տալու համար:

Մինչդեռ նոր իրողության պայմաններում ժամանակի մեջ քրեական օրենքի գործողության ընդհանուր, հանրաճանաչ դրույթի համաձայն արարքի հանցավորությունը որոշվում է այն կատարելու պահին (տվյալ դեպքում՝ սուտ ցուցմունք տալու պահին) գործող օրենքով, և եթե 2022 թ. հուլիսի 1-ց հետո մեղադրյալը սուտ ցուցմունք տա, ենթակա է քրեական պատասխանատվության՝ անկախ այն հանգամանքից, որ նա մեղադրյալի կարգավիճակ ձեռք է բերել մինչև 2022 թ. հուլիսի 1-ը:

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ սուտ ցուցմունք տալու համար քրեական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը սահմանափակում է մեղադրյալի պաշտպանական իրավունքը, ապա պետք է արձանագրել, որ այն պահից, երբ, օրինակ, դատարանում մեղադրյալին պարզաբանվում է, որ մեղադրյալն ունի լռելու իրավունք, որը որևէ կերպ չի կարող մեկնաբանվել ի վնաս նրա, իսկ եթե վերջինս ցանկություն ունի իրացնելու իր ցուցմունք տալու իրավունքը, որից հետո մեղադրյալը տալիս է ցուցմունք, վստահաբար կարելի է պնդել, որ նման պարագայում դժվար է մեղադրյալի ցուցմունքը գնահատել որպես ոչ արժանահավատ՝ պատճառաբանելով, որ վերջինս դրանով փորձում է խուսափել քրեական պատասխանատվությունից², քանզի հնարավոր քրեական պատասխանատվության մասին պարզաբանված լինելու պարագայում մեղադրյալի կողմից ցուցմունք տալիս բարձրանում է մեղադրյալի ցուցմունքի արժանահավատությունը (մյուս հանգամանքների հավասարության պարագայում)՝ դրանով իսկ ցուցմունք տալու իրավունքի իրացումը դարձնելով անձի պաշտպանության «կենսունակ» միջոց:

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 13:

² Մասնավորապես 100 քրեական գործով կայացված մեղադրական դատավճիռների ուսումնասիրությամբ պարզվել է, որ դրանցից գերակշիռ դեպքերում (80%-ից ավելի), մեղադրյալի ցուցմունքը գնահատվել է որպես քրեական պատասխանատվությունից խուսափելու նպատակ հետապնդող և ոչ արժանահավատ:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. ՀՀ քրեական օրենսգիրք, ընդունված 2003 թ.:
2. ՀՀ քրեական օրենսգիրք, ընդունված 2021 թ.:
3. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ընդունված 1998 թ.:
4. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ընդունված 2021 թ.:
5. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա, ընդունված 1950 թ.:
6. **Дубинин Л.Г.** Методика расследования заведомо ложных показаний свидетеля и потерпевшего: дис. ... канд. юрид. наук. - М., 2010, էջ 111:
7. **Куркеш Л.И., Асенок Б.В.** Заведомо ложные показания подозреваемого, обвиняемого: право или злоупотребление правом? // Вестник Академии МВД Республики Беларусь. - 2002 г., 140 էջ:
8. **Лавров А.П.** Умолчание как форма дачи заведомо ложных показаний // Труды Академии управления МВД России. - 2019. - №4/52/, 120 էջ:
9. **Новиков С.А.** Наказание за лжесвидетельство: дискуссионные вопросы // Российский следователь. - 2006. - №5, 85 էջ:
10. **Ekman P.** Psihologiya lzhi. Obmani menya, esli smozhesh'. SPb., 2010. - 236 էջ:
11. «ԴատաԼեքս» տեղեկատվական համակարգ՝ www.Datalex.am:

УГОЛОВНАЯ ОТВЕТСТВЕННОСТЬ ЗА ЛОЖНЫЕ ПОКАЗАНИЯ (НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ПО УГОЛОВНОМУ ПРАВУ И УГОЛОВНОМУ СУДОПРОИЗВОДСТВУ)

Аннотация

В рамках статьи рассмотрены вопросы, связанные с уголовной ответственностью за дачу ложных показаний. Автор ссылается на уголовно-правовые особенности в сфере уголовного правосудия при даче ложных показаний. Особое внимание уделяется уголовной ответственности за ложные показания со стороны виновника, рассматривая её в контексте права на защиту виновника.

Ключевые слова: ложные показания, уголовная ответственность, виновник, право на защиту, обратная сила закона, правосудие.

CRIMINAL LIABILITY FOR GIVING FALSE TESTIMONY. SOME ISSUES ABOUT CRIMINAL LAW AND CRIMINAL PROCEEDINGS

Annotation

The article touches upon the issues related to criminal responsibility for giving false testimony. The author brings forward the characteristics of the criminal law of false testimony in the field of criminal justice. Special attention is paid to the criminal liability of the defendant's false testimony in the context of the defendant's right of defense.

Keywords: false testimony, criminal liability, defendant, right of defense, retroactive law, injustice.



ՀՐԱՆՏ ՍԱՐԿԻՍՈՎ

*Հայաստանի Հանրապետության
հեռուստատեսության եվ
ռադիոյի հանձնաժողովի
նախագահի օգնական,
Հայ-ռուսական համալսարանի
իրավունքի ու քաղաքականության
ինստիտուտի իրավունքի տեսության
եվ սահմանադրական
իրավունքի ամբիոնի ասիստենտ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԻ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ
ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Ամփոփագիր

Հետազոտության առարկան Հայաստանի Հանրապետության Անվտանգության խորհրդի կազմի և կառուցվածքի իրավաքաղաքական հիմնախնդիրներն են: Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել են անկախությունից ի վեր Անվտանգության խորհրդի կառուցվածքներն ու կազմերը, ցույց են տրվել վերջիններիս տարբերությունները, ինչպես նաև այս կամ այն կազմի ու կառուցվածքի իրավաքաղաքական հիմնախնդիրները: Ավելին, ուսումնասիրվել են ԱՄՆ, ՌԴ, ինչպես նաև ԽՍՀՄ փորձերը՝ Անվտանգության խորհուրդների կազմի ու կառուցվածքների ձևավորման վերաբերյալ: Հետազոտության նպատակն է դուրս բերել Անվտանգության խորհրդի կազմի և կառուցվածքի իրավաքաղաքական խնդիրները, վերջիններիս համար գտնել լուծումներ, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, առաջարկել օրենսդրական փոփոխություններ:

Հիմնաբառեր. Ազգային անվտանգության խորհուրդ, Անվտանգության խորհուրդ, ազգային անվտանգություն, ազգային անվտանգության ռազմավարություն, Անվտանգության խորհրդի կազմ, Անվտանգության խորհրդի կառուցվածք:

ՍԱՀՄԱՍԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱՆՏ ◆ 3(107)2022

Անվտանգության խորհրդի կազմի և կառուցվածքի հիմնախնդիրներին անդրադառնալուց առաջ անհրաժեշտ ենք համարում խոսել «ազգային անվտանգություն» եզրույթի մասին:

«Ազգային անվտանգություն» եզրույթը պաշտոնական շրջանառության մեջ է դրվել նախորդ դարում. 1904 թվականին ԱՄՆ նախագահ Թեոդոր Ռուզվելտն ԱՄՆ Կոնգրեսին ուղղված «ԱՄՆ ազգային անվտանգության 27 հիմնախնդիրները» վերտառությամբ ուղերձում հայտարարել էր, որ ազգային անվտանգության շահը պահանջում է Պանամայի ջրանցքի անեքսիան: Չնայած վերջինս գտնվում էր այլ **հնրնիշխան** պետության տարածքում, սակայն կառուցվել էր ամերիկյան հարկատուների միջոցներով:

Ուղերձից անմիջապես հետո «ազգային անվտանգություն» եզրույթը մտնում է պարբերական տպագրության մեջ և քայլ առ քայլ գործածվում գիտական և քաղաքական բնագավառներում:

Ելույթից շուրջ 40 տարի անց՝ 1947 թվականին, ԱՄՆ-ում ընդունվում է «Ազգային անվտանգության» մասին օրենքը՝ **“National security act”** («Ազգային անվտանգության ակտը»)¹:

Հիշյալ օրենքն ամբողջությամբ ձևափոխում և վերակառուցում է ԱՄՆ ռազմական, արտաքին քաղաքականության և հետախուզական գործակալությունները՝ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո այդ ծառայությունները կարգավորելու նպատակով: Բանակի դեպարտամենտը, համաձայն օրենքի, միավորվում է ռազմածովային դեպարտամենտի հետ՝ դառնալով Պաշտպանության դեպարտամենտ, որը գլխավորում է Պաշտպանության քարտուղարը: Օրենքը նախատեսում էր նաև ռազմաօդային ուժերի ստեղծումը և վերջինիս առանձնացումը ռազմաօդային ուժերի ակադեմիայից:

Ի սկզբանե այս երեք գերատեսչություններից յուրաքանչյուրն ուներ քվադր-նախարարության կարգավիճակ՝ իր նախարարով, սակայն 1949 թվականին, օրենքում կատարված փոփոխություններից հետո, վերջիններս մտան Պաշտպանության դեպարտամենտի ենթակայության տակ: Հարկ է նաև նշել, որ մինչև 1949 թվականը Պաշտպանության դեպարտամենտը կոչվում էր «Ազգային ռազմական հաստատություն» (անգլ.՝ **National Military Establishment, NME**), բայց քանի որ ուներ չափազանց

¹ <https://govtrackus.s3.amazonaws.com/legislink/pdf/stat/61/STATUTE-61-Pg495.pdf>

ՍԱՀՄԱՆԱՐԴՐՎԱՆ ՂԱՏԱՐՎԱԿ 3(107)2022

«տիաճ» հապավում՝ NME, որն արտասանությամբ նման է անգլերեն թշնամի՝ **Enemy**, բառին, որոշվեց այն վերանվանել:

Ռազմական վերակազմավորման արդյունքում օրենքով ստեղծվեց Ազգային անվտանգության խորհուրդը (ԱԱԽ, անգլ.՝ **National Security Council, NSC**)՝ Միացյալ Նահանգների նախագահի խորհրդականների կոմիտե, որը կոչված է զբաղվելու ազգային անվտանգությանը վերաբերող ներքին, արտաքին և ռազմական քաղաքականության հարցերով:

Սառը պատերազմի տարիներին «Ազգային անվտանգության» մասին օրենքը, Մարշալի պլանը և Թրումենի դոկտրինը որպես ամբողջություն կազմում էին Թրումենի վարչակազմի ռազմավարության հիմնական բաղադրիչներից մեկը:

«Ազգային անվտանգություն» եզրույթը Ռուսաստանի իրավական, գիտական, ինչպես նաև քաղաքական խոսույթում հայտնվել է ոչ վաղ անցյալում՝ նախորդ դարի 90-ականների սկզբին, երբ ԽՍՀՄ-ում ստեղծվեց «Անվտանգության խորհուրդ» պետական ինստիտուտը: Ռուսաստանի ազգային անվտանգություն ասելով, ի թիվս այլնի, անհրաժեշտ է հասկանալ երկրի բազմազգ ժողովրդի՝ որպես ինքնիշխանության և իշխանության միակ աղբյուրի անվտանգությունը:

Հաշվի առնելով ԽՍՀՄ պետական և հասարակական կարգը՝ պետք է նաև արձանագրենք, որ ԽՍՀՄ-ում «պետական անվտանգություն» եզրույթը պաշտոնական շրջանառության մեջ է դրվել շատ ավելի վաղ՝ ԽՍՀՄ կենտրոնական գործադիր կոմիտեի, Համամիութենական ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատ ստեղծելու մասին որոշմամբ¹:

Ինչպես տեսնում ենք այս երկու առանցքային օրինակներից՝ ազգային և պետական անվտանգություն եզրույթները կամ ռազմա-իրավա-քաղաքական երևույթները հայտնվել են տվյալ պետության իրավաքաղաքական կյանքում, որպեսզի պետական բարձրագույն իշխանությունը կարողանա հավուր պատշաճի իրականացնել անվտանգության, ինչպես նաև ռազմական բնագավառում իր պարտականությունները՝ հանդեպ Ազգի և/կամ Պետության:

Այսպես՝ ըստ 1947 թվականին ընդունված ակտի՝ ԱՄՆ ազգային անվտանգության խորհուրդը կազմված է նախագահից, պետքարտուղարից, պաշտպանության քարտուղարից, բանակի քարտուղարից, նավատորմի քարտուղարից, ռազմաօդային ուժերի քարտուղարից,

¹ <https://www.alexanderyakovlev.org/fond/issues-doc/72995>

Ազգային անվտանգության ռեսուրսների խորհրդի նախագահից և ստորև նշված այն պաշտոնյաներից, որոնց նախագահը կարող է ժամանակ առ ժամանակ նշանակել. գործադիր իշխանության այլ դեպարտամենտների քարտուղարներ, Ռազմամթերքի խորհրդի նախագահ և Հետազոտությունների և զարգացման խորհրդի նախագահ: Խորհրդի ժամանակավոր անդամը, սակայն, չի կարող պաշտոնի նշանակվել այնքան ժամանակ, քանի դեռ Սենատի կողմից չի տրվել համաձայնություն՝ այս կամ այն անձին որևէ պաշտոնում նշանակելու վերաբերյալ:

Հասարակական հարաբերություններին զուգահեռ ԱՄՆ ԱԱԽ մշտական կազմը ենթարկվել է որոշակի փոփոխությունների, ըստ որի հստակ սահմանվել է, թե պետական բարձրագույն պաշտոնյաներից որոնք պետք է համարվեն ԱԱԽ մշտական անդամներ, ինչպես նաև՝ որ պաշտոնյան ինչ կարգավիճակում պետք է ծառայի ԱԱԽ-ում: Այսպես՝ ԱԱԽ մշտական անդամներն են՝ Նախագահը, Փոխնախագահը, Պետքարտուղարը, Գանձապետարանի, Պաշտպանության և Էներգետիկայի դեպարտամենտների քարտուղարները: ԱԱԽ մշտական անդամներ են նաև՝ գլխավոր դատախազը, Ներքին անվտանգության քարտուղարը, ՄԱԿ-ում Ամերիկայի Միացյալ Նահանգների ներկայացուցիչը, Նախագահի օգնականն ու աշխատակազմի ղեկավարը (Նախագահի աշխատակազմի ղեկավար), Նախագահի Ազգային անվտանգության հարցերով օգնականը (Ազգային անվտանգության խորհրդական), Գիտության և տեխնոլոգիաների քաղաքականության գրասենյակի նախագահը և տնօրենի օգնականը, ինչպես նաև Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության ադմինիստրատորը:

Օրենքով սահմանված կարգով Ազգային հետախուզության տնօրենը, Շտաբների պետերի միացյալ շտաբի նախագահը, ինչպես նաև Կենտրոնական հետախուզական վարչության տնօրենը խորհրդատվական կարգավիճակով են մասնակցում ԱԱԽ նիստերին:

Նախագահի խորհրդականը և խորհրդականի տեղակալը, ԱԱԽ իրավախորհրդատուն իրավիրվում են մասնակցելու ԱԱԽ յուրաքանչյուր նիստին: Նախագահի օգնականը և ազգային անվտանգության հարցերով խորհրդականի տեղակալը (ազգային անվտանգության հարցերով

ՍԱՀՄԱՆԱՐԴՐՎԿԱՆ ՂԱՏԱՐՈՒՄ 3(107)2022

խորհրդականի գլխավոր տեղակալը) պետք է մասնակցեն ԱԱԽ յուրաքանչյուր նիստին և ծառայեն որպես քարտուղար»¹:

Ըստ Ակտի՝ ԱՄՆ ԱԱԽ-ն կազմված է բացառապես գործադիր իշխանության ներկայացուցիչներից՝ հիմնականում ուժային կառույցների ղեկավարներից, ինչպես նաև դիվանագիտական, ասել կուզենք՝ արտաքին հարաբերությունների և անվտանգության պատասխանատուներից:

ԽՍՀՄ Անվտանգության խորհուրդը ԽՍՀՄ նախագահին առընթեր խորհրդատվական մարմին էր, որը ձևավորվել էր **ԽՍՀՄ 1990 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1861-Ի** «Պետական կառավարման համակարգի կարարելագործմամբ պայմանավորված ԽՍՀՄ Սահմանադրության (հիմնական օրենքի) փոփոխությունների և լրացումների մասին» օրենքի հիման վրա: Անվտանգության խորհրդի անդամները նշանակվում էին ԽՍՀՄ նախագահի կողմից՝ հաշվի առնելով ԽՍՀՄ Դաշնային խորհրդի կարծիքը և համաձայնեցնելով ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հետ: Անվտանգության խորհրդի անդամների պաշտոնանկությունը ևս իրականացվել է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի համաձայնությամբ:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի **1991 թվականի օգոստոսի 29-ի թիվ 2369ա-Ի** հրամանագրով համաձայնություն է տրվել ԽՍՀՄ նախագահին՝ ԽՍՀՄ Անվտանգության խորհրդում ընդգրկել Միութենական պետությունների պետական բարձրագույն պաշտոնյաներին (նախագահներ, իսկ որտեղ նրանք ընտրված չէին՝ Գերագույն խորհուրդների նախագահներ): Այս հրամանագրին զուգահեռ, սակայն, բացակայում է այն տեղեկությունը, որ ԽՍՀՄ նախագահը կատարել է համապատասխան նշանակումները:

Ուսումնասիրելով Անվտանգության խորհուրդների ստեղծման պատմությունները, ինչպես նաև հիմնարար իրավական ակտերը՝ կարող ենք փաստել, որ վերջիններս մեծամասամբ կազմված են գործադիր իշխանության ներկայացուցիչներից:

Որպես սահմանադրական մարմին՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության խորհուրդը (այսուհետ՝ **ՀՀ ԱԱԽ**) նախատեսվել է Հայաստանի Հանրապետության սահմանադրության 2005 թվականի խմբագրությամբ: Այսպես՝ ըստ Սահմանադրության 2005

¹ <https://www.whitehouse.gov/briefing-room/statements-releases/2021/02/04/memorandum-renewing-the-national-security-council-system/>

թվականի խմբագրության **55-րդ հոդվածի 6-րդ մասի** 1-ին նախադասության.

«(Հանրապետության Նախագահը՝ կազմավորում է ազգային անվտանգության խորհուրդը և նախագահում այն, (...))»¹:

Անկախությունից ի վեր առաջին անգամ սահմանադրական ամրագրում է ստանում այս կարևորագույն ինստիտուտը՝ որպես խորհրդակցական մարմին: ՀՀ ԱԱԽ-ի կազմը հաստատելու համար անհրաժեշտ էր Հանրապետության նախագահի հրամանագիր: Փաստացի, ԱԱԽ-ի կազմը հաստատվում էր ոչ թե Խորհրդարանի կողմից ընդունված օրենքով, այլ ենթաօրենսդրական ակտով:

Հայաստանի Հանրապետության նախագահի **04.05.2008 N ՆՀ-107-Ա Հրամանագրի** (այսուհետ՝ **Հրամանագիր**) հավելվածը սահմանում էր ՀՀ ԱԱԽ կազմը.

«Հայաստանի Հանրապետության Նախագահ, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ, Հայաստանի Հանրապետության վարչապետ, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահ, Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար, Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավար, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տնօրեն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ, Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, (14-րդ կետն ուժը կորցրել է 06.05.09 ՆՀ-115-Ա հրամանագիր), (15-րդ կետն ուժը կորցրել է 26.05.09 ՆՀ-131/1-Ա հրամանագիր), Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի «Բարգավաճ Հայաստան» խմբակցության ղեկավար (16-րդ կետն ուժը

¹ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=75780>

կորցրել է 12.02.15 ՆՀ-211-Ա հրամանագիր), «Օրինաց երկիր» կուսակցության նախագահ»¹:

Երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի կողմից ձևավորած ՀՀ ԱԱԽ կազմը քաղաքական որոշման արդյունք էր: 2008 թվականի նախագահական ընտրությունների արդյունքների ամփոփումից հետո պետությունը թևակոխել էր քաղաքական ցնցումների փուլ՝ վերջինից բխող բոլոր բացասական հետևանքներով: Այս իրավիճակը հաղթահարելու նպատակով Հանրապետության երրորդ նախագահը կոալիցիա կազմեց ԲՀԿ, ՀՅԴ և ՕԵԿ կուսակցությունների հետ, որի արդյունքում «Բարգավաճ Հայաստան» խորհրդարանական խմբակցության ղեկավար Գագիկ Ծառուկյանը նշանակվեց ՀՀ ԱԱԽ անդամ, իսկ ՕԵԿ նախագահ Արթուր Բաղդասարյանը՝ ՀՀ ԱԱԽ քարտուղար: Ինչպես տեսնում ենք, Հանրապետության երրորդ նախագահը կազմել էր ՀՀ ԱԱԽ մշտական անդամների լայն կազմ:

Շարունակելով ՀՀ ԱԱԽ կազմի ուսումնասիրությունը՝ տեսնում ենք, որ ի տարբերություն ներկայումս գործող Անվտանգության խորհրդի մշտական կազմի, որը բաղկացած է բացառապես գործադիր իշխանության ներկայացուցիչներից, 2008 թվականի մայիսի 4-ին հաստատված կազմում ներկայացված էին Սահմանադրական դատարանի նախագահը, Ազգային ժողովի նախագահը, Հանրապետության գլխավոր դատախազը, Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարը, քաղաքական ուժերի ղեկավարները:

ՀՀ ԱԱԽ նման լայն կազմը խիստ հասկանալի է՝ հաշվի առնելով այն պատմական ժամանակաշրջանը, թե երբ էր այն ձևավորվել և ինչ քաղաքական գործընթացներից հետո: Ինչևէ, երբ համեմատում ենք ներկայումս գործող կարգավորումը Հրամանագրի հետ՝ կարծում ենք, որ ներկայիս կազմը կարիք ունի որոշակի ձևափոխումների, քանի որ ամբողջական ծավալով չի ներկայացնում պետական ապարատը:

«Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին» օրենքի **3-րդ հոդվածի** համաձայն.

«Անվտանգության խորհրդի անդամներն են՝ վարչապետը, առաջին փոխվարչապետը, փոխվարչապետները, Անվտանգության խորհրդի քարտուղարը, պաշտպանության նախարարը, արտաքին գործերի նախարարը, ազգային անվտանգության

¹ <http://www.irttek.am/views/act.aspx?tid=122029&sc=p72#p72>

ծառայության փնտրենը, ոստիկանության պետը, զինված ուժերի գլխավոր շտաբի պետը»¹:

Երբ համադրում ենք **Հրամանագրով** սահմանված ՀՀ ԱԱԽ կազմը և «Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին» օրենքի **3-րդ հոդվածով** սահմանված կազմը՝ տեսնում ենք, որ Հրամանագիրն ապահովում էր պետական բարձրագույն իշխանության բաժանման բոլոր ճյուղերի ներկայացուցիչների ներկայացվածությունը ՀՀ ԱԱԽ կազմում՝ չնայած այն հանգամանքին, որ այդ կազմի ձևավորումը հիմնված էր բացառապես քաղաքական որոշման վրա: Անկախ նրանից, որ այդ որոշումը դասական քաղաքական որոշում էր, սակայն ապահովում էր հակակշռում ու փոխզույգում: Ավելին, որպես կիսանախագահական կամ խառը կառավարման համակարգ ունեցող պետություն՝ ԱԺ նախագահը ևս համարվում էր ՀՀ ԱԱԽ մշտական անդամ:

*Քաղաքացիական-նազմական հարաբերությունների և ազգային անվտանգության ոլորտի մասնագետ Սեմ Սարգսյանի կարծիքով՝ ազգային անվտանգությունը բաղկացած է ֆիզիկական և հոգեբանական ասպեկտներից: Օբյեկտիվ տեսանկյունից ազգային անվտանգության ֆիզիկական կողմը ներառում է երկրի ֆիզիկական ուժն ու պաշտպանունակությունը, որը թույլ է տալիս նրան դիմակայել հակառակորդին, այդ թվում, անհրաժեշտության դեպքում, նազմական գործողություններ իրականացնել թշնամու ուժերի դեմ:*² Ինչպես տեսնում ենք, ոլորտի մասնագետն ազգային անվտանգության օբյեկտիվ դրսևորում է համարում տվյալ պետության կողմից նազմական ուժի կիրառման, պատերազմ վարելու միջոցով սեփական **ինքնիշխան տարածքների անձեռնմխելիության ապահովման ունակությունը:**

Հայաստանի Հանրապետության սահմանադրության 2005 թվականի խմբագրության **81-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասության** համաձայն.

¹ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=120572>

² Պետության և իրավունքի տեսություն, Ուսումնական ձեռնարկ / Հեղ. Խումբ; Գիտ. Խումբ.՝ **Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան**, 3-րդ լրամշակված հրատ: Երևան, Լուսաբաց հրատարակչություն, 2018 թ., էջ 93, 688 էջ:

«(Ազգային ժողովը Հանրապետության Նախագահի առաջարկությամբ՝ որոշում է ընդունում պատերազմ հայտարարելու և խաղաղություն հաստատելու մասին)»¹:

Ստացվում է, որ Հրամանագրով նախատեսվում էր **պատերազմ հայտարարելու և խաղաղություն հաստատելու** հարցը լուծող պետական ինստիտուտի ղեկավարի՝ ԱԺ նախագահի, ՀՀ ԱԱԽ մշտական անդամ լինելը, ինչն ընդունելի մոտեցում է պետական կառավարման տեսանկյունից: Մինչդեռ «Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին» օրենքի **3-րդ հոդվածով**, սահմանադրական այս կարևոր ինստիտուտի ղեկավարը չի համարվում Անվտանգության խորհրդի (այսուհետ՝ **ՀՀ ԱԽ**) մշտական անդամ, այլ պարզապես ունի հրավիրյալ անդամի կարգավիճակ, ինչպիսին կարող է լինել յուրաքանչյուր ոք:

2015 թվականին ընդունված սահմանադրական փոփոխություններով պայմանավորված՝ պետական իշխանության ճյուղերից միայն մեկը՝ Ազգային ժողովը, ունի առաջնային մանդատ, որի արդյունքում էլ ԱԺ նախագահը միակն է, որը ներկայացնում է առաջնային մանդատ ունեցող պետական բարձրագույն իշխանության մարմինը, սակայն ներկայացված չէ ՀՀ ԱԽ մշտական կազմում: Դե յուրե ԱԺ նախագահը Հանրապետության ամենաազդեցիկ պետական պաշտոնատար անձն է այն պարզ պատճառով, որ նրա ղեկավարած կառույցն է նշանակում գործադիր իշխանության ղեկավարին, ընտրում Հանրապետության գլխին՝ նախագահին, ընտրում Բարձր դատարանի անդամներին, ինչպես նաև ձևավորում ինքնավար սահմանադրական և ոչ սահմանադրական մարմիններ, լուծում խաղաղության և պատերազմի հարցերը, սակայն չունի մշտական անդամ ՀՀ ԱԽ-ում:

2018 թվականի դեկտեմբերի 16-ին Վրաստանում տեղի ունեցավ նորընտիր նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլիի երդմնակալության արարողությունը, որից հետո Վրաստանը խառը կառավարման ձևից անցում կատարեց խորհրդարանական կառավարման մոդելի: Հետազոտության շրջանակներում մեզ հետաքրքիր է հետևյալը. Վրաստանի սահմանադրության նախկին խմբագրությամբ գործող Ազգային անվտանգության խորհուրդը դադարեց գոյություն ունենալ, և նրա փոխարեն ձևավորված նոր պետական մարմինը գլխավորում է

¹ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=75780>

արդեն Հանրապետության վարչապետը: Սակայն Սահմանադրության նոր խմբագրության համաձայն՝ Վրաստանում ստեղծվել է սահմանադրական նոր մարմին՝ Ազգային պաշտպանության խորհուրդ: Վրաստանի Սահմանադրության **73-րդ հոդվածի 1-ին մասի** համաձայն.

«Ռազմական դրության ժամանակ ստեղծվում է խորհրդարվական մարմին՝ Ազգային պաշտպանության խորհուրդ, որը նախագահում է Վրաստանի նախագահը: Ազգային պաշտպանության խորհրդի անդամներն են՝ Վրաստանի նախագահը, վարչապետը, խորհրդարանի նախագահը, պաշտպանության նախարարը և Պաշտպանության ուժերի հրամանատարը: Վրաստանի նախագահի որոշմամբ խորհրդի անդամներ կարող են հրավիրվել խորհրդարանի և կառավարության առանձին անդամներ: Պաշտպանության ազգային խորհուրդը գործում է մինչև ռազմական դրության չեղարկումը»¹:

Ինչպես տեսնում ենք, վրացական սահմանադիրը նախատեսել է սահմանադրական մարմնի ստեղծում՝ բացառապես ռազմական դրությամբ իրավական ռեժիմի կիրառման պարագայում: Հանրապետության նախագահը՝ որպես Պաշտպանության ուժերի գերագույն գլխավոր հրամանատար, նախագահում է ժամանակավոր ստեղծված խորհրդատվական սահմանադրական մարմնում: Մինչդեռ, բացի Ազգային պաշտպանության խորհրդից, Վրաստանում գործում է նաև Ազգային անվտանգության խորհուրդ, որը նախագահում է Հանրապետության վարչապետը, իսկ նախագահը չի համարվում վերջինիս մշտական անդամ:

Վրացական սահմանադիրը, կարծես, գնացել է լրիվ այլ ճանապարհով՝ Նախ, Հանրապետության նախագահին հռչակել է պետության գլուխ (**the Head of State**) և նրան վերապահել Պաշտպանության ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի տիտղոսը: Սույն պարագայում վերջինս պետք է ունենար որոշակի իրավունքներ և պարտականություններ՝ ռազմական ուժի կիրառման ժամանակ: Հենց այդ, ինչպես նաև Սահմանադրության նախանշված պարտականությունների կատարման նպատակով առանձնացվել է հատուկ սահմանադրական մարմին՝ Հանրապետության նախագահի գլխավորությամբ: Մինչդեռ, որպես խորհրդարանական կառավարման պետություն՝ վարչապետը չէր կարող լիազորություններ

¹ <https://matsne.gov.ge/ru/document/view/30346?publication=35>

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐՈՎՈՒՄ 3(107)2022

չունենալ ազգային անվտանգության քաղաքականության մշակման և իրականացման համատեքստում:

Ուսումնասիրելով միջազգային փորձը, ինչպես նաև հասարակական հարաբերությունների զարգացումը և Արցախյան վերջին պատերազմի ծանր հետևանքները՝ կարծում ենք, որ Հայաստանի Հանրապետության Անվտանգության խորհրդի կազմը պետք է ենթարկվի արմատական փոփոխությունների:

- Անվտանգության խորհրդի մշտական կազմը պետք է համալրեն Հայաստանի Հանրապետության նախագահը, Ազգային ժողովի նախագահը:

- Անվտանգության խորհրդի մշտական կազմը պետք է համալրի Սահմանադրական դատարանի նախագահը՝ որպես պետության սահմանադրականության ապահովման՝ սահմանադրական արդարադատության համատեքստում, և իրավական անվտանգության երաշխավոր:

- Անվտանգության խորհրդի մշտական կազմը պետք է համալրի Հանրապետության մշակույթի ոլորտի պատասխանատու պաշտոնատար անձը՝ որպես մշակութային անվտանգության հայեցակարգը մշակող և իրացնող պետական պաշտոնատար անձ:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության սահմանադրություն, 27.11.2005 թվական:
2. Հայաստանի Հանրապետության սահմանադրություն, 06.12.2015 թվական:
3. Վրաստանի սահմանադրություն, N2071 23.03.2018 թվական:
4. Հայաստանի Հանրապետության օրենքը «Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին», ուժի մեջ է մտել 09.04.2018 թվականին:
5. Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագիրը՝ «Ազգային անվտանգության խորհրդի կազմը հաստատելու մասին», ՆՀ-107-Ա 04.05.2008 թվական:
6. Ազգային անվտանգության օրենք (National Security Act), 26.07.1947 թվական:

7. Ազգային անվտանգության խորհրդի համակարգի նորացման հուշագիր, Նախագահի հրամանգիր (Memorandum on Renewing the National Security Council System; Presidential action), 04.02.2021 թվական:
8. ԽՍՀՄ կենտրոնական գործադիր կոմիտեի որոշում՝ Համամիութենական ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատ ստեղծելու մասին (Постановление Центрального исполнительного комитета Союза ССР об образовании общесоюзного народного комиссариата внутренних дел.), 10.07.1941 թվական:
9. ԽՍՀՄ Գերագույն խորհրդի «ԽՍՀՄ Անվտանգության խորհրդի կազմի մասին» N 2369a-I որոշում (Постановление Верховного Совета СССР N 2369a-I «О составе Совета безопасности СССР»), 29.08.1991 թվական:
10. Պետության և իրավունքի տեսություն: Ուսումնական ձեռնարկ/ Հեղ. Խումբ; Գիտ. Խումբ.՝ **Ա. Ղանբարյան, Մ. Մուրադյան**, – 3-րդ լրամշակված հրատ: Երևան, Լուսաբաց հրատարակչություն, 2018 թ., 688 էջ:

ПОЛИТИКО-ПРАВОВЫЕ ПРОБЛЕМЫ СОСТАВА И СТРУКТУРЫ СОВЕТА БЕЗОПАСНОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Аннотация

Предметом исследования являются правовые и политические вопросы состава и структуры Совета безопасности Республики Армения. В ходе исследования были изучены структуры и составы Совета безопасности с момента обретения независимости, показаны различия между ними, а также правовые и политические проблемы того или иного состава и структуры Совета безопасности. В ходе работы были изучены опыты США, РФ, а также СССР по формированию состава и структур Советов безопасности.

Цель исследования - выявить правовые и политические проблемы состава и структуры Совета Безопасности, найти пути для их решения, а также при необходимости предложить законодательные поправки.

Ключевые слова: Совет национальной безопасности, Совет безопасности, национальная безопасность, Стратегия национальной

безопасности, состав Совета безопасности, структура Совета безопасности.

LEGAL AND POLITICAL ISSUES RELATING TO COMPOSITION AND STRUCTURE OF THE SECURITY COUNCIL OF THE REPUBLIC OF ARMENIA

Annotation

The subject of the research is the legal and political issues in relation to composition and structure of the Security Council of the Republic of Armenia. In the course of the research, the structures and compositions of the Security Council since Independence were studied, the differences between them, as well as the legal and political problems of several compositions and structures were revealed. Additionally, the experience of the USA, the Russian Federation and the USSR in terms of formation of the composition and structures of the Security Councils were studied. The aim of the research is to reveal the legal and political problems of the composition and structure of the Security Council, to find relevant solutions, as well as to propose legislative amendments, if necessary.

Keywords: National Security Council, Security Council, national security, national security strategy, Security Council composition, Security Council structure.



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**«ԽԱՂԱՂ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ
ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՆԿԱԽ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎՊԻՐ
◆ 3(107)2022

Քաղ. Երևան

31 մայիսի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմայանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե.
Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

ՀՀ կառավարության ներկայացուցիչ ՀՀ բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարար Ռ. Խաչատրյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ
հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին»
սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Խաղաղ նպա-
տակներով տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման
ոլորտում Անկախ պետությունների համագործակցության մասնակից
պետությունների համատեղ գործունեության իրականացման մասին»

համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՀՀ կառավարությունն իր՝ 2022 թվականի մարտի 24-ի N 378-Ա որոշմամբ հավանություն է տվել 2018 թվականի նոյեմբերի 2-ին ստորագրված՝ «Խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման ոլորտում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համատեղ գործունեության իրականացման մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2022 թվականի մարտի 28-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման ոլորտում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համատեղ գործունեության իրականացման մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2018 թվականի նոյեմբերի 2-ին՝ խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման ոլորտում բազմակողմ համագործակցության իրավական և կազմակերպական հիմքերը սահմանելու, ինչպես նաև համատեղ տիեզերական գործունեության որոշակի ուղղությունների մասով համաձայնագրեր ու այլ պայմանավորվածություններ մշակելու և դրանք Կողմերի ու համատեղ գործունեության մասնակիցների միջև կնքելու համար իրավական հիմքի ստեղծմանն աջակցելու նպատակով:

2. Կառավարության 2022 թվականի մարտի 24-ի N 378-Ա որոշման Հավելվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը վավերացնում է Համաձայնագիրը վերապահումով՝ պայմանով, որ Հայաստանի Հանրապետությունն իրեն իրավունք է վերապահում առանձին որոշում կայացնելու «Խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման ոլորտում Անկախ պետությունների համագործակցության

մասնակից պետությունների համատեղ գործունեության իրականացման մասին» համաձայնագրի դրույթների տարածման վերաբերյալ այն պետությունների նկատմամբ, որոնք միացել են Համաձայնագրին 2018 թվականի նոյեմբերի 2-ից հետո:

3. Համաձայնագիրն ունի անբաժանելի մաս կազմող 3 հավելված՝ Հավելված 1. «Կանոնակարգ Տիեզերքի հարցերով միջպետական խորհրդի մասին», Հավելված 2. «Մտավոր սեփականությունը և գործնական խորհրդապահական տեղեկատվությունը» և Հավելված 3. «Արտադրատեսակների և տեխնոլոգիաների պահպանությանն ուղղված միջոցները»:

Համաձայնագրի շրջանակներում համագործակցությունն իրականացվում է Կողմերի ներպետական օրենսդրության համապատասխան և միջազգային իրավունքի՝ համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքների ու նորմերի պահպանմամբ:

Համաձայնագրի շրջանակներում համագործակցության կոնկրետ ծրագրերի և նախագծերի իրականացման կազմակերպական, ֆինանսական, իրավական և տեխնիկական պայմանները համատեղ գործունեության մասնակիցների միջև առանձին համաձայնագրերի (պայմանագրերի) կամ (անհրաժեշտության դեպքում՝ նաև հաշվի առնելով Կողմերի պետությունների միջազգային պարտավորությունները) անմիջապես Կողմերի միջև առանձին համաձայնագրերի առարկա են (այսուհետ՝ առանձին համաձայնագրեր):

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարված լինելու մասին ծանուցումն ուղարկելու հետ միաժամանակ Համաձայնագրի ավանդապահին տեղեկացնել նշանակված ՀՀ իրավասու մարմինների մասին և գրավոր ծանուցել ՀՀ իրավասու մարմինների փոփոխությունների մասին (հոդված 7, կետ 1),

- Համաձայնագիրը կիրարկելիս համատեղ գործունեության ֆինանսավորումն իրականացնել շահագրգիռ հայկական և մյուս Կողմի համապատասխան նախարարությունների և գերատեսչությունների համար նախատեսվող բյուջեի միջոցների սահմաններում, ինչպես նաև արտաբյուջետային աղբյուրներից (հոդված 8, կետ 1),

- ապահովել Համաձայնագրի շրջանակներում ստեղծվող կամ օգտագործվող՝ մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների

3(107)2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ ԴԱՏԱՐԱՆ

համարժեք և արդյունավետ պահպանություն՝ ՀՀ օրենսդրությանը, ՀՀ միջազգային պարտավորություններին և Համաձայնագրի դրույթներին համապատասխան (հոդված 9, կետ 1),

- ՀՀ իրավասու մարմինների միջոցով աջակցել համատեղ գործունեությանն առնչվող տեղեկատվության փոխադարձ փոխանակմանը՝ Համաձայնագրին և ՀՀ օրենսդրությանը համապատասխան, ինչպես նաև ապահովել և երաշխավորել, որ համատեղ գործունեության ՀՀ մասնակիցները կապահովեն մյուս Կողմերի և դրանց համատեղ գործունեության մասնակիցների համար գիտական հետազոտությունների և աշխատանքների արդյունքների հասանելիությունը (հոդված 10, կետ 1),

- հաշվի առնելով ՀՀ օրենսդրությունը՝ ապահովել մյուս Կողմերից և նրանց համատեղ գործունեության մասնակիցներից յուրաքանչյուրի շահերի պաշտպանումը, որոնք կապված են համատեղ գործունեության շրջանակներում ՀՀ տարածքում գտնվող նրանց գույքի իրավական և ֆիզիկական պաշտպանության հետ, այդ թվում՝ ապրանքների փոխադարձաբար նախատեսված կատեգորիաների պաշտպանություն առգրավման ցանկացած ձևի և տեսակի կամ կատարողական վարույթի նկատմամբ (հոդված 11, կետ 1),

- այն ապրանքները, որոնց ներմուծումը և (կամ) արտահանումն իրականացվում են Համաձայնագրի շրջանակներում, ազատել մաքսային մարմինների կողմից գանձվող մաքսատուրքերից և հարկերից, եթե դա նախատեսված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային այն պայմանագրերի շրջանակներում ունեցած պարտավորություններով, որոնց մասնակից է Հայաստանի Հանրապետությունը (հոդված 13, կետ 1, պարբերություն 1),

- Կողմերի հետ փոխադարձ հիմունքներով հրաժարվել պատասխանատվության և վնասի փոխհատուցման վերաբերյալ ցանկացած պահանջ միմյանց ներկայացնելուց, և համապատասխանաբար՝ փոխադարձ հիմունքներով, ցանկացած մյուս Կողմի և նրա համատեղ գործունեության մասնակիցներին չներկայացնել որևէ դժգոհություն՝ կապված ՀՀ սեփական անձնակազմի անձանց և (կամ) սեփական գույքին վնաս հասցնելու հետ՝ Համաձայնագրի շրջանակներում համատեղ գործունեությանն այդպիսի անձանց մասնակցության և այդպիսի գույքի օգտագործման առնչությամբ (հոդված 14, կետ 1),

- ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ աջակցություն ցուցաբերել ցանկացած մյուս Կողմի պետության այն քաղաքացիների գործունեությանը, որոնք ՀՀ տարածք մուտք են գործում և Հայաստանի Հանրապետությունում գտնվում են Համաձայնագրի շրջանակներում համատեղ գործունեություն

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՐ 3(107)2022

իրականացնելու համար (հոդված 15),

- որպես ընդունող պետություն հանդես գալու պարագայում ապահովել, որ Տիեզերքի հարցերով միջպետական խորհրդի և դրա աշխատանքային մարմինների նիստերի անցկացումը կազմակերպելու հետ կապված ծախսերը կատարվեն ՀՀ համապատասխան պետական մարմինների միջոցների հաշվին (հավելված 1, կետ VI, ենթակետ 6.1., պարբերություն 1),

- ՀՀ օրենսդրությանը և միջազգային պայմանագրերին համապատասխան՝ ապահովել համագործակցության շրջանակներում ստեղծվող կամ օգտագործվող՝ մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների արդյունավետ պաշտպանությունը, ինչը Համաձայնագրի և Համաձայնագրի 7-րդ հոդվածի 4-րդ կետում նախատեսված առանձին համաձայնագրերի առարկա է (հավելված 2, նախաբանի 1-ին պարբերություն),

- ապահովել, որ համատեղ գործունեության ՀՀ մասնակիցները համատեղ գործունեության մյուս մասնակիցներին ժամանակին տեղեկացնեն մտավոր գործունեության բոլոր արդյունքների մասին, որոնք, որպես մտավոր սեփականության օբյեկտ, ենթակա են իրավական պաշտպանության, և անհապաղ փոխգործակցեն այդ պաշտպանությունն ապահովելուն ուղղված այլ ֆորմալ գործընթացների գրանցման և կատարման նպատակներով (հավելված 2, նախաբանի 2-րդ պարբերություն),

- մտավոր գործունեության՝ համատեղ ստեղծված արդյունքների նկատմամբ իրավունքների բաշխման և մտավոր սեփականության օգտագործման մասով կիրառել և ապահովել, որ համատեղ գործունեության ՀՀ մասնակիցները կիրառեն Համաձայնագրի 2-րդ հավելվածի 2-րդ բաժնի 1-ին կետում սահմանված հիմնական սկզբունքները (հավելված 2, բաժին 2, կետ 1),

- ՀՀ իրավասու և լիազորված մարմինների միջոցով ապահովել, որ պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների մասով ցանկացած համատեղ գործունեություն ՀՀ ներկայացուցիչների կողմից իրականացվի արտադրատեսակների և տեխնոլոգիաների պահպանության պլաններով նախատեսված ընթացակարգերի համաձայն, և որ այդպիսի պլանները դիտարկվեն որպես պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների պահպանվածության ու անվտանգության ապահովման միջոցների հաշվառման համակարգի անբաժանելի մաս (հավելված 3, բաժին 2, կետ 1),

- Համաձայնագրի կատարման կարգի համաձայն՝ ապահովել համատեղ գործունեության իրականացման շրջանակներում պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների վերջնական օգտագործման համապատասխանությունն այն դիմումներին, որոնք համատեղ գործունեության մասնա-

կիցները, որպես ներմուծողներ և վերջնական օգտագործողներ, տրամադրում են ՀՀ իրավասու և (կամ) լիազորված մարմիններին (հավելված 3, բաժին 4, կետ 1),

- Կողմերի պետություններում տրամադրված արտահանման լիցենզիաների և (կամ) ՀՀ կողմից տրամադրված թույլտվությունների կատարման պայմանների մշտական պահպանումն ապահովելու համար համապատասխան հարցման առկայության դեպքում խորհրդապահությունը պահպանելու դեպքում փոխադարձ հիմունքներով ընձեռել պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների հետ առնչվելու կարգի հետ կապված տեսչական ստուգում անցկացնելու հնարավորություն, որի օպերատիվ կերպով անցկացնելու ղեկավար սկզբունքները և մանրամասն գործընթացները համաձայնեցվում են Կողմերի իրավասու և (կամ) լիազորված մարմինների կողմից բեռն առաքողների հետ համատեղ (հավելված 3, բաժին 5, կետ 1),

- ՀՀ իրավասու և լիազորված մարմինների միջոցով միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու համար, որ համատեղ գործունեության միայն այն մասնակիցները, որոնց՝ պահպանվող արտադրատեսակներին և տեխնոլոգիաներին առնչվելու ընթացակարգեր իրականացնելու իրավունքը հաստատված է արտահանող Հայաստանի Հանրապետությունում գործող կարգով, շուրջօրյա հսկվեն արտահանվող պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների հասանելիությունը դրանց տրանսպորտային փոխադրման, պահպանման, դրանց հետ կապված ցանկացած տեխնոլոգիական աշխատանքի կատարման ամբողջ ընթացքում, համապատասխան դեպքերում՝ ներառյալ պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների վերադարձն արտահանող Հայաստանի Հանրապետության տարածք կամ արտահանող Հայաստանի Հանրապետության կողմից հաստատված այլ վայր՝ պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների մասով Հայաստանի Հանրապետությունում տրված արտահանման լիցենզիաների (թույլտվությունների) և (կամ) այլ թույլտվությունների պայմաններին համապատասխան (հավելված 3, բաժին 5, կետ 3, պարբերություն 2),

- ապահովել, որ ներմուծող Կողմի պետության մաքսային մարմիններին տրամադրվեն արտահանող ՀՀ լիազորված մարմնի գրավոր երաշխիքներն այն մասին, որ կնքված բեռնարկղերում և այլ փաթեթվածքներում չի պարունակվում որևէ բեռ, որը չի վերաբերում Համաձայնագրի շրջանակներում համատեղ գործունեությանը և, որպես այդպիսին, հայտարարագրված չէ (հավելված 3, բաժին 9, պարբերություն 2),

- որպես արտահանող Կողմ՝ ապահովել, որ արտահանող ՀՀ ներկայա-

ցուցիչներն աջակցեն օրենսդրությամբ սահմանված միջոցառումների օպերատիվ կերպով անցկացմանը և դրանց նպատակների ապահովմանը (հավելված 3, բաժին 12, կետ 2):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման ոլորտում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համատեղ գործունեության իրականացման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

31 մայիսի 2022 թվականի
ՍԴՈ-1652

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «ԽԱՂԱՂ
ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ
ՎԵՏԱԶՈՏՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՆԿԱԽ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 31-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1652 ՈՐՈՇՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման ոլորտում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համատեղ գործունեության իրականացման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2022 թվականի մայիսի 31-ի ՍԴՈ-1652 որոշմամբ որոշել է, որ «Խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման ոլորտում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համատեղ գործունեության իրականացման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2022 թվականի մայիսի 31-ի ՍԴՈ-1652 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախ՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությանբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԿԱՆ ԿԻՍԵՆՏ ◆ 3(107)2022

համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴԴ-1652 որոշմամբ «Խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման ոլորտում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համատեղ գործունեության իրականացման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջները բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը¹:

¹ Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու

համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմա-

նադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կա՛մ Սահմանադրական դատարանում առկա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված՝ էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ

համարված դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

Էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք

3(107)2022
 ՍՄՀՄՆԱՆԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 ՍԵՆԵԿԱԼԵՏ

անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:**

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակու-

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 3(107)2022

թյուն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջները բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ փյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ փյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն սպանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝


Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«31» մայիսի 2022թ.

3(107)/2022

ՍԵՂՈՒԿԱՆ

ԴԱՏԱՐԱՆ



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
«ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՔՍԱՏՈՒՐՔԵՐԻ (ՀԱՄԱՐԺԵՔ ԱՅԼ ՏՈՒՐՔԵՐԻ,
ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ) ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԵԳՐԵԼՈՒ ԵՎ
ԲԱՇԽԵԼՈՒ, ԴՐԱՆՔ ՈՐՊԵՍ ԵԿԱՄՈՒՏ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԲՅՈՒՋԵՆԵՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՐՑԵՐԻՆ
ՈՒՂՂՎԱԾ ՀԱՄԱՏԵՂ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

31 մայիսի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե.
Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

«ՀՀ կառավարության ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանսների նախարարի
տեղակալ Ա. Պողոսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ
հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին»
սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

3(107)/2022

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2021 թվականի նոյեմբերի 16-ին ստորագրված՝ «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի և վճարների) գումարները հաշվեգրելու և բաշխելու, դրանք որպես եկամուտ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի պահպանման հարցերին ուղղված համատեղ վերահսկիչ միջոցառումների անցկացման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՀՀ կառավարությունն իր՝ 2022 թվականի ապրիլի 22-ի N 551-Ա որոշմամբ հավանություն է տվել 2021 թվականի նոյեմբերի 16-ին ստորագրված՝ «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի և վճարների) գումարները հաշվեգրելու և բաշխելու, դրանք որպես եկամուտ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի պահպանման հարցերին ուղղված համատեղ վերահսկիչ միջոցառումների անցկացման մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2022 թվականի ապրիլի 25-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի և վճարների) գումարները հաշվեգրելու և բաշխելու, դրանք որպես եկամուտ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի պահպանման հարցերին ուղղված համատեղ վերահսկիչ միջոցառումների անցկացման մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2021 թվականի նոյեմբերի 16-ին Մոսկվայում՝ «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի և վճարների) գումարները հաշվեգրելու և բաշխելու, դրանք որպես եկամուտ անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի մասին» արձանագրության (այսուհետ՝ Արձանագրություն) 53-րդ կետի («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 5 հավելված) իրագործման նպատակներով:

2. Արձանագրությունը հանդիսանում է «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 5

◆ 3(107)/2022

◆ ՍԵՆԵԿԱԿԻ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 3(107)2022

հավելվածը, որին Հայաստանի Հանրապետությունը միացել է 2014 թվականի հոկտեմբերի 10-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի վավերացմամբ (վավերացվել է 2014 թվականի դեկտեմբերի 4-ին Ազգային ժողովի ԱԺՈ-132-Ն որոշմամբ):

3. Համաձայնագիրը ստորագրվել է Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզական Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև (այսուհետ՝ Անդամ պետություններ):

4. Անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից Արձանագրության դրույթների պահպանման ստուգումն իրականացվում է յուրաքանչյուր տարի՝ անդամ պետությունների պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինների կողմից՝ համատեղ վերահսկիչ միջոցառումների շրջանակներում:

Անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից Արձանագրության դրույթների պահպանման հարցերին ուղղված համատեղ վերահսկիչ միջոցառումների կազմակերպման և անցկացման ժամանակ անդամ պետությունների պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինները ղեկավարվում են Համաձայնագրով, ինչպես նաև անդամ պետությունների օրենսդրությամբ:

Համատեղ վերահսկիչ միջոցառումների աշխատանքային լեզուն ռուսերենն է:

5. Համատեղ վերահսկիչ միջոցառումների հիմնական նպատակներն են՝ անդամ պետության լիազորված մարմնի միասնական հաշվին ներմուծման մաքսատուրքերի՝ բաշխման ենթակա գումարների հաշվեգրման նկատմամբ և անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից անդամ պետությունների բյուջեների միջև բաշխման ենթակա՝ ներմուծման մաքսատուրքերի գումարների ամբողջական ու ժամանակին փոխանցման նկատմամբ, ինչպես նաև անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից՝ յուրաքանչյուր անդամ պետության համար սահմանված՝ ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխման նորմատիվների պահպանման նկատմամբ ստուգումն ու վերահսկողությունը:

6. Համաձայնագրի 3-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ համատեղ վերահսկիչ միջոցառում անցկացնելու համար կազմվում է համատեղ վերահսկիչ միջոցառում անցկացնելու ծրագիր (այսուհետ՝ ծրագիր):

Հաշվետու տարվա ծրագիրը մշակվում է այն անդամ պետության պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմնի կողմից, որը համատեղ վերահսկիչ միջոցառում անցկացնելու տարում նախագահում է Եվրասիական տնտեսական միության մարմիններին՝ համաձայն «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 8-րդ հոդվածի 4-րդ կետի:

Ծրագրով սահմանվում են համատեղ վերահսկիչ միջոցառման առարկան, օբյեկտները, այդ միջոցառման շրջանակներում լուծվող հարցերը, օբյեկտներում դրա անցկացման ժամկետները, անդամ պետությունների պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինների ներկայացուցիչներից կազմված՝ վերահսկողության համատեղ խմբի կազմը (այսուհետ՝ վերահսկողության համատեղ խումբ), անդամ պետությունների պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինների կոլեգիաների (խորհուրդների, լիազորված անձանց) (այսուհետ՝ համատեղ կոլեգիա) համատեղ նիստի անցկացման ամսաթիվն ու վայրը:

Ծրագիրը համաձայնեցվում է անդամ պետությունների պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինների հետ և հաստատվում դրանց ղեկավարների (նրանց կողմից լիազորված անձանց) կողմից՝ հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 1-ից ոչ ուշ:

7. Հայաստանի Հանրապետությունը Համաձայնագրով ստանձնում է, մասնավորապես, ներքոնշյալ պարտավորությունները.

- ապահովել, որ համատեղ վերահսկիչ միջոցառումների շրջանակներում տեղեկատվությունն ու փաստաթղթերը ներկայացվեն ռուսերենով կամ ՀՀ պետական լեզվով (կցելով դրանց ռուսերեն թարգմանությունը) (Հոդված 1, 3-րդ կետ, երկրորդ պարբերություն),

- ապահովել, որ յուրաքանչյուր տարի ՀՀ լիազորված մարմնում անցկացվեն համատեղ վերահսկիչ միջոցառումներ, որոնք կավարտվեն հաշվետու տարվան հաջորդող տարվա սեպտեմբերի 1-ից ոչ ուշ (Հոդված 3, 1-ին կետ, առաջին պարբերություն),

- ՀՀ պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմնի ներկայացուցիչների՝ համատեղ վերահսկիչ միջոցառումներ անցկացնելու նպատակով գործուղման ծախսերը կատարել ՀՀ բյուջեի միջոցների հաշվին (Հոդված 3, 1-ին կետ, երկրորդ պարբերություն),

- ապահովել, որ ՀՀ պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինները, ՀՀ տարածքում համատեղ վերահսկիչ միջոցառում անցկացվելու պարագայում, ՀՀ լիազորված մարմիններ ուղարկեն ծրագիրը՝ կցելով նշված միջոցառման կազմակերպման ու անցկացման համար անհրաժեշտ փաստաթղթերը (Հոդված 3, 2-րդ կետ, հինգերորդ պարբերություն),

- ապահովել, որ ՀՀ լիազորված մարմինները վերահսկողության համատեղ խմբի անդամների համար ապահովեն աշխատանքի պատշաճ պայմաններ (կազմակերպեն լիազորված մարմնի տարածք մուտքի հնարավորությունը, տրամադրեն առանձին տարածք, կազմտեխնիկա, կապի ծառայություններ) և աջակցեն համատեղ վերահսկիչ միջոցառման անցկացմանը (Հոդված 3, 3-րդ կետ, առաջին պարբերություն),

- երաշխավորել վերահսկողության համատեղ խմբի ՀՀ անդամների կողմից գտնվելու վայրի պետության օրենսդրության, ինչպես նաև վերահսկիչ միջոցառումների անցկացման՝ այդ պետությունում կիրառվող կանոնների ու ընթացակարգերի պահպանումը (Հոդված 3, 3-րդ կետ, երրորդ պարբերություն),

- ապահովել, որ ՀՀ լիազորված մարմինները վերահսկողության համատեղ խմբի անդամներին տրամադրեն ներմուծման մաքսատուրքերի գումարների հաշվեգրմանն ու բաշխմանը, անդամ մյուս պետությունների բյուջեներ որպես եկամուտ դրանց փոխանցմանն առնչվող տեղեկատվությունն ու փաստաթղթերը (Հոդված 3, 4-րդ կետ, առաջին պարբերություն),

- ապահովել, որ Համաձայնագրի 3-րդ հոդվածի 4-րդ կետի երկրորդ պարբերության համաձայն հարցվող տեղեկատվությունն ու փաստաթղթերը կամ պարզաբանումները (հարցվող տեղեկատվությունն ու փաստաթղթերը տրամադրելու անհնարինության դեպքում) անդամ պետության պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմնի հարցման մեջ նշված ժամկետներում՝ թղթային կրիչով՝ պատճենների տեսքով և (կամ) էլեկտրոնային տեսքով, ուղարկվեն այն անդամ պետության պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմին, որի տարածքում անցկացվում է համատեղ վերահսկիչ միջոցառումը (Հոդված 3, 4-րդ կետ, երրորդ և չորրորդ պարբերություններ),

- ապահովել, որ պետական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիքի շարքին դասվող տեղեկություններ պարունակող տեղեկատվության ու փաստաթղթերի՝ թղթային կրիչով և (կամ) էլեկտրոնային տեսքով փոխանցումն իրականացվի այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի տարածքում անցկացվում է համատեղ վերահսկիչ միջոցառումը (Հոդված 3, 5-րդ կետ, առաջին պարբերություն),

- երաշխավորել, որ Համաձայնագրի 3-րդ հոդվածի 5-րդ կետի առաջին պարբերությունում նշված տեղեկությունները առանց այդ տեղեկությունները տրամադրած լիազորված մարմնի, կենտրոնական մաքսային մարմնի կամ ազգային (կենտրոնական) բանկի գրավոր համաձայնության չեն օգտագործվի դրանց հարցման և տրամադրման նպատակներից բացի այլ նպատակներով. այդպիսի տեղեկությունների հրապարակման համար պատասխանատվությունը սահմանվում է այն պետության օրենսդրությանը համապատասխան, որի քաղաքացին է տվյալ տեղեկությունները հրապարակած անձը,

և անդամ պետությունների միջև հարաբերություններում կիրառվող միջազգային պայմանագրերով (Հոդված 3, 5-րդ կետ, երկրորդ պարբերություն),

- ապահովել, որ որպես Համաձայնագրի 3-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ պարբերության մեջ նշված՝ անդամ պետության պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմին, ֆինանսական վերահսկողության ՀՀ բարձրագույն մարմինը հաշվետու տարվան հաջորդող տարվա նոյեմբերի 1-ից ոչ ուշ, համատեղ վերահսկիչ միջոցառումն անցկացնելու արդյունքներով կազմի ամփոփ հաշվետվության նախագիծ, որում ներառվում են ստուգման ակտերում շարադրված փաստերը, տեղեկատվության և փաստաթղթերի, այդ թվում՝ անդամ պետությունների պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինների հարցումներով ստացված տեղեկատվության և փաստաթղթերի վերլուծության արդյունքները, և անդամ պետությունների լիազորված մարմինների գրավոր առարկությունների (առկայության դեպքում) ուսումնասիրությունները, եզրահանգումները և հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ առաջարկները, ինչպես նաև ոչ ուշ, քան համատեղ կոլեգիայի նիստի անցկացման օրվանից 15 աշխատանքային օր առաջ, Եվրասիական տնտեսական հանձնաժողով ուղարկի այդ նիստին դրա ներկայացուցիչների մասնակցության հրավեր (նշելով քննարկման համար նախատեսվող հարցերը) (Հոդված 4, 3-րդ կետ, առաջին և երկրորդ պարբերություններ),

- ապահովել, որ ՀՀ պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինը ոչ ուշ, քան համատեղ կոլեգիայի նիստի անցկացման օրվանից 15 աշխատանքային օր առաջ, ՀՀ լիազորված մարմիններ, կենտրոնական մաքսային մարմիններ, ազգային (կենտրոնական) բանկ ուղարկի համատեղ կոլեգիայի նիստին դրանց ներկայացուցիչների՝ յուրաքանչյուր լիազորված մարմնի, կենտրոնական մաքսային մարմնի, ազգային (կենտրոնական) բանկի իրավասության շրջանակներում մասնակցության հրավերներ (նշելով քննարկման համար նախատեսվող հարցերը) (Հոդված 4, 3-րդ կետ, երրորդ պարբերություն),

- ապահովել, որ ՀՀ կառավարությունն ամփոփ հաշվետվությունն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում այն ուղարկի Հայաստանի Հանրապետության՝ ամփոփ հաշվետվության մեջ նշված պետական մարմիններ՝ կատարման համար (Հոդված 5, 1-ին կետ, առաջին պարբերություն),

- ապահովել, որ ՀՀ պետական մարմինները վերացնեն հայտնաբերված խախտումները, միջոցներ ձեռնարկեն դրանում նշված առաջարկների իրագործումն ապահովելու համար և դրա մասին տեղեկացնեն ՀՀ կառավարությանն ու պետական ֆինանսական վերահսկողության բարձրա-

գույն մարմին՝ ամփոփ հաշվետվության մեջ սահմանված ժամկետներին համապատասխան (Հոդված 5, 1-ին կետ, երկրորդ պարբերություն),

- ապահովել, որ ՀՀ պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինը ՀՀ պետական մարմինների կողմից տեղեկատվությունն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման և առաջարկների իրագործման արդյունքների մասին տեղեկացնի մյուս անդամ պետությունների պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմիններին և Եվրասիական տնտեսական հանձնաժողովին (Հոդված 5, 1-ին կետ, չորրորդ պարբերություն):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2021 թվականի նոյեմբերի 16-ին ստորագրված՝ «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի և վճարների) գումարները հաշվեգրելու և բաշխելու, դրանք որպես եկամուտ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի պահպանման հարցերին ուղղված համատեղ վերահսկիչ միջոցառումների անցկացման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

31 մայիսի 2022 թվականի
ՍԴՈ-1653

3(107)2022



ՏԵՂԵԿՎՊԻՐ



ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՔՍԱՏՈՒՐՔԵՐԻ (ՀԱՄԱՐԺԵՔ ԱՅԼ ՏՈՒՐՔԵՐԻ, ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ) ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԵԳՐԵԼՈՒ ԵՎ ԲԱՇԽԵԼՈՒ, ԴՐԱՆՔ ՈՐՊԵՍ ԵԿԱՄՈՒՏ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՐՑԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՄԱՏԵՂ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈՒ-1653 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի և վճարների) գումարները հաշվեգրելու և բաշխելու, դրանք որպես եկամուտ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի պահպանման հարցերին ուղղված համատեղ վերահսկիչ միջոցառումների անցկացման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2022 թվականի մայիսի 31-ի ՍԴՈՒ-1653 որոշմամբ որոշել է, որ «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի և վճարների) գումարները հաշվեգրելու և բաշխելու, դրանք որպես եկամուտ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի պահպանման հարցերին ուղղված համատեղ վերահսկիչ միջոցառումների անցկացման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2022 թվականի մայիսի 31-ի ՍԴՈՒ-1653 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախ՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամ-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱՆ ◆ 3(107)/2022

ՍԱԿՄԱՆԱՐՈՎՎԱԼ ՂԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ◆ 3(107)/2022

րագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1653 որոշմամբ «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի և վճարների) գումարները հաշվեգրելու և բաշխելու, դրանք որպես եկամուտ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի պահպանման հարցերին ուղղված համատեղ վերահսկիչ միջոցառումների անցկացման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջները բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում

է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը¹:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղա-

¹ Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

նակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության

իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կա՛մ Սահմանադրական դատարանում առկա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Սահմանադրական

դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված՝ էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարանի դիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ են համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիչտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրո-

նային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդակա-նություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտա-գործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

ՍԱՀՄԱՆԱՐԴՐՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ◆ 3(107)/2022

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին:

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:**

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխա-

տակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջները բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ փյույալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ փյույալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է փրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շփոթելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«31» մայիսի 2022թ.

◆ 3(107)/2022

◆ ՍԵՂՈՒԿԻ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ
ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ
ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍ-ԳՐՔԻ
3-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1.2-ՐԴ ՄԱՍԻ, 79-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 7-ՐԴ
ԿԵՏԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ
ՕՐԵՆՍԳՐՔԻ 287-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

3(107)2022

◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Քաղ. Երևան

31 մայիսի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե.
Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առ-
նվազն մեկ հինգերորդի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի պատգամավոր
Ա. Վարդևանյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի
ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահով-
ման և սպասարկման բաժնի պետ Ա. Մնացականյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ
հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական
դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1.2-րդ մասի, 79-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 287-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2013 թվականի դեկտեմբերի 5-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2013 թվականի դեկտեմբերի 28-ին և ուժի մեջ է մտել 2014 թվականի հունվարի 7-ից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի «Վարչական դատարան դիմելու իրավունքը» վերտառությամբ 3-րդ հոդվածի 1.2-րդ մասի բովանդակությունը հետևյալն է.

«1.2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 287-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական ակտերը կարող են վիճարկվել դատական կարգով միայն վարչական կարգով բողոքարկվելուց (գանգատարկվելուց) հետո»:

Օրենսգրքի նշված հոդվածի 1-ին մասը 23.10.19 ՀՕ-207-Ն օրենքով լրացվել է վիճարկվող 1.2-րդ մասով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի «Հայցադիմումը վերադարձնելը» վերտառությամբ 79-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի բովանդակությունը հետևյալն է.

«1. Դատավորը վերադարձնում է հայցադիմումը, եթե՝

(...)

7) սույն օրենսգրքով նախատեսված դեպքում վարչական ակտը չի բողոքարկվել (գանգատարկվել) վարչական կարգով»:

Օրենսգրքի նշված հոդվածի 1-ին մասը՝ վիճարկվող դրույթով, մասնավորապես 7-րդ կետով, լրացվել է 23.10.19 ՀՕ-207-Ն օրենքով, որը փոփոխության է ենթարկվել 09.12.19 ՀՕ-306-Ն օրենքով: Մասնավորապես՝ Օրենսգրքի նշված հոդվածի 1-ին մասը 23.10.19 ՀՕ-207-Ն օրենքով լրացվել է 7-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «7) սույն օրենսգրքով նախատեսված դեպքում վարչական ակտը չի բողոքարկվել (գանգատարկվել) վերադատության կարգով»: Այնուհետև 09.12.19 ՀՕ-306-Ն օրենքով վերոնշյալ կետում «վերադատության» բառը փոխարինվել է «վարչական» բառով:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 3(107)2022

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը ՀՍՍՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունվել է 1985 թվականի դեկտեմբերի 6-ին և ուժի մեջ է մտել 1986 թվականի հունիսի 1-ից:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի «Վարչական իրավախախտման վերաբերյալ որոշման գանգատարկման (բողոքարկման) կարգը» վերտառությամբ 287-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունը հետևյալն է.

«2. Սույն օրենսգրքի 123-րդ, 123.1-ին, 123.3-րդ, 123.4-րդ, 123.5-րդ (բացառությամբ 8-րդ, 9-րդ, 14-րդ և 15-րդ մասերով նախատեսված իրավախախտումների), 123.6-րդ, 123.7-րդ, 124-124.4-րդ, 124.6-րդ, 125-րդ, 126-րդ, 128-րդ, 129.2-րդ, 129.3-րդ, 131-րդ, 132-րդ, 135.2-րդ և 140-րդ հոդվածներով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական ակտերը կարող են վիճարկվել դատական կարգով միայն վարչական կարգով գանգատարկվելուց (բողոքարկվելուց) հետո»:

Նույն օրենսգրքի վերոնշյալ հոդվածի 2-րդ մասը 23.10.19 ՀՕ-206-Ն օրենքով շարադրվել է հետևյալ խմբագրությամբ.

«2. Սույն օրենսգրքի 123-րդ, 123.1-ին, 123.3-րդ, 123.4-րդ, 123.5-րդ (բացառությամբ 8-րդ, 9-րդ, 14-րդ և 15-րդ մասերով նախատեսված իրավախախտումների), 123.6-րդ, 123.7-րդ, 124-124.4-րդ, 124.6-րդ, 125-րդ, 126-րդ, 128-րդ, 129.2-րդ, 131-րդ, 132-րդ, 135.2-րդ և 140-րդ հոդվածներով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական ակտերը կարող են վիճարկվել դատական կարգով միայն վարչական կարգով գանգատարկվելուց (բողոքարկվելուց) հետո»:

Այնուհետև 09.12.19 ՀՕ-300-Ն օրենքով վիճարկվող 2-րդ մասը «129.2-րդ,» թվից հետո լրացվել է «129.3-րդ,» թվով:

Գործի քննության առիթն Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի՝ 2021 թվականի սեպտեմբերի 10-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը և կից ներկայացված փաստաթղթերը, պատասխանող կողմի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության և Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Դիմողի դիրքորոշումները

Ըստ դիմողի՝ օրենսդրական փոփոխությունների արդյունքում, որով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածը լրացվեց վիճարկվող 1.2-րդ մասով, անձի համար արգելափակվեց վարչական

արդարադատության հնարավորությունը պայմանով, որ սպառվի վերադատության կարգով բողոքարկումը՝ այն էլ սելեկտիվ գործերով: Հատկանշական է, որ նշյալ կարգավորումը վերաբերում է հենց վարչական դատարանին հասցեագրված հայցադիմումը վերադարձնելուն, այսինքն՝ ինքնին իրավական վեճի քննության նույնիսկ ձևավորման հնարավորությունը բացառվում է:

Դիմողն արձանագրում է, որ այդ սելեկտիվ գործերը սահմանվել են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 287-րդ հոդվածի 2-րդ մասում, ընդ որում, ըստ դիմողի, առանց որևէ իրավաչափ նպատակի հետապնդման:

Դիմողը նշում է, որ առհասարակ վերադատության կարգով բողոքարկման ինստիտուտը որպես պարտադիր բաղադրիչ նախ պետք է լինի արդյունավետ, և դրա համար պետք է լինեն իրական երաշխիքներ: Տվյալ դեպքում փաստացի նախատեսված պարտադիր գանգատարկումը որևէ առանձնահատկություն կամ անաչառության հավելյալ շեմ չի երաշխավորում: Պարզապես հավելյալ բարդություն է առաջացնում վարչական ակտի նկատմամբ անհամաձայնություն ունեցող անձանց համար:

Ըստ դիմողի՝ օրենսդիրը պարտադրում է անձանց ակնկալել օբյեկտիվություն և անկողմնակալություն վարչական մարմնի կողմից իր իսկ կայացրած վարչական ակտի վերանայման հարցում: Նման պարագայում բացակայելու է առնվազն անկողմնակալության օբյեկտիվ չափորոշիչը:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող նորմերի պարագայում «մեկ միասնական վարչական մարմնից պահանջվում է մի դեպքում հանդես գալ իրավախախտում արձանագրողի մյուս դեպքում իրավախախտման օրինականության ստուգողի կարգավիճակում փաստացի կրկնելով ՀՀ վարչական դատարանի գործառույթը կրկին հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարչական դատարանը գործը քննում է ի պաշտոնե»:

Վկայակոչելով դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների, այդ թվում՝ դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ Սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք դիրքորոշումներ՝ դիմողը գտնում է, որ տվյալ դեպքում առկա չէ որևէ իրավական նպատակ և արդար հավասարակշռություն: Ինչպես նշել էր օրենսդրական նախաձեռնության հեղինակը, պարզապես սրանով փորձ է արվում ստեղծել «խոչընդոտ»՝ անձանց կողմից վարչական դատարան դիմելու համար, քանի որ վերջինս ծանրաբեռնված է: Այսինքն՝ պետության պոզիտիվ պարտականությունն իրականացվում է մարդկանց իրավունքի սահմանափակման միջոցով, ինչն առհասարակ անընդունելի է ժողովրդավարական հասարակությունում:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 3(107)2022 ՏԵՂԵԿՎՈՐ

Դիմողի կարծիքով՝ նույն ՃՈ տեսուչի կողմից վարչական իրավախախտման արձանագրության բողոքարկումը նույն ՃՈ պետին չի կարող որևէ իրավիճակում լինել արդյունավետ, համաչափ և իրավաչափ նպատակ հետապնդող:

Ելնելով վերագրյալից՝ դիմողը գտնում է, որ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1.2-րդ մասը, 79-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 287-րդ հոդվածի 2-րդ մասն ուղղակիորեն չեն համապատասխանում սահմանադրի կողմից սահմանված պահանջներին և հակասում են Սահմանադրության 3, 61, 63 և 78-րդ հոդվածներին:

Անդրադառնալով դատարանների բեռնաթափման հարցին՝ դիմողը գտնում է, որ դատարանների բեռնաթափման նման հիմնավորումը պետք է իրականացվի բացառապես այն սկզբունքը հաշվի առնելով, որ «Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք», այլ կերպ հնարավոր միջոցները և լուծումները երբեք չեն կարող իրականացվել այն ելակետով, որի արդյունքում ինտեսիվ միջամտություն է իրականացվում մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին, տվյալ դեպքում արդար դատաքննության հասանելիությանը և մատչելիությանը, առավել ևս առանց իրական գործուն անկախ վերադասության, գանգատարկման մեխանիզմի:

Ըստ դիմողի՝ դատարանները բեռնաթափելուն ուղղված տվյալ միջոցն իրացվել է ի հաշիվ Սահմանադրության 3-րդ հոդվածի:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Ազգային ժողովը (այսուհետ՝ նաև պատասխանողը), վկայակոչելով Սահմանադրական դատարանի վերաբերելի որոշումները և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխան վճիռները, ինչպես նաև վերլուծության առարկա դարձնելով վիճարկվող նորմերի իրավական բովանդակությունը, նշում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի «Վարչական իրավախախտումներ տրանսպորտում, ճանապարհային տնտեսության և կապի բնագավառում» վերտառությամբ 10-րդ գլխով նախատեսված որոշակի խումբ իրավախախտումների համար օրենսդիրը նախատեսել է դատական կարգով վիճարկելու նախապայման, այն է՝ դրանք պետք է բողոքարկվեն վարչական կարգով: Նման նախապայմանի ամրագրումը միտված է եղել սահմանելու անձի իրավունքների պաշտպանության արդյունավետ կառուցակարգեր և ընթացակարգեր, ապահովելու նյութական ռեսուրսների խնայողությունը, անձի՝ ողջամիտ

Ժամկետում իրավունքների պաշտպանության հնարավորությունը, դատարանների ծանրաբեռնվածության թեթևացումը, դատարանների գործունեության արդյունավետության բարձրացումը:

Պատասխանողի գնահատմամբ՝ օրենսդրական նման փոփոխությունը խթանում է նաև վեճերի լուծման արտադատական մեխանիզմը՝ դրանց լուծումն իրականացնելով առավել արագ, առանց ծախսերի և ավելի պարզ ընթացակարգով:

Պատասխանողը գտնում է նաև, որ դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար անհրաժեշտ նախապայմանն իրագործելի է, ողջամիտ և չի հանգեցնում իրավունքի էության խախտման, քանզի վարչական կարգով բողոքարկելուց հետո անձը զրկված չէ վարչական ակտը դատական կարգով վիճարկելու հնարավորությունից:

Ամփոփելով իր դիրքորոշումը՝ պատասխանողը եզրահանգում է, որ մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության մեխանիզմների մշակումն օգնում է խուսափել դատարաններն անհարկի ծանրաբեռնելուց՝ միևնույն ժամանակ չզրկելով անհատին անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունքից:

3. Սահմանադրաիրավական վեճի շրջանակները

Սույն գործով սահմանադրաիրավական վեճի շրջանակները հանգում են նրան, որ որոշ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական ակտերը պարտադիր վարչական կարգով գանգատարկելը (բողոքարկելը) որպես դատարան դիմելու նախապայման սահմանելն անհամաչափորեն սահմանափակում է անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները:

4. Գործի շրջանակներում էական նշանակություն ունեցող իրավական հարցադրումները

Հաշվի առնելով դիմումում բերված փաստարկներն ու հիմնավորումները՝ Սահմանադրական դատարանը սույն գործով վիճարկվող իրավակարգավորումների սահմանադրականությունը գնահատելիս անհրաժեշտ է համարում պարզել՝

արդյո՞ք դատարան դիմելու համար որոշ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական ակտերը պարտադիր վարչական կարգով գանգատարկելու (բողոքարկելու) նախապայմանն անհամաչափորեն սահմանափակում է անձի՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործի շրջանակներում անձի արդար դատաքննության և արդյունավետ դատական պաշտպանության իրավունքների երաշխավորման խնդրին անդրադառնալիս սահմանադրաիրավական վեճի առարկա իրավակարգավորումների սահմանադրականությունը գնահատել նաև իր որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումների, վարչական ակտի բողոքարկման արտադատական և դատական ընթացակարգերի կիրառմամբ պայմանավորված՝ անձի իրավունքների պաշտպանությունն ապահովող սահմանադրական և օրենսդրական կարգավորումների համապատասխան դրույթների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների իրավական պրակտիկայի համատեքստում:

5. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

5.1. Սահմանադրական դատարանն իր առանձին որոշումներով հանգամանորեն անդրադարձել է արդարադատության մատչելիության, արդար դատաքննության իրավունքներին՝ ընդգծելով դրանց կարևորությունը դատաընթացակարգային բնագավառներում: Մասնավորապես՝ 2007 թվականի նոյեմբերի 28-ի ՍԴՈ-719 և 2019 թվականի հունվարի 22-ի ՍԴՈ-1439 որոշումներում անդրադառնալով Սահմանադրությամբ երաշխավորված մարդու և քաղաքացու իրավունքների իրացման խնդրին և ելնելով այն հանգամանքից, որ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները սահմանադրական այն հիմնարար իրավունքներից են, որոնց իրացմամբ երաշխավորվում են սահմանադրական մի շարք այլ իրավունքների հարգումն ու պաշտպանությունը, Սահմանադրական դատարանն արձանագրել է. «անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից»:

Իսկ մեկ այլ՝ 2018 թվականի հունիսի 19-ի ՍԴՈ-1420 որոշմամբ Սահմանադրական դատարանն ընդհանրացրել և վերահաստատել է իր նախկին որոշումներում արտահայտված՝ դատարանի մատչելիության իրավունքի

վերաբերյալ իրավական դիրքորոշումները, մասնավորապես, կատարել է արձանագրում, որ՝

«(...)

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,

- դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը,

- դատարան դիմելիս անձը չպետք է ծանրաբեռնվի ավելորդ ձևական պահանջներով,

- իրավական որոշակիության ապահովման պահանջից ելնելով՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար անհրաժեշտ որոշակի իմպերատիվ նախապայմանի առկայությունն ինքնին չի կարող դիտվել որպես ՀՀ Սահմանադրությանը հակասող: Այլ հարց է, որ նման նախապայմանը պետք է լինի իրագործելի, ողջամիտ և իր ծանրությամբ չհանգեցնի իրավունքի էության խախտման»:

Այստեղից, անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի իրացումը երաշխավորելու տեսանկյունից ընդհանրապես անհրաժեշտ է կարևորել, թե որքանով է մատչելի (հասանելի) արդարադատությունը, ինչպիսի՞ իրավական պայմաններ են առաջադրված դատարան դիմելու իրավունքն իրացնելու, հետևաբար, նաև դրանով պայմանավորված՝ դատավարական (քրեական, քաղաքացիական և վարչական) կոնկրետ ընթացակարգի շրջանակներում արդար, հրապարակային դատաքննությամբ անձի խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելու համար:

Չնայած այն հանգամանքին, որ դատարան դիմելու իրավունքի իրացման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով, այն դեպքում, երբ այդ իրավունքն անմիջականորեն նախատեսված չէ Սահմանադրությամբ, այնուհանդերձ, նույն Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների սահմանադրաիրավական բովանդակությունից բխում է անձի՝ դատարան դիմելու հնարավորությունը, որի՝ որպես իրավունքի իրացման երաշխավորումը դիտարկվում է իրավական առաջնահերթ նախապայման անձի սահմանադրական իրավունքներն ու ազատությունները դատական կարգով պաշտպանելու համար: Հետևաբար՝ այդ հանգամանքով է պայմանավորված վեճի առարկա իրավակարգավորումների սահմանադրականությունը գնահատելու անհրաժեշտությունը:

5.2. Սույն գործով բարձրացված սահմանադրաիրավական վեճի շրջանակներում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում

անդրադառնալ վարչական կարգով պարտադիր բողոքարկման հնստիտուտի դերին և նշանակությանը՝ անձի խախտված իրավունքների վերականգնման և վեճերի լուծման համատեքստում՝ որպես Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրացումն ապահովող այլընտրանքային հնարավորություն:

Վարչական կարգով բողոքարկումը վեճերի այլընտրանքային լուծման հնքնությունն ձև է, որն առավելապես կոչված է մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետությունն ապահովելուն, սակայն կատարում է ոչ միայն անձի իրավունքների պաշտպանության գործառույթ, այլ նաև իրականացնում է հանրային և մասնավոր շահերի հավասարակշռում, ինչը ենթադրում է, որ բողոքարկման վարույթում պաշտպանության է ենթակա նաև հանրային շահն այն հաշվառմամբ, որ պետական կառավարման մակարդակում վեճերի լուծումը խթանում է պետական մարմինների նկատմամբ հանրության վստահության բարձրացումը, նպաստում է պետական ռեսուրսների խնայողությանը, բացի դրանից, հնարավորություն է տալիս հանրային իշխանության անունից հանդես եկող սուբյեկտին ինքնություն վերացնել համապատասխան «թերությունները»:

Հատկանշական է նաև այն, որ Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների կողմից ևս խրախուսվում են վեճերի լուծման այլընտրանքային միջոցների ներդրումն ու կիրարկումը: Այսպես օրինակ՝ անդրադառնալով սույն գործով վիճարկվող իրավակարգավորումների էության շրջանակներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով հաստատագրված պրակտիկային՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում կարևորել հետևյալ դիրքորոշումները, համաձայն որոնց՝

ա) «(...) Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված՝ արդար դատաքնության իրավունքը պետք է մեկնաբանվի օրենքի գերակայության լույսի ներքո, որով պահանջվում է, որ դատավարության մասնակիցներն ունենան դատական պաշտպանության արդյունավետ միջոցներ, որոնք նրանց թույլ կտան պաշտպանել իրենց քաղաքացիական իրավունքները» (տե՛ս Case of Beleš and Others v. The Czech Republic, §49, 12 November 2002),

բ) «(...) դատարանի մատչելիության իրավունքը պետք է լինի «գործնական և արդյունավետ»: (...) որպեսզի մատչելիության իրավունքը լինի արդյունավետ, անհատը պետք է «ունենա հստակ, գործնական հնարավորություն՝ վիճարկելու այն ակտը, որով միջամտություն է կատարվում իր իրավունքներին» (տե՛ս Case of Bellet v. France, §36, §38, 4 December 1995),

գ) «(...) դատարանի իրավունքը» և մատչելիության իրավունքը բացարձակ չեն: Դրանք կարող են ենթարկվել սահմանափակումների, սակայն դրանով չպետք է սահմանափակվի կամ նվազեցվի անհատին տրամադրված մատչելիության իրավունքն այնպես կամ այն չափով, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը» (տե՛ս Case of Philis v. Greece (1), §59, 27 August 1991, Case of de Geouffre de la Pradelle v. France, §28, 16 December 1992, Case of Stanev v. Bulgaria [ՄՊ], §229, 17 January 2012),

դ) «(...) դատարանի մատչելիության իրավունքը ենթակա է սահմանափակումների, մասնավորապես, երբ քննարկվում են բողոքի ընդունելիության պայմանները: Այս համատեքստում կարգավորումներ սահմանելու հարցում պետություններն ունեն որոշակի հայեցողություն» (տե՛ս Case of Mamikonyan v. Armenia, Application no. 25083/05, 16.03.2010, § 25, Scholz AG v. Armenia, Application no. 16528/10, 24.01.2019, § 57),

ե) «(...) այնուամենայնիվ, կիրառվող սահմանափակումները չպետք է սահմանափակեն կամ նվազեցնեն անհատին տրամադրված մատչելիության իրավունքն այնպես կամ այն չափով, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը: Ավելին, որևէ սահմանափակում համատեղելի չի լինի 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ, եթե այն չի հետապնդում «իրավաչափ նպատակ», և եթե «գործադրվող միջոցների ու հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերություն» (տե՛ս Case of Ashingdane v. United Kingdom, 14/1983/70/106, App No 8225/78, 1985, § 57, Fayed v United Kingdom. (1994), § 65, տե՛ս Case of Markovic and Others v. Italy, 14.12.2006, § 99),

զ) «(...) դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է հետապնդի իրավաչափ նպատակ, և կիրառված միջոցների ու հետապնդվող նպատակի միջև պետք է առկա լինի համաչափության ողջամիտ հարաբերակցություն. հակառակ պարագայում այդպիսի սահմանափակումները չեն համապատասխանի «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին» (տե՛ս Case of Khalfaoui v. France, Application no. 34791/97, 14.12.1999, § 36, տե՛ս Case of Hirschhorn v. Romania, Application no. 29294/02, 26.07.2007, § 50),

է) «(...) անձի՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճան լինեն, որ վնաս հասցնեն այդ իրավունքի բուն էությանը» (տե՛ս Case of Luordo v. Italy, Application no. 32190/96, 17.07.2003, § 85, տե՛ս Case of Staroszczyk v. Poland, Application no. 59519/00, 22.03.2007, § 124, տե՛ս Case of Stanev v. Bulgaria, Application no. 36760/06, 17.01.2012, § 230),

3(107)2022
 ◆ ՍԵՆԵԿԱՆԵ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 183

ը) «(...) եթե դատարանի մատչելիության իրավունքն օրենքով կամ գործնականում սահմանափակված է, ապա Դատարանն ուսումնասիրում է, թե արդյոք այդ սահմանափակումն ազդում է իրավունքի էության վրա և, մասնավորապես, թե արդյոք այն հետապնդում է իրավաչափ նպատակ, և թե արդյոք գործադրվող միջոցների ու հետապնդվող նպատակի միջև կա համաչափության ողջամիտ հարաբերություն»: «(...) Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում չի կարող հայտնաբերվել, եթե սահմանափակումը համատեղելի է Դատարանի կողմից սահմանված սկզբունքների հետ» (տե՛ս Case of Ashingdane v. United Kingdom, 14/1983/70/106, App No 8225/78, 1985),

թ) «(...) ընթացակարգային նորմերը կիրառելիս ներպետական դատարանները պետք է խուսափեն և՛ չափազանցված ձևականությունից, որը կազդի ընթացակարգի արդարացիության վրա, և՛ չափազանցված ճկունությունից, որը կհանգեցնի օրենքով սահմանված ընթացակարգային պահանջների վերացմանը» (տե՛ս Case of Walchli v. France, Application no. 35787/03, 26.07.2007, § 29, Peca v. Greece (no. 2), Application no. 33067/08, 10.06.2010, § 30),

ժ) «(...) դատարանի մատչելիության իրավունքը խախտվում է, երբ սահմանված կարգավորումները դադարում են ծառայել իրավական որոշակիության և արդարադատության պատշաճ կազմակերպման նպատակներին և վերածվում են իրավասու դատարանի կողմից գործն ըստ էության քննության առնելու խոչընդոտի» (տե՛ս Case of Efstathiou and others v. Greece, Application no. 36998/02, 27.07.2006, § 24, տե՛ս Case of Vamvakas v. Greece, Application no. 36970/06, 16.10.2008, § 26, տե՛ս Case of Louli-Georgopoulou v. Greece, Application no. 22756/09, 16.03.2017, § 39) և այլն:

Միաժամանակ, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն (այսուհետ նաև՝ Նախարարների կոմիտե) իր՝ «Արդարադատության մատչելիության ուղիների վերաբերյալ» թիվ R(81)7 հանձնարարականում նշել է, որ անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ՝ նպաստելու կամ խրախուսելու կողմերի հաշտությունը կամ վեճի խաղաղ լուծումը, նախքան դատական վարույթի սկսվելը կամ վարույթի ընթացքում (կետ 3):

Մեկ այլ՝ «Դատարանների աշխատանքի չափազանց ծանրաբեռնվածության անթույլատրելիության և սահմանափակման միջոցառումների վերաբերյալ» թիվ R(86)12 հանձնարարականով՝ Նախարարների կոմիտեն առաջարկել է անդամ պետություններին անհրաժեշտության դեպքում

¹Հասանելի է հետևյալ հղումով՝ [http://hrlibrary.umn.edu/russian/euro/RRec\(86\)12.html](http://hrlibrary.umn.edu/russian/euro/RRec(86)12.html), անգլերեն տարբերակը՝ <https://rm.coe.int/16804f7b86> :

խթանել կողմերի հաշտեցումն ինչպես արտադատական համակարգում, այնպես էլ մինչ դատավարության սկսվելը կամ դրա ընթացքում (կետ 1):

Բացի դրանից, Նախարարների կոմիտեն «Վարչական մարմինների և մասնավոր անձանց միջև առաջացած վեճերի դատական քննության այլընտրանքների մասին» թիվ Rec(2001)9 հանձնարարականով¹ խորհուրդ է տվել անդամ պետություններին նպաստել վարչական մարմինների և մասնավոր անձանց միջև առաջացած վեճերի այլընտրանքային միջոցների կիրառմանը (կետ 13):

Միաժամանակ, նույն հանձնարարականով Նախարարների կոմիտեն, որոշումների ներքին վերանայումը համարելով վարչական մարմինների ու մասնավոր անձանց միջև վեճի լուծման այլընտրանքային տարբերակ, սահմանելով, որ որոշումների ներքին վերանայումը սկզբունքորեն պետք է հնարավոր լինի ցանկացած վարչական ակտի առնչությամբ, և դա կարող է վերաբերել ակտի նպատակահարմարությանը և/կամ օրինականությանը, եզրահանգել է, որ «(...) որոշ դեպքերում որոշումների ներքին վերանայումը կարող է պարտադիր լինել որպես դատավարության նախապայման» (Rec(2001)9 հանձնարարական, հավելված, մաս 3, կետ 1):

Վարչական կարգով բողոքարկման՝ որպես վեճերի այլընտրանքային լուծման ինքնուրույն միջոցի սպառման պայմանին է անդրադարձել նաև Նախարարների կոմիտեի՝ «Վարչական ակտերի դատական վերանայման վերաբերյալ» թիվ Rec(2004)20 հանձնարարականը², որով սահմանվել են վարչական ակտերի նկատմամբ արդյունավետ դատական վերահսկողության առանձին իրավական չափորոշիչներ: Մասնավորապես, անդրադառնալով դատարանի մատչելիության պայմաններին՝ Նախարարների կոմիտեն սահմանել է, որ ֆիզիկական և իրավաբանական անձինք առաջացած տարաձայնությունները կարող են լուծել այլ միջոցներով, մինչ դատարան դիմելը: Նույն հանձնարարականով սահմանվել է նաև, որ՝

1) «(...) դատարան դիմելը կարող է պայմանավորվել ներպետական պաշտպանության բոլոր միջոցներն սպառելու պայմանով» (կետ 42),

2) «(...) դատական վերանայման իրավունքի հասանելիությունը պետք է լինի արդյունավետ, և պաշտպանության բոլոր միջոցներից օգտվելու պայմանի սահմանումը չպետք է խոչընդոտ հանդիսանա այն անձանց համար, որոնք ցանկանում են վերանայել վարչական ակտը» (կետ 43):

¹«Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.refworld.org.ru/publisher_COEMINISTERS...55c464414_0.html, անգլերեն տարբերակը՝ <https://rm.coe.int/16805e2b59>:

²«Հասանելի է հետևյալ հղումով՝ <http://ecsocman.hse.ru/data/889/482/1209/%D0%A0%D0%B5%D0%BA%D0%BE%D0%BC%D0%B5%D0%BD%D0%B4%D0%B0%D1%86%D0%B8%D0%B8%20114-132.pdf>,

Միննույն ժամանակ, Նախարարների կոմիտեի՝ «Արդյունավետ վարչարարության վերաբերյալ» թիվ CM/Rec(2007)7 հանձնարարականում օգտագործվող եզրութաբանության և դրանց սահմանումների հիման վրա Եվրոպայի խորհրդի համապատասխան ստորաբաժանման կողմից մեկնաբանությունների շրջանակում նախապատրաստված՝ «Վարչարարությունը և Դուք. Վարչական իրավունքի սկզբունքները՝ անհատների և պետական մարմինների միջև հարաբերությունների առնչությամբ» ձեռնարկում (2018) վարչական ակտերի ներքին վերանայման սկզբունքի բովանդակությունը բացահայտելիս արձանագրվել է, որ՝

ա) «(...) պետական մարմնի կողմից կայացված վարչական որոշման հետևանքով բացասական ազդեցություն կրած յուրաքանչյուր ոք իրավունք ունի պահանջելու այդ որոշման ներքին վերանայում»,

բ) «(...) ներքին վերանայման բնույթը պայմանավորված կլինի վերանայման ենթակա վարչական որոշման տեսակով, և այն պետք է իրականացվի պետական մարմնում գործող իրավասու անձանց կողմից»,

գ) ներքին վերանայումը կարող է լինել նախապայման՝ դատարան բողոք ներկայացնելու համար»,

դ) (...) ներքին վերանայման սկզբունքը հիմնված է այն ենթադրության վրա, որ ներքին վերանայումները նախորդում են դատական վարույթներին, և դա նախընտրելի տարբերակն է, չնայած որոշ իրավական համակարգերում դատարան բողոք ներկայացնելու հետևանքով ներքին վերանայումը կասեցվում է այնքան ժամանակով, քանի դեռ դատարանը բողոքի առնչությամբ որոշում չի կայացրել»¹:

Միաժամանակ, արտադատական (վարչական) պաշտպանության միջոցներն սպառելու պարտադիր պայմանի առկայության դեպքում այդ միջոցների արդյունավետ լինելու հրամայականի անհրաժեշտությունն ընդգծվել է նաև Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) «Վարչական արդարադատության մշտադիտարկման (մոնիթորինգի) մասին» ձեռնարկում (2013), որտեղ կատարվել են հետևյալ արձանագրումները. «(...) վարչաիրավական պաշտպանության բոլոր միջոցներն սպառելու պահանջը չպետք է խախտի վարչական արդարադատության իրավունքի էությունը», և «օրինակ՝ եթե մինչև դատական վարույթը վարչական պաշտպանության միջոցների դիմելը հանգեցնում է սովյալ անձի շահերի անդառնալի վնասի, ապա նման

¹ Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://rm.coe.int/cmrec-2007-7-of-the-cm-to-ms-on-good-administration/16809f007c>

իրավիճակը փաստացի հանդիսանում է անձին դատարանի մատչելիության իրավունքից զրկում» (կետ 4.2.1)¹:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ միջազգային փորձի ուսումնասիրությունը ևս վկայում է, որ վարչական գործերով այլընտրանքային պաշտպանության միջոցի դիմելու պարտադիրությունն արդիական է որոշ պետություններում²:

Այսպիսով, ընդհանրացնելով արտադատական կարգով պարտադիր բողոքարկման ինստիտուտի կիրառման միջազգային իրավական փորձը՝ Սահմանադրական դատարանը կարևորել է իրավակարգային այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են՝

- **վարչական կարգով բողոքարկումը և դրանով պայմանավորված վեճերի այլընտրանքային լուծումը մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության կարևոր երաշխիքներից է,**

- **արտադատական կարգով բողոքարկման պարտադիր պահանջի սահմանումը կարող է անհրաժեշտ համարվել, եթե բողոքարկման ընթացակարգերն իրապես արդյունավետ են, հակառակ պարագայում այն կխաթարի անձի՝ դատարանի մատչելիության իրավունքի էությունն ու կհանդիսանա անհամաչափ խիստ ներգործություն,**

¹ Հասանելի է հետևյալ հղումով՝ https://fba.se/contentassets/db0b1c481c404e4294a298e97755cbda/handbook-on-administrative-justice_rus.pdf

² Այսպես՝ վարչական մարմինների բոլոր ակտերի, գործողությունների կամ անգործության արտադատական կարգով պարտադիր բողոքարկման պայման սահմանված է Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում, որտեղ վարչական ակտի դատական կարգով բողոքարկում կարող է իրականացվել միայն այն դեպքում, երբ այն վիճարկման առարկա է դարձել արտադատական ընթացակարգով, բացառությամբ որոշ դեպքերի: Կամ, Ռուսաստանի Դաշնության վարչական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 3-րդ մասը ևս նախատեսում է որոշ խումբ վարչական գործերով վարչական կամ այլ հանրային վեճերի լուծման պարտադիր մինչդատական կարգավորումների առկայության դեպքում այդպիսի ընթացակարգերի պահպանումից հետո միայն դատարան դիմելու իրավունքի իրացման հնարավորություն: Իսկ էստոնիայի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի «Մինչդատական վարույթ» վերտառությամբ 47-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ օրենքով կարող է սահմանվել որոշակի տեսակի բողոքները քննելու պարտադիր վարույթ կամ այլ մինչդատական պարտադիր վարույթ, և բողոք կարող է ներկայացվել այն պարագայում, եթե անձը պահպանել է բողոքի քննության համար սահմանված մինչդատական ընթացակարգը և այն ծավալով, որով համապատասխան ժամկետում տվյալ կարգով չի բավարարվել իր բողոքը: Գրեթե համանման կարգավորումներ առկա են նաև այլ երկրների օրենսդրություններում (օրինակ՝ Ղազախստանի Հանրապետության վարչական դատավարաընթացակարգային օրենսգիրք (հոդվ. 9, մաս 3), Ղրղզստանի Հանրապետության վարչական ընթացակարգային օրենսգիրք (հոդվ. 5, մաս 4) և այլն):

- վարչաիրավական պաշտպանության բոլոր միջոցները, այդ թվում՝ արտադատական կարգով բողոքարկման միջոցով սպառելու պահանջը, չպետք է խախտեն վարչական արդարադատության իրավունքի էությունը:

Վերոհիշյալ իրավաչափ նպատակների իրացման անհրաժեշտությունից ելնելով՝ Սահմանադրական դատարանը նաև արձանագրում է միջազգային իրավակիրառական պրակտիկայի զարգացման այն միտումը, համաձայն որի՝ առկա է արտադատական կարգով վարչական ակտերի պարտադիր բողոքարկման ու դրանցով պայմանավորված հանրային վեճերի անմիջական լուծման հնարավորությունն առավելագույնի հասցնելու և մինչդատական այդպիսի ընթացակարգերի պահպանումից հետո միայն դատարան դիմելու իրավունքի իրացման նախապատվություն տալու ընդհանուր միտում:

5.3. Անդրադառնալով սահմանադրաիրավական վեճի առարկա իրավակարգավորումների շրջանակներում վարչական ակտի բողոքարկման արտադատական և դատական ընթացակարգերի կիրառմամբ պայմանավորված՝ անձի իրավունքների պաշտպանության, մասնավորապես՝ արդար դատաքննության և արդյունավետ դատական պաշտպանության իրավունքների երաշխավորման խնդրին, հաշվի առնելով դիմող կողմի հարցադրումները՝ Սահմանադրական դատարանը կարևորում է բացահայտել՝ արդյո՞ք վիճարկվող իրավակարգավորումներով իրավունքների պաշտպանության արտադատական միջոցները որպես դատական պաշտպանության իրավունքի իրացման նախապայման սահմանելը հետապնդում է իրավաչափ նպատակ, և առկա՞ է արդյոք համաչափություն գործադրվող միջոցների ու հետապնդվող նպատակի միջև՝ Սահմանադրության 78-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 287-րդ հոդվածի 2-րդ մասը և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1.2-րդ մասն ուղղակիորեն սահմանում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված՝ որոշակի խումբ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական ակտերը դատական կարգով վիճարկելու հնարավորություն միայն վարչական կարգով՝ գանգատարկելուց (բողոքարկելուց) հետո: Այսինքն՝ որոշ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով ակտերը կարող են վիճարկվել դատական կարգով՝ բացառապես պարտադիր վարչական կարգով գանգատարկելուց (բողոքարկելուց) հետո, ընդ որում՝ վիճարկվող կարգավորումներով ոչ թե ուղղակիորեն սահմանափակված է որոշ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 3(107)2022

վարչական ակտերի դեմ անձի դատական պաշտպանության իրավունքի իրացումը, այլ այն իրացնելու համար նախատեսվել է հատուկ պայման:

Ուստի Սահմանադրական դատարանը գտնում է, որ արտադատական պաշտպանության միջոցն սպառելու պարտադիր պայմանի նախատեսումը, այդուհանդերձ, հանդիսանում է դատական պաշտպանության իրավունքի իրացման պարտադիր նախապայման, ինչի արդյունքում անձի համար արդարադատության հասանելիությունն, ըստ էության, «հետաձգվում է» մինչ վարչական կարգով պարտադիր բողոքարկման պահանջի իրացումը, որպիսի պայմաններում անհրաժեշտ է գնահատել վիճարկվող կարգավորումների համապատասխանությունը դատական պաշտպանության իրավունքի սահմանափակման համաչափության սահմանադրական սկզբունքին:

Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Սահմանադրական դատարանը, իր՝ 2020 թվականի հունիսի 18-ի ՍԴՈ-1546 որոշման շրջանակներում անդրադառնալով համաչափության սկզբունքի սահմանադրաիրավական բովանդակությանն ու նշանակությանը, փաստել է, որ «Համաչափության սկզբունքի էությունը մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումների սահմանափակումն է մասնավոր և հանրային շահերի միջև ողջամիտ հավասարակշռության ապահովման միջոցով, և հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումներին ներկայացվող սահմանադրական պահանջների շարքում այն ունի առանձնահատուկ կարևորություն»:

Հիշյալ որոշմամբ Սահմանադրական դատարանը հատկորոշել է նաև համաչափության սկզբունքով պայմանավորված՝ օրենքով հիմնական իրավունքի սահմանափակումներին վերաբերող պահանջները, որոնք են.

«1) սահմանափակման նպատակի լեգիտիմությունը, այն է՝ Սահմանադրությամբ սահմանված լինելը.

2) սահմանափակման համար ընտրված միջոցների՝

ա) պիտանիությունը՝ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար.

բ) անհրաժեշտությունը՝ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 3(107)2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆

գ) համարժեքությունը սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը»:

Նախ, անդրադառնալով վարչական ակտի արտադատական կարգով բողոքարկման՝ որպես դատական պաշտպանության իրավունքի իրացման նախապայմանի սահմանման **նպատակի լեգիտիմության** խնդրին՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այն հետապնդում է անձանց իրավունքների առավել արդյունավետ և սեղմ ժամկետում պաշտպանության, ինչպես նաև ոչ դատական կարգով հանրային ու մասնավոր շահերի հաշտեցման նպատակ: Ընդ որում՝ նման նախապայմանի սահմանման երկրորդային նպատակներից է իրապես նաև դատական համակարգի ծանրաբեռնվածության կրճատումը, ինչը ոչ թե ինքնին միակ և գերակա խնդիր է, այլ իրավունքների արդյունավետ պաշտպանության նպատակին հասնելու միջոցներից մեկը: Հետևաբար՝ արտադատական կարգով բողոքարկման պարտադիրության սահմանմամբ դատարանների ծանրաբեռնվածության նվազեցումը ոչ թե հիմնական նպատակ է, այլ անձի իրավունքների արդյունավետ պաշտպանության հասնելու միջանկյալ նպատակ այն պատճառաբանությամբ, որ դատարանների գերծանրաբեռնվածությունն ուղիղ համեմատական է իրավունքների պաշտպանության արդյունավետության նվազմանը:

Մինևույն ժամանակ, վերոգրյալը չի ենթադրում, որ դատարանների բեռնաթափման նպատակն ինքնին կարող է դրվել ցանկացած իրավունքի սահմանափակման հիմքում և խաթարել դատարանի մատչելիության իրավունքը: Այն յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ենթակա է քննարկման և գնահատման՝ համակարգային իրողությունների ամբողջության լույսի ներքո:

Այս առումով Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների համակարգային վերլուծությունը ևս վկայում է այն մասին, որ որոշ դեպքերում դատարանների ծանրաբեռնվածության նվազեցումը համարվել է իրավաչափ նպատակ և, ավելին, այդ համատեքստում ընդգծվել է նաև վեճերի լուծման այլընտրանքային միջոցների կարևորությունը: Մասնավորապես, Սահմանադրական դատարանն իր՝ 2020 թվականի դեկտեմբերի 8-ի ՍԴՈ-1571 որոշմամբ արձանագրել է. «(...) չի բացառվում վեճերի լուծման այլընտրանքային միջոցների կիրառմամբ դատարանների ծանրաբեռնվածության թեթևացման և/կամ այլ իրավաչափ նպատակ հետապնդող նկատառումներից ելնելով տարբեր արտադատական ինստիտուտների և ընթացակարգերի ներդրումը վեճերի լուծման ներպետական համակարգում: Այդուհանդերձ, դա պետք է իրականացվի դատարանի մատչելիության և արդար դատաքննության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Սահմանադրական դատարանի

իրավական դիրքորոշումների լույսի ներքո: Մասնավորապես, պետության պոզիտիվ պարտականությունն է ապահովել, որ կիրառված սահմանափակումներն այն աստիճանի չսահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Իսկ դրա համար անհրաժեշտ է ապահովել սահմանափակման նպատակի իրավաչափությունը, կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև համաչափության ողջամիտ հարաբերակցությունը»:

Միաժամանակ, 2019 թվականի դեկտեմբերի 17-ի ՍԴՈ-1497 որոշմամբ Սահմանադրական դատարանը գտել է, որ՝ ««Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի վիճարկվող՝ 96-րդ հոդվածով սահմանված նախապայմանի հիմնական նպատակն է, մի կողմից՝ վնասի հատուցման հիմնական իրավունքի իրականացման համար անհրաժեշտ օրենսդրական նախադրյալների ստեղծումը՝ հատկապես արտադատական կարգով այդ իրավունքն առավել սեղմ ժամկետում իրականացնելու համար, մյուս կողմից՝ վարչական մարմինների և դատարանների անհարկի ծանրաբեռնման կանխարգելումը»:

Այսպիսով, արտադատական կարգով իրավունքների պաշտպանության միջոցների սպառման պահանջի՝ որպես դատարան դիմելու նախապայմանի օրենսդրորեն սահմանելու նպատակը, Սահմանադրական դատարանի գնահատմամբ, իրավաչափ է, քանի որ դրա հիմնական խնդիրը, մի կողմից, իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ օրենսդրական նախադրյալների ստեղծումն է, հատկապես՝ արտադատական կարգով այդ իրավունքն առավել սեղմ ժամկետում և նվազ ռեսուրսներով իրականացնելու համար, մյուս կողմից՝ ոչ դատական կարգով հանրային ու մասնավոր շահերի հաշտեցումն է, ինչպես նաև արդարադատության պատշաճ իրականացումն ապահովելու համար դատարանների անհարկի ծանրաբեռնվածության կանխարգելումը:

Հաջորդիվ անդրադառնալով վիճարկվող կարգավորումների նախատեսմամբ օրենսդրի կողմից նախանշված նպատակներին հասնելու համար **ընտրված միջոցների պիտանիությանը՝** Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վարչական մարմինների ակտերի, գործողության կամ անգործության մինչդատական կարգով բողոքարկումը կարող է ընկալվել որպես իրավունքների պաշտպանության արագ և արդյունավետ կառուցակարգ, քանի որ, ի համեմատություն դատական պաշտպանության, այդ կառուցակարգի իրականացման ժամանակ բացակայում է բողոքին ներկայացվող խիստ ֆորմալիզացված (ձևականացված) ձևի պահանջը, և կարող է սահմանվել բողոքի քննարկման արդյունքների ամփոփ կարգ,

ինչպես նաև բացակայում է բողոք ներկայացնելու համար պետական տուրք կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պահանջը:

Վերոգրյալից բխում է, որ որոշ վարչական ակտերի պարտադիր բողոքարկման սահմանմամբ փորձ է արվում բարձրացնել այդ ակտերի հասցեատերերի իրավունքների պաշտպանության արդյունավետությունը՝ հաշվի առնելով արտադատական կարգով իրավունքի պաշտպանությունը բնութագրող դրական տարրերը: Բացի դրանից, մինչդատական փուլում անձանց իրավունքների պաշտպանությունը նպաստում է «դատարաններում գործերի կուտակման» կանխարգելմանը՝ դրանով իսկ ապահովելով արդարադատության պատշաճ իրականացումը:

Միևնույն ժամանակ, արտադատական կարգով իրավունքի պաշտպանության կառուցակարգի սահմանումը բխում է նաև հանրային շահից այն հաշվառմամբ, որ անհատի ու պետության միջև առաջացած վեճը հնարավոր կլինի լուծել ոչ դատական ձևաչափով՝ խուսափելով չափազանց բարդ ընթացակարգերից, նպաստելով անհատի և պետական մարմինների փոխգործակցությանը, ինչպես նաև հնարավորություն տալով վարչական մարմիններին ինքնուրույն վերացնել «իրենց սխալները»: Ավելին, այն հնարավորություն է ընձեռում զերծ մնալ պետական ռեսուրսների անտեղի վատնումից: Ընդ որում՝ վարչական կարգով բողոքարկման համար անձի կողմից ևս ենթադրվում է ռեսուրսների նվազ վատնում՝ ի տարբերություն դատական պաշտպանության իրավունքի իրացման դեպքերի:

Այնուհետև, անդրադառնալով անձի՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման համար ընտրված արտադատական պաշտպանության միջոցն սպառած լինելու պայման նախատեսելու **անհրաժեշտությանը**՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում օրենսդիրն արտադատական կարգով բողոքարկման պարտադիր պահանջ է սահմանել միայն որոշ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով, որոնք սահմանված են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 287-րդ հոդվածով, և որոնց համակարգային վերլուծությունը վկայում է, որ դրանք առավելապես վերաբերելի են ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրության պահպանմանը, և այդպիսի գործերի քննությունը վերապահված է Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը (նույն օրենսգրքի 224-րդ հոդված):

Սահմանադրական դատարանը գտնում է, որ տրամաբանորեն ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրության խախտումներով գործերն անհամեմատ մեծ թիվ են կազմում, ինչը կարող է հանգեցնել վարչական դատարաններում գործերի անհարկի կուտակման, որի արդյունքում նվազում է արդարադատության

պատշաճ իրականացման հնարավորությունը: Ընդ որում՝ խնդիրը ոչ միայն գործերի կուտակումն է, այլ նաև պետական ռեսուրսների մեծածավալ օգտագործումը¹:

Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրության խախտումների վերաբերյալ դատական գործերի մեծաքանակությունը վկայում է նաև այն մասին, որ անձանց մեծամասնությունն իրավունքի պաշտպանության դատական ծնն առավել նախընտրելի և «վստահելի» է համարում՝ չիրացնելով վարչական կարգով բողոքարկման հնարավորությունը: Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ հանրային իշխանության նկատմամբ վստահության պակասն ինքնին չի կարող նսեմացնել վերջիններիս գործունեության արդյունավետությունը:

Նման պայմաններում Օրենսդիրը ողջամտորեն «սահմանափակել է» անձանց դատական պաշտպանության իրավունքը՝ որոշ վարչական գործերով արտադատական կարգով պաշտպանության միջոցներն սպառելու պայմանի տեսքով՝ հետապնդելով վկայակոչված խնդիրները լուծելու նպատակ, մասնավորապես՝ ոչ միայն դատարանների ծանրաբեռնվածության նվազեցումը, որի արդյունքում երաշխավորվում է նաև արդար դատաքննության տարր հանդիսացող ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքը, այլ նաև նվազ ռեսուրսների կիրառմամբ վեճի լուծումը, ինչը նպաստում է նաև հանրության մոտ պետական մարմինների նկատմամբ վստահության բարձրացմանը:

Անդրադառնալով դատական պաշտպանության իրավունքի իրացման նախապայման հանդիսացող՝ վարչական կարգով բողոքարկման **պարտադիրության արդյունավետությանը**²՝ մի կողմից հարկ է նկատել, որ

¹ Այս առումով ՀՀ բարձրագույն դատական խորհուրդն իր՝ 2019 թվականի տարեկան հաղորդման մեջ նշել է. «(...) բազմաթիվ են այն գործերը, որոնցով վիճարկվող վարչական ակտերով նշանակված տուգանքների գումարները հիմնականում կազմում են 5.000 ՀՀ դրամ: Դեռ ավելին, պետական մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց ակտերն անվավեր ճանաչելու հետ կապված իրավահարաբերությունների վերաբերյալ դատական գործերի 91.5 տոկոս հայցվորները ֆիզիկական անձինք են ընդդեմ ՀՀ ճանապարհային ոստիկանության (հայցագիրը հիմնականում 5.000 ՀՀ դրամ է), ուլքեր, սակայն, նշված 82 գործերի շրջանակներում ազատված են պետական տուրք վճարելու պարտավորությունից, մինչդեռ, ՀՀ ճանապարհային ոստիկանությունը՝ դատարանի կողմից այդ հայցերի բավարարման դեպքում, պարտավորվում է վճարել և պետական տուրքի գումարը՝ ըստ օրենքի 4000 ՀՀ դրամը, և նշված գործերի շրջանակներում պարտավորվում է փոխհատուցել ֆիզիկական անձի ներկայացուցչի՝ փաստաբանի, դատարանի կողմից սահմանված ողջամիտ վարձատրությունը, որն ընտրանքային եղանակով ուսումնասիրված գործերի շրջանակներում կազմում է միջինը 15000 ՀՀ դրամ», էջ 81-82:

վարչական կարգով պարտադիր բողոքարկման պայմանի նախատեսման դեպքում օրենսդիրն ունի պարտականություն՝ ապահովելու այդպիսի պաշտպանության միջոցի արդյունավետությունը՝ անձի դատական պաշտպանության իրավունքի էությունը խաթարելուց զերծ մնալու նպատակով: Այսինքն՝ սկզբունքորեն անթույլատրելի է պարտադիր վարչական բողոքարկման այնպիսի միջոցի գոյությունը, որին դիմելը հանգեցնում է այսպես կոչված «դեպի վատթարացում շրջադարձի անթույլատրելիության» (Reformatio in peius) սկզբունքի խախտման:

Վերոգրյալով պայմանավորված՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքի արդյունավետ իրականացման շրջանակում (Սահմանադրության 50-րդ հոդված) սահմանվում են վարչական մարմինների առջև մասնավոր անձանց իրավական պաշտպանության արդյունավետության հատկանիշներն ու չափանիշները՝ դրանով իսկ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը բարձրացնելով մեկ այլ՝ որակապես նոր մակարդակի: Ընդ որում՝ արդար դատաքննության իրավունքի արդյունավետությունը որոշակիորեն կախված է նաև մինչդատական, նախնական (ex-ante) պաշտպանությունից, որն իրացվում է պատշաճ վարչարարության իրավունքի ընթացակարգային երաշխիքների պահպանման միջոցով՝ դրանով կանխորոշելով վարչական մարմինների գործունեության արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ ուղենիշները:

Բացի դրանից, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի ինչպես վիճարկվող (հոդվ. 287), այնպես էլ համակարգային առումով փոխկապակցված այլ կարգավորումների (հոդվ. 288, 291, 292 և այլն) համակարգային տրամաբանությունից հետևում է, որ օրենսդրությամբ նախատեսված են վարչական բողոքարկման արդյունավետությանն ուղղված այլ ընթացակարգային անհրաժեշտ երաշխիքներ, մասնավորապես՝

ա) բողոքարկման վարույթի ժամկետներն օրենքով հստակորեն կանխորոշված լինելը՝ ի տարբերություն դատական քննության ժամկետների,

բ) վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատը և բողոքն իրավազոր մարմինների (պաշտոնատար անձանց) կողմից դրանց ստացման օրվանից երեսնօրյա ժամկետում քննելը, եթե օրենքով այլ բան սահմանված չէ,

գ) վարչական մարմնի կողմից գանգատը ողջ ծավալով քննելը՝ ստուգելով ոչ միայն ակտի օրինականությունը, այլ նաև հիմնավորվածությունը,

դ) վարչական կարգով էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի միջոցով՝ առավել պարզ եղանակով և սեղմ ժամկետում բողոքարկումն իրականացնելը և այլն:

Սահմանադրական դատարանը նաև արձանագրում է, որ վարչական կարգով բողոքարկման համար սահմանված չէ որևէ տեսակի պետական տուրք կամ պարտադիր այլ վճար՝ ի տարբերություն դատարան ներկայացվող հայցադիմումների համար վճարվող պետական տուրքի գումարների: Այս առումով նաև վիճարկվող կարգավորումը նպաստում է դատական ռեսուրսների խնայողությանը: Բացի դրանից, վարչական կարգով բողոքարկման վարույթի վարչական ծախսերը հիմնականում կրում է վարույթն իրականացնող վարչական մարմինը, և պահանջը չբավարարվելու դեպքում ծախսերի փոխհատուցման պարտականությունը չի դրվում անձի վրա:

Մինևույն ժամանակ, Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ վարչական կարգով բողոքարկման վարույթում դիմումին ներկայացվող խիստ ֆորմալիզացված (ձևականացված) պահանջները բացակայում են («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդված)՝ ի տարբերություն հայցադիմումներին ներկայացվող պահանջների (ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդված):

Բացի դրանից, վիճարկման ենթակա ակտը վարչական կարգով կարող է գանգատարկվել ոչ միայն այն ընդունած վարչական մարմին, այլ նաև վարչական մարմնի վերադաս վարչական մարմին կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ իրավասու վարչական մարմին, ինչը քննարկվող դեպքում լրացուցիչ երաշխիք է անձի համար ընտրելու՝ իր բողոքն ակտը կայացրած վարչական մարմին ներկայացնել, թե՛ վերադաս վարչական մարմին:

Այսպիսով, ընդհանրացնելով **Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վարչական կարգով մինչդատական պաշտպանության միջոցի սպառման պարտադիր նախապայմանի հետ միաժամանակ առկա են նաև մի շարք օրենսդրական երաշխիքներ, որոնք ընդգծում են այդ միջոցի արդյունավետությունը, ինչը, սակայն, չի բացառում օրենսդրի շարունակական պարտականությունը կատարելագործելու և նպաստելու խնդրո առարկա ինստիտուտի զարգացմանը:**

Ինչ վերաբերում է վիճարկվող իրավակարգավորումներով անձի դատական պաշտպանության իրավունքի սահմանափակման իրավաչափության գնահատման խնդրին, Սահմանադրական դատարանը հարկ է համարում փաստել, որ օրենսդրի կողմից ընտրված միջոցը համարժեք է սահմանափակվող իրավունքին այն հաշվառմամբ, որ վիճարկվող

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 3(107)2022
 ՍԵՆԵԿԱՆԿ
 195

կարգավորումներով անձը ոչ թե զրկվում է դատարանի մատչելիության իրավունքից, այլ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 287-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական գանգատարկումից հետո կարող է ողջ ծավալով իրացնել իր դատական պաշտպանության իրավունքը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ վարչական կարգով բողոքարկումը՝ իբրև դատական պաշտպանության իրավունքի իրացման նախապայման, համաչափորեն է սահմանափակում անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը՝ ապահովելով այլընտրանքային պաշտպանության միջոցի արդյունավետության համար անհրաժեշտ օրենսդրական նախադրյալները:

Միևնույն ժամանակ, պատշաճ վարչարարության իրավունքի երաշխավորման, ինչպես նաև անձի՝ դատարանի մատչելիության իրավունքի արդյունավետ իրացման համար օրենսդիրը չպետք է սահմանափակվի սոսկ առկա կարգավորումներով և պարտականություն ունի պարբերաբար ձեռնարկելու ողջամիտ քայլեր և անհրաժեշտ միջոցներ՝ վարչական կարգով բողոքարկման արդյունավետությունը բարձրացնելու համար՝ հաշվի առնելով նաև վարչական մարմինների գործունեության փաստացի արդյունավետությունը: Ասվածը վերաբերելի է նաև վարչական մարմիններին, որոնք ի պաշտոնե իրենց գործունեության ընթացքում պետք է ձեռնամուխ լինեն անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանության երաշխավորմանը:

5.4. Անդրադառնալով վիճարկվող իրավակարգավորումներով արդար դատաքննության իրավունքի խախտման վերաբերյալ դիմողի փաստարկներին՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող կարգավորումներով սահմանափակված է անձանց՝ դատարանի մատչելիության իրավունքը, հետևաբար՝ տվյալ դեպքում պարտադիր վարչական գանգատարկման նախապայմանի սահմանումն արդար դատաքննության իրավունքի պաշտպանության առարկայական ոլորտում չի գտնվում, ուստի՝ վիճարկվող կարգավորումներով արդար դատաքննության իրավունքին հակասության մասին խոսք լինել չի կարող:

Բավարար չափով հիմնավոր չեն նաև դիմողի փաստարկները՝ վիճարկվող կարգավորումներով Սահմանադրության 3-րդ հոդվածով սահմանված՝ մարդու իրավունքները հարգելու և պաշտպանելու հանրային իշխանության պարտականությանը հակասելու մասով: Մասնավորապես՝ Սահմանադրական դատարանն իր՝ 2021 թվականի հոկտեմբերի 5-ի ՍԴՈ-1612 որոշմամբ արձանագրել է, որ՝ «(...) Սահմանադրությունը, մարդուն ճանաչելով բարձրագույն արժեք՝ կանխորոշել է պետության

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 3(107)2022 ՏԵՂԵԿՎՈՐ

պարտականությունը՝ հարգել, ապահովել և պաշտպանել մարդու իրավունքները և ազատությունները (հոդվ. 3): Այս հիմնարար սկզբունքի հետ անխզելիորեն կապված է մարդու արժանապատվության անօտարելի լինելու սկզբունքը»:

Տվյալ դեպքում դիմողի կողմից վիճարկվող նորմերով ներդրվել է առանձին խումբ վարչական ակտերի պարտադիր կարգով գանգատարկման ինստիտուտը, որն, ինչպես վերը նշվեց, հանդես է գալիս իբրև դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացման պայման և համապատասխանում է համաչափության սկզբունքի սահմանադրաիրավական բովանդակությանը, ուստի՝ դատարանի մատչելիության իրավունքը հարգելու և պաշտպանելու՝ հանրային իշխանության պարտականությունը պատշաճ չիրացնելու վերաբերյալ դիմողի պնդումը հիմնավոր և փաստարկված չէ:

5.5. Այսպիսով ընդհանրացնելով բերված հիմնավորումներն ու եզրահանգումները՝ **Սահմանադրական դատարանը կարևորում է հետևյալ արձանագրումը, որ վեճի առարկա իրավակարգավորումներում օրենսդիրը, նախնական նշանակություն հաղորդելով վարչական ակտի բողոքարկման հատկապես արտադատական կարգին, ամենևին էլ չի բացառել դատական պաշտպանության իրավունքը, այլ վերջինիս իրացման համար սահմանել է որոշակի նախապայման, ինչը միտված չէ այդ իրավունքի արգելափակմանը:** Հետևաբար՝ ինքնին հիշյալ իրավակարգավորումը միտված է, նախ, հաստատելու ողջամիտ հարաբերակցություն՝ վարչական ակտի ընդունմամբ պայմանավորված իրավունքի պաշտպանությունն արտադատական (վարչական) և դատական կարգով իրացնելու երկու իրավական ընթացակարգերի (եղանակների) միջև, ընդ որում՝ վարչական ակտի արտադատական բողոքարկման շրջանակներում ապահովելով հանրային իշխանության իրավասու մարմինների առավել ընդգրկվածություն և պատասխանատվության բարձրացում, ինչպես նաև արդարադատությանն օբյեկտիվորեն տրամադրվող ժամանակի և ռեսուրսների խնայողություն, ինչը համահունչ է նաև Սահմանադրության 75-րդ հոդվածի պահանջներին:

Հետևաբար, **Սահմանադրական դատարանը գտնում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վիճարկվող իրավակարգավորումները սահմանադրական են միայն հետապնդվող հիշյալ իրավական նպատակների շրջանակում, և սահմանադրաիրավական նման նախապայմանի դեպքում իրավունքի պաշտպանության առաջարկվող միջոցները կլինեն պիտանի ու անհրաժեշտ՝ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար:**

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 170-րդ հոդվածով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1.2-րդ մասը և 79-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 287-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

31 մայիսի 2022 թվականի
ՍԴՈ-1654

3(107)2022



ՏԵՂԵԿՎՊԻՐ



ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ
ՎՐԱ՝ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ
9-ՐԴ ԵՎ 9.1-ԻՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

1 հուլիսի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի՝ Մարդու իրավունքների պաշտպանի, գործով որպես պատասխանող ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ Ա. Լալայանի, համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի և 68-րդ հոդվածի 2-րդ մասի, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ և 9.1-ին հոդվածների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

199 ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴՅՄԵԿԵԿՏՐԱՆ 3(107)/2022

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (այսուհետ՝ նաև Օրենք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1997 թվականի դեկտեմբերի 27-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի հունվարի 10-ին և ուժի մեջ է մտել 1998 թվականի հունվարի 11-ին:

Օրենքի «Դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ), գործում առկա լուսանկարների (լուսաժապավենների), ձայնագրությունների, տեսագրությունների և դրանց էլեկտրոնային կրիչների բնօրինակից պատճենահանված կրիչ և դատական նիստի համակարգչային ձայնագրման կրկնօրինակ տալու համար պետական տուրքի դրույքաչափերը» վերտառությամբ 9-րդ հոդվածով սահմանվում են.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարաններ տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար գանձվող պետական տուրքի դրույքաչափերը,

2. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարաններ տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար գանձվող պետական տուրքի դրույքաչափերը,

3. «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով դատարաններ տրվող դիմումների, դատարանի վճիռների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար գանձվող պետական տուրքի դրույքաչափերը,

4. Դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ), գործում առկա լուսանկարների (լուսաժապավենների), ձայնագրությունների, տեսագրությունների և դրանց էլեկտրոնային կրիչների բնօրինակից պատճենահանված կրիչներ և դատական նիստի համակարգչային ձայնագրման կրկնօրինակ տալու համար գանձվող պետական տուրքի դրույքաչափերը,

5. Արտարժույթով պահանջ ներկայացվելու կամ պահանջի վիճարկման դեպքում պետական տուրքի հաշվարկման կարգը:

Օրենքի «Սահմանադրական դատարան տրվող անհատական դիմումների, Սահմանադրական դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար պետական տուրքի դրույքաչափերը» վերտառությամբ 9.1-ին հոդվածով սահմանվում են Սահմանադրական դատարանի դիմելու, ինչպես նաև Սահմանադրական դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար գանձվող պետական տուրքի դրույքաչափերը:

Օրենքի 9-րդ հոդվածը լրացվել, խմբագրվել և/կամ փոփոխության է ենթարկվել 28.12.1998թ. ՀՕ-277, 12.10.1999թ. ՀՕ-4, 13.12.2000թ. ՀՕ-123, 11.09.2001թ. ՀՕ-219, 29.05.2002թ. ՀՕ-358-Ն, 07.07.2005թ. ՀՕ-148-Ն, 25.12.2006թ. ՀՕ-60-Ն, 28.11.2007թ. ՀՕ-282-Ն, 09.02.2018թ. ՀՕ-111-Ն, 09.07.2019թ. ՀՕ-133-Ն, 19.04.2021թ. ՀՕ-177-Ն, 21.01.2022թ. ՀՕ-6-Ն օրենքներով, 19.04.2021թ. ՀՕ-177-Ն օրենքն ունի անցումային դրույթ: Նշված հոդվածը 21.01.2022թ. ՀՕ-6-Ն օրենքի փոփոխությամբ ուժի մեջ կմտնի նույն օրենքի պաշտոնական հրատարակման օրվան հաջորդող չորրորդ ամսվա մեկից¹:

Օրենքի 9.1-ին հոդվածը լրացվել է 17.01.2018թ. ՀՕ-45-Ն օրենքով, փոփոխության ենթարկվել՝ 19.04.2021թ. ՀՕ-177-Ն օրենքով, որն ունի անցումային դրույթ:

Գործի քննության առիթը Մարդու իրավունքների պաշտպանի (այսուհետ՝ նաև դիմող)՝ 2021 թվականի դեկտեմբերի 3-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը, ինչպես նաև վերլուծելով Օրենքի համապատասխան դրույթները՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**:

1. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը հայտնում է, որ Ազգային ժողովի 2021 թվականի ապրիլի 19-ի նիստում երկրորդ ընթերցմամբ ամբողջությամբ ընդունվել է «Պետական տուրքի մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, ինչի արդյունքում անձի դատական պաշտպանության իրավունքի իրացման առնչությամբ սահմանված պետական տուրքերի դրույքաչափերն զգալիորեն բարձրացվել են (2-5 անգամ, որոշ դեպքերում՝ 10 անգամ): Բացի դրանից, պետական տուրքի գծով որոշ արտոնություններ վերացվել են, մասնավորապես՝ ֆիզիկական անձինք և ոչ առևտրային կազմակերպություններն այլևս պետական տուրքի վճարումից չեն ազատվում վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունած որոշման դեմ բողոքներով, գործը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու մասին դատարանի որոշումը բեկանելու, հայցերի ապահովման կամ ապահովման մի տեսակը մեկ այլ տեսակով փոխարինելու վերաբերյալ հայցերով և այլ դեպքերում:

Ըստ դիմողի՝ պետական տուրքի նոր սահմանված դրույքաչափերն առաջացնում են անձանց՝ դատարանի մատչելիության իրավունքի ոչ համաչափ սահմանափակման մտահոգություններ՝ պայմանավորված նրանով, որ օրենսդիրը հասարակության սոցիալական դրությունը հաշվի չի առել:

¹ Օրենքում նշված լրացումները կատարվել են սույն գործով դիմումը Սահմանադրական դատարան մուտքագրելուն հաջորդող ժամանակահատվածում, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=160062>

Որպես վիճարկվող նորմի հակասահմանադրականության վերաբերյալ փաստարկ՝ դիմողը վկայակոչում է Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներն ու դիմումները՝ նշելով, որ առաջնահերթ մտահոգությունները բարձրացվել են փաստաբանների կողմից: Ընդ որում՝ այս առնչությամբ դիմողի դիրքորոշումները դեռևս ներկայացվել են օրենքի նախագծային փուլում:

Ըստ դիմողի՝ պետական տուրքի դրույքաչափերի բարձրացման օրենսդրական հիմնավորումներն անընդունելի են: Մասնավորապես՝ անդրադառնալով նրան, որ նվազագույն աշխատավարձի ցուցանիշը փոփոխվել է 2003 թվականի դրությամբ սահմանված տասներեք հազար ՀՀ դրամից՝ 2020 թվականի դրությամբ վերաճելով վաթսունութ հազար ՀՀ դրամի՝ դիմողը նկատում է, որ նշված աճին զուգահեռ բարձրացել են նաև սպառողական ապրանքների, ծառայությունների և այլ շուկայական գները՝ կազմելով 94.1%: Ընդ որում՝ այս աճը որոշ ապրանքների և ծառայությունների մասով գրանցվել է նաև 2020 թվականին՝ 2019 թվականի համեմատությամբ:

Դատարանների կողմից հավաքագրված պետական տուրքի գումարների համեմատ՝ արդարադատության իրականացման ծախսերը մոտ չորս անգամ գերազանցելու վերաբերյալ օրենքի նախագծի ընդունման հիմնավորումը, դիմողի գնահատմամբ, չի բխում դատարանի մատչելիության հիմնարար իրավունքի էությունից՝ նկատի ունենալով, որ արդարադատության իրականացման ծախսերը չպետք է հիմք հանդիսանան անձանց իրավունքները սահմանափակող կառուցակարգեր նախատեսելու համար: Ավելին, յուրաքանչյուր տարի ՀՀ պետական բյուջեի մասին ՀՀ օրենքներով դատարանների բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով գումար է հատկացվում Դատական դեպարտամենտին, հետևաբար՝ դրանց գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ ծախսերի վճարման ողջ բեռը միայն դատավարության մասնակիցների վրա դնելն իրավաչափ չէ:

Ավելին, դիմողը գտնում է, որ օրենսդրությամբ նշված ծախսերն էապես նվազեցնող այլ կառուցակարգեր են ներդրվել, ինչպիսին է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ դատական ծանուցագրերը էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկելու կառուցակարգը:

Դիմողի կարծիքով՝ պետական տուրքի գծով մի շարք արտոնություններ վերացվել են առանց բավարար հիմնավորումների՝ վատթարացնող ազդեցություն ունենալով անձանց վրա: Անդրադառնալով վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով դատարան դիմելու համար պետական տուրքի վճարումից ազատման արտոնությունը հանելու օրենսդրական հիմնավորումներին՝ դիմողն այն բավարար չի համարում և արձանագրում է, որ ոչ պատշաճ վարչարարության հետևանքով կայացված ակտերի բողոքարկման մեծաքանակությունը պետության առջև ծառայած խնդիրների շարքում է, և անձինք չպետք է կրեն դրա բացասական բեռը: Բացի դրանից,

անձինք, փաստացի գնահատելով դատական կարգով բողոքարկման հեռանկարները, խուսափում են դատական պաշտպանությունից պետական տուրքի բարձր դրույքաչափի պատճառով: Արտոնությունները նվազեցնելու հետ կապված դիմողի մտահոգությունները վերաբերելի են նաև հարկադիր կատարողի գործողությունների դեմ դատական կարգով բողոքարկման դեպքերին, երբ նախկինում այս խումբ գործերով անձինք ազատված էին պետական տուրքի վճարումից:

Դիմողը, վկայակոչելով և վերլուծելով Սահմանադրական դատարանի 10.03.2016թ. ՍԴՈ-1257, 03.03.2015թ. ՍԴՈ-1192, 10.07.2018թ. ՍԴՈ-1423 որոշումներում, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխան վճիռներում դատարանի մատչելիության իրավունքի և պետական տուրքի վերաբերությամբ արտահայտված դիրքորոշումները, եզրակացնում է, որ Օրենքով սահմանված պետական տուրքի դրույքաչափերի գործնական կիրառությունը հանգեցնում է դատական պաշտպանության իրավունքի անհիմն միջամտության և սահմանափակման:

Համաչափության սկզբունքի վերաբերյալ Սահմանադրական դատարանի համապատասխան որոշումներ վկայակոչելով՝ դիմողը գտնում է, որ պետական տուրքի դրույքաչափերը փոփոխելու օրենքի «(...) ընդունման հիմնավորումներում պետք է առնվազն բավարար հիմնավորումներ ներկայացվեին առ այն, որ՝

- պետական տուրքի սահմանված նման բարձր դրույքաչափերը պիտանի և անհրաժեշտ են օրենքով հետապնդած նպատակին,
- պետական տուրքի նման բարձր դրույքաչափեր սահմանելն ամբողջությամբ հնարավորություն է տալիս հասնելու հետապնդվող նպատակին և այդ նպատակի հետ գտնվում է համարժեք հարաբերակցության մեջ,
- օրենքի նպատակը չի կարող իրացվել հավասարապես պիտանի և ավելի մեղմ միջոցով, քան պետական տուրքի նման բարձր դրույքաչափեր սահմանելն է,
- պետական տուրքի բարձր դրույքաչափեր սահմանելը չի շրջանցում օրենքի հետապնդած նպատակին նվազագույն ջանքերի գործադրմամբ այլ միջոցներով հասնելու ողջամիտ հնարավորությունը»: Այս առնչությամբ դիմողը կասկածի տակ է դնում Օրենքի վիճարկվող դրույթների հետապնդած նպատակի իրավաչափությունը՝ փաստելով, որ երկրի սոցիալ-տնտեսական ցուցանիշների բարձրացումը չի կարող պայմանավորել պետական տուրքի դրույքաչափերի բարձրացումը, իսկ ակնհայտ անհիմն դիմումների նախականխման նպատակն ինքնին առաջացնում է դատարանի մատչելիության իրավունքի անհամաչափ սահմանափակում: Արդյունքում դիմողը եզրահանգում է, որ վիճարկվող կարգավորումները չեն համապատասխանում Սահմանադրության 61, 78 և 81-րդ հոդվածների պահանջներին:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ 3(107)2022
◆ ՏԵՂԵԿԱԿԻ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ◆ 3(107)2022

2. Պատասխանողի դիրքորոշումները

Ազգային ժողովը (այսուհետ՝ նաև պատասխանող), վկայակոչելով Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածները, այս առնչությամբ Սահմանադրական դատարանի համապատասխան որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումները, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխան ակտերը, գտնում է, որ դատարանի մատչելիության իրավունքը պետք է լինի գործնական և արդյունավետ, ինչը, սակայն, չի բացառում ներպետական օրենսդրությամբ որոշակի կանոնների սահմանումը, որոնք ուղղված են ապահովելու արդարադատության պատշաճ իրականացումը:

Պետական տուրքի էությունը, բովանդակությունն ու այն սահմանելու նպատակը բացահայտելու համար պատասխանողը մատնանշել է Օրենքի 2, 3 և 7-րդ հոդվածները, Սահմանադրական դատարանի 25.05.2010թ. ՍԴՈ-890 որոշումը:

Ըստ պատասխանողի՝ Օրենքի վիճարկվող դրույթների փոփոխությունը պայմանավորված է եղել երկրի սոցիալ-տնտեսական ցուցանիշներով և արդարադատության իրականացման ծախսերի աճով: Մասնավորապես՝ փաստելով, որ Օրենքում 1999 թվականից ի վեր խնդրո առարկա ոլորտում պետական տուրքի դրույքաչափերը չեն փոփոխվել՝ պատասխանողը գտնում է, որ այն չի արտացոլում երկրի իրական սոցիալ-տնտեսական վիճակը: Բացի դրանից, վարչական արդարադատության ոլորտում փորձ է արվել ոչ միանման հանգամանքներով գործերի նկատմամբ դրսևորել տարբերակված մոտեցում՝ համապատասխան պետական տուրքի դրույքաչափերի փոփոխության տեսքով: Փոփոխություններից անմասն չեն մնացել նաև սնանկության դիմումների համար վճարվող պետական տուրքերի դրույքաչափերը՝ նկատի ունենալով, որ սնանկության վարույթը վերաճել էր մատչելի բռնագանձման վարույթի:

Պատասխանողը նշում է, որ վիճարկվող նորմերով սահմանվել են նաև պետական տուրքի առավելագույն դրույքաչափեր՝ ի տարբերություն օրենքի նախկինում գործող խմբագրության: Բացի դրանից, պետական տուրքի գծով արտոնությունների համակարգի, վերադարձի հիմքերի և այլ հարցերի առնչությամբ կատարվել են համապատասխան բարեփոխումներ:

Արդյունքում, պատասխանողը եզրահանգում է, որ պետական տուրք վճարելու պարտականության սահմանումը հետապնդում է լեգիտիմ նպատակ, մասնավորապես՝ փոխհատուցել պետության՝ արդարադատության իրականացման հետ կապված ծախսերը, կանխարգելել ակնհայտ անհիմն հայցադիմումների հոսքը և դատարան դիմելու իրավունքի չարաշահումը: Պատասխանողի պնդմամբ՝ պետական տուրքի դրույքաչափերի բարձրացումը համաչափ է նվազագույն աշխատավարձի ցուցանիշին և համապատասխանում է համաչափության սահմանադրաիրավական սկզբունքին:

3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սույն գործով վիճարկվող դրույթների սահմանադրականությունը որոշելիս Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, անդրադառնալ հետևյալ հարցադրմանը.

- արդյո՞ք վիճարկվող դրույթներով սահմանված կարգավորումները հանգեցնում են անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի ոչ համաչափ սահմանափակման:

Սահմանադրական դատարանը վիճարկվող իրավանորմերի սահմանադրականությունը քննում է դիմողի կողմից բարձրացված հիմքերի շրջանակում:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրական դատարանն իր բազմաթիվ որոշումներում անդրադարձել է դատական պաշտպանության հիմնարար իրավունքին՝ բացահայտելով դրա սահմանադրաիրավական բովանդակությունն ու ընդգծելով առանձնակի կարևորությունը հիմնական իրավունքների և ազատությունների երաշխավորման ու պաշտպանության գործում: Իր մի քանի որոշումներում (ՍԴՈ-690, 719, 733, 765, 780, 849, 873, 890, 918, 922, 936, 1037, 1052, 1062, 1114, 1115, 1190, 1191, 1192, 1196, 1197, 1220, 1222, 1231, 1249, 1254, 1257, 1263, 1265, 1268, 1275, 1289, 1290, 1293, 1395) արդար դատաքննության և դատական բողոքարկման, դատարանի մատչելիության վերաբերյալ արտահայտած դիրքորոշումները Սահմանադրական դատարանը վերահաստատել և ընդհանրացրել է 19.06.2018թ. ՍԴՈ-1420 որոշմամբ՝ արձանագրելով, որ՝

«- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրկել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ,

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,

- դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը,

- դատարան դիմելիս անձը չպետք է ծանրաբեռնվի ավելորդ ծևական պահանջներով,

- իրավական որոշակիության ապահովման պահանջից ելնելով՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար անհրաժեշտ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԻՎԱԿԻ 3(107)2022

որոշակի իմպերատիվ նախապայմանի առկայությունն ինքնին չի կարող դիտվել որպես ՀՀ Սահմանադրությանը հակասող: Այլ հարց է, որ նման նախապայմանը պետք է լինի իրագործելի, ողջամիտ և իր ծանրությամբ չհանգեցնի իրավունքի էության խախտման»:

Դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ իրավական համարժեք դիրքորոշումներ է արտահայտել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև ՄԻԵԴ), որոնք, ըստ էության, հանգում են հետևյալին.

- «Դատարանի իրավունքը», որի մի մասն է կազմում մատչելիության իրավունքը, բացարձակ չէ. այն կարող է ենթարկվել անուղղակի սահմանափակումների, մասնավորապես՝ բողոքի ընդունելիության պայմանների առնչությամբ, քանի որ դրա բնույթից ելնելով՝ պահանջվում է պետության կողմից իրականացվող կարգավորում, որին այս առնչությամբ վերապահված է հայեցողական լիազորությունների որոշակի շրջանակ (Mamikonyan v. Armenia, Application no. 25083/05, 16.03.2010, § 25, Scholz AG v. Armenia, Application no. 16528/10, 24.01.2019, § 57),

- դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է հետապնդի իրավաչափ նպատակ, և կիրառված միջոցների ու հետապնդվող նպատակի միջև պետք է առկա լինի համաչափության ողջամիտ հարաբերակցություն, հակառակ պարագայում այդպիսի սահմանափակումները չեն համապատասխանի «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին (Khalfaoui v. France, Application no. 34791/97, 14.12.1999, FINAL 14.03.2000, § 36, Hirschhorn v. Romania, Application no. 29294/02, 26.07.2007, § 50,

- անձի՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճան լինեն, որ վնաս հասցնեն այդ իրավունքի բուն էությանը (Luordo v. Italy, Application no. 32190/96, 17.07.2003, FINAL 17.10.2003, § 85, Staroszczyk v. Poland, Application no. 59519/00, 22.03.2007, FINAL 09.07.2007, § 124, Stanev v. Bulgaria, Application no. 36760/06, 17.01.2012, § 230),

- ընթացակարգային նորմերը կիրառելիս ներպետական դատարանները պետք է խուսափեն և՛ չափազանցված ձևականությունից, որը կազդի ընթացակարգի արդարացիության վրա, և՛ չափազանցված ճկունությունից, որը կհանգեցնի օրենքով սահմանված ընթացակարգային պահանջների վերացմանը (Walchli v. France, Application no. 35787/03, 26.07.2007, FINAL 26.10.2007, § 29, Peca v. Greece (no. 2), Application no. 33067/08, 10.06.2010, FINAL 10.09.2010, § 30),

- դատարանի մատչելիության իրավունքը խախտվում է, երբ սահմանված կարգավորումները դադարում են ծառայել իրավական որոշակիության և

արդարադատության պատշաճ կազմակերպման նպատակներին և վերածվում են իրավասու դատարանի կողմից գործն ըստ էության քննության առնելու խոչընդոտի (Efstathiou and others v. Greece, Application no. 36998/02, 27.07.2006, FINAL 11.12.2006, § 24, Vamvakas v. Greece, Application no. 36970/06, 16.10.2008, FINAL 16.01.2009, § 26, Louli Georgopoulou v. Greece, Application no. 22756/09, 16.03.2017, FINAL 16.06.2017, § 39):

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է նաև պետական տուրք վճարելու պարտականության և դատարանի մատչելիության իրավունքի հարաբերակցությանը: Մասնավորապես.

Սահմանադրական դատարանը, 2010 թվականի մայիսի 25-ի ՍԴՈ-890 որոշման շրջանակներում անդրադառնալով պետական տուրքեր վճարելու պարտականությանը, նշված սահմանադրական պարտականության և դատարանի մատչելիության իրավունքի հարաբերակցությանը, պետական տուրքի բովանդակությանը, դերին ու նշանակությանը, գտել է. «Դատարաններում պետական տուրք վճարելու պարտականության սահմանումը նպատակ է հետապնդում փոխհատուցել պետության՝ արդարադատության իրականացման հետ կապված ծախսերը, կանխարգելել ակնհայտ անհիմն հայցադիմումների հոսքը, դատարան դիմելու իրավունքի չարաշահումը»:

Պետական տուրք վճարելու սահմանադրական պարտականությունը դիտարկելով դատարան դիմելու սահմանադրական իրավունքի իրացման հնարավորության հետ սերտ կապի մեջ՝ Սահմանադրական դատարանը հիշատակված որոշմամբ փաստել է. «Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դատարաններում պետական տուրք վճարելու սահմանադրական պարտականության կատարումը սերտորեն առնչվում է անձի՝ դատարան դիմելու սահմանադրական իրավունքի իրացման հնարավորության հետ՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ դատարաններում պետական տուրք վճարելու պարտականությունը չի հետապնդում դատարան դիմելու սահմանադրական իրավունքից անձին զրկելու նպատակ: Օրենսդիրը կարգավորելով դատարաններում պետական տուրքի գանձման հետ կապված իրավահարաբերությունները՝ կաշկանդված է քաղաքացիական իրավունքների ու ազատությունների պաշտպանության սահմանադրական սկզբունքներով, մասնավորապես, դատարանի մատչելիության սկզբունքի երաշխավորման պարտականությամբ: Ուստի օրենսդրի պարտականությունն է **երաշխավորել պատշաճ հավասարակշռություն, մի կողմից, դատարաններում պետական տուրք գանձելու՝ պետության օրինավոր շահի, դատարաններում պետական տուրք վճարելու՝ անձի սահմանադրական պարտականության և, մյուս կողմից՝ դատարանների միջոցով իր իրավունքները պաշտպանելու՝ դիմողի օրինավոր շահի միջև:** Հետևաբար, այդպիսի հավասարակշռության ապահովումը հետապնդում է սահմանադրաիրավական նպատակ»:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԻՅԱԿ ◆ 3(107)2022

2018 թվականի հուլիսի 10-ի ՍԴՈ-1423 որոշմամբ Սահմանադրական դատարանը, ելնելով պետական տուրքի՝ օրենքով որոշված իրավական բովանդակությունից և նպատակային նշանակությունից, գտել է, որ՝ «(...) պետական տուրք վճարելու պարտականության սահմանումը նպատակ է հետապնդում, նախ՝ որոշակիորեն փոխհատուցել պետության կողմից հանրային ծառայություններ մատուցելու, այդ թվում՝ արդարադատության իրականացման հետ կապված ծախսերը, իսկ վերջինիս դեպքում նաև՝ մասամբ նախականիսել ակնհայտ անհիմն հայցադիմումների հոսքը՝ **նպաստելով թե՛ արդարադատության իրականացման արդյունավետության բարձրացմանը և թե՛ դատարան դիմելու իրավունքի իրացման հնարավոր շահարկման կանխարգելմանը**»:

Պետական տուրքի առնչությամբ Սահմանադրական դատարանի վերոթվարկյալ որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումները վկայում են, որ փաստորեն **որոշակի դրամական արտահայտությամբ պետական տուրք վճարելու պարտականության սահմանումը թույլատրելի է, եթե, ի թիվս այլնի, այն հետապնդում է իրավաչափ նպատակներ**, դրանք են՝ մի կողմից պետության՝ հանրային ծառայություններ մատուցելու, այդ թվում՝ արդարադատության իրականացման հետ կապված ծախսերի որոշակի չափով փոխհատուցումը, մյուս կողմից՝ ակնհայտ անհիմն հայցադիմումների հոսքի նախականիսումը՝ **նպաստելով թե՛ արդարադատության իրականացման արդյունավետության բարձրացմանը, թե՛ դատարան դիմելու իրավունքի իրացման հնարավոր շահարկման կանխարգելմանը**:

Այս առնչությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ևս չի բացառել հնարավորությունն առ այն, որ արդարադատության իրականացման շահերի նպատակով անձի նկատմամբ դատարան «մուտք գործելու» համար ֆինանսական սահմանափակում դնելը կարող է արդարացվել, հետևաբար՝ դատարանը գտել է, որ քաղաքացիական գործերով տուրքեր վճարելու պահանջը չի կարող դիտվել որպես դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակում, որն ինքնին անհամատեղելի է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի հետ: Այնուամենայնիվ, դատարանը վերահաստատել է, որ վճարի չափը, որը գնահատվում է կոնկրետ գործի հատուկ հանգամանքների լույսի ներքո, ներառյալ՝ դիմումատուի՝ դրանք վճարելու կարողությունը, և դատավարության փուլը, որով սահմանվել է այդ սահմանափակումը, էական գործոններ են որոշելու, թե արդյո՞ք անձն օգտվում է դատարանի մատչելիության իր իրավունքից, թե՛ ոչ, և արդյո՞ք իր գործը լավ է դատարանի առջև (Kreuz v. Poland, Application no. 28249/95, 19.06.2001, §59-60, Karahasanoglu v. Turkey, Application no. 21392/08, 16.03.2021, FINAL 16.06.2021, § 134, Stankov v. Bulgaria, Application no. 68490/01, 12.07.2007, FINAL 12.10.2007, §52):

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ◆ 3(107)2022

Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանը գտնում է, որ առհասարակ դատական պաշտպանության հիմնարար իրավունքի իրացումը ֆինանսական նախապայմանով սահմանելը համահունչ է Սահմանադրության 61-րդ հոդվածին:

4.2. Միաժամանակ, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև պետական տուրքը սահմանելու կամ փոփոխելու չափանիշներին ու համարժեքությանը՝ Սահմանադրությամբ նախատեսված դատական պաշտպանության իրավունքի երաշխավորման համատեքստում՝ այս առթիվ Սահմանադրական դատարանի նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո:

Այսպես, Սահմանադրությունը սահմանում է յուրաքանչյուր անձի՝ օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր մուծելու, պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ կատարելու պարտականությունը (60-րդ հոդված) չմասնավորեցնելով օրենսդրի կողմից դրանք սահմանելու չափանիշները: Հետևաբար՝ պետական տուրքի դրույքաչափեր սահմանելն օրենսդրի հայեցողության տիրույթում է: Միևնույն ժամանակ, վերոգրյալն ամենևին չի ենթադրում օրենսդիր մարմնի բացարձակ հայեցողությունը՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար կամայական մոտեցմամբ պետական տուրքի դրույքաչափեր սահմանելու կամ փոփոխելու հարցում: Մասնավորապես՝ Սահմանադրական դատարանն իր 25.05.2010թ. ՍԴՈ-890, 10.07.2018թ. ՍԴՈ-1423 որոշումներով ուղղակիորեն արձանագրել է սահմանադրաիրավական պահանջն ուղղված օրենսդրին առ այն, որ **կարգավորելով դատարաններում պետական տուրքի գանձման հետ կապված հարաբերությունները՝ վերջինս կաշկանդված է անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության և այն իրացնելու անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր սահմանելու, դատարանի մատչելիության իրավունքի երաշխավորման սահմանադրական պարտականություններով:**

Այսպիսով, Սահմանադրությունը չի պարունակում օրենսդրի կողմից պետական տուրքի դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ հատուկ կարգավորումներ, հետևաբար՝ օրենսդրին է դրանք սահմանելու հայեցողությունը, միևնույն ժամանակ, որպես այդպիսին **պետական տուրքի դրույքաչափ սահմանելու՝ օրենսդիր մարմնի հայեցողության սահմանափակում են հանդիսանում անձանց հիմնական իրավունքները:** Մասնավորապես՝ պետական տուրքերի սահմանումը կամ փոփոխությունը ներգործում է հիմնական իրավունքների վրա, ուստի՝ դրանք իրենց բնույթով պետք է լինեն այնպիսին, որ **չխաթարեն նշված իրավունքների բուն էությունը:** Ընդ որում՝ որքան բարձր են պետական տուրքերի դրույքաչափերը, այնքան ավելի ինտենսիվ է հիմնական իրավունքի վրա ներգործությունը: Այս առնչությամբ «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով»

Եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով) նկատել է, որ բարձր դատական վճարները կարող են խոչընդոտել բազմաթիվ անհատ քաղաքացիների, հատկապես ցածր եկամուտ ունեցող անձանց դիմելու դատարան (կետ 101)¹ :

Վերոգրյալի լույսի ներքո Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ չնայած պետական տուրքի դրույքաչափերի սահմանման՝ օրենսդրի լայն հայեցողությանը, այնուամենայնիվ, այդպիսիք իրավական պետությանը և վերջինիս հատկանիշ իրավունքի գերակայությանը հարիր կարող են համարվել, եթե դրանք լինեն համաչափ, արդարացի ու հիմնավորված, հաշվի առնեն և ապահովեն, որ՝

- արդարադատության իրականացումը չպայմանավորվի և կանխորոշվի զուտ անձի գույքային հնարավորություններով կամ դրությամբ,

- դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար պետական տուրք վճարելու պայմանի սահմանումը չհետապնդի սուկ ֆինանսական կայուն միջոցներ կամ եկամուտ ստանալու նպատակ, և որ արդարադատության իրականացման պայման չդիտարկվի առաջացած ծախսերն ամբողջապես և բացառապես անձանցից գանձելը (ստանալը),

- պետական տուրքի դրույքաչափը սահմանելիս պահպանվեն պետության կողմից ծառայության համար կատարված ծախսի և դրա դիմաց գանձման ենթակա եկամտի միջև ողջամիտ հարաբերակցությունը և համարժեքությունը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ այս պայմաններում հնարավոր կլինի կենսագործել պետական տուրքով արդարադատության իրականացման առնչությամբ ծախսերի որոշակի փոխհատուցում ստանալու և ակնհայտ անհիմն դիմումների մուտքը դատարան կանխելու իրավաչափ նպատակները՝ մի կողմից, և մյուս կողմից՝ երաշխավորել դատարանի մատչելիության իրավունքի իրացումը՝ չխաթարելով դրա բուն էությունը:

4.3. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում Օրենքի վիճարկվող կարգավորումներով սահմանված են դատարան ներկայացվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ), գործում առկա լուսանկարների (լուսաժապավենների), ձայնագրությունների, տեսագրությունների և դրանց էլեկտրոնային կրիչների բնօրինակից պատճենահանված կրիչ և դատական նիստի համակարգչային ձայնագրման կրկնօրինակ տալու, ինչպես նաև Սահմանադրական դատարան տրվող անհատական դիմումների, Սահմանադրական դատարանի կողմից տրվող փաստաթղթերի

¹ Հասանելի է հետևյալ հղումով՝ [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2016\)007-rus](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2016)007-rus)

պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար պետական տուրքի դրույքաչափերը, որոնք «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում 19.04.2021թ. ՀՕ-177-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով ենթարկվել են համապատասխան փոփոխությունների: Մասնավորապես՝ վկայակոչված փոփոխությունների ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ՝

- պետական տուրքի դրույքաչափերն ավելացել են 2-5 անգամ, որոշ դեպքերում՝ 10 անգամ,

- վարչական գործերով սահմանվել է տուրքի հաշվարկման բանաձևային եղանակ՝ հիմնվելով վարչական ակտով սահմանված վարչական պատասխանատվության դրամական արտահայտությամբ արժեքի վրա,

- սահմանվել է տուրքի առավելագույն շեմ,

- տարանջատվել են քաղաքացիական, վարչական և սնանկության վարույթներով տուրքի դրույքաչափերի վերաբերյալ կարգավորումները,

- սահմանվել են արտոնություններ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունների՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ գլխով նախատեսված գործերով, ալիմենտի չափի ավելացման, ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնությամբ ալիմենտ վճարելու պարտավոր անձի մեղքով պարտք առաջանալիս մեղավոր անձին պատասխանատվության ենթարկելու, ալիմենտը ժամանակին չվճարելու համար տուգանք բռնագանձելու կամ ալիմենտային պարտավորությունների ուշացմամբ պատճառված վնասների հատուցման վերաբերյալ հայցերով, Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ, 29.3-րդ և 31.3-րդ գլուխներով նախատեսված գործերով, արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու համար և այլն,

- վերացվել են պետական տուրքի գծով առկա որոշ արտոնություններ, մասնավորապես՝ ֆիզիկական անձինք և ոչ առևտրային կազմակերպությունները պետական տուրքի վճարումից չեն ազատվում վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունած որոշման դեմ բողոքներով, գործը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու մասին դատարանի որոշումը բեկանելու, հայցերի ապահովման կամ ապահովման մի տեսակը մեկ այլ տեսակով փոխարինելու վերաբերյալ հայցերով, դատարանների վճիռներով նշանակված տուգանքների գիշման կամ նվազեցման վերաբերյալ հայցերով, հարկադիր կատարողների գործողությունները բողոքարկելու վերաբերյալ հայցերով և այլն,

- սահմանվել է պետական տուրք՝ վճարման կարգադրություն արձակելու մասին դիմումներ ներկայացնելու համար,

- նախատեսվել են պետական տուրքի վերադարձման լրացուցիչ դեպքեր, երբ վերաքննիչ դատարանը, բեկանելով և փոփոխելով դատական ակտը, մերժել է այն հայցը, որով հայցվորը ազատված է եղել պետական տուրքի

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 3(107)2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՂԱՏԱՐԱՆ

վճարումից, Վճռաբեկ դատարանի կողմից բողոքն առանց քննության թողնելու դեպքում, գործն ընդհանուր հայցային վարույթի կարգով վարույթ ընդունելուց հետո այն պարզեցված վարույթի կարգով քննելու դեպքում, եթե առաջին աստիճանի դատարանը որոշում է կայացրել վճարման կարգադրությունը վերացնելու մասին՝ պարտապանի կողմից առարկություն ներկայացվելու կամ վճարման կարգադրությունը պարտապանին առաքելու անհնարինության դեպքում և այլն:

Վիճարկվող կարգավորումները դիտարկելով իրավունքի սահմանափակման համաչափության սահմանադրաիրավական պահանջի ներքո՝ Սահմանադրական դատարանը փաստում է ներքոշարադրյալը.

Համաչափության սկզբունքի տարրերից յուրաքանչյուրին՝ բովանդակային առումով, Սահմանադրական դատարանը մանրամասն անդրադարձել է իր՝ 2020 թվականի հունիսի 18-ի ՍԴՈ-1546 որոշման մեջ: Ըստ այդմ՝ «Համաչափության սկզբունքի առաջին տարրը հիմնական իրավունքի սահմանափակման նպատակի լեգիտիմությունն է, այն է՝ Սահմանադրությամբ նախատեսված լինելը: Դա նշանակում է, որ օրենսդիրը, իրականացնելով հիմնական իրավունքի սահմանափակման իր լիազորությունը, պետք է հիմնվի Սահմանադրությամբ նախատեսված նպատակների վրա: Բոլոր այն դեպքերում, երբ այդ նպատակներն ուղղակիորեն ամրագրված են սահմանափակվող հիմնական իրավունքին կամ ազատությանը վերաբերող սահմանադրական դրույթներում (...), օրենսդիրն իրավասու է միայն դրանք կոնկրետացնել օրենքներում, մնացյալ դեպքերում օրենսդիրն ինքն է բացահայտում սահմանափակման՝ օրենքով սահմանված նպատակի սահմանադրական բովանդակությունը՝ հիմնվելով Սահմանադրության վերաբերելի նորմերի մեկնաբանության վրա:

Հավաստիանալով իր կողմից պարզված սահմանադրական նպատակի առկայության մեջ՝ օրենսդիրն այնուհետև պետք է ընտրի դրան հասնելու միջոցները: Հետևապես, ընտրված միջոցների սահմանադրականությունը կանխորոշվում է առաջին հերթին դրանցով հետապնդվող նպատակով:

Ինչ վերաբերում է օրենսդրի կողմից միջոցների ընտրությանը՝ սահմանադրորեն արդարացված նպատակին հասնելու համար, ապա, նախ՝ դրանք պետք է պիտանի լինեն հիշյալ սահմանադրական նպատակին հասնելու համար: Այսինքն՝ այնպիսի օրենսդրական միջոցներն են պիտանի, որոնցով օրենսդիրն ի գորու է հասնել հետապնդվող նպատակին, այլ կերպ՝ երբ ապահովված է հավանականությունը, որ արդյունքը, որին ձգտում է օրենսդիրը, ի հայտ կգա:

Համաչափության սկզբունքի հաջորդ տարրն օրենսդրի կողմից ընտրված միջոցի անհրաժեշտությունն է, այսինքն՝ այն, որ այդ միջոցը՝ այլ միջոցների համեմատ նույն ներգործությամբ, պետք է ենթադրի ամե-

նամեղմ միջամտությունը որևէ հիմնական իրավունքին կամ ազատությանը: Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու բոլոր պիտանի միջոցներից պետք է ընտրվի այն օրենսդրական միջոցը, որը նպատակին հասնելու նույն հավանականությամբ, այսինքն՝ նույն արդյունավետությամբ, սակայն առավել մեղմ է սահմանափակում որևէ հիմնական իրավունք կամ ազատություն:

Համաչափության սկզբունքի վերջին՝ չորրորդ տարրը պահանջում է, որ օրենսդիրն իր կողմից ընտրված պիտանի և անհրաժեշտ միջոցը համեմատի սահմանափակվող հիմնական իրավունքի կամ ազատության սահմանադրական նշանակության հետ՝ պարզելու համար, որ այդ միջոցներով արդյունքում պետությունն իրապես հասնում է հետապնդվող նպատակին, և սահմանափակվող հիմնական իրավունքը կամ ազատությունն իր նշանակությամբ չի պահպանում իր գերակայությունը այն հանրային շահերի նկատմամբ, որոնք պահպանելու նպատակով էլ օրենսդիրը դիմում է հիմնական իրավունքի կամ ազատության սահմանափակման: Վերջնարդյունքում դա նշանակում է, որ որևէ հիմնական իրավունքի կամ ազատությանը չմիջամտելը կամ այն երաշխավորելը, կախված դրանց էությունից, կանոն է, իսկ դրա սահմանափակումը՝ բացառություն, որը պետք է հիմնավորվի սահմանափակման յուրաքանչյուր դեպքում: Ընդսմին, որքան ավելի ինտենսիվ է սահմանափակումը, այնքան ավելի է մեծանում սահմանափակումը հիմնավորելու բեռը»:

Սահմանադրական դատարանը 05.10.2021թ. ՍԴՈ-1612 որոշման շրջանակներում հայտնել է, որ՝ «Մարդու իրավունքների եվրոպական դատարանը և Սահմանադրական դատարանն իրենց նախադեպային իրավունքում զարգացրել և բազմիցս կիրառել են իրավունքի միջամտության իրավաչափության ստուգման եռատարր թեստը: Այն պահանջում է ցանկացած միջամտություն գնահատել հետևյալ չափանիշների համատեքստում. 1) **նախատեսված է արդյո՞ք միջամտությունն օրենքով, 2) հետապնդում է այն արդյո՞ք իրավաչափ նպատակ, 3) ընտրված միջոցը բավարար և անհրաժեշտ է արդյո՞ք ժողովրդավարական հասարակությունում հետապնդվող իրավաչափ նպատակին հասնելու համար»:**

Սույն գործով վեճի առարկա նորմերը սահմանված են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով, հետևաբար՝ դատարանի մատչելիության իրավունքին միջամտությունն օրենքով նախատեսված լինելու պայմանը բավարարված է: Հիմնական իրավունքին միջամտության իրավաչափության գնահատման տարրերն են նաև իրավաչափ նպատակ հետապնդելը, ինչպես նաև ժողովրդավարական հասարակությունում հետապնդվող իրավաչափ նպատակին հասնելու համար ընտրված միջոցի բավարարությունն ու

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՐ ◆ 3(107)2022

անհրաժեշտությունը, որոնք ենթակա են գնահատման համաչափության սահմանադրաիրավական սկզբունքի համատեքստում:

Ա. Նպատակի լեգիտիմությունը. Անդրադառնալով դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար պետական տուրքի դրույքաչափերի փոփոխման նպատակին՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ այն շարունակում է ծառայել պետական տուրքեր սահմանելու ընդհանուր նպատակին, այն է՝ **մի կողմից՝ որոշակիորեն փոխհատուցել պետության կողմից հանրային ծառայություններ մատուցելու, այդ թվում՝ արդարադատության իրականացման հետ կապված ծախսերը, մյուս կողմից՝ կանխարգելել ակնհայտ անհիմն հայցադիմումների հոսքը, դատարան դիմելու իրավունքի չարաշահումը,** ինչպես նաև դրանց համապատասխանեցումը երկրի սոցիալ-տնտեսական իրական վիճակին ու հնարավորություններին:

Սահմանադրությունից ուղղակիորեն չի բխում, որ պետական տուրք սահմանելու կամ դրա դրույքաչափը փոփոխելու միակ նպատակը հանրային ծառայությունների իրականացման առնչությամբ ծախսի փոխհատուցումն է, ուստի՝ չի բացառվում, որ որևէ իրավունքի իրացման առնչությամբ պետական տուրք վճարելու պարտականության բովանդակային փոփոխությունը կարող է հետապնդել նաև այլ իրավաչափ նպատակներ, հետևաբար՝ արժանահավատ պետք է համարել դրույքաչափերի փոփոխության, այդ թվում՝ բարձրացման հիմքում սոցիալ-տնտեսական իրողությունների փոփոխություններ դնելը՝ նկատի ունենալով տնտեսական հարաբերություններում պետական տուրքի դերի կարևորությունը:

Բ. Պիտանիությունը. Ինչպես դատական պաշտպանության իրավունքի իրացման համար պետական տուրք վճարելու պարտականության սահմանումը, այնպես էլ՝ դրանց փոփոխությունները ենթադրում են արդարադատության իրականացման առնչությամբ առաջացող ծախսերի դիմաց փոխհատուցում ստանալու հնարավորության ապահովում: **Պետական տուրքի դրույքաչափերի բարձրացումը նպաստում է արդարադատության իրականացման առնչությամբ կատարվող ծախսերի և եկամտի համամասնության ապահովմանը:**

Բացի դրանից, **պետական տուրք վճարելու պայմանը նպաստում է անձանց՝ դատական պաշտպանության իրավունքից բարեխիղճ օգտվելուն, ակնհայտ անհիմն հայցերը դատարան ներկայացնելու կանխմանը, ինչպես նաև «դատարաններում գործերի կուտակման» կանխարգելմանը՝ դրանով իսկ ապահովելով արդարադատության պատշաճ իրականացումը:** Ընդ որում՝ դատական պաշտպանության իրավունքի իրացման համար ֆինանսական պայմանի գոյությունն ինքնին **նպաստում է անձանց կողմից այլընտրանքային պաշտպանության միջոցների գործադրմամբ իրավունքների պաշտպանություն իրականացնելուն:** Մասնա-

վորապես՝ արտադատական պաշտպանության միջոցներն առավել մատչելի են և ենթադրում են ռեսուրսների նվազ գործադրմամբ իրավունքի պաշտպանություն՝ ի տարբերություն դատական կարգով պաշտպանության եղանակի:

Սահմանադրական դատարանը միաժամանակ գտնում է, որ պետական տուրքի դրույքաչափերը փոփոխելը նպաստում է վերոհիշյալ իրավաչափ նպատակներին հասնելուն, սակայն միակ ու բացառիկ միջոցը չէ, հետևաբար՝ օրենսդրի շարունակական պարտականությունն է այդ նպատակների իրագործման համար համարժեք այլ ջանքեր գործադրել համապատասխան իրավակարգավորումների տեսքով (օրինակ՝ այլընտրանքային պաշտպանության միջոցների արդյունավետության բարձրացում և այլն), հակառակ պարագայում՝ վիճարկվող կարգավորումներով հետապնդվող նպատակների իրավաչափությունն անիրական կդառնա: Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ առավել որակյալ արդարադատություն երաշխավորելու նպատակով պետական տուրքի դրույքաչափերի բարձրացումն իրավաչափ կարող է համարվել, եթե արդյունավետ արդարադատություն ապահովելուն ուղղված այլ քայլեր ևս ձեռնարկվում են, հակառակ պարագայում՝ պետական տուրքեր բարձրացնելու նպատակն առարկայազրկվում է:

Գ. Անհրաժեշտությունը. Անդրադառնալով դատարանի մատչելիության իրավունքի իրացման պայման հանդիսացող պետական տուրքի դրույքաչափերի փոփոխության անհրաժեշտությանը՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ **այդպիսի միջոցների հավաքագրումը արդարադատության իրականացման համար կատարված ծախսերի որոշակի փոխհատուցում է, մասնավորապես՝ համաձայն «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի, որը սահմանում է պետական բյուջեի եկամտի աղբյուրները, այդպիսիք են՝ «ա) հարկային եկամուտները, բ) պետական տուրքերը, գ) (կետն ուժը կորցրել է 22.12.10 ՀՕ-258-Ն), դ) պաշտոնական դրամաշնորհները, ե) այլ եկամուտներ»:** Այս առնչությամբ պետք է հաշվի առնել այն իրողությունը, որ թեպետ պետական բյուջեի համար նախատեսված եկամտի մի քանի աղբյուրներ կան, ըստ այդմ՝ արդարադատության իրականացման առնչությամբ ծախսերը կարող են կատարվել նաև դրանց հաշվին, այնուամենայնիվ, անհերքելի է, որ սոցիալ-տնտեսական իրողությամբ է կանխորոշվում այդպիսիք իրականացնելու՝ պետության հնարավորություններն ու սահմանները, հետևաբար՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար պետական տուրքերի գանձումը նպաստում է արդարադատության ոլորտում պետության ֆինանսական քաղաքականության արդյունավետ իրականացմանը: Նման պայմաններում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ պետական տուրքի դրույքաչափերի փոփոխումն անհրաժեշտ միջոց է պետության կողմից հանրային ծառայություններ մատուցելու, այդ թվում՝ արդարադատության իրականացման հետ կապված ծախսերը փոխհատուցելու որոշակի նպատակին հասնելու համար:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՆԵԿԱՆ ԿԻՆԵԿՈՒՄ 3(107)2022

Բացի դրանից, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ եթե նկատի առնվի, որ **դատարանների ծանրաբեռնվածության աճն ուղիղ համեմատական է իրավունքների պաշտպանության արդյունավետության նվազմանը, ապա պետական տուրքերի դրույքաչափերի փոփոխությունը կարող է նպաստել իրավունքի չարաշահման կանխարգելմանն ու դատարան ակնհայտ անհիմն գործերի մուտքը նախականիսելուն:**

Սահմանադրական դատարանը գտնում է, որ պետական տուրքի դրույքաչափերի բարձրացմամբ իրավաչափ նպատակներին հասնելուն զուգահեռ պետք է հաշվի առնել այն, որ նժարի մյուս կողմում անձանց դատական պաշտպանության իրավունքն է, որի անխոչընդոտ իրացումն ապահովելն իրավական պետության առաջնային պարտականություններից է: **Այս պարագայում իրավունքի իրացման հասանելիությունն ապահովողի դերում հանդես են գալիս պետական տուրքի վճարման հետ կապված տարակերպ արտոնությունները:** «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքի գծով կարող են սահմանվել հետևյալ արտոնությունները՝

- ա) պետական տուրքի վճարումից ազատում.
- բ) պետական տուրքի նվազեցում.
- գ) պետական տուրքի դրույքաչափի նվազեցում.
- դ) պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգում.

ե) պետական տուրքը սահմանված ժամկետում բյուջե չգանձելու համար հաշվարկված տույժերի վճարումից ազատում, նվազեցում, դրանք վճարելու ժամկետի հետաձգում:

Մատնանշված հոդվածով սահմանվում են պետական տուրքի գծով արտոնությունների տեսակները, իսկ Օրենքի 29-րդ հոդվածով հստակ սահմանված են դատարաններում **պետական տուրքի վճարումից ազատման դեպքերը** (հայցվորները՝ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հետ կապված այլ գումարների գանձման և աշխատանքային վեճերի վերաբերյալ հայցերով, հայցվորները՝ խեղման կամ առողջությանը պատճառված այլ վնասի, ինչպես նաև կերակրողի մահվան հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով, հայցվորները՝ հանցագործության հետևանքով իրենց պատճառված նյութական վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով և այլն):

Միևնույն ժամանակ Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ դատարաններում պետական տուրքի գծով կիրառվող արտոնությունների վերաբերյալ դրույթները լրացուցիչ կարգավորման անհրաժեշտություն ունեն: Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պետական տուրքի վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու, պետական տուրքը և դրա դրույքաչափը նվազեցնելու հետ

կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքի չափի, դրա վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու և դրա չափը նվազեցնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով: Այս առնչությամբ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում օրենսդիր մարմնի ուշադրությունը հրավիրել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում արտոնություններն առավել մանրամասնությամբ սահմանելուն՝ նկատի ունենալով, որ նշված օրենքում բացակայում են դատարաններում պետական տուրքի արտոնությունների ողջ համակարգի վերաբերյալ հստակ կարգավորումները, կիրառման հիմքերը և այլն: Մասնավորապես՝ թեպետ վերոնշյալ դատավարական օրենսգրքերը սահմանել են, որ պետական տուրքի չափի, դրա վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, պետական տուրքը և դրա չափը նվազեցնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով, այդուհանդերձ, նշյալ օրենքում բացակայում են դատարաններում պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգման, և հատկապես՝ պետական տուրքի նվազեցման և դրույքաչափի նվազեցման հետ կապված կանոնակարգումները:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ **դատարանում պետական տուրքի վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու և պետական տուրքի գծով այլ արտոնություններն ունեն հավասարակշռող ազդեցություն և ինքնին միտված են երաշխավորելու անձանց դատական պաշտպանության իրավունքի իրացումը՝ հաշվի առնելով անձանց սոցիալական դրությունը, ֆինանսական հնարավորությունների բացակայությունը և այլն: Արտոնությունների համակարգի ճկունությունը հնարավորություն է ընձեռում երաշխավորելու այն անձանց իրավունքները, որոնք զրկված են գույքային դրության պատճառով արդարադատություն հայցելու հնարավորությունից:** Պետական տուրքի գանձման և դատարանի մատչելիության իրավունքի ապահովման հավասարակշռության գործում ընդգծելի է իրավակիրառ մարմինների՝ տվյալ դեպքում՝ դատարանների դերը: Այս մարմիններին օրենսդրությամբ ընձեռված է մեծ հայեցողություն՝ **համապատասխան իրավիճակում չսահմանափակելու անձի դատական պաշտպանության իրավունքը՝** վերջինիս գույքային հնարավորության բացակայությամբ պայմանավորված: Մասնավորապես, բացի նրանից, որ Օրենքով դատարաններում պետական տուրքից ազատելու մի շարք դեպքեր հստակ սահմանված են, այդուհանդերձ, նաև Օրենքի 31-րդ հոդվածի «գ» և «գ1» կետերի համաձայն՝ «Առանձին վճարողների կամ վճարողների խմբերի համար պետական տուրքի գծով արտոնություններ կարող են սահմանել՝

(...)

- դատարանները՝ սույն օրենքի 9 հոդվածում նշված առանձին գործերով՝ ելնելով կողմերի գույքային դրույթունից.

- Սահմանադրական դատարանը՝ ելնելով դիմողի գույքային դրույթունից»:

Նշված նորմն ուղղակիորեն հատկորոշում է դատարանների և Սահմանադրական դատարանի լիիրավ հնարավորությունը՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում գնահատելով անձի գույքային դրույթունն ու ֆինանսական հնարավորությունները՝ երաշխավորելու վերջինիս իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի անարգել իրացումը: **Հետևաբար՝ դատարանների կողմից պետական տուրքերի գծով արտոնություններ կիրառելու իրավասության գերակա նպատակն է դրանց կիրառմամբ ապահովել Սահմանադրությամբ ամրագրված անձի դատական պաշտպանության հիմնարար իրավունքը:**

Դատարաններին է տրված գնահատելու յուրաքանչյուր կոնկրետ դեպքում անձի գույքային դրույթունն ու դատարան դիմելու իրավունքի իրացման ֆինանսական պայմանի կատարման հնարավորությունը: Ընդամին՝ այս հարցում կարևորվում է նաև դատարան դիմած անձի ակտիվ գործողությունները պետական տուրքի արտոնություն կիրառել հայցելիս: Համանման դիրքորոշում է արտահայտել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ նշելով, որ դատական տուրքերի վճարումից ազատվել պահանջող կողմը պետք է գործի անհրաժեշտ ջանասիրությամբ՝ դատարաններին իր ֆինանսական վիճակի վերաբերյալ ապացույցներ ներկայացնելիս և պարտավոր է այդ հարցում հավատարմորեն համագործակցել դատարանների հետ (Laci v. Albania, Application no. 28142/17, 19.10.2021, FINAL 19.01.2022, § 55):

Դրանից բացի, Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ պետական տուրքեր գանձելու և այդ կապակցությամբ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման միջև հավասարակշռող ազդեցություն ունի նաև **պետական տուրքի վերադարձի գործիքակազմը**, որի վերաբերյալ կարգավորումները սահ-մանված են Օրենքի 38-րդ հոդվածում: Նշված նորմի համաձայն՝ «Պետական տուրքը ենթակա է վերադարձման մասնակի կամ լրիվ՝

ա) եթե պետական տուրքը վճարվել է ավելի, քան պահանջվում է գործող օրենսդրությամբ.

ա1) Սահմանադրական դատարանի կողմից դիմումը վերադարձնելու, գործի քննությունը մերժելու կամ գործի վարույթը կարճելու դեպքում.

բ) դատարանների կողմից դիմումները (բողոքները) վերադարձվելու կամ դրանց ընդունումը մերժվելու, ինչպես նաև նոտարի կողմից նոտարական գործողությունների կատարումը մերժվելու, քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների կողմից քաղաքացիական կացության

ակտերի գրանցումը և ուրիշ գործողությունների ու ծառայությունների կատարումը մերժվելու դեպքում, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.

բ1) երբ վերաքննիչ դատարանը, բեկանելով և փոփոխելով դատական ակտը, մերժել է այն հայցը, որով հայցվորը ազատված է եղել պետական տուրքի վճարումից.

գ) տվյալ գործով վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու դեպքում, եթե գործը ենթակա չէ դատարանում քննության, կամ հայցվորը չի պահպանել տվյալ կատեգորիայի գործի համար վեճը լուծելու սահմանված նախնական արտադատարանական կարգը, կամ հայցը ներկայացրել է անգործունակ անձը, կամ վճռաբեկ դատարանի կողմից բողոքն առանց քննության թողնելու դեպքում.

գ1) գործն ընդհանուր հայցային վարույթի կարգով վարույթ ընդունելուց հետո այն պարզեցված վարույթի կարգով քննելու դեպքում.

դ) եթե հայցի ենթադրական գինը, որից դատարանը գանձել են պետական տուրքը, գործի քննության ընթացքում ճշտվել է, որի հետևանքով պակասել է հայցի ընդհանուր գինը.

դ1) եթե առաջին ատյանի դատարանը որոշում է կայացրել վճարման կարգադրությունը վերացնելու մասին՝ պարտապանի կողմից առարկություն ներկայացվելու կամ վճարման կարգադրությունը պարտապանին առաքելու անհնարինության դեպքում.

ե) գույքն արգելանքից ազատելու մասին հայցը բավարարելու դեպքում.

զ) պետական տուրք գանձող պետական մարմնի կողմից այս կամ այն գործողության կատարումը մերժելու դեպքում, եթե օրենքով այլ բան սահմանված չէ.

է) մինչև համապատասխան գործողությունների կատարման կամ ծառայությունների մատուցման ավարտման պահը, պետական տուրքը վճարողի կողմից համապատասխան ծառայություններ ստանալուց կամ գործողություններ կատարելուց հրաժարվելու դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ պետական տուրք գանձող մարմնի կողմից, սահմանված կարգով, արդեն սկսվել է տևական բնույթ կրող համապատասխան գործողության կատարումը կամ ծառայության մատուցումը, ինչպես նաև սույն օրենքի 20.1-ին հոդվածի 1-ին կետի 5.1-ին և 11.1-ին ենթակետերով սահմանված գործունեության իրավունք ձեռք բերելու համար վճարված պետական տուրքը.

(...)»:

Նշված նորմով պետական տուրքը մի շարք դեպքերում վերադարձվում է մեխանիկական պատճառներով (պետական տուրքի ավել վճարում, մինչև համապատասխան գործողությունների կատարման կամ ծառայությունների մատուցման ավարտման պահը, պետական տուրքը վճարողի կողմից համապատասխան ծառայություններ ստանալուց կամ գործողություններ

կատարելուց հրաժարվելու որոշ դեպքերում և այլն): Այդուհանդերձ, հիշյալ դրույթը (38-րդ հոդված) սահմանում է պետական տուրքի վերադարձի հնարավորություն նաև այն դեպքերում, երբ անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքներն արդյունավետորեն իրացվել են (գույքն արգելանքից ազատելու մասին հայցը բավարարելու դեպքում, վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտը բեկանելով և փոփոխելով, այն հայցի մերժումը, որով հայցվորն ազատված է եղել պետական տուրքի վճարումից և այլն):

Բացի դրանից, մրցակցային արդարադատությունը ենթադրում է, որ դատական ծախսերի, այդ թվում՝ վճարված պետական տուրքի փոխհատուցման պարտականությունը, գործի ելքով պայմանավորված, օրենքով սահմանված կարգով կարող է դրվել հակառակ կողմի վրա:

Դ. Համարժեքությունը. Իրավունքի սահմանափակման նպատակի և դրա համար ընտրված միջոցի համարժեքության տեսանկյունից Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ թեև պետական տուրքերի սահմանումը, ինչպես նաև դրանց դրույքաչափերի վերաբերյալ համապատասխան փոփոխությունները, իրապես էական ազդեցություն են ունենում դատական պաշտպանության իրավունքի վրա, այդուհանդերձ, վիճարկվող կարգավորումները **չեն խախտում դատական պաշտպանության հիմնարար իրավունքի էությունը:** Բացի դրանից, առկա արտոնությունների համակարգը հավասարակշռող դերակատարում ունի, այն է՝ հնարավորինս բացառել ֆինանսական դրությամբ պայմանավորված՝ անձանց՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման խախտումները:

Սահմանադրական դատարանն իր՝ 02.12.2014թ. ՍԴՈ-1176 որոշմամբ կարևորել է. «(...) օրենսդրական փոփոխությունների գործընթացի կայունությունն ու ներդաշնակությունը, օրենքների փոփոխման հիմնավորվածությունն ու օբյեկտիվ անհրաժեշտությունը, ինչը հնարավորություն է ընձեռում իրավունքի սուբյեկտին իր վարքագիծը համապատասխանեցնել փոփոխվող օրենսդրական նորմերին՝ թույլ չտալով իրավակիրառ մարմինների կողմից ցուցաբերված սուբյեկտիվիզմի դրսևորում և հայեցողության ընդլայնում»: Նշված որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման լույսի ներքո, այնուամենայնիվ, Սահմանադրական դատարանը գտնում է, որ ողջունելի չէ տևական ժամանակ փոփոխություններ չկատարելուց հետո օրենսդրի կողմից դատարանի մատչելիության իրավունքի իրացման պայման հանդիսացող պետական տուրքերի կտրուկ և էական բարձրացումը՝ հաշվի առնելով իրավական կայունության պահանջը:

Բացի դրանից, Սահմանադրական դատարանի եզրահանգմամբ՝ պետական տուրքի առնչությամբ կարգավորումները, ներառյալ՝ ներկայիս գործող դրույքաչափերը, պարբերաբար պետք է Ազգային ժողովի և իրավասու մարմինների ուշադրության կենտրոնում լինեն՝ ապահովելու անձանց

դատական պաշտպանության իրավունքի անխոչընդոտ իրացումը՝ հաշվի առնելով վերջիններիս սոցիալական ու գույքային դրությունն ու այն պայմանավորող գործոններն և իրողությունները: Ավելին, պետական տուրքի դրույքաչափերի շարունակական աճի միտումը խրախուսելի չէ: Հնարավորության դեպքում՝ դրանք պետք է նաև նվազեն՝ որպես իրավական պետությանը բնորոշ անքակտելի գործելակերպ: Այս կապակցությամբ տեղին է վկայակոչել, որ «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով) նշել է. «(...) Հաշվի առնելով մարդու իրավունքների աճող ավելի համապարփակ պաշտպանությունը՝ անհատների համար դատարանի վճարը պետք է համեմատաբար ցածր լինի և անձի ֆինանսական դրությանը համապատասխան պետք է հնարավոր լինի այն նվազեցնել: Այդ վճարի առաջնային նպատակը պետք է լինի ակնհայտ չարաշահման կանխումը»¹:

Ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը, 170-րդ հոդվածը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ և 9.1-ին հոդվածները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

1 հուլիսի 2022 թվականի
ՍԴՈ-1655

¹ Հասանելի է հետևյալ հղումով՝ [https://www.venice.coe.int/WebForms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2010\)039rev-e](https://www.venice.coe.int/WebForms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2010)039rev-e) կետ 117:



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**2018 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-ԻՆ ԴՈՒՇԱՆԲԵՌՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԽԱՂԱՂ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ
ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԱՆԿԱՏ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ»
ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱ-
ՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

3(107)2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Քաղ. Երևան

12 հուլիսի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմայանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Է.
Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

ՀՀ կառավարության ներկայացուցիչ՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարար Ռ. Խաչատրյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ
հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին»
սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2018 թվականի
սեպտեմբերի 28-ին Դիուշանբեում ստորագրված «Խաղաղ նպատակներով
տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման ոլորտում

համագործակցության մասին Անկախ Պետությունների Համագործակցության» կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՀՀ կառավարությունն իր՝ 2022 թվականի մայիսի 5-ի N 603-Ա որոշմամբ հավանություն է տվել «Խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման ոլորտում համագործակցության մասին Անկախ Պետությունների Համագործակցության» կոնվենցիան վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2022 թվականի մայիսի 12-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ կոնվենցիան, սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման ոլորտում համագործակցության մասին Անկախ Պետությունների Համագործակցության» կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) ստորագրվել է 2018 թվականի սեպտեմբերի 28-ին Դուշանբեում՝ խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման, ինչպես նաև տիեզերական տեխնիկայի և տիեզերական տեխնոլոգիաների կիրառման ոլորտում համագործակցությունն ի շահ Կոնվենցիայի կողմ հանդիսացող պետությունների ժողովուրդների զարգացնելու նպատակով:

2. ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 5-ի N 603-Ա որոշման հավելվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը վավերացնում է Կոնվենցիան վերապահումով՝ պայմանով, որ Հայաստանի Հանրապետությունն իրեն իրավունք է վերապահում առանձին որոշում կայացնելու «Խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման ոլորտում համագործակցության մասին Անկախ Պետությունների Համագործակցության» կոնվենցիայի դրույթների տարածման վերաբերյալ այն պետությունների նկատմամբ, որոնք միացել են Կոնվենցիային 2018 թվականի սեպտեմբերի 28-ից հետո:

3. Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- նպաստել Կողմերի հետ համագործակցության զարգացմանը՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածով սահմանված ուղղություններով (հոդված 5),
- խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱՆ ԳՑԵՎԻԿԻ ◆ 3(107)/2022

և օգտագործման համատեղ գործունեությունն իրականացնել միջպետական նախագծերի և ծրագրերի հիման վրա (հոդված 6),

- որպես շահագրգիռ Կողմ՝ միջպետական նախագծերի և ծրագրերի ֆինանսավորումն իրականացնել Հայաստանի Հանրապետության բյուջեով նախատեսված միջոցների և արտաբյուջետային աղբյուրների հաշվին (հոդված 8):

4. Կողմերի միջև հարաբերություններում Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո դադարում են գործել «Տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման համատեղ գործունեության մասին» 1991 թվականի դեկտեմբերի 30-ի համաձայնագիրը (Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1991 թվականի դեկտեմբերի 30-ին) և «Տիեզերական ծրագրերի կատարման շահերից ելնելով՝ տիեզերական ենթակառուցվածքի օբյեկտների պահպանման և օգտագործման կարգի մասին» 1992 թվականի մայիսի 15-ի համաձայնագիրը (Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1992 թվականի մայիսի 15-ին):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «2018 թվականի սեպտեմբերի 28-ին Դուշանբեում ստորագրված «Խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման ոլորտում համագործակցության մասին Անկախ Պետությունների Համագործակցության» կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

12 հուլիսի 2022 թվականի
ՍԴՈ-1656

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 3(107)2022



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

2022 թվականի մարտի 15-ին եվ մարտի 18-ին ստորագրված ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՉՈՐՐՈՐԴ ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

12 հուլիսի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

ՀՀ կառավարության ներկայացուցիչ՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Ա. Մուրադյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2022 թվականի մարտի 15-ին և մարտի 18-ին ստորագրված Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Պետական հատվածի արդիականացման չորրորդ ծրագիր» վարկային համաձայ-

3(107)2022
ՍԵՆԵԿԱԿԵԻ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
225

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 3(107)2022

նագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՀՀ կառավարությունն իր՝ 2022 թվականի մայիսի 13-ի N 688-Ա որոշմամբ հավանություն է տվել 2022 թվականի մարտի 15-ին և մարտի 18-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Պետական հատվածի արդիականացման չորրորդ ծրագիր» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2022 թվականի մայիսի 17-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Պետական հատվածի արդիականացման չորրորդ ծրագիր» (այսուհետ՝ Ծրագիր) վարկային համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2022 թվականի մարտի 15-ին և մարտի 18-ին՝ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացված նախորդ երեք՝ Պետական հատվածի արդիականացման ծրագրերի ձեռքբերումների շարունակականությունն ապահովելու և լրացուցիչ նախարարությունների ներդրմամբ պետական կառավարման համակարգի արդիականացման նպատակով: Ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից՝

ա) «**Պետական կառավարման համակարգի արդիականացումը**», մասնավորապես՝ քաղաքացիական ծառայության կառավարման համակարգի արդյունավետության բարձրացում, արդարադատության համակարգի ծառայությունների և դատական գործընթացների արդյունավետության բարձրացում և համապատասխանության բարելավում, աջակցություն նոր Ներքին գործերի նախարարության համակարգերի արդիականացմանը,

բ) «**Թվային ծառայությունների մատուցումը**», մասնավորապես՝ հարկային և մաքսային վարչարարության համակարգերի արդիականացում՝ եկամուտների մոբիլիզացման արդյունավետության բարձրացման նպատակով, պետական կառավարման մարմինների կողմից ծառայությունների մատուցման ամրապնդում, աջակցություն տեղական կառավարման մարմիններին տվյալների շտեմարանների, տվյալների ենթակառուցվածքի

և համակարգչային համակարգերի վերանախագծմանն առնչվող աշխատանքների փորձարկման միջոցով, որոնք ուղղված են բիզնես գործընթացների համապատասխանեցմանը պետական կառավարման կենտրոնական մարմինների բիզնես գործընթացներին և տեղական մակարդակում մատուցվող հանրային ծառայությունների թվայնացմանը,

գ) «**Տվյալների կառավարումը և թվային ենթակառուցվածքները**», մասնավորապես՝ թվային ենթակառուցվածքի արդյունավետության ու անվտանգության բարձրացում, կիրժեռ սպառնալիքների նկատմամբ ՀՀ թվային ենթակառուցվածքների և ակտիվների դիմակայունության բարձրացում, GovTech-ում տվյալագիտության, մեքենայական ուսուցման և արհեստական բանականության կիրառման բարելավում,

դ) «**Ծրագրի կառավարումը**», մասնավորապես՝ աջակցություն Ծրագրի իրականացմանը, այդ թվում՝ սակայն չսահմանափակվելով Ծրագրի իրականացման առնչությամբ Ծրագրի կառավարման խմբին վարչական աջակցության տրամադրմամբ, ինչպես օրինակ՝ գնումներ, ֆինանսական կառավարում, մշտադիտարկում և գնահատում, կարողությունների զարգացում, Ծրագրի կառավարում, համակարգում և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում ու Ծրագրի օժանդակությամբ իրականացվող բարեփոխումների կենտրոնացում:

Ըստ Համաձայնագրի՝ Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը (այսուհետ՝ Բանկ) համաձայնում է Հայաստանի Հանրապետությանը տրամադրել քսանվեց միլիոն հինգ հարյուր հազար եվրո (€26.500.000) գումար, որը կարող է ժամանակ առ ժամանակ փոխարկվել Արժույթի փոխարկման միջոցով (Վարկ)՝ Համաձայնագրի Առդիր 1-ում նկարագրված ծրագրի ֆինանսավորմանն աջակցելու համար:

2. Ըստ Համաձայնագրին կից ներկայացված Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «**Պետական հատվածի արդիականացման չորրորդ ծրագիր**» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման հիմնավորման՝ Ծրագիրը համահունչ է ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրին: Ծրագրի նպատակն է քաղաքացիական ծառայության շարունակական բարեփոխումների, պետության և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների թվայնացման և ընտրված էլեկտրոնային կառավարման

համակարգերի ներդրման միջոցով աջակցել պետական կառավարման համակարգի արդիականացմանը¹:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

3.1. վճարել միանվագ կոմիսիոն վճար, որը կազմում է Վարկի գումարի մեկ տոկոսի մեկ չորրորդը (0.25%) (հոդվ. II, բաժին 2.03),

3.2. վճարել պարտավորության վճար, որը տարեկան կազմում է Վարկի Չառհանված մնացորդի մեկ տոկոսի մեկ չորրորդը (0.25%) (հոդվ. II, բաժին 2.04),

3.3. վճարել տոկոսագումար, որը կազմում է Հաշվարկային դրույքաչափին գումարած Փոփոխական Սփրեդը կամ այնպիսի դրույքաչափ, որը կարող է կիրառվել Փոխարկումից հետո՝ Ընդհանուր պայմանների 3.02(ե) բաժնի համաձայն (հոդվ. II, բաժին 2.05),

¹ Հանրային հատվածի արդիականացման նախորդ երեք ծրագրերն են՝

ա) Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև 2004 թվականի հուլիսի 30-ին Երևան քաղաքում ստորագրված Չարգացման վարկի համաձայնագրով (Պետական կառավարման համակարգի արդիականացման ծրագիր) (վավերացվել է Ազգային ժողովի՝ 2004 թվականի հոկտեմբերի 25-ի Ն-134-3 որոշմամբ (ՍԴՈ-516)), փորձնական նախաձեռնությունների իրականացման, կառավարման համակարգում որոշումների կատարման և քաղաքականության իրականացման թափանցիկության բարելավման միջոցով պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով՝ Միջազգային զարգացման ընկերակցությունը Հայաստանի Հանրապետության կառավարությանը տրամադրել է 6.800.000 փոխառության հատուկ իրավունքներին հավասար, տարբեր արտարժույթներով արտահայտված գումար,

բ) Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2010 թվականի մարտի 30-ին ստորագրված «Հանրային հատվածի արդիականացման երկրորդ ծրագիր» վարկային համաձայնագրով (վավերացվել է Ազգային ժողովի՝ 2010 թվականի հունիսի 10-ի ԱԺՈ-215-Ն որոշմամբ (ՍԴՈ-888)) Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը Հայաստանի Հանրապետությանը տրամադրել է 9.000.000 (ինը միլիոն) ԱՄՆ դոլարին համարժեք վարկ՝ հանրային հատվածի կառավարման ամրապնդման նպատակով,

գ) Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2015 թվականի նոյեմբերի 18-ին ստորագրված՝ «Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագիր» վարկային համաձայնագրով (վավերացվել է Ազգային ժողովի՝ 2016 թվականի ապրիլի 7-ի ԱԺՈ-206-Ն որոշմամբ՝ (ՍԴՈ-1261)) հանրային ֆինանսական հաշվետվությունների որակի և ընտրված էլեկտրոնային կառավարման կատարելագործված ծառայությունների հասանելիության բարելավման ծրագիրը ֆինանսավորելու նպատակով Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը Հայաստանի Հանրապետությանը տրամադրել է 21.000.000 (քսանմեկ միլիոն) ԱՄՆ դոլարին համարժեք վարկ:

3.4. յուրաքանչյուր տարվա փետրվարի 15-ին և օգոստոսի 15-ին՝ սկսած 2037 թվականի փետրվարի 15-ից մինչև 2046 թվականի օգոստոսի 15-ը վերադարձնել Վարկի մայր գումարը 4.76% մասնաբաժնով, իսկ 2047 թվականի փետրվարի 15-ին՝ 4.8% մասնաբաժնով (հոդվ. II, բաժին 2.07, Առդիր 3),

3.5. պահպանել Պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողովը, որը պատասխանատու կլինի Ծրագրի վերահսկողության, ռազմավարական ուղղորդման և միջգերատեսչական համակարգման և այլ գործառույթների համար, ներառյալ՝ հանդես գալով որպես Ծրագրի ղեկավար հանձնաժողով և հաստատելով Ծրագրի գործառնական ձեռնարկը և հիմնական ֆինանսական և գնումների փաստաթղթերը, ինչպես հանգամանորեն ներկայացվում է Ծրագրի գործառնական ձեռնարկում, ինչպես նաև ապահովել, որ Պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողովը գլխավորի Հայաստանի Հանրապետության փոխվարչապետը կամ վարչապետի աշխատակազմի ղեկավարը, որը նաև կլինի Ծրագրի տնօրենը (Առդիր 2, բաժին I, մաս Ա, պարբերություն 1),

3.6. ոչ ուշ, քան մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը վարչապետի աշխատակազմի միջոցով իրականացնել հետազոտություն չափելու համար քաղաքացիների գոհունակությունն ընտրված վեց պետական ծառայությունների կատարողականի առնչությամբ, որոնք թվայնացվելու են Ծրագրի 2.2 շրջանակում Բանկի համար ընդունելի ձևով (Առդիր 2, բաժին I, մաս Ա, պարբերություն 3),

3.7. առանց Համաձայնագրի Առդիր 2-ի, I-ին բաժնի, Գ մասի 1-ին պարբերության սահմանափակման՝ վարչապետի աշխատակազմի միջոցով ապահովել Ծրագրի իրականացումը Բնապահպանական և սոցիալական հանձնառությունների պլանին համապատասխան՝ Բանկի համար ընդունելի ձևով, ինչպես նաև այդ նպատակով վարչապետի աշխատակազմի միջոցով ապահովել վերոնշյալ Գ մասի 2-րդ պարբերությունում շարադրված դրույթների կատարումը (Առդիր 2, բաժին I, մաս Գ, պարբերություն 2),

3.8. բացառությամբ այն դեպքերի, երբ Համաձայնագրի շրջանակում կարող է բացահայտ այլ բան պահանջվել կամ թույլատրվել կամ Ընկերակցության կողմից կարող է բացահայտ պահանջվել, Համաձայնագրի Առդիր 1-ում նկարագրված աշխատանքների հետ կապված ցանկացած տեղեկություն, հաշվետվություն կամ փաստաթուղթ տրամադրելիս ապահովել, որ այդ տեղեկությունը, հաշվետվությունը կամ փաստաթուղթն Անձնական տվյալներ չներառեն (Առդիր 2, բաժին II, պարբերություն 2) և այլն:

4. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 13-րդ հոդվածի դրույթներին, իսկ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող վարկի և դրա հետ կապված Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնվող միջազգային պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողությունը կապահովվի բյուջետային վերահսկողության ընդհանուր կարգի շրջանակներում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2022 թվականի մարտի 15-ին և մարտի 18-ին ստորագրված Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Պետական հատվածի արդիականացման չորրորդ ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

12 հուլիսի 2022 թվականի
ՍԴՈ-1657

3(107)2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅՄԲԵՐԻ 12-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ՀԱՄԱԴԱՇՆՈՒԹՅԱՆ
ՄԻՋԵՎ՝ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12-Ի՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ՀԱՄԱԴԱՇՆՈՒԹՅԱՆ
ՄԻՋԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ
ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

12 հուլիսի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Է.
Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝
ՀՀ կառավարության ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանսների նախարարի տե-
ղակալ Ա. Պողոսյանի,
համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ
հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին»
սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

3(107)/2022
ՏԵՆԴԵԿԻ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 3(107)2022

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2021 թվականի նոյեմբերի 12-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության և Շվեյցարիայի Համադաշնության միջև՝ 2006 թվականի հունիսի 12-ի՝ «Հայաստանի Հանրապետության և Շվեյցարիայի Համադաշնության միջև եկամուտների և գույքի հարկերի առնչությամբ կրկնակի հարկումը բացառելու մասին» կոնվենցիայում փոփոխություններ կատարելու վերաբերյալ արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՀՀ կառավարությունն իր՝ 2022 թվականի մարտի 24-ի N 371-Ա որոշմամբ հավանություն է տվել «2021 թվականի նոյեմբերի 12-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության և Շվեյցարիայի Համադաշնության միջև՝ 2006 թվականի հունիսի 12-ի՝ «Հայաստանի Հանրապետության և Շվեյցարիայի Համադաշնության միջև եկամուտների և գույքի հարկերի առնչությամբ կրկնակի հարկումը բացառելու մասին» կոնվենցիայում փոփոխություններ կատարելու վերաբերյալ արձանագրությունը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2022 թվականի մայիսի 18-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ արձանագրությունը, սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության և Շվեյցարիայի Համադաշնության միջև՝ 2006 թվականի հունիսի 12-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության և Շվեյցարիայի Համադաշնության միջև եկամուտների և գույքի հարկերի առնչությամբ կրկնակի հարկումը բացառելու մասին» կոնվենցիայում (այսուհետ՝ Կոնվենցիա) փոփոխություններ կատարելու վերաբերյալ» արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 2021 թվականի նոյեմբերի 12-ին Երևանում՝ Կոնվենցիայի մի շարք հոդվածներում և Կոնվենցիային կից արձանագրությունում փոփոխություններ կատարելու նպատակով՝ երկու պետությունների միջև տնտեսական, գիտական և տեխնիկական հարաբերությունների զարգացմանը և ամրապնդմանը, նոր ներդրումների ներգրավմանը նպաստելու համար:

2. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության սկզբունքով ստանձնում է, մասնավորապես, հավելյալ պարտավորությունները.

1) Կոնվենցիայի նպատակներով՝ եկամուտը, որն ստացվել է որևէ միավորման կամ կազմակերպության կողմից կամ միջոցով, որը երկու Պայմանավորվող պետությունների հարկային օրենսդրությամբ ամբողջովին կամ մասնակիորեն դիտարկվում է որպես հարկային տեսանկյունից թափանցիկ, համարել ՀՀ ռեզիդենտի եկամուտ, սակայն միայն այնքանով, որքանով այդ եկամուտը ՀՀ կողմից հարկման նպատակներով համարվում է որպես ՀՀ ռեզիդենտի եկամուտ, ինչպես նաև վերոհիշյալ դրույթները ոչ մի դեպքում չմեկնաբանել այնպես, որ որևէ կերպ սահմանափակվի Հայաստանի Հանրապետության՝ իր ռեզիդենտներին հարկելու իրավունքը (Արձանագրության հոդված 2, Կոնվենցիայի նոր խմբագրությամբ 1-ին հոդվածի 2-րդ կետ),

2) որևէ ճշգրտում չկատարել Հայաստանի Հանրապետության կամ Շվեյցարիայի Համադաշնության ձեռնարկության մշտական հաստատությանը վերագրելի շահույթի առնչությամբ հարկային այն տարվա ավարտից հինգ տարի հետո, երբ շահույթը վերագրելի կլինի մշտական հաստատությանը: Վերոհիշյալ դրույթները չկիրառել խաբեության կամ պարտավորությունների դիտավորյալ չկատարման դեպքում (Արձանագրության հոդված 7, 2-րդ կետ, Կոնվենցիայի նոր խմբագրությամբ 7-րդ հոդվածի 7-րդ կետ),

3) այն դեպքում, երբ Շվեյցարիայի Համադաշնությունն իր ձեռնարկության շահույթի մեջ ներառում է (և, հետևաբար, հարկում) շահույթի այն չափը, որի մասով Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունն արդեն ենթարկվել է հարկման Հայաստանի Հանրապետությունում, և այդպիսով ներառված շահույթն այն շահույթն է, որը հաշվեգրված կլիներ Շվեյցարիայի Համադաշնության ձեռնարկությանը, եթե երկու ձեռնարկությունների միջև առկա պայմանները լինեին այնպիսի պայմաններ, որոնք կլինեին անկախ ձեռնարկությունների միջև, ապա այդ շահույթի առնչությամբ կատարել այնտեղ գանձված հարկի գումարի չափով համապատասխան ճշգրտում. այդպիսի ճշգրտումը որոշելիս հաշվի առնել Կոնվենցիայի մյուս դրույթները և ապահովել, որ անհրաժեշտության դեպքում, Հայաստանի Հանրապետության և Շվեյցարիայի Համադաշնության իրավասու մարմինները խորհրդակցեն միմյանց հետ (Արձանագրության հոդված 8, 1-ին կետ, Կոնվենցիայի նոր խմբագրությամբ 9-րդ հոդվածի 2-րդ կետ),

4) երաշխավորել, որ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետը չի ազդի ընկերության հարկման վրա այն շահույթի մասով, որից վճարվում են շահաբաժինները և ապահովել, որ Հայաստանի Հանրապետության և Շվեյցարիայի Համադաշնության իրավասու մարմիններն այդ սահմանափակումների կիրառման եղանակը որոշեն փոխադարձ համաձայնությամբ (Արձանագրության հոդված 9, 1-ին կետ, Կոնվենցիայի նոր խմբագրությամբ 10-րդ հոդվածի 3-րդ կետ),

5) անկախ Կոնվենցիայի 11-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներից՝

ապահովել, որ Շվեյցարիայի Համադաշնությունում առաջացող և ՀՀ ռեզիդենտին, որը հանդիսանում է դրանց փաստացի սեփականատերը, վճարվող տոկոսները հարկվեն միայն ՀՀ-ում այն չափով, որով այդպիսի տոկոսները վճարվում են ՀՀ կառավարությանը, նրա քաղաքական միավորին կամ տեղական իշխանությանը կամ ՀՀ կենտրոնական բանկին (Արձանագրության հոդված 10, 1-ին կետ, Կոնվենցիայի նոր խմբագրությամբ 11-րդ հոդվածի 3-րդ կետի «գ» ենթակետ),

6) Կոնվենցիայի 11-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի դրույթները չկիրառել, եթե տոկոսների փաստացի սեփականատերը, լինելով ՀՀ ռեզիդենտ, այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում Շվեյցարիայի Համադաշնությունում, որտեղ առաջանում են տոկոսները, և պարտապահանջը, որի առնչությամբ վճարվում են տոկոսները, իրականում կապված է այդպիսի մշտական հաստատության կամ հաստատուն բազայի հետ. այդ դեպքում կիրառել Կոնվենցիայի 7-րդ հոդվածի («Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից») դրույթները (Արձանագրության հոդված 10, 2-րդ կետ, Կոնվենցիայի նոր խմբագրությամբ 11-րդ հոդվածի 5-րդ կետ),

7) Կոնվենցիայի 12-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթները չկիրառել, եթե ռոյալթիի փաստացի սեփականատերը, լինելով ՀՀ ռեզիդենտ, այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում Շվեյցարիայի Համադաշնությունում, որտեղ առաջանում է ռոյալթին, և իրավունքը կամ գույքը, որի առնչությամբ վճարվում է ռոյալթին, իրականում կապված է այդպիսի մշտական հաստատության հետ, այդ դեպքում կիրառել Կոնվենցիայի 7-րդ հոդվածի («Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից») դրույթները (Արձանագրության հոդված 11, 1-ին կետ, Կոնվենցիայի նոր խմբագրությամբ 12-րդ հոդվածի 4-րդ կետ),

8) Կոնվենցիայի 23-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի դրույթները չկիրառել Շվեյցարիայի Համադաշնության ռեզիդենտի ստացած եկամտի կամ գույքի նկատմամբ այն դեպքում, երբ Հայաստանն այդպիսի եկամուտը հարկումից ազատելու նպատակով կիրառում է Կոնվենցիայի դրույթները կամ այդպիսի եկամտի նկատմամբ կիրառում է Կոնվենցիայի 10-րդ («Շահաբաժիններ»), 11-րդ («Տոկոսներ») կամ 12-րդ («Ռոյալթի») հոդվածների 2-րդ կետի դրույթները (Արձանագրության հոդված 18, Կոնվենցիայի նոր խմբագրությամբ 23-րդ հոդվածի 2-րդ կետի «դ» ենթակետ),

9) ապահովել, որ ՀՀ իրավասու մարմինը, եթե դիմում-բողոքը համարում է արդարացի, և եթե նա ինքնուրույն ի վիճակի չէ հանգելու գոհացուցիչ լուծման, ապա ձգտի գործը վճռել Շվեյցարիայի Համադաշնության իրավասու մարմնի հետ փոխհամաձայնությամբ՝ Կոնվենցիային չհամապատասխանող հարկումը բացառելու նպատակով և ցանկացած համաձայնություն իրականացնի՝ անկախ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված որևէ ժամկետից,

սակայն բոլոր դեպքերում տվյալ հարկային տարվա ավարտից հետո՝ տասը տարուց ոչ ուշ (Արձանագրության հոդված 19, Կոնվենցիայի նոր խմբագրությամբ 25-րդ հոդվածի 2-րդ կետ),

10) ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները Շվեյցարիայի Համադաշնության իրավասու մարմնի հետ փոխանակեն այնպիսի տեղեկություններ, որոնք կանխատեսելի կերպով վերաբերելի կհամարվեն Կոնվենցիայի դրույթների իրականացման կամ հայկական և շվեյցարական կողմերի կամ նրանց քաղաքական միավորների կամ տեղական իշխանությունների անունից կիրառվող ցանկացած տեսակի և բնույթի հարկին վերաբերող ներպետական օրենսդրության կիրառման կամ գործադրման համար՝ այնքանով, որքանով դրանց հիման վրա հարկումը չի հակասում Կոնվենցիային: Տեղեկատվության փոխանակումը 1-ին («Ընդգրկված անձինք») և 2-րդ («Ընդգրկված հարկեր») հոդվածներով չի սահմանափակվում (Արձանագրության հոդված 20, Կոնվենցիայի նոր խմբագրությամբ 26-րդ հոդվածի 1-ին կետ),

11) Կոնվենցիայի 26-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան ստացած ցանկացած տեղեկություն համարել գաղտնի այնպես, ինչպես Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրության շրջանակում ստացած տեղեկությունը, և հաղորդել միայն այն անձանց կամ մարմիններին (ներառյալ դատարանները և վարչական մարմինները), որոնք առնչվում են վերոհիշյալ 1-ին կետում նշված հարկերի գնահատմանը կամ գանձմանը, դրանց առնչությամբ իրականացվող հարկադիր գանձումներին կամ քրեական հետապնդումներին, բողոքարկումների վերաբերյալ որոշումների կայացմանը, ինչպես նաև ապահովել, որ այդ անձինք կամ մարմինները տեղեկությունն օգտագործեն միայն այդպիսի նպատակներով և չնայած վերոնշյալին՝ Հայաստանի Հանրապետության ստացած տեղեկությունն այլ նպատակներով կարող է օգտագործվել, եթե այլ նպատակներով այդպիսի տեղեկության օգտագործումը թույլատրվում է Հայաստանի Հանրապետության և Շվեյցարիայի Համադաշնության օրենսդրությամբ, և տրամադրող Շվեյցարիայի Համադաշնության իրավասու մարմինը թույլատրում է նման օգտագործումը (Արձանագրության հոդված 20, Կոնվենցիայի նոր խմբագրությամբ 26-րդ հոդվածի 2-րդ կետ),

3. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2021 թվականի նոյեմբերի 12-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության և Շվեյցարիայի Համադաշնության միջև՝ 2006 թվականի հունիսի 12-ի՝ «Հայաստանի Հանրապետության և Շվեյցարիայի Համադաշնության միջև եկամուտների և գույքի հարկերի առնչությամբ կրկնակի հարկումը բացառելու մասին» կոնվենցիայում փոփոխություններ կատարելու վերաբերյալ արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

12 հուլիսի 2022 թվականի
ՍԴՈ-1658



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**«ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԻ ՄԵՋ ՄՏՆՈՂ
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ»
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

12 հուլիսի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Է.
Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

ՀՀ կառավարության ներկայացուցիչ՝ ՀՀ կենտրոնական բանկի
նախագահի տեղակալ Հ. Խաչատրյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ
հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին»
սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Եվրասիական
տնտեսական միության շրջանակներում վարկային պատմությունների կազմի
մեջ մտնող տեղեկությունների փոխանակման կարգի մասին» համաձայ-
նագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համա-
պատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՀՀ կառավարությունն իր՝ 2022 թվականի հունիսի 9-ի N 822-Ա որոշմամբ
հավանություն է տվել «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում

3(107)2022
◆ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
237

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ◆ 3(107)/2022

վարկային պատմությունների կազմի մեջ մտնող տեղեկությունների փոխանակման կարգի մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2022 թվականի հունիսի 13-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում վարկային պատմությունների կազմի մեջ մտնող տեղեկությունների փոխանակման կարգի մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2021 թվականի դեկտեմբերի 21-ին Մոսկվայում՝ ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժի ապահովման, ինչպես նաև վարկային ռիսկերի նվազեցման համար ֆինանսական շուկաներում պայմաններ ստեղծելու նպատակով:

2. Համաձայնագրով սահմանվում է Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) շրջանակներում վարկային պատմությունների կազմի մեջ մտնող տեղեկությունների և Համաձայնագրով նախատեսված այլ տեղեկատվության փոխանակման (այսուհետ՝ անդրսահմանային փոխանակում) կարգը:

3. Տեղեկությունները և այլ տեղեկատվությունը, որոնց մասով իրականացվում է անդրսահմանային փոխանակում, ներառում են վարկային հաշվետվություն տրամադրելու վերաբերյալ հարցումը, վարկային պատմության սուբյեկտի համաձայնությունը կամ այդ համաձայնության առկայության մասին տեղեկատվությունն այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի լիազորված կազմակերպություն է ուղարկվում վարկային հաշվետվություն տրամադրելու վերաբերյալ հարցումը, վարկային հաշվետվությունը, վարկային պատմությունների կազմի մեջ մտնող տեղեկությունների վիճարկմանն առնչվող փաստաթղթերը:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.
- անդրսահմանային փոխանակումն իրականացնել լիազորված կազմակերպությունների փոխգործակցության միջոցով՝ դրանց միջև կնքված

պայմանագրերով նախատեսված կարգով և պայմաններով և ապահովել այդ պայմանագրերի նախագծերի համաձայնեցումը լիազորված մարմնի կողմից, եթե դա նախատեսված է ՀՀ օրենսդրությամբ (հոդված 3, 1-ին կետ, 1-ին պարբերություն),

- ապահովել, որ անդրսահմանային փոխանակումը կազմակերպելու նպատակով ՀՀ լիազորված մարմինն անդրսահմանային փոխանակմանը մասնակցող լիազորված կազմակերպության մասին պաշտոնապես տեղեկացնի մյուս Կողմերին և Եվրասիական տնտեսական հանձնաժողովին (այսուհետ՝ Հանձնաժողով) Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո 10 օրացուցային օրվանից ոչ ուշ, ինչպես նաև ապահովել, որ լիազորված կազմակերպության փոփոխման դեպքում ՀՀ լիազորված մարմինն այդ փոփոխությունների մասին պաշտոնապես տեղեկացնի մյուս Կողմերին և Հանձնաժողովին՝ այդ փոփոխություններն ուժի մեջ մտնելու օրվանից հետո 10 օրացուցային օրվանից ոչ ուշ (հոդված 3, 3-րդ կետ),

- ապահովել, որ Համաձայնագրի իրագործման նպատակով վարկային հաշվետվությունը տրամադրվի վարկային պատմության օգտատիրոջ հարցման հիման վրա և ներառի, այդ թվում՝ վարկային պատմության սուբյեկտի նույնականացման տվյալները և նրա պարտավորությունների վերաբերյալ տեղեկությունները (հոդված 4, 3-րդ կետ),

- ապահովել, որ հարցում ստացող ՀՀ լիազորված կազմակերպությունը վարկային հաշվետվությունը կամ վարկային պատմության բացակայության մասին ծանուցումն ուղարկի հարցում կատարող լիազորված կազմակերպության հասցեով՝ հարցումն ստանալու օրվանից հետո 3 աշխատանքային օրվանից ոչ ուշ (հոդված 4, 7-րդ կետ),

- հարցման կատարման անհնարինության դեպքում ապահովել, որ հարցում ստացող ՀՀ լիազորված կազմակերպությունն այդ մասին ծանուցի հարցում կատարող լիազորված կազմակերպությանը (նշելով պատճառները)՝ հարցումն ստանալու օրվանից հետո 3 աշխատանքային օրվանից ոչ ուշ (հոդված 4, 9-րդ կետ),

- երաշխավորել, որ վարկային պատմության ՀՀ օգտատիրոջ կողմից վարկային հարաբերությունների ձևակերպման մասին պայմանագրի կնքումը մերժվելու դեպքում, վարկային պատմության ՀՀ օգտատերը վարկային պատմության սուբյեկտի պահանջով նրան հնարավորություն կընձեռի ծանոթանալու համապատասխան վարկային այն հաշվետվության բովանդակությանը, որն ստացվել է անդրսահմանային փոխանակման շրջանակներում (այդպիսի հաշվետվության առկայության դեպքում) հոդված 4, 11-րդ կետ),

- ապահովել, որ վարկային պատմության սուբյեկտի համաձայնության բնօրինակը պահվի վարկային պատմության ՀՀ օգտատիրոջ մոտ՝ այդ համաձայնության գործողության ժամկետն ավարտվելու օրվանից հետո առնվազն 3 տարի (հոդված 5, 5-րդ կետ),

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 3(107)2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

- ապահովել, որ ՀՀ լիազորված մարմինը, ՀՀ լիազորված կազմակերպությունն ու վարկային պատմության ՀՀ օգտատերն ապահովեն այն տեղեկատվության պաշտպանությունը, որի մասով իրականացվում է անդրսահմանային փոխանակում՝ Համաձայնագրին, Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերին ու ակտերին և ՀՀ օրենսդրությանը համապատասխան դրա մշակման, պահպանման և փոխանցման ժամանակ (հոդված 6, 1-ին կետ),

- տեղեկատվության պաշտպանության պայմաններն ու կարգը կարգավորող ՀՀ նորմատիվ իրավական ակտերում, որոնց առնչությամբ իրականացվում է անդրսահմանային փոխանակումը, փոփոխություն կատարելու դեպքում ապահովել, որ ՀՀ լիազորված մարմինն այդ փոփոխությունների մասին տեղեկացնի մյուս անդամ պետությունների լիազորված մարմիններին և Հանձնաժողովին՝ այդ փոփոխություններն ուժի մեջ մտնելու օրվանից հետո 30 օրացուցային օրվանից ոչ ուշ (հոդված 6, 2-րդ կետ),

- Համաձայնագրի գործողության դադարեցման դեպքում՝ Համաձայնագրի գործողության ժամանակահատվածում անդրսահմանային փոխանակման ժամանակ ստացված տեղեկատվության մասով, ՀՀ օրենսդրությանը համապատասխան, ձեռնարկել դրա պաշտպանությանն ուղղված այնպիսի միջոցներ, որոնք համարժեք են այդ տեղեկատվությունն ստացած ՀՀ վարկային պատմությունների կազմի մեջ մտնող տեղեկությունների նկատմամբ կիրառվող միջոցներին, ինչպես նաև նշված տեղեկատվության պահպանման ամբողջ ժամանակահատվածում՝ Համաձայնագրի 7-րդ հոդվածով նախատեսված նպատակներից տարբերվող նպատակներով դրա օգտագործումը թույլ չտալուն ուղղված միջոցներ (հոդված 6, 3-րդ կետ),

- անդրսահմանային փոխանակման ժամանակ ստացված տեղեկատվությունն օգտագործել բացառապես վարկային հարաբերությունների ձևակերպման և (կամ) ձևակերպված վարկային հարաբերությունների դիտանցման նպատակով (հոդված 7),

- ՀՀ օրենսդրությանը համապատասխան անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել Համաձայնագրով նախատեսված՝ տեղեկատվության անդրսահմանային փոխանակման կարգի խախտումների կանխարգելման ու կանխման, և նման խախտումների ցանկացած դեպքի քննության համար, ինչպես նաև ապահովել, որ խախտումը թույլ տված անձը պատասխանատվություն կրի ՀՀ օրենսդրությանը համապատասխան (հոդված 8):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:


1. «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում վարկային պատմությունների կազմի մեջ մտնող տեղեկությունների փոխանակման կարգի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

12 հուլիսի 2022 թվականի
ՍԴՈ-1659



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**ՊԱՐԳԵՎ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 1226-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ
2-ՐԴ ԿԵՏԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

12 հուլիսի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Վ. Գրիգորյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Է. Շաթիրյանի, Ա.
Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝
դիմողի՝ Պարզև Առաքելյանի ներկայացուցիչ Գ. Գրիգորյանի,
գործով որպես պատասխանող ներգրավված Ազգային ժողովի ներկայա-
ցուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և
սպասարկման բաժնի պետ Ա. Մնացականյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ
հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին»
սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածների,

գրավոր ընթացակարգով քննեց «Պարզև Առաքելյանի դիմումի հիման
վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ
կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերա-
բերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը (այսուհետ՝
Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի մայիսի

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
◆ 3(107)2022

5-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի հուլիսի 28-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

Օրենսգրքի՝ «**Ժառանգությունն ընդունելու եղանակները**» վերտա-
ռությամբ 1226-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով սահմանվում է.

«3. Եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը՝ ներառյալ, երբ ժառանգը՝

(...)

2) իր հաշվին կատարել է գույքը պահպանելու ծախսեր»:

Վերոնշյալ դրույթը որևէ փոփոխության կամ լրացման չի ենթարկվել:

Գործի քննության առիթը Պարզև Առաքելյանի՝ 2022 թվականի փետրվարի 8-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը և կից ներկայացված փաստաթղթերը, պատաս-
խանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը, ինչպես նաև Օրենսգրքի և այլ օրենքների վերաբերելի դրույթները՝ Սահմա-
նադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. Գործի դատավարական նախապատմությունը

Սույն գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

Պարզև Առաքելյանը (այսուհետ՝ նաև դիմող) հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Հռիփսիմե Առաքելյանի՝ ըստ կտակի ժառանգությունը փաստացի տիրապետման հիմքով ընդունած ճանաչելու և դրա հետևանքով ժառան-
գության վկայագիրը և սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին (թիվ ԵԴ/17804/02/18 քաղաքա-
ցիական գործ):

Հռիփսիմե Առաքելյանը հակընդդեմ հայց է ներկայացրել դատարան ընդդեմ Պարզև Առաքելյանի, երրորդ անձինք՝ Երևան նոտարական տա-
րածքի նոտար Հայկուհի Հարությունյան, Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե՝ ժառանգության զանգվածի մեջ ներառված գույքերի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 11.09.2020թ. վճռով հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցի մասով գործի վարույթը կարճվել է:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.04.2021թ. որոշմամբ Պարզև Առաքելյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և վճիռը թողնվել է անփոփոխ այն պատճառաբանությամբ, որ՝ «Սույն գործով Դատարանը հաստատված է համարել այն չվիճարկված փաստերը, որ հայցվորը հանդիսացել է միաժամանակ ըստ օրենքի և ըստ կտակի ժառանգ ու ժառանգության

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԿԻ 3(107)/2022

ընդունման վեցամսյա ժամկետում ժառանգության բացման վայրի նոտարին չի ներկայացրել ըստ կրակի ժառանգության ընդունման մասին դիմում: Նույնանման փաստեր են առկա եղել նաև թիվ ԵԱՔԴ/1018/02/09 քաղաքացիական գործով հաստատված փաստերի կազմում, և այդ հիմքով Դատարանը միանգամայն իրավաչափ կերպով հղում է կատարել թիվ ԵԱՔԴ/1018/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011թ. որոշմամբ այն իրավական նորմերի վերաբերյալ կատարված մեկնաբանություններին, որոնք կարգավորում են ժառանգության ընդունման հետ կապված հարաբերությունները և հանգում են նրան, որ ըստ կրակի ժառանգություն կարող է ընդունվել բացառապես ժառանգության բացման վայրի նոտարին համապատասխան դիմում ներկայացնելու միջոցով: Դատարանի կատարած հղումը վկայում է այն մասին, որ Դատարանը լիովին կիսել է ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումն ու վերջինիս մեկնաբանություններից շեղվելու համար բավարար և ծանրակշիռ հիմնավորումներ չի ունեցել: Նույնաբովանդակ է նաև խնդրո առարկա իրավական հարցի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի դիրքորոշումը, և այն կրկնելու անհրաժեշտությունը բացակայում է»:

Վերաքննիչ դատարանի հիշյալ որոշման դեմ ներկայացվել է վճռաբեկ բողոք, որի վարույթ ընդունելը մերժվել է Վճռաբեկ դատարանի 04.08.2021թ. որոշմամբ:

Պարզև Առաքելյանի կողմից 2022 թվականի փետրվարի 8-ին Սահմանադրական դատարան է ներկայացվել դիմում՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու խնդրանքով, որը Սահմանադրական դատարանի դատական կազմի 25.02.2022թ. ՍԴԴԿՈ-9 որոշմամբ ընդունվել է քննության:

2. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը նշում է, որ Վճռաբեկ դատարանի և ստորադաս բոլոր դատարանների կողմից ձևավորվել է կայուն պրակտիկա, որի էությունը հանգում է նրան, որ Օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով սահմանված՝ ժառանգական գույքը փաստացի տիրապետման և կառավարման ձևով ժառանգության ընդունման եղանակը չի վերաբերում ըստ կտակի ժառանգներին, որոնք միաժամանակ հանդիսանում են նաև ըստ օրենքի ժառանգներ, և վերջիններս ըստ կտակի ժառանգությունը կարող են ընդունել բացառապես նոտարին ժառանգության ընդունման վերաբերյալ դիմում ներկայացնելով:

Դիմողը գտնում է, որ եթե ժառանգության ընդունման գործընթացում ժառանգն ունենա սեփականության իրավունքի ձեռքբերման լեգիտիմ ակնկալիք, ապա Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 75-րդ և 78-րդ հոդվածներով ամրագրված երաշխիքները կվերաբերեն նաև ժառանգության ընդունմանը՝ ընդհանրապես, և մասնավորապես՝

ժառանգության ընդունման եղանակներին, քանի որ դրանք, ըստ էության, հանդես են գալիս որպես սեփականության իրավունքի ձեռքբերման միջոցներ և ընթացակարգեր:

Իրականացնելով քաղաքացիական օրենսդրության մի շարք նորմերի վերլուծություն՝ դիմողը գտնում է, որ ժառանգության ընդունման գործընթացում ժառանգն ունի սեփականության իրավունքի ձեռքբերման լեգիտիմ ակնկալիք, ինչը նշանակում է, որ ժառանգության ընդունման գործընթացը, մասնավորապես՝ ժառանգության ընդունման եղանակները, դրանց գործադրման ընթացակարգերն ու հիմքերը պետք է այնպես կարգավորված լինեն, որ մի կողմից՝ ապահովեն Սահմանադրությամբ և Սահմանադրական դատարանի վերաբերելի իրավական դիրքորոշումներում ամրագրված երաշխիքները, իսկ մյուս կողմից՝ չհակասեն այդ երաշխիքներից բխող պահանջներին, ինչն էլ, իր հերթին, նշանակում է, որ ժառանգության ընդունման եղանակների սահմանափակումը՝ որպես սեփականության իրավունքի ձեռքբերման հնարավորության սահմանափակում, պետք է համահունչ լինի Սահմանադրության 75-րդ և 78-րդ հոդվածների պահանջներին և համապատասխանի սեփականության իրավունքի ձեռքբերման լեգիտիմ ակնկալիքի իրավունքի նշանակությանը, ինչպես նաև հետապնդի Սահմանադրությամբ սահմանված նպատակ՝ համապատասխանելով համաչափության սկզբունքին:

Դիմողի համոզմամբ՝ օբյեկտիվ իրականության մեջ ողջամտորեն հնարավոր չէ բացառել այն դեպքերը, երբ միաժամանակ ըստ կտակի և ըստ օրենքի ժառանգի՝ փաստացի տիրապետման և կառավարմանն ուղղված գործողություններն ապացուցեն, որ նրա կամքն ուղղված է հենց ըստ կտակի ժառանգությունն ընդունելուն: Դիմողը նշում է. «Թե օրենքը, թե ողջամիտ տրամաբանության կանոնները որևէ կերպ չեն բացառում, որ միաժամանակ ըստ կտակի և ըստ օրենքի ժառանգը կարող է փաստացի տիրապետման և կառավարման այնպիսի գործողություններ կատարել և դրանք կատարել այնպիսի հանգամանքներում, որոնք կհաստատեն, որ նրա կամքն ուղղված է հենց ըստ կտակի ժառանգության ընդունմանը»:

Դիմողը եզրահանգում է. «Ժառանգական գույքը փաստացի տիրապետման և կառավարման եղանակով ընդունելու իրավական մեխանիզմը կոչված է ապահովելու ժառանգությունը ժառանգի կողմից փաստացի ընդունման իրավական առումով արձանագրումը, քանի որ ժառանգատուի և ժառանգի միջև գոյություն ունեցած ընտանեկան, արյունակցական, բարեկամական կամ այլ անձնական բնույթի հարաբերությունները ժառանգներին, հաճախ, բնականորեն թելադրում են ժառանգության ընդունման համար դրսևորել, նախ և առաջ, հենց այնպիսի վարքագիծ, որն իր նկարագրությամբ համահունչ է ժառանգության փաստացի տիրապետման և կառավարման օրինական նկարագրությանը: Հենց նշվածով էլ պայմանավորված

Ժառանգության իրավունքը ժառանգության ընդունման քննարկվող եղանակը տարածել է նաև ըստ կտակի ժառանգության նկատմամբ ևս, քանի որ այս դեպքում նույնպես ժառանգի կողմից ժառանգության ընդունմանն ուղղված վերոհիշյալ վարքագծի դրսևորումը բնականորեն օրինաչափ է, ինչից հետևում է, որ այս եղանակի կիրառման քննարկվող սահմանափակումը կհանգեցնի ժառանգության հարաբերությունների հիմքում ընկած հասարակական առումով բնական օրինաչափությունների գործողության խաթարման, որն անընդունելի է և չի կարող նպաստել այս հարաբերությունների արդյունավետ կարգավորմանը և ժառանգման կամ այս եղանակով սեփականության իրավունքի ձեռքբերման լեգիտիմ ակնկալիքի հիմնական իրավունքի լիարժեք կենսագործմանը»:

Ամփոփելով իր դիրքորոշումները՝ դիմողը խնդրում է. «ՀՀ սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասի, 60-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 75-րդ հոդվածի և 78-րդ հոդվածի դրույթներին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի դրույթն այն կայուն պրակտիկա դարձած դատական մեկնաբանությամբ կամ նույն իրավանորմի այն մեկնաբանությունը, ըստ որի ժառանգական գույքը փաստացի տիրապետման և կառավարման եղանակով ժառանգության ընդունման եղանակը չի վերաբերում այն ըստ կտակի ժառանգներին, որոնք միաժամանակ հանդիսանում են նաև ըստ օրենքի ժառանգներ և վերջիններս ըստ կտակի ժառանգությունը կարող են ընդունել բացառապես նոտարին ժառանգության ընդունման վերաբերյալ դիմում ներկայացնելով»:

3. Պատասխանողի դիրքորոշումները

Իրականացնելով քաղաքացիական օրենսդրության՝ ժառանգական իրավունքին վերաբերող նորմերի և դրանց վերաբերյալ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների համադրված վերլուծություն՝ Ազգային ժողովը (այսուհետ՝ նաև պատասխանող) նշում է, որ օրենսդիրը, երաշխավորելով ըստ կտակի ժառանգների ժառանգելու իրավունքը, միևնույն ժամանակ սահմանել է պայման, որ ըստ կտակի ժառանգության դեպքում ժառանգները ժառանգությունն ընդունելու համար օրենքով սահմանված ժամկետում պետք է իրականացնեն գիտակցված, ակտիվ գործողություններ, որոնք պետք է միտված լինեն հենց ըստ կտակի ժառանգությունն ընդունելուն: Օրենքով սահմանված ժամկետում ակտիվ գործողություններ չիրականացնելու դեպքում ժառանգությունը կատարվում է ըստ օրենքի:

Ըստ պատասխանողի՝ միաժամանակ և՛ ըստ կտակի, և՛ ըստ օրենքի ժառանգը, որն Օրենսգրքով սահմանված ժամկետում չի ձեռնարկել հենց ըստ կտակի ժառանգությունն ընդունելուն ուղղված ակտիվ քայլեր, սակայն կատարել է գույքի փաստացի տիրապետման և կառավարման գործողություններ, չի զրկվում ժառանգությունից ընդհանրապես: Գույքի փաստացի

տիրապետման և կառավարման գործողությունները կարող են վկայել ըստ օրենքի ժառանգությունն ընդունելու մասին, ուստի ըստ պատասխանողի՝ անհիմն է դիմողի այն պնդումը, որ խախտվում են այն ժառանգների իրավունքները, որոնք միաժամանակ և՛ ըստ կտակի, և՛ ըստ օրենքի ժառանգներ են:

Պատասխանողը նշում է, որ օրենսդրությամբ նախատեսված ժամկետում ըստ կտակի ժառանգների համար ակտիվ գործողություններ իրականացնելու պահանջը կոչված է ապահովելու ժառանգման իրավահարաբերությունների մյուս մասնակիցների իրավունքների պաշտպանությունը:

Անդրադառնալով վիճարկվող դրույթով ամրագրված կարգավորումների՝ համաչափության սկզբունքին համապատասխանության խնդրին՝ պատասխանողը գտնում է, որ օրենսդրի կողմից ժառանգության ընդունման եղանակների սահմանափակումն ինքնանպատակ չէ, այլ կոչված է ապահովելու քաղաքացիաիրավական հարաբերությունների կայունությունը և որոշակիությունը, ինչպես նաև ժառանգման իրավահարաբերությունների մյուս մասնակիցների իրավունքների պաշտպանությունը: Մասնավորապես՝ օրենքով սահմանված դեպքերում ժառանգության իրավունքն առաջանում է այլ ժառանգի կողմից ժառանգությունը սահմանված ժամկետում չընդունելու դեպքում:

Տվյալ դեպքում, ըստ պատասխանողի՝ օրենսդիրը, իրացնելով իրավունքների և ազատությունների սահմանափակումներ նախատեսելու իր իրավասությունը, այն կատարել է այնպիսի համամասնությամբ, որ ընտրված սահմանափակումը համահունչ է Սահմանադրությամբ նախատեսված համաչափության սկզբունքին, այն է՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցը պիտանի և անհրաժեշտ է Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար:

4. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սահմանադրական դատարանն իր՝ 2016 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-1321 որոշմամբ անդրադարձել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանադրականության հարցին և նշել է, որ վերջինս համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ այնպիսի սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ կտակված գույքի փաստացի տիրապետումն ու կառավարումը պարտադիր բաժնի իրավունք ունեցող անձի կողմից ինքնին բավարար հիմք է տվյալ անձի կողմից ժառանգության ընդունման փաստը դատական կարգով հաստատելու համար, և այդ փաստի հաստատման համար անհրաժեշտ չեն ժառանգությունն ընդունելուն միտված այլ ակտիվ գործողությունների կատարման և, մասնավորապես, նոտարին դիմում տալու վերաբերյալ ապացույցներ:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԿԻ 3(107)2022

Նկատի ունենալով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի կանոնակարգումը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործով դիմողի կողմից առաջադրված հարցերն այլ են, և ՍԴԴ-1321 որոշմամբ Սահմանադրական դատարանն այդ հարցերին չի անդրադարձել:

Հաշվի առնելով այն, որ դիմողի կարծիքով վիճարկվող դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ խախտվում է իր՝ Սահմանադրությամբ նախատեսված սեփականության իրավունքը, Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը.

- արդյո՞ք իրավակիրառ պրակտիկայում վիճարկվող դրույթին տրված մեկնաբանությունը սահմանափակում է ըստ կտակի ժառանգ հանդիսացող անձի՝ Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքը, և արդյո՞ք այդ սահմանափակումը համահունչ է համաչափության սահմանադրաիրավական սկզբունքին:

5. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

5.1. Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

2. Ժառանգելու իրավունքը երաշխավորվում է»:

Ժառանգելու իրավունքը սերտորեն կապված է սեփականության իրավունքի հետ և ոչ միայն այն պատճառով, որ ժառանգությունը սեփականության ձեռքբերման օրինական հիմքերից մեկն է, այլ նաև այն պատճառով, որ սեփականատիրոջ գույքը ժառանգաբար փոխանցելու հնարավորությունը առավել պաշտպանված և անձեռնմխելի է դարձնում սեփականության իրավունքն ընդհանրապես: Մասնավորապես, ժառանգության ինստիտուտի առկայության պայմաններում, եթե ժառանգատուն այլ որոշում չկայացնի, նրա գույքը որպես կանոն շարունակելու է մնալ մասնավոր սեփականության ներքո՝ իմաստավորելով սեփականության իրավունքի անժամկետ լինելու հանգամանքը:

Սահմանադրական դատարանն իր՝ 2016 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴԴ-1321 որոշմամբ նշել է, որ «ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է անձի սեփականության իրավունքը, որի շրջանակներում սահմանադիրն առանձին դրույթով՝ նույն հոդվածի 2-րդ մասով, երաշխավորում է ժառանգելու իրավունքը: Այսինքն՝ ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասում օգտագործված՝ «օրինական հիմքով ձեռք բերած» բառակապակցությունը ներառում է նաև գույքի ժառանգումը՝ որպես սեփականության ձեռքբերման հիմք: Նշված իրավական դիրքորոշումը բխում

է օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, այն է՝ «... քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են ... օրենքով թույլատրվող հիմքերով գույք ձեռք բերելու հետևանքով» և 172-րդ հոդվածի 3-րդ կետի, այն է՝ «Քաղաքացու մահվան դեպքում նրան պատկանող գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ժառանգաբար՝ կտակին կամ օրենքին համապատասխան, անցնում է այլ անձանց» դրույթներից»:

Մյուս կողմից, սեփականատիրոջ՝ սեփականության իրավունքից բխող տնօրինելու իրավագործությունն առնչվում է ժառանգության իրավունքին այն իմաստով, որ գույքը տնօրինելու արդյունքում որոշվում է գույքի ճակատագիրը, մասնավորապես՝ կտակ կազմելու միջոցով:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ժառանգության իրավունքի երաշխավորման սահմանադրաիրավական պահանջը պոզիտիվ պարտականություն է ստեղծում պետության համար՝ նախատեսելու պատշաճ համակարգ, որը կապահովի ժառանգատուի գույքը ժառանգաբար փոխանցելու հնարավորություն: Եվ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սահմանադրությունը երաշխավորում է նաև անձի իրավունքը՝ իր հայեցողությամբ տնօրինելու իր սեփականությունը, ապա առաջնային պետք է ապահովվի ժառանգատուի կամահայտնության իրականացումն իրեն պատկանող գույքի ճակատագրի որոշման առումով: Դա ուղղակիորեն բխում է Սահմանադրության 60-րդ հոդվածով նախատեսված պահանջներից:

Սահմանադրական դատարանն իր՝ 2010 թվականի սեպտեմբերի 18-ի ՍԴՈ-917 որոշմամբ արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «Ժառանգական իրավունքն ապահովում է սեփականատիրոջ իրավունքների պաշտպանությունը նաև նրա մահից հետո՝ հնարավոր դարձնելով նրա սեփականատիրական իրավագործությունների հաջորդայնությունը: Միևնույն ժամանակ, այն ժառանգի համար առաջացնում է ժառանգատուի սեփականության հանդեպ իրավահաջորդության սահմանադրորեն պաշտպանված հնարավորություն: Ժառանգական սուբյեկտիվ իրավունքը, այսպիսով, պաշտպանում է թե՛ ժառանգություն տալու, թե՛ ժառանգություն ընդունելու (ստանալու) իրավունքները: Ըստ օրենքի՝ ժառանգումը հիմնված է այն ենթադրության վրա, որ ժառանգորդների շրջանակը, դրանց ժառանգության հրավիրելու հերթերը, ժառանգական գույքի չափը սահմանող օրենքը **համապատասխանում են ժառանգատուի կամքին**, որը չի ցանկացել կամ չի կարողացել արտահայտել իր կամքը այլ կերպ, օրինակ՝ կտակի միջոցով»:

Մեկ այլ՝ 2017 թվականի հունվարի 31-ի ՍԴՈ-1340 որոշմամբ Սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Սահմանադրական դատարանի գնահատմամբ ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում ամրագրված դրույթները կազմում են սեփականության իրավունքի հիմնական բովանդակությունը՝ ամրագրելով այն

իրավագորությունները, որոնցից յուրաքանչյուր ոք անարգել պետք է կարողանա օգտվել սեփականության հիմնական իրավունքն իրականացնելիս, այսինքն՝ անձը պետք է առանց որևէ խոչընդոտի կարողանա իրականացնել սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու իրավունքը, օգտագործելու իրավունքը, տնօրինելու իրավունքը, ինչպես նաև ժառանգելու իրավունքը»:

Ամփոփելով սեփականության իրավունքն ամրագրող սահմանադրական նորմերի վերաբերյալ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ ժառանգության իրավունքը, այդ թվում՝ ժառանգների օրինական ակնկալիքի իրավունքն անմիջական կախվածության մեջ է գտնվում ժառանգատուի կամքից: Կտակի առկայության դեպքում ժառանգությունը բաշխվում է կտակարարի կամահայտնությանը համապատասխան, կտակի բացակայության պայմաններում գույքն անցնում է ժառանգներին օրենքով նախատեսված կարգով, ընդ որում՝ ենթադրվում է, որ օրենքով սահմանված կարգը համապատասխանում է ժառանգատուի կամքին, որը չի ցանկացել կամ չի կարողացել արտահայտել իր կամքը կտակի միջոցով: Այսինքն՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի բովանդակությունից բխում է, որ բոլոր դեպքերում ժառանգության բաշխումն իրականացվում է ժառանգատուի կամքին համահունչ՝ մի դեպքում՝ ուղղակի կամահայտնության (կտակի) արդյունքում, մյուս դեպքում՝ կամահայտնության կանխավարկածը հաշվի առնելով:

5.2. Սահմանադրաիրավական վերոնշյալ կարգավորումների համատեքստում Օրենսգրքի 1185-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսել է գույքի՝ ժառանգաբար փոխանցման երկու հիմք՝ ժառանգությունն ըստ կտակի և ըստ օրենքի: Օրենսգրքի 1192-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կտակ է համարվում քաղաքացու մահվան դեպքում նրան պատկանող գույքի տնօրինման վերաբերյալ նրա կամքի արտահայտությունը: Կտակը միակողմանի գործարք է, որի վավերությունը որոշվում է ժառանգությունը բացվելու պահին:

Սույն գործով սահմանադրաիրավական վեճի լուծման համար կարևոր է հաշվի առնել, որ Օրենսգրքի համաձայն՝ «ժառանգությունը կատարվում է ըստ օրենքի, եթե չկա կտակ, կամ դրանում սահմանված չէ ամբողջ ժառանգության ճակատագիրը, ինչպես նաև սույն օրենսգրքով սահմանված այլ դեպքերում» (1185-րդ հոդված, 2-րդ մաս): Այսինքն՝ քաղաքացիական օրենսդրությամբ իրագործվել է սահմանադրաիրավական այն մոտեցումը, համաձայն որի՝ ըստ կտակի ժառանգությունը նախապատվություն ունի ըստ օրենքի ժառանգության նկատմամբ: Հաշվի առնելով, որ սեփականատերը տնօրինում է իրեն պատկանող գույքն իր հայեցողությամբ, ըստ օրենքի ժառանգությունը վրա է հասնում միայն կտակի բացակայության պայմաններում կամ օրենքով նախատեսված բացառիկ դեպքերում (պարտադիր

բաժնի իրավունքի իրագործում, չկտակված ժառանգական զանգվածի՝ ըստ օրենքի ժառանգում և այլն):

Միաժամանակ հարկ է նշել, որ ժառանգատուի կամահայտնության արդյունավետ իրագործման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի կտակի ազատության սկզբունքը:

Ըստ այդ սկզբունքի՝ կտակարարը իրավունք ունի ցանկացած գույք կտակել ցանկացած անձի, ցանկացած ձևով որոշել ժառանգությունում ժառանգների բաժինները, գրկել ժառանգությունից ըստ օրենքի ժառանգներին, կատարել կտակային հանձնարարություններ, նշանակել ենթաժառանգներ, փոփոխել, լրացնել կամ վերացնել կտակը, ինչպես նաև իրականացնել կտակի հետ կապված Օրենսգրքով նախատեսված այլ իրավասություններ:

Անհրաժեշտ է հաշվի առնել, որ կտակի ազատությունը կարող է սահմանափակվել միայն ժառանգության պարտադիր բաժնի իրավունքով: Փաստացի դա կարող է տեղի ունենալ այն պարագայում, երբ առկա կլինեն պարտադիր բաժնի իրավունք ունեցող ժառանգներ: Օրենսգրքի 1194-րդ հոդվածի համաձայն՝ ժառանգության բացման ժամանակ պարտադիր բաժնի իրավունք ունեցող ժառանգների շարքին են դասվում ժառանգատուի անչափահաս երեխաները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով հաշմանդամ կամ անգործունակ ճանաչված կամ 60 տարեկան դարձած ժառանգատուի երեխաները, ամուսինը և ծնողները:

Ըստ կտակի ժառանգության կարևորությունն ու առաջնահերթությունն արտահայտվում են նաև նրանում, որ անգամ ժառանգությունից մեկուսացված անձինք, որոնց շարքին են դասվում, մասնավորապես, այն անձինք, որոնք դիտավորյալ խոչընդոտել են ժառանգատուի վերջին կամքի իրականացմանը, դիտավորյալ կյանքից գրկել են ժառանգատուին կամ հնարավոր ժառանգներից որևէ մեկին կամ մահափորձ են կատարել նրանց կյանքի նկատմամբ, կարող են ժառանգել ըստ կտակի, եթե վերջիններիս նկատմամբ ժառանգատուն կտակը կազմել է մահափորձ կատարելուց հետո: Այսինքն՝ համապատասխան իրավակարգավորումներով առաջնային է դիտարկվել սեփականատիրոջ (ժառանգատուի) իրական կամքը:

Հարկ է նշել նաև, որ Օրենսգրքի 1202-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ կտակարարն իրավունք ունի նոր կտակի միջոցով՝

- 1) ամբողջությամբ վերացնել նախկին կտակը.
- 2) փոփոխել նախկին կտակը դրանում պարունակվող առանձին կտակային կարգադրությունները վերացնելու, փոփոխելու կամ լրացնելու կամ կտակը նոր կարգադրություններով լրացնելու միջոցով: Ընդ որում՝ ավելի ուշ արված և նախորդ կտակի կամ դրա առանձին կարգադրությունները վերացնելու մասին ուղղակի նշումներ չպարունակող կտակը նախկին կտակը վերացնում է իրեն հակասող մասով: Այս կարգավորումը ևս վկայում է ժառանգատուի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 3(107)2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

հայեցողության առաջնային լինելու մասին, ինչի արդյունքում իրագործվում է սեփականատիրոջ կամքը՝ իրեն պատկանող գույքն իր նախընտրած ժառանգներին փոխանցելու առումով:

5.3. Օրենսգրքի 1225-րդ հոդվածի համաձայն՝ ժառանգությունը ձեռք բերելու համար ժառանգը պետք է այն ընդունի: Սահմանված կարգով ընդունելու դեպքում ժառանգական գույքը կհամարվի օրինական հիմքով ձեռք բերված սեփականություն: Այդ առումով ժառանգության ընդունումը միակողմանի գործարք է, որի հիման վրա ժառանգաբար փոխանցվող գույքի նկատմամբ առաջանում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ: Քանի որ ժառանգության ընդունումը գործարք է, վերջինիս նկատմամբ կիրառելի են գործարքների ձևերին վերաբերող դրույթները:

Բացի դրանից, Օրենսգրքով նախատեսվում են մի շարք պահանջներ ժառանգության ընդունման՝ որպես իրավաբանական փաստի, նկատմամբ: Մասնավորապես՝ ժառանգությունը պայմանով կամ վերապահումներով ընդունել չի թույլատրվում: Ժառանգի կողմից ժառանգության մի մասի ընդունումը նշանակում է իրեն հասանելիք ամբողջ ժառանգության ընդունում՝ անկախ այն բանից, թե ինչ է այն և որտեղ է գտնվում: Ժառանգության ընդունումը մեկ կամ մի քանի ժառանգների կողմից չի նշանակում դրա ընդունում մնացած ժառանգների կողմից: Միաժամանակ, ընդունված ժառանգությունը ժառանգության բացման ժամանակից համարվում է ժառանգին պատկանող՝ անկախ այդ գույքի նկատմամբ ժառանգի իրավունքի պետական գրանցումից, եթե նման իրավունքը ենթակա է գրանցման:

Հաշվի առնելով մասնավոր իրավահարաբերությունների առանձնահատկությունները՝ Օրենսգրքը ժառանգության ընդունման իրավաբանական եղանակից բացի նախատեսել է նաև փաստացի տիրապետման կամ կառավարման ուժով ժառանգության ընդունման հնարավորությունը:

Մասնավորապես, մի դեպքում՝ Օրենսգրքի 1226-րդ հոդվածի համաձայն՝ ժառանգությունն ընդունվում է ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին ժառանգի դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելով: Տվյալ եղանակով ժառանգության ընդունման պարագայում հստակ արտահայտվում է ժառանգի կամքը ժառանգական գույքն իր սեփականությունը դարձնելու առումով: Մյուս դեպքում՝ Օրենսգրքով սահմանվում է, որ եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը՝ ներառյալ, երբ ժառանգը՝

- 1) միջոցներ է ձեռնարկում գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ոտնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար.
- 2) իր հաշվին կատարում է գույքը պահպանելու ծախսեր.

3) իր հաշվից վճարում է ժառանգատուի պարտքերը կամ երրորդ անձանցից ստանում է ժառանգատուին հասանելիք գումարները:

Այսինքն՝ ի տարբերություն նոտարին դիմելու միջոցով ժառանգություն ընդունելու եղանակի՝ օրենսդիրը նախատեսել է նաև կոնկյուդենտ գործողություններով ժառանգություն ընդունելու հնարավորություն, այն է՝ այնպիսի գործողություններով, որոնք վկայում են ժառանգությունն ընդունելու մասին: Դա պայմանավորված է առաջին հերթին այն հանգամանքով, որ եթե մասնավոր հարաբերություններում գոյություն ունենար միայն նոտարին դիմելու միջոցով ժառանգություն ընդունելու եղանակը, ապա լուրջ խոչընդոտներ կստեղծվեին ժառանգական գույքը ժառանգներին փոխանցվելու առումով, մասնավորապես, երբ սահմանված ժամկետում ժառանգը չդիմեր նոտարին ժառանգությունն ընդունելու համար, ապա մեծ կլիներ սեփականության կորստի հավանականությունը, ինչը չէր բխի սեփականության երաշխավորման սկզբունքից, այն է՝ ժառանգատուի կամահայտնության ապահովման անհրաժեշտությունից, ինչպես նաև ժառանգական զանգվածի նկատմամբ ժառանգների օրինական ակնկալիքի իրավունքից:

Հարկ է նշել, որ փաստացի տիրապետման կամ կառավարման եղանակով ժառանգության ընդունման համար օրենսդիրը սահմանել է որոշակի նախապայմաններ: Նախ՝ փաստացի տիրապետման և կառավարման եղանակով ժառանգության ընդունումը իրավական կանխավարկած է, որը կարող է հերքվել կամ վիճարկվել: Երկրորդ՝ օրենսդիրը, նախատեսելով ժառանգի կողմից կատարվող փաստացի գործողությունների շրջանակը, այնուամենայնիվ չի սահմանել այդ գործողությունների սպառիչ ցանկ: Այսպիսով՝ կարևորելով ժառանգների իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը՝ օրենսդիրը միաժամանակ հնարավորություն է նախատեսել վեճերի դեպքում հերքել կամ հաստատել փաստացի տիրապետման կամ կառավարման եղանակով ժառանգության ընդունման հանգամանքը:

5.4. Սույն գործով բարձրացված սահմանադրաիրավական վեճի լուծման համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ժառանգությունն ընդունելու եղանակների վերաբերյալ Վճռաբեկ դատարանի արտահայտած դիրքորոշումներին:

Ըստ Վճռաբեկ դատարանի՝ «(...) ժառանգության ընդունումը ժառանգի կողմից իրականացվող կանխամտածված, ակտիվ գործողությունների համակցություն է, որն ուղղված է ժառանգական գույքն իր սեփականությունը դարձնելուն: Այսինքն, թե ըստ օրենքի և թե ըստ կտակի ժառանգության ընդունման դեպքում ժառանգը պետք է գիտակցի և նրա գործողությունները պետք է նպատակաուղղված լինեն համապատասխան ժառանգության ընդունմանը» (**Վճռաբեկ դատարանի 01.07.2011թ. թիվ ԵԱԲԴ/1018/02/09 որոշում**):

Այդ առումով, գույքի փաստացի տիրապետման կամ կառավարման հետ կապված գործողությունները հենց այն կոնկյուրենտ գործողություններն են, որոնք ուղղված են ժառանգությունն ընդունելուն: Այսինքն, անկախ այն հանգամանքից, թե ժառանգությունն ընդունվում է ըստ օրենքի թե ըստ կտակի, ժառանգի փաստացի գործողությունները միտված պետք է լինեն ժառանգության ընդունմանը, այն է՝ ժառանգական գույքն իր սեփականության վերածմանը:

Միաժամանակ, զարգացնելով իր դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը տարանջատում է ըստ օրենքի և ըստ կտակի ժառանգության ընդունմանն ուղղված ակտիվ գործողությունները:

Վճռաբեկ դատարանը մի դեպքում նշում է, որ՝ «(...) ըստ օրենքի ժառանգման դեպքում ժառանգատուի մահվանից հետո վեցամսյա ժամկետում ժառանգի կողմից ժառանգված գույքի փաստացի տիրապետումն ու կառավարումն արդեն իսկ գիտակցված, ակտիվ գործողություններ են, որոնք նպատակաուղղված են ժառանգության ընդունմանը: Եթե ժառանգը, գիտակցելով, որ գույքը պատկանել է ժառանգատուին, վերջինիս մահվանից հետո տիրապետում և կառավարում է այդ գույքը, ըստ էության գիտակցաբար կատարում է ակտիվ գործողություններ, իսկ նման գործողությունների կատարումն օրենսդիրը համարում է ժառանգության ընդունման եղանակներից մեկը» **(Վճռաբեկ դատարանի 04.10.2013թ. թիվ ԱՐԱԴ2/0420/02/11 որոշում):**

Մյուս դեպքում Վճռաբեկ դատարանը նշում է, որ ըստ կտակի ժառանգման պարագայում ակտիվ գործողություններն ըստ էության «(...) հանգում են ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումն օրենքով սահմանված վեցամսյա ժամկետում ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելուն» **(Վճռաբեկ դատարանի 04.10.2013թ. թիվ ԱՐԱԴ2/0420/02/11 որոշում):**

Նման դիրքորոշումների պարագայում ըստ կտակի ժառանգների համար փաստացի գործողությունները փաստորեն վերածվում են իրավաբանական գործողությունների, այն է՝ նոտարին դիմելու միջոցով ժառանգության ընդունմանը: Մինչդեռ փաստացի տիրապետման կամ կառավարման եղանակը ժառանգության ընդունման ինքնուրույն եղանակ է, որի իմաստն ու նշանակությունն այն է, որ նշված դեպքերում անհրաժեշտություն չկա ժառանգության ընդունման համար դիմել նոտարին:

Սույն գործի փաստական հանգամանքներից ելնելով՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև այն դեպքերին, երբ ժառանգը, միաժամանակ հանդիսանալով և՛ ըստ կտակի, և՛ ըստ օրենքի ժառանգ, փաստացի տիրապետման կամ կառավարման եղանակով ընդունում է ժառանգությունը:

Նման պարագայում հաշվի առնելով Սահմանադրությունից բխող ըստ կտակի ժառանգման առաջնահերթությունը՝ փաստացի տիրապետման կամ կառավարման եղանակով ժառանգության ընդունման պարագայում մնացած այլ պայմանների հավասարության դեպքում պետք է կիրառվի ժառանգությունն ըստ կտակի ընդունման կանխավարկածը:

Այդ կապակցությամբ հարկ է նշել, որ ըստ Օրենսգրքի 1230-րդ հոդվածի՝ ժառանգն իրավունք ունի հրաժարվել ժառանգությունից ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում՝ ներառյալ այն դեպքում, երբ նա արդեն ընդունել է ժառանգությունը: Ընդ որում՝ եթե ժառանգը ժառանգության է հրավիրվում և՛ ըստ կտակի, և՛ ըստ օրենքի, ապա նա իրավունք ունի հրաժարվել իրեն հասանելիք ժառանգությունից այդ հիմքերից մեկով կամ երկուսով՝ ժառանգության բացման վայրի նոտարին դիմում տալու միջոցով: Բացի դրանից, ժառանգն իրավունք ունի հրաժարվել ավելացման իրավունքով իրեն հասանելիք ժառանգությունից՝ անկախ ժառանգության մնացած մասը ժառանգելուց և այլն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ փաստացի տիրապետման կամ կառավարման միջոցով ժառանգությունն ընդունելու եղանակը կիրառելի է ինչպես ըստ օրենքի, այնպես էլ ըստ կտակի ժառանգության ընդունման դեպքերի համար: Ընդ որում՝ **եթե ժառանգը միաժամանակ և՛ ըստ կտակի, և՛ ըստ օրենքի ժառանգ է, ապա փաստացի տիրապետման կամ կառավարման եղանակով, մասնավորապես՝ գույքի պահանման ծախսերն իր հաշվին կատարելու միջոցով ժառանգության ընդունման դեպքում սահմանադրաիրավական պահանջների համահունչ պետք է գործի այն կանխավարկածը, որ ժառանգությունն ընդունվել է ըստ կտակի:**

5.5. Սույն գործի շրջանակներում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում դիտարկել փաստացի տիրապետման կամ կառավարման եղանակով ըստ կտակի ժառանգության ընդունման առանձնահատկությունները:

Հաշվի առնելով կտակի կարևորությունը ժառանգական հարաբերություններում՝ օրենսդիրը բավականաչափ կարգավորումներ է նախատեսել այդ ոլորտում: Հնարավոր չարաշահումներից խուսափելու նպատակով նախատեսվել են հստակ պահանջներ կտակի ընդունման և դրա վավերականության վերաբերյալ: Բացի դրանից, հաշվի առնելով, որ կտակով իրագործվում է գույքի սեփականատիրոջ կամքը, Օրենսգրքով նախատեսվել են լայն հնարավորություններ՝ ուղղված ժառանգատուի կամահայտնության առավել արդյունավետ իրականացմանը: Մասնավորապես՝ նախատեսվել է կտակային հանձնարարության ինստիտուտը, համաձայն որի՝ կտակարարն իրավունք ունի ըստ կտակի մեկ կամ մի քանի ժառանգների հանձնարարել ժառանգության հաշվին կատարելու որևէ պարտավորություն (կտակային հանձնա-

րարություն) հոգուտ մեկ կամ մի քանի անձանց (շահառուների), որոնք իրավունք ունեն պահանջել կատարելու այդ պարտավորությունը (Օրենսգրքի 1213-րդ հոդված): Կտակային հանձնարարությունը պետք է սահմանվի կտակում, ընդ որում՝ շահառուներ կարող են լինել ինչպես ըստ օրենքի ժառանգները, այնպես էլ այլ անձինք:

Օրենսգրքի վերոնշյալ հոդվածի համաձայն՝ կտակային հանձնարարության առարկա կարող է լինել ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքը սեփականության կամ օգտագործման իրավունքով շահառուին հանձնելը, ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքային իրավունքը նրան փոխանցելը, այլ գույք ձեռք բերելն ու նրան հանձնելը, նրա համար որոշակի աշխատանքներ կատարելը կամ նրան որոշակի ծառայություններ մատուցելը:

Կտակային հանձնարարության առարկա կարող է լինել նաև կտակարարին պատկանող կենդանիները պահելը և խնամելը:

Կտակարարն իրավունք ունի այն ժառանգի վրա, որին անցնում է բնակելի տունը (բնակարանը), պարտավորություն ղնել, որպեսզի նա տունը կամ դրա որոշակի մասը տրամադրի այլ անձի (անձանց)՝ ցմահ օգտագործման:

Դիտարկելով փաստացի տիրապետման կամ կառավարման եղանակով ըստ կտակի ժառանգության ընդունման հնարավորությունն այն պարագայում, երբ կտակում առկա է կտակային հանձնարարություն, Սահմանադրական դատարանը փաստում է, որ կտակային հանձնարարությունների մի մասն իր բնույթով կարող է իրագործվել բացառապես իրավասու մարմիններին դիմելու միջոցով, այդ թվում՝ ժառանգության ընդունման համար նոտարին դիմելով, մասնավորապես, երբ կտակային հանձնարարությունը վերաբերում է գրանցման ենթակա օբյեկտներին:

Սակայն մի շարք այլ դեպքերում կտակային հանձնարարությունները կարող են իրագործվել նաև ժառանգությունը փաստացի գործողություններով ընդունման պարագայում:

Միայն այն հանգամանքը, որ կտակային հանձնարարության կատարումը որոշակի դեպքերում արդեն իսկ պահանջում է ժառանգության ընդունում նոտարին համապատասխան դիմում ներկայացնելու միջոցով, չի կարող զրկել ըստ կտակի ժառանգներին փաստացի տիրապետման եղանակով ժառանգական գույքն ընդունելու հնարավորությունից, այն է՝ սեփականություն ձեռք բերելու օրինական ակնկալիքի իրավունքից:

Բացի դրանից, օրենսդիրը, հաշվի առնելով ժառանգական հարաբերությունների մասնավոր բնույթը, սահմանել է հետևյալ իրավակարգավորումը՝ «շահառուի (պարտատիրոջ) և ժառանգի, որի ժառանգական իրավունքը ծանրաբեռնված է կտակային հանձնարարությամբ (պարտապանի), միջև հարաբերությունների նկատմամբ կիրառվում են պարտավորությունների մասին ընդհանուր դրույթները, եթե այլ բան չի բխում սույն օրենսգրքի

կանոններից կամ կտակային հանձնարարության էությունից» (1213-րդ հոդվածի 2-րդ մաս):

Այսինքն՝ **եթե փաստացի տիրապետման կամ կառավարման եղանակով ժառանգությունն ընդունած ըստ կտակի ժառանգը չի կատարում կտակային հանձնարարությամբ իր վրա դրված պարտավորությունները, ապա շահագրգիռ անձինք կարող են պահանջել, այդ թվում՝ դատական կարգով, ժառանգությունն ընդունած ժառանգի կողմից իր պարտավորությունների կատարում:** Չի բացառվում նաև կտակային հանձնարարությունից բխող պահանջների դատական կարգով իրականացում, այդ թվում՝ կապված գույքի նկատմամբ իրավունքների գրանցման և այլնի հետ:

Հարկ է նշել նաև, որ Օրենսգրքի 1212-րդ հոդվածը նախատեսում է կտակակատարի միջոցով կտակի կատարման ինստիտուտը: Մասնավորապես՝ կտակարարը կարող է կտակ կատարելը հանձնարարել կտակում նշված անձին՝ կտակակատարին: Անձի՝ որպես կտակակատար հանդես գալու համաձայնությունը պետք է արտահայտված լինի կտակում արված նրա անձնական մակագրության կամ կտակին կից հայտարարության մեջ:

Բացի դրանից, ըստ Օրենսգրքի՝ ժառանգներն իրենց համաձայնությամբ կարող են կտակի կատարումը հանձնարարել իրենցից մեկին կամ այլ անձի: Նման համաձայնության բացակայության դեպքում ժառանգներից մեկի կամ մի քանիսի պահանջով կտակակատար նշանակում է դատարանը:

Կտակակատարը պարտավոր է սահմանված կարգով միջոցներ ձեռնարկել ժառանգության պահպանման և կառավարման համար, բոլոր ժառանգներին և շահառուներին տեղեկացնել ժառանգության բացման ու նրանց օգտին կտակային հանձնարարությունների մասին, ստանալ ժառանգատուին հասանելիք գումարները և այլ գույքը, սահմանված հերթականությամբ մարել ժառանգման հետ կապված պարտքերը, ապահովել ժառանգների կողմից իրենց հասանելիք գույքի ստացումը ժառանգատուի կամքին և օրենքին համապատասխան, կատարել կտակային հանձնարարությունները կամ ըստ կտակի ժառանգներից պահանջել կտակային հանձնարարության կատարում, ժառանգների պահանջով հաշվետվություն ներկայացնել կտակը կատարելու մասին և այլն:

Միաժամանակ, կտակարարն իրավունք ունի իր անունից վարել ժառանգությունը պահպանելու, կառավարելու ու կտակը կատարելու հետ կապված դատական և այլ գործերը:

Կարևոր է նաև նշել, որ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ **նոտարը ժառանգության բացման մասին տեղեկանալու պահից ծանուցում է ժառանգներին կտակի առկայության մասին**, իսկ նույն օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ ժառանգական գույքը պահպանելու և կառավարելու միջոցները նոտարը ձեռնարկում է ժառանգի, կտակակատարի, պարտատիրոջ, տեղական

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ 3(107)/2022

ինքնակառավարման մարմնի կամ ժառանգական գույքի պահպանման շահերից հանդես եկող այլ անձանց դիմումի հիման վրա:

Բացի դրանից, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 237-րդ հոդվածը իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման վերաբերյալ դատարանի կողմից քննվող գործերի շարքին է դասում, ի թիվս այլնի՝ ժառանգությունն ընդունելուն և ժառանգության բացման վայրին վերաբերող փաստերը, որոնք շահագրգիռ անձանց պահանջով կարող են հաստատվել դատարանի կողմից:

Վերոգրյալից ելնելով՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ կտակի կատարման հետ կապված, այդ թվում՝ կտակային հանձնարարությունների իրագործման վերաբերյալ իրավակարգավորումները որևէ կերպ չեն խոչընդոտում փաստացի տիրապետման կամ կառավարման եղանակով ըստ կտակի ժառանգության ընդունումը: Հակառակը, Օրենսգրքով նախատեսված կառուցակարգերը լիովին կիրառելի են ինչպես նոտարին դիմելու, այնպես էլ ժառանգական գույքը փաստացի տիրապետման կամ կառավարման եղանակով ժառանգության ընդունման համար՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ մասնավոր իրավահարաբերություններում շահագրգիռ անձինք, տեղեկացված լինելով իրենց իրավունքների և պարտականությունների մասին, ի գորու են միջոցներ ձեռնարկել իրենց իրավունքները և շահերը պաշտպանելու համար, այդ թվում՝ դատական կարգով:

5.6. Վճռաբեկ դատարանը, մերժելով դիմողի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը, ըստ էության գտել է, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումն էական նշանակություն չունի օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար: Միաժամանակ, համաձայնելով վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.04.2021թ. որոշմամբ արտահայտված պատճառաբանությունների հետ՝ Վճռաբեկ դատարանը չի համարել, որ բողոքում բարձրացված հարցերի առնչությամբ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դիրքորոշման համաձայն՝ «հայցվորը հանդիսացել է միաժամանակ ըստ օրենքի և ըստ կտակի ժառանգու ժառանգության ընդունման վեցամսյա ժամկետում ժառանգության բացման վայրի նոտարին չի ներկայացրել ըստ կտակի ժառանգության ընդունման մասին դիմում: Նույնանման փաստեր են առկա եղել նաև թիվ ԵԱՔԴ/1018/02/09 քաղաքացիական գործով հաստատված փաստերի կազմում, և այդ հիմքով Դատարանը միանգամայն իրավաչափ կերպով հղում է կատարել թիվ ԵԱՔԴ/1018/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011թ. որոշմամբ այն իրավական նորմերի վերաբերյալ կատարված մեկնաբանություններին, որոնք կարգավորում են ժառանգության ընդունման հետ կապված հարաբերությունները և հանգում են նրան, որ ըստ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 3(107)/2022

կտակի ժառանգություն կարող է ընդունվել բացառապես ժառանգության բացման վայրի նոտարին համապատասխան դիմում ներկայացնելու միջոցով»:

Հաշվի առնելով վիճարկվող դրույթի վերաբերյալ ձևավորված իրավակիրառ պրակտիկան, համաձայն որի՝ փաստացի տիրապետման կամ կառավարման եղանակով ժառանգության ընդունման հնարավորությունը սահմանափակվում է ըստ կտակի ժառանգների համար, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այդ սահմանափակումներին համաչափության սահմանադրաիրավական պահանջների տեսանկյունից:

Իրավունքի կամ ազատության սահմանափակման համաչափության գնահատման համար կարևոր է պարզել ընտրված միջոցների անհրաժեշտ և պիտանի լինելու հանգամանքը Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար:

Համաչափության սկզբունքի տարրերից յուրաքանչյուրին բովանդակային առումով Սահմանադրական դատարանը մանրամասն անդրադարձել է իր՝ 2020 թվականի հունիսի 18-ի ՍԴՈ-1546 որոշման մեջ:

Համաչափության սկզբունքին անդրադարձել է նաև ՄԻԵԴ-ը՝ այն մեկնաբանելով մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակման թույլատրելիության սահմանները որոշելու նպատակով: ՄԻԵԴ-ը կարևորել է հետապնդվող նպատակի և կիրառվող միջոցի միջև համաչափության պահպանման հարցը (***Pressos Compania Naviera S.A. and others v. Belgium, Application no. 17849/91, 20.11.1995, §38***):

Դատարանը միջամտությունը պետք է դիտարկի գործի ողջ հանգամանքների լույսի ներքո: Մասնավորապես՝ պետք է որոշվի՝ արդյո՞ք կատարված միջամտությունը համաչափ է հետապնդվող իրավաչափ նպատակին (***Barfod V. Denmark, Application no. 11508/85, 22.02.1989, § 28***):

Վերոգրյալից ելնելով՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ փաստացի տիրապետման կամ կառավարման եղանակով ժառանգության ընդունման հնարավորության սահմանափակումը պետք է հետապնդի Սահմանադրությամբ ամրագրված կոնկրետ նպատակ, իսկ այդ սահմանափակման համար օրենսդրորեն ընտրված միջոցը պետք է ի գործ լինի ապահովելու հետապնդվող նպատակը և մնացած միջոցների համեմատ նույն ներգործությամբ պետք է ապահովի առավել մեղմ միջամտություն ըստ կտակի ժառանգման իրավունքին:

Այդ առումով հարկ է նշել, որ փաստացի տիրապետման կամ կառավարման եղանակով ժառանգության ընդունման համար ըստ կտակի ժառանգների իրավունքներին միջամտությունը, նախ, սահմանված չէ օրենքով, երկրորդ՝ այն չի բխում Սահմանադրությամբ ամրագրված՝ հանրության շահերի կամ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՐ ◆ 3(107)/2022

այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությունից:

Հարկ է նշել, որ ըստ օրենքի ժառանգների իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը չի կարող իրավաչափ նպատակ հանդիսանալ ըստ կտակի ժառանգների իրավունքների սահմանափակման համար, քանի որ ըստ օրենքի ժառանգների՝ ժառանգական գույքի նկատմամբ օրինական ակնկալիքը կարող է ի հայտ գալ ըստ կտակի ժառանգների բացակայության պարագայում (այդ թվում՝ երբ ըստ կտակի ժառանգները հրաժարվել են ժառանգությունից, ճանաչվել են անարժան ժառանգներ և այլն): Բացի դրանից, փաստացի տիրապետման կամ կառավարման եղանակով ըստ կտակի ժառանգության ընդունման հետ կապված թվացյալ բարդությունները և անորոշությունները (կտակային հանձնարարության իրագործումը, պայմանով կտակի կատարելը, կտակով որոշված բաժիններին համահունչ ժառանգական գույքը բաշխելը և այլն) չեն կարող իրավաչափ հիմք հանդիսանալ Սահմանադրությամբ նախատեսված սեփականության իրավունքի սահմանափակման համար:

Ելնելով ողջ վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ՝

նախ, ինչպես վիճարկվող, այնպես էլ Օրենսգրքի որևէ դրույթով չի սահմանափակվում ըստ կտակի ժառանգի իրավունքը՝ փաստացի տիրապետման կամ կառավարման եղանակով ընդունելու ժառանգությունը,

երկրորդ, Օրենսգրքի տրամաբանությանը համապատասխան ժառանգության ընդունման եղանակներն ընդհանուր են ինչպես ըստ կտակի, այնպես էլ ըստ օրենքի ժառանգության ընդունման համար: Վճռաբեկ դատարանը, իր սահմանադրական առաքելությունից ելնելով, իրավազոր է ձևավորել վիճարկվող դրույթի վերաբերյալ համապատասխան իրավակիրառ պրակտիկա՝ հաշվի առնելով վիճարկվող դրույթի կիրառման առանձնահատկությունները, կապված ըստ օրենքի կամ ըստ կտակի ժառանգության ընդունման դեպքերի հետ, սակայն ոչ արգելափակել ընդհանրապես վիճարկվող նորմի կիրառման հնարավորությունն ըստ կտակի ժառանգության ընդունման դեպքերի համար,

երրորդ, իրավակիրառ պրակտիկայում վիճարկվող դրույթին տրված մեկնաբանությունը, միջամտելով ըստ կտակի ժառանգների իրավունքներին, չի հետապնդել սեփականության իրավունքի սահմանափակման համար Սահմանադրությամբ նախատեսված որևէ նպատակ,

չորրորդ, սահմանափակելով փաստացի տիրապետման կամ կառավարման եղանակով ըստ կտակի ժառանգների իրավունքները՝ ըստ էության սահմանափակվում են նաև կտակային հանձնարարություններից բխող շահառուների իրավունքները, քանի որ, ըստ ձևավորված իրավակիրառ պրակտիկայի, սահմանված ժամկետում ըստ կտակի ժառանգի կողմից ժառանգությունն ընդունելու հարցով նոտարին չդիմելու պարագայում չի

իրագործվի կտակով նախատեսված պահանջները, այդ թվում՝ կտակային հանձնարարությունները,

հինգերորդ, փաստացի տիրապետման կամ կառավարման եղանակը միայն ըստ օրենքի ժառանգների համար նախատեսելու պարագայում կարող է անտեսվել ժառանգատուի կամահայտնությունը, քանի որ կարող են լինել դեպքեր, երբ, օրինակ, կտակով ժառանգությունից զրկված ըստ օրենքի ժառանգները, առավելություն ունենալով ըստ կտակի ժառանգների համեմատ, ժառանգատուի կամքին հակառակ դառնան վերջինիս գույքի սեփականատերեր:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 170-րդ հոդվածով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, համաձայն որի՝ փաստացի տիրապետման կամ կառավարման, այդ թվում՝ իր հաշվին գույքը պահպանելու ծախսեր կատարելու միջոցով, ժառանգության ընդունման եղանակը կիրառելի է ինչպես ըստ օրենքի, այնպես էլ ըստ կտակի ժառանգության դեպքում:

2. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը դիմողի նկատմամբ կիրառվել է սույն որոշմամբ տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

12 հուլիսի 2022 թվականի
ՍԴՈ-1660



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
«ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 15-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ
ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

27 սեպտեմբերի 2022թ.

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ 3(107)/2022

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի՝ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի պատգամավոր Ա. Վարդևանյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետի պարտականությունները ժամանակավոր կատարող, նույն բաժնի գլխավոր մասնագետ Է. Մնացականյանի, համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 40 և 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի՝

Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ նաև Օրենք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2016 թվականի դեկտեմբերի 16-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2017 թվականի հունվարի 14-ին և ուժի մեջ է մտել 2017 թվականի ապրիլի 25-ից:

Օրենքի՝ «Գնման պլանավորումը և ֆինանսավորումը» վերտառությամբ **15-րդ հոդվածի 2-րդ մասով** սահմանվում է.

«2. Պետական գաղտնիք պարունակող գնումների պլանում ներառվում են ազգային անվտանգության ապահովման, «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պաշտոնատար անձանց արարողակարգային ծախսերի, կեցության, սննդի և տրանսպորտային սպասարկման, ներառյալ՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և նորոգման ոլորտում հատուկ տեխնիկական և ծրագրային, ռազմական տեխնիկայի, սպառազինության, ռազմամթերքի և ռազմատեխնիկական միջոցների ապահովման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները»:

Օրենքի վերոնշյալ դրույթը փոփոխության է ենթարկվել «Գնումների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-4-Ն ՀՀ օրենքով (ընդունվել է 2022 թվականի հունվարի 21-ին, ուժի մեջ է մտել 2022 թվականի հունիսի 1-ից):

Գործի քննության առիթն Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի՝ 2022 թվականի հունվարի 19-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը, վերլուծելով վիճարկվող և վերաբերելի իրավադրույթները՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը Սահմանադրական դատարանի առջև բարձրացնում է երկու հարցադրում. «1) Արդյո՞ք Հանրապետության նախագահի, վարչապետի, Ազգային ժողովի նախագահի արարողակարգային ծախսերի, կեցության, սննդի և տրանսպորտային սպասարկման, ներառյալ՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և նորոգման ոլորտում հատուկ տեխնիկական և ծրագրային ապահովման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները հանդիսանում են սահմանափակման ենթակա տեղեկատվություն, և արդյո՞ք նման տեղեկատվության սահմանափակումը համապատասխանում է համաչափության սկզբունքին:

3(107)/2022
 ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 ՍԵՆԵԿԱՆ

2) Արդյո՞ք Հանրապետության նախագահի, վարչապետի, Ազգային ժողովի նախագահի արարողակարգային ծախսերի, կեցության, սննդի և տրանսպորտային սպասարկման, ներառյալ՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և նորոգման ոլորտում հատուկ տեխնիկական և ծրագրային ապահովման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները հանրությունից գաղտնի պահելը չի խախտում տեղեկատվության ազատության և հասանելիության Սահմանադրի կամքը»:

Դիմողը պնդում է, որ Սահմանադրության 51 և 42-րդ հոդվածների տեսանկյունից ակնհայտորեն առկա է սահմանափակում, և պարզ չէ, թե օրենսդիրն ինչ իրավաչափ նպատակ հետապնդելով է վիճարկվող նորմի միջոցով ուղղակիորեն սահմանափակել Հանրապետության նախագահի, վարչապետի, Ազգային ժողովի նախագահի՝ պետական միջոցների հաշվին իրականացվող ծախսերի վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը:

Դիմողն արձանագրում է. «ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածով երաշխավորված համաչափության սկզբունքի տեսանկյունից որևէ կերպ բավարարված չեն «Գնումների մասին» ՀՀ օրենքի վիճարկվող կարգավորմամբ պիտանիությունը, անհրաժեշտությունը և առավել ևս համարժեքությունը՝ Հանրապետության նախագահի, վարչապետի, Ազգային ժողովի նախագահի արարողակարգային ծախսերի, կեցության, սննդի և տրանսպորտային սպասարկման, ներառյալ՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և նորոգման ոլորտում հատուկ տեխնիկական և ծրագրային ապահովման համար անհրաժեշտ ապրանքներն, աշխատանքները և ծառայությունները հանրությունից առհասարակ գաղտնի պահելով»:

Որպես իր ներկայացրած փաստարկների հիմնավորում՝ դիմողը նշում է, որ ժողովրդավարական հասարակություններում հանրային հաշվետվողականության և վերահսկողության կառուցակարգերն առանցքային նշանակություն ունեն, իսկ վիճարկվող կարգավորումներն ուղղակիորեն դուրս են մղում հասարակական կարծիքի միջոցով իրականացվող ժողովրդավարական վերահսկողության իրականացումը, արգելափակում են պետական իշխանության գործողությունների թափանցիկությունը և ուղղակիորեն բացառում են Հանրապետության նախագահի, վարչապետի, Ազգային ժողովի նախագահի արարողակարգային ծախսերի, կեցության, սննդի և տրանսպորտային սպասարկման, ներառյալ՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և նորոգման ոլորտում հատուկ տեխնիկական և ծրագրային ապահովման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները, ի թիվս այլնի, անհրաժեշտության կամ բյուջետային միջոցների ողջամիտ ծախսերի գնահատման տեսանկյունից հաշվետու գործունեության ապահովումը:

Անդրադառնալով խնդրո առարկա սահմանափակման հիմքերին՝ դիմողը նշում է, որ սույն պարագայում առկա չէ սահմանափակման՝ պետական

անվտանգության երաշխավորման նպատակ: Հակառակ պարագայում՝ պետական անվտանգության նկատառումներից ելնելով՝ հիշատակված պաշտոնատար անձանց թվին պետք է դասվեն նաև այլ պաշտոնատար անձինք, որոնք ևս իրենց գործունեությամբ ուղղակիորեն առնչվում են պետական անվտանգությանը: Դիմողի գնահատմամբ՝ «Վիճարկվող կարգավորումը որևէ կերպ չի առնչվում նաև հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի հիմքերի հետ»:

Դիմողի համոզմամբ՝ վիճարկվող կարգավորումը նաև ընդհանուր օրենսդրության տրամաբանությունից է շեղվել և ձևախեղել է պետական գաղտնիքի հասկացությունը, քանզի վիճարկվող կարգավորումն աղերս չունի «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով սահմանված «պետական գաղտնիք» հասկացության հետ:

Ամփոփելով իր դիրքորոշումը՝ դիմողը խնդրել է. «(...) որոշել Հայաստանի Հանրապետության «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1, 42, 51, 78 և 80-րդ հոդվածներին համապատասխանության հարցը»:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Ազգային ժողովը (այսուհետ՝ նաև պատասխանող) նշում է, որ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանում ներառվում են Հանրապետության նախագահի, վարչապետի և Ազգային ժողովի նախագահի արարողակարգային ծախսերի, կեցության, սննդի և տրանսպորտային սպասարկման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները՝ հաշվի առնելով նրանց առանձնահատուկ կարգավիճակը, այն է՝ պետական պահպանության օբյեկտներ հանդիսանալը, ինչը համահունչ է տեղեկություններ ստանալու իրավունքի սահմանափակման՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավաչափ նպատակին:

Պատասխանողի կարծիքով՝ տվյալ պարագայում օրենսդիրը, իրացնելով իրավունքների և ազատությունների սահմանափակումներ նախատեսելու իր իրավասությունը, այն կատարել է այնպիսի համամասնությամբ, որ ընտրված սահմանափակումը համահունչ է Սահմանադրության 78-րդ հոդվածով նախատեսված համաչափության սկզբունքին, այն է՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցը պիտանի և անհրաժեշտ է Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար:

3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողը վիճարկում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված այն դրույթները, որոնք վերաբերում են «Հատուկ պետական պաշտպանության ենթակա

անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պաշտոնատար անձանց արարողակարգային ծախսերի, կեցության, սննդի և տրանսպորտային սպասարկման, ներառյալ՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և նորոգման ոլորտում հատուկ տեխնիկական և ծրագրային ապահովման համար անհրաժեշտ ապրանքներին, աշխատանքներին և ծառայություններին, Սահմանադրական դատարանը սույն սահմանադրափրավական վեճի շրջանակներում կանդրադառնա միայն վերոնշյալ դրույթների սահմանադրականության հարցերին:

Միաժամանակ, սույն գործով սահմանադրափրավական վեճի լուծման համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը.

- արդյո՞ք «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավակարգավորումներն անհամաչափորեն սահմանափակում են անձի՝ Սահմանադրությամբ նախատեսված կարծիքի արտահայտման ազատությունը և տեղեկություններ ստանալու իրավունքը:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Կարծիքի արտահայտման ազատությունը և տեղեկություններ ստանալու իրավունքը ժողովրդավարական հասարակության գոյության և զարգացման կարևոր նախապայման են, և դրանց սահմանադրափրավական հիմքերն ամրագրված են Սահմանադրության՝ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» վերտառությամբ 2-րդ գլխի 42 և 51-րդ հոդվածներում:

Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է յուրաքանչյուրի կարծիքի արտահայտման ազատությունը, որի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը»:

Սահմանադրության 51-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է տեղեկություններ ստանալու իրավունքը, որի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու իրավունք»:

Սահմանադրության 42-րդ հոդվածը բովանդակում է երկու հիմնարար նշանակություն ունեցող սահմանադրափրավական արժեքներ՝ կարծիքի արտահայտման ազատությունը և տեղեկատվական ազատությունը: Նշյալ նորմի բովանդակային վերլուծությունից բխում է, որ կարծիքի արտահայտման

ազատությունը և տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը փոխկապակցված են, և մեկի առկայությունը ենթադրում է մյուսի գոյությունը:

Սահմանադրության 42-րդ հոդվածը, ամրագրելով կարծիքի արտահայտման ազատությունը, ի թիվս այլնի, երաշխավորում է նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը՝ այն դիտելով իբրև կարծիքի արտահայտման ազատության անքակտելի բաղադրատարր: Այս առումով Սահմանադրության 51-րդ հոդվածը, փոխլրացնելով Սահմանադրության 42-րդ հոդվածի իրավակարգավորումներն ամրագրում է տեղեկություններ ստանալու իրավունքը՝ երաշխավորելով յուրաքանչյուրի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու սահմանադրաիրավական հնարավորությունը, ինչը ենթադրում է նաև պետության համարժեք պարտականություն՝ ապահովել և պաշտպանել խնդրո առարկա իրավունքի արդյունավետ իրացումը:

Սահմանադրության 51-րդ հոդվածի իրավակարգավորումից բխում է, որ **տեղեկություններ ստանալու իրավունքն** իրացվում է երկու ձևով՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին **տեղեկություններ ստանալով** ու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին **փաստաթղթերին ծանոթանալով**:

Սահմանադրական այսպիսի ձևակերպումը մի կողմից՝ նպատակ է հետապնդում որոշակիացնել այն հարցերի շրջանակը, որոնց վերաբերյալ անձն իրավունք ունի տեղեկություններ ստանալու պահանջ ներկայացնել, այսինքն՝ **ունի կանխորոշող բնույթ**, և դրանով պայմանավորված՝ սահմանադրական երաշխիք է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու (այդ թվում՝ փաստաթղթերին ծանոթանալու միջոցով) համար, իսկ մյուս կողմից՝ **ունի նաև սահմանափակող բովանդակություն**, որի շնորհիվ այդ իրավունքը կրողին հնարավորություն չի տալիս իրավունքի հասցեատիրոջից՝ հանրային իշխանությունից, պահանջել և ստանալ **ցանկացած** տեղեկություն:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է անձի տեղեկություններ ստանալու իրավունքին և նշել.

«Հանրային տեղեկատվության մատչելիությունը ժողովրդավարության և հանրության առջև պատասխանատու պետական կառավարման թափանցիկության էական նախապայմաններից է: Հասարակական կարծիքի միջոցով իրականացվող ժողովրդավարական վերահսկողությունը խթանում է պետական իշխանության գործողությունների թափանցիկությունը և նպաստում

պետական մարմինների ու պաշտոնատար անձանց հաշվետու գործունեությանը:

Սահմանադրական այս իրավունքը, սակայն, բացարձակ իրավունք չէ և ենթակա է սահմանափակման ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածով սահմանված հիմքերով և կարգով: Այս սահմանադրական արժեքի հարաբերակցությունն այլ սահմանադրական արժեքների հետ, մասնավորապես, պետական անվտանգության հետ, որոշում է դրա հնարավոր սահմանափակումների բնույթը» (06.03.2012թ., ՍԴՈ-1010),

«(...) արտահայտվելու ազատությունը ոչ միայն մարդու իրավունքների ու ազատությունների, այլև հանրային շահերի համակարգում սկզբունքային կարևորության բաղադրիչ է, որի երաշխավորումը սահմանադրաիրավական և միջազգային իրավական պահանջ է» (26.12.2017թ., ՍԴՈ-1396):

Սահմանադրական դատարանն իր՝ 2016 թվականի փետրվարի 23-ի ՍԴՈ-1256 որոշման շրջանակներում անդրադարձել է նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ «Պետական մարմինների տրամադրության տակ գտնվող տեղեկատվության հասանելիության մասին» NR(81)19 հանձնարարականի պահանջներին:

Սահմանադրական դատարանն իր՝ 2016 թվականի փետրվարի 23-ի ՍԴՈ-1256 որոշմամբ արձանագրել է. «Ամփոփելով վերոհիշյալ պահանջները և համադրելով վեճի առարկա օրենքի իրավակարգավորումների հետ՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ու պաշտոնատար անձանցից տեղեկություններ ստանալու իրավունքը պետության համար ստեղծում է պոզիտիվ պարտականություններ ապահովելու համապատասխան իրավունքի պատշաճ և արդյունավետ իրականացումը»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդրադառնալով տեղեկատվության ազատությանը, արձանագրել է, որ հանրությունն ունի ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվություն ստանալու իրավունք: Այս առնչությամբ դատարանի նախադեպային իրավունքը կապված է մամուլի ազատության հետ, որը հենց ծառայում է նման հարցերի վերաբերյալ տեղեկություններ և գաղափարներ հաղորդելուն (*Társaság a Szabadságjogokért v. Hungary, Application no. 37374/05, 14.04.2009, Final 14.07.2009*):

Թեև այն չպետք է գերազանցի «ազգային անվտանգության շահերի» կամ «դատական իշխանության հեղինակությունը պահպանելու» համար նախատեսված սահմանները, այնուամենայնիվ, նրա պարտականությունն է հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ տեղեկատվություն և գաղափարներ հաղորդելը: Այդպիսի տեղեկատվություն և գաղափարներ հաղորդելու նպատակ ունի ոչ միայն մամուլը, այլև հանրությունն ունի դրանք ստանալու իրավունք: Հակառակ պարագայում՝ մամուլն անկարող

կլինի իրականացնել իր «հանրային հսկիչի» կենսական դերը (*Observer and Guardian v. The United Kingdom, Application no. 13585/88, 26.11.1991*):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս անդրադարձել է նաև մամուլի ազատությանը, մասնավորապես՝ ընդգծել է մամուլի էական դերը ժողովրդավարական հասարակության մեջ: Թեև մամուլը չպետք է անցնի որոշակի սահմանները, մասնավորապես՝ այլոց հեղինակության և իրավունքների պաշտպանության վերաբերյալ, այնուամենայնիվ, նրա պարտականությունն է իր պարտավորություններին և պատասխանատվությանը համապատասխան կերպով տրամադրել տեղեկատվություն և գաղափարներ հանրային հետաքրքրություն ներկայացնող բոլոր հարցերի վերաբերյալ: Մամուլի խնդիրն է նման տեղեկատվությունն ու գաղափարները տարածելը, իսկ հանրությունն ունի դրանք ստանալու իրավունք: Հակառակ դեպքում՝ մամուլը չէր կարողանա կատարել հասարակական վերահսկողության (public watchdog) իր կենսական դերը (*Axel Springer AG v. Germany, Application no. 39954/08, 07.02.2012*):

Այսպիսով, տեղեկություններ ստանալու իրավունքի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն **երաշխիք է պետական մարմինների գործունեության թափանցիկության և հաշվետվողականության համար**: Տեղեկություններ ստանալու իրավունքը սերտորեն կապված է կարծիքի արտահայտման ազատության հետ, քանի որ հասարակությունը նախ պետք է հնարավորություն ունենա ստանալ տեղեկություններ պետական մարմինների գործունեության վերաբերյալ, ապա վերլուծելով առկա տեղեկատվությունը և ձևավորելով որոշակի համոզմունք՝ արտահայտել իր կարծիքը: Վերոգրյալից բխում է, որ հանրության համար տեղեկությունը, որպես կանոն, պետք է մատչելի լինի, ինչի միջոցով էլ հնարավոր է արդյունավետ իրականացնել ժողովրդավարական պետություններին բնորոշ հասարակական վերահսկողությունը:

Միաժամանակ հարկ է նշել, որ սահմանադիրն ամրագրել է նաև այն իրավաչափ նպատակները, որոնց առկայության պարագայում խնդրո առարկա հիմնական իրավունքը/ազատությունը կարող է սահմանափակվել, այն է՝ կարծիքի արտահայտման ազատության պարագայում՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով (Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մաս), իսկ տեղեկություններ ստանալու իրավունքի համատեքստում՝ հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով (Սահմանադրության 51-րդ հոդվածի 2-րդ մաս):

4.2. Պետական գնումների ոլորտում թափանցիկությունը կենսական անհրաժեշտություն է յուրաքանչյուր ժողովրդավարական հասարակության

համար: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պետական գնումների ոլորտն ուղղակիորեն փոխկապակցված է պետական ֆինանսների կառավարման արդյունավետության հետ, պետության քաղաքականությունը պետք է միտված լինի ձևավորելու այնպիսի կառուցակարգեր, որոնց միջոցով կձևավորվի հաշվետվողականություն և հրապարակայնություն: Բացի դրանից, պետական գնումների վերաբերյալ օրենսդրության որակը կարևոր կանխարգելիչ նշանակություն ունի այդ ոլորտում հակակոռուպցիոն պայքարի տեսանկյունից: Ըստ այդմ՝ պետությունը պետք է հետևողականորեն, պարբերաբար հրապարակի գնումների ոլորտում ֆինանսական հաշվետվություններ, և հանրությունը պետք է իրական հասանելիություն ունենա դրանց, ինչն էլ թույլ կտա մի կողմից՝ զանգվածային լրատվության միջոցներին և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին արդյունավետ իրականացնել իրենց վերահսկողությունը, մյուս կողմից՝ ձգտել բացառել կոռուպցիոն բնույթի գործարքների իրականացումը:

Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատված է «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման՝ «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ» վերտառությամբ N 1 հավելվածով:

Համաձայն նշված կարգի 4-րդ կետի՝ գնման գործընթացը մի քանի գործընթացների ամբողջությունն է, որն իր մեջ ներառում է գնումների պլանավորումը, գնման գործընթացի կազմակերպումը (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը), պայմանագրի կնքումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը սահմանում է բյուջետային համակարգի հիմքում դրվող սկզբունքները: Նույն հոդվածի 8-րդ մասն ամրագրում է հրապարակայնության սկզբունքը, ըստ որի՝ հաստատված բյուջեների և դրանց կատարման մասին հաշվետվությունները պարտադիր հրապարակվում են մամուլում և ապահովվում է բյուջեների կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը:

Անդրադառնալով խնդրո առարկա տեղեկատվության և պետական գաղտնիքի հարաբերակցությանը՝ հարկ է նշել հետևյալը.

Պետական գաղտնիքի հասկացությունը բացահայտված է «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով, որի 2-րդ հոդվածը պետական գաղտնիքը սահմանում է որպես Հայաստանի Հանրապետության ռազմական, արտաքին հարաբերությունների, տնտեսական, գիտատեխնիկական, հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական գործունեության բնագավառների տեղեկություններ, որոնք պաշտպանվում են

պետության կողմից, և որոնց տարածումը կարող է ծանր հետևանքներ առաջացնել Հայաստանի Հանրապետության անվտանգության համար:

Ըստ այդմ՝ պետությունը մի կողմից՝ պաշտպանում է յուրաքանչյուրի տեղեկություններ ստանալու իրավունքը, անհրաժեշտ կառուցակարգեր է նախատեսում տվյալ իրավունքի պատշաճ իրականացման համար, մյուս կողմից՝ տեղեկության այն մասը, որն իր բնույթով գաղտնի տեղեկություն է և որի բացահայտումը կամ կորուստը կարող է վնաս հասցնել հանրային շահերին կամ այլոց հիմնական իրավունքներին և ազատություններին, կարող է սահմանափակվել:

Այլ կերպ ասած՝ օրենսդիրը, նպատակ ունենալով պաշտպանել հանրային շահերը կամ այլոց հիմնական իրավունքները և ազատությունները, տեղեկության մի որոշակի մասին տվել է հատուկ իրավական պաշտպանություն և սահմանափակել դրա նկատմամբ հասարակության հասանելիությունը: Այդ տրամաբանությունն է ընկած նաև «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի հիմքում, որի 8-րդ հոդվածը սահմանում է տեղեկատվության ազատության սահմանափակումները, որտեղ սահմանափակումների շրջանակում, ի թիվս այլի, նշված է նաև պետական գաղտնիք պարունակող տեղեկատվությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանում ներառվում են ազգային անվտանգության ապահովման, «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պաշտոնատար անձանց արարողակարգային ծախսերի, կեցության, սննդի և տրանսպորտային սպասարկման, ներառյալ՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և նորոգման ոլորտում հատուկ տեխնիկական և ծրագրային, ռազմական տեխնիկայի, սպառազինության, ռազմամթերքի և ռազմատեխնիկական միջոցների ապահովման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ վիճարկվող դրույթում առկա է ոչ հստակ ձևակերպում, մասնավորապես՝ ի տարբերություն կեցության, սննդի և տրանսպորտային միջոցների՝ օգտագործվում է «արարողակարգային ծախսեր» ձևակերպումը, ինչի արդյունքում տպավորություն է ստեղծվում, որ գնման պլանում ներառվում են «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պաշտոնատար անձանց ոչ թե **արարողակարգի**, այլ **արարողակարգային ծախսերի** ապահովման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները:

«Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված է, որ պետական պահպանություն տրամադրվում է՝

1. Հանրապետության նախագահին,
2. Վարչապետին,
3. Ազգային ժողովի նախագահին:

Վիճարկվող իրավակարգավորումների համատեքստում կարևոր է տարբերակել մի կողմից՝ **հատուկ պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման համար ձեռնարկվող միջոցառումները** (աշխատանքները, ապրանքները և ծառայությունները), որոնք իրենց բնույթով կարող են գաղտնիք լինել և հասանելի չլինել հասարակությանը, և մյուս կողմից՝ հատուկ պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման համար ձեռնարկվող միջոցառումների համար **ընդհանուր ծախսերը, որոնք պետք է հանդիսանան հանրության համար հասանելի տեղեկատվություն:**

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ պետական բյուջեի մասին օրենքի նախագիծը կազմելու, քննարկելու, հաստատելու, կատարելու, դրա նկատմամբ վերահսկողության հրապարակայնություն ապահովելու համար այն հրապարակվում է մամուլում և ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (բացառությամբ պետական գաղտնիք պարունակող հարցերի), իսկ քննարկումը լուսաբանվում է պետական լրատվության միջոցներով (բացառությամբ պետական գաղտնիք պարունակող հարցերի), որում ընդգրկված են նաև Հանրապետության նախագահի, վարչապետի, Ազգային ժողովի նախագահի արարողակարգային ծախսերի, կեցության, սննդի և տրանսպորտային սպասարկման, ներառյալ՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և նորոգման ոլորտում հատուկ տեխնիկական և ծրագրային ապահովման համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ծախսերի ընդհանուր թիվը:

Ինչ վերաբերում է Հանրապետության նախագահի, վարչապետի, Ազգային ժողովի նախագահի արարողակարգային ծախսերի, կեցության, սննդի և տրանսպորտային սպասարկման, ներառյալ՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և նորոգման ոլորտում հատուկ տեխնիկական և ծրագրային ապահովման համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ծախսերի բացվածքին, ապա դրանք, պայմանավորված իրենց բնույթով, այն է՝ պետական գաղտնիք լինելու հանգամանքով, չեն հրապարակվում, ուստի և հասանելի չեն հանրությանը:

4.3. Հանրապետության նախագահի, վարչապետի, Ազգային ժողովի նախագահի արարողակարգային ծախսերի, կեցության, սննդի և տրանսպորտային սպասարկման, ներառյալ՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական

սպասարկման և նորոգման ոլորտում հատուկ տեխնիկական և ծրագրային ապահովման համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ծախսերի բացվածքի՝ պետական գաղտնիք լինելու և այդ հանգամանքով պայմանավորված՝ այդպիսի տեղեկության հրապարակման ոչ ենթակա լինելու սահմանադրականության հարցը ենթակա է բացահայտման և գնահատման իրավունքին միջամտության համաչափության շրջանակներում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը և Սահմանադրական դատարանն իրենց նախադեպային իրավունքում զարգացրել և բազմիցս կիրառել են իրավունքին միջամտության իրավաչափության ստուգման եռատարր թեստը: Այն պահանջում է ցանկացած միջամտություն գնահատել հետևյալ չափանիշների համատեքստում.

1) նախատեսված է արդյոք միջամտությունն օրենքով,

2) հետապնդում է այն արդյոք իրավաչափ նպատակ,

3) ընտրված միջոցը բավարար և անհրաժեշտ է արդյոք ժողովրդավարական հասարակությունում հետապնդվող իրավաչափ նպատակին հասնելու համար:

Միջամտությունն օրենքով նախատեսված լինելու հանգամանքի գնահատման տեսանկյունից Սահմանադրական դատարանը փաստում է, որ խնդրո առարկա հիմնական իրավունքին միջամտությունը նախատեսվել է «Գնումների մասին» 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-21-Ն ՀՀ օրենքով, այսինքն՝ հիմնական իրավունքին միջամտությունը նախատեսված է օրենքով:

Անդրադառնալով իրավունքին միջամտության իրավաչափության ստուգման հաջորդ տարրի իրավաչափ նպատակի առկայության բացահայտմանը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Հանրապետության նախագահի, վարչապետի, Ազգային ժողովի նախագահի արարողակարգային ծախսերի, կեցության, սննդի և տրանսպորտային սպասարկման, ներառյալ՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և նորոգման ոլորտում հատուկ տեխնիկական և ծրագրային ապահովման համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ծախսերի բացվածքը պետական գաղտնիք պարունակող գնումների պլանում դասելու նպատակը բխում է նշված անձանց սահմանադրական բարձր կարգավիճակից և ուղղված է, ի թիվս այլնի, վերջիններիս կյանքի և առողջության պաշտպանության ապահովմանը: Այսինքն՝ հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց համար օրենքի ուժով պաշտպանության հատուկ ընթացակարգ նախատեսելը և վերջիններիս որոշակի երաշխիքներով օժտելը պայմանավորված է նրանց զբաղեցրած առանձնահատուկ կարգավիճակով, ուստի՝ նշյալ ծախսերի բացվածքի տարածումը կանխելը պետության համար ունի առաջնային նշանակություն:

Ավելին, «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերության համաձայն՝ Հանրապետության նախագահը, վարչապետը, Ազգային ժողովի նախագահը՝ իրենց պաշտոնավարման ժամանակահատվածում, իրավունք չունեն հրաժարվելու պետական պահպանությունից: Այսինքն՝ նշված անձանց համար հատուկ պետական պաշտպանություն նախատեսելը ոչ միայն չի փոխապայմանավորվում վերջիններիս կամքով, այլև կամահայտնության բացակայությունն իրավական նշանակություն չունեցող հանգամանք է, և օրենքի ուժով նշված անձինք ենթակա են հատուկ պաշտպանության:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Հանրապետության նախագահի, վարչապետի, Ազգային ժողովի նախագահի արարողակարգային ծախսերի, կեցության, սննդի և տրանսպորտային սպասարկման, ներառյալ՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և նորոգման ոլորտում հատուկ տեխնիկական և ծրագրային ապահովման համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ծախսերի բացվածքը պետական գաղտնիք պարունակող գնումների պլանում դասելու և դրանով պայմանավորված՝ տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու ազատության և պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու իրավունքի սահմանափակման նպատակն իրավաչափ է և բխում է Սահմանադրության 42-րդ հոդվածով նախատեսված պետական անվտանգության և 51-րդ հոդվածով նախատեսված հանրային շահի պաշտպանության անհրաժեշտությունից:

Հիմնական իրավունքին միջամտության գնահատման հաջորդ տարրը ժողովրդավարական հասարակությունում հետապնդվող իրավաչափ նպատակին հասնելու համար ընտրված միջոցի բավարարության և անհրաժեշտության գնահատումն է՝ համաչափության սահմանադրաիրավական սկզբունքի համատեքստում:

Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Հանրապետության նախագահի, վարչապետի, Ազգային ժողովի նախագահի արարողակարգային ծախսերի, կեցության, սննդի և տրանսպորտային սպասարկման, ներառյալ՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և նորոգման ոլորտում հատուկ տեխնիկական և ծրագրային ապահովման համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և

ծառայությունների ծախսերի բացվածքը պետական գաղտնիք պարունակող գնումների պլանում դասելն օրենսդրի կողմից ընտրված պիտանի միջոց է, քանի որ այդ տեղեկությունը գաղտնիքի շարքին դասելով է որ հնարավոր է դառնում իրավաչափորեն չհրապարակել նշյալ տեղեկությունը՝ ապահովելով սահմանադրորեն արդարացված պետական անվտանգության և հանրային շահի պաշտպանությունը:

Միաժամանակ, օրենսդրի կողմից ընտրված միջոցը նաև անհրաժեշտ է, քանի որ առկա չէ որևէ այլ՝ սահմանադրորեն նախատեսված իրավաչափ նպատակներին հասնելու համար պիտանի միջոց, որը ևս օժտված կլինի ակնկալվող նպատակն իրացնելու կարողունակությամբ: Միայն նման այլ միջոցի առկայության դեպքում հնարավոր կլիներ գնահատման առարկա դարձնել այդ միջոցի և օրենսդրի կողմից ընտրված միջոցների արդյունավետությունը և Սահմանադրության 42-րդ հոդվածով նախատեսված ազատությունն ու 51-րդ հոդվածով նախատեսված իրավունքն առավել մեղմ սահմանափակելու հարցը: Հետևաբար՝ օրենսդրի կողմից ընտրված միջոցը պիտանի է և միակ պիտանի միջոցը լինելու հանգամանքով պայմանավորված՝ նաև անհրաժեշտ է սահմանադրորեն սահմանված նպատակներին հասնելու համար:

Ինչ վերաբերում է համաչափության սահմանադրական սկզբունքի համարժեքության տարրին, ապա այս առնչությամբ նախ՝ հարկ է նշել, որ Հանրապետության նախագահի, վարչապետի, Ազգային ժողովի նախագահի արարողակարգային ծախսերի, կեցության, սննդի և տրանսպորտային սպասարկման, ներառյալ՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և նորոգման ոլորտում հատուկ տեխնիկական և ծրագրային ապահովման համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ընդհանուր ծախսերի թիվը բաց և հանրամատչելի տեղեկություն է, որն արտացոլված է յուրաքանչյուր տարվա բյուջեի մասին օրենքում (մասնավորապես՝ «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, N 1 հավելված, N 2 աղյուսակ):

Ընդ որում՝ Հանրապետության նախագահին, վարչապետին, Ազգային ժողովի նախագահին վիճարկվող դրույթով նախատեսված պաշտպանության նման բարձր մակարդակով օժտելը գերակա է տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու ազատության ու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու իրավունքի նկատմամբ, հետևաբար՝ այդ հիմնական ազատությունն ու իրավունքը սահմանափակելու օրենսդրի մոտեցումն արդարացված է պետական անվտանգության (հանրային շահի) տեսանկյունից:

Բացի դրանից, սահմանափակման համարժեքության գնահատման տեսանկյունից կարևոր է նաև նկատի ունենալ, որ չնայած վիճարկվող դրույթով

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՐ 3(107)2022

նախատեսված՝ տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու ազատության ու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու իրավունքի սահմանափակմանը, պետական անվտանգության կամ հանրային շահի անվան ներքո Հանրապետության նախագահի, վարչապետի, Ազգային ժողովի նախագահի արարողակարգային ծախսերի, կեցության, սննդի և տրանսպորտային սպասարկման, ներառյալ՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և նորոգման ոլորտում հատուկ տեխնիկական և ծրագրային ապահովման համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունն ամբողջապես փակ չէ, այլ գործում է **միջնորդավորված հանրային վերահսկողության գործիքակազմը:**

Այսպես, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի՝ «Պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը» վերտառությամբ 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվության պետական և ծառայողական գաղտնիք պարունակող ծախսային հոդվածները, բացված տեսքով, օրենքով սահմանված դասակարգմամբ, ներկայացվում են Ազգային ժողով՝ առանձին փակ ծրարով:

Խնդրո առարկա հարցի շրջանակներում իր դերակատարությունն ունի նաև Հաշվեքննիչ պալատը, որի՝ որպես անկախ պետական մարմնի սահմանադրաիրավական գործառույթն է հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում հաշվեքննություն իրականացնելը պետական բյուջեի միջոցների օգտագործման օրինականության և արդյունավետության նկատմամբ:

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի կարգավորումներից բխում է, որ Հաշվեքննիչ պալատը պետական բյուջեի կատարման վերաբերյալ տալիս է եզրակացություն, որը կազմվում է հաշվետու տարվա պետական բյուջեի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության միջոցով: Պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը բաղկացած է լինում երկու մասից.

1. Հայտնաբերված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների, ինչպես նաև առաջարկությունների վերաբերյալ տեղեկատվություն,
2. պետական բյուջեի կատարման վերաբերյալ կարծիք, որը, ըստ անհրաժեշտության, ներառում է՝
 - ա. դրական եզրահանգում, եթե ստացվել է բավարար տեղեկատվություն հաշվեքննություն իրականացնելու համար, և էական խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել,
 - բ. ոչ լիարժեք եզրահանգում, եթե հայտնաբերվել են էական խեղաթյուրումներ, դրանց հետևանքները համատարած չեն, և հաշվետվություններն

էականորեն խեղաթյուրված են, կամ հայտնաբերվել են էական խեղաթյուրումներ, դրանց հետևանքները համատարած չեն, և անհնար է ստանալ բավարար տեղեկատվություն հաշվեքննություն իրականացնելու համար,

գ. բացասական եզրահանգում, եթե հայտնաբերվել են էական խեղաթյուրումներ, դրանց հետևանքները համատարած են, և հաշվետվություններն էականորեն խեղաթյուրված են,

դ. հրաժարում եզրահանգում ներկայացնելուց, եթե հայտնաբերվել են էական խեղաթյուրումներ, դրանց հետևանքները համատարած են, և անհնար է ստանալ բավարար տեղեկատվություն հաշվեքննություն իրականացնելու համար:

Այսինքն՝ Ազգային ժողովին և Հաշվեքննիչ պալատին՝ որպես պետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնող պետական մարմինների, ողջ ծավալով հասանելի է Հանրապետության նախագահի, վարչապետի, Ազգային ժողովի նախագահի արարողակարգային ծախսերի, կեցության, սննդի և տրանսպորտային սպասարկման, ներառյալ՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և նորոգման ոլորտում հատուկ տեխնիկական և ծրագրային ապահովման համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ծախսերի բացվածքը, ինչը հնարավորություն է տալիս այդ մասով ապահովել իշխանությունների հավասարակշռում, իսկ Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությունների կազմում ընդգրկված պատգամավորների միջոցով՝ նաև պատշաճ և արդյունավետ միջնորդավորված հանրային վերահսկողություն:

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող դրույթով ծախսերի բացվածքը պետական գաղտնիք պարունակող գնումների պլանում դասելը Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու ազատության ու Սահմանադրության 51-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու իրավունքի համաչափ սահմանափակում է:

Ինչ վերաբերում է արդեն իսկ իրականացված ծախսերին, ապա հարկ է նշել, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասն ուղղակիորեն չի կարգավորում արդեն իսկ իրականացված, կատարված ծախսերի հրապարակման կամ չհրապարակման (այդ թվում՝ պետական գաղտնիք լինելու) հետ կապված հարաբերությունները: Վիճարկվող դրույթի նպատակն է պետական գաղտնիքի շարքին դասել և դրանով հրապարակման սահմանափակումներ նախատեսել այդ հոդվածով նշված պաշտոնատար անձանց արարողակարգային ծախսերի, կեցության, սննդի և տրանսպորտային սպասարկման համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և

ծառայությունների գնման պլանում նախատեսելը և համապատասխան գործարքներն իրականացնելը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ արդեն իսկ ավարտված գործարքներով գնումներին վերաբերող հարցերն ուղղակիորեն առնչություն չունեն վիճարկվող իրավակարգավորումների հետ:

Միաժամանակ, ժողովրդավարական պետություններին բնորոշ և արդյունավետ կառավարման բաղադրատարր հանդիսացող թափանցիկության և բաց կառավարման նպատակներից ելնելով՝ **օրենսդրի խնդիրն է ապահովել այնպիսի քաղաքականություն, համաձայն որի՝ պետական մարմինները հնարավորինս մատչելի ձևով և համակարգված՝ ըստ ոլորտների (մասնավորապես՝ կեցության ծախսեր, արարողակարգային ծախսեր) հրապարակեն (հասանելի դարձնեն) Հանրապետության նախագահի, վարչապետի, Ազգային ժողովի նախագահի արարողակարգային ծախսերի, կեցության, սննդի և տրանսպորտային սպասարկման, ներառյալ՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և նորոգման ոլորտում հատուկ տեխնիկական և ծրագրային ապահովման համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ծախսերի վերաբերյալ տեղեկությունները:**

Նման մոտեցումը կբարձրացնի պետական մարմինների նկատմամբ հանրային վստահությունը և կվերահաստատի պետության վճռականությունը բաց կառավարմամբ կոռուպցիոն ենթադրյալ դրսևորումների վերաբերյալ հանրության մտայնությունը հաղթահարելու հարցում:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 170-րդ հոդվածը, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

27 սեպտեմբեր 2022 թվականի
ՍԴՈ-1661

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ◆ 3(107)2022



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**2022 թվականի ՀՈՒՆԻՍԻ 9-ին ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ
ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ
«ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

4 հոկտեմբերի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Է. Շաթիրյանի, Ա.
Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝
Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարի տեղակալ Ժ. Անդրեասյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ
հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին»
սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2022 թվականի
հունիսի 9-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության ու
Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Կրթության

3(107)2022
ՏԵՂԵԿՎՈՒՄ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
279

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
◆ 3(107)2022

բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր՝ 2022 թվականի հուլիսի 14-ի N 1070-Ա որոշմամբ հավանություն է տվել 2022 թվականի հունիսի 9-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել նշված միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2022 թվականի հուլիսի 18-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ վարկային համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2022 թվականի հունիսի 9-ին՝ տարրական կրթություն ստացող երեխաների պատրաստվածությունը դպրոցին բարելավելու, հանրակրթական դպրոցում ֆիզիկական պայմանները և կրթական ռեսուրսների առկայությունը բարելավելու և ՀՀ տարածքում բարձրագույն ուսումնական հաստատություններում որակի և համապատասխանության բարելավմանն աջակցելու նպատակով:

2. Ծրագրի իրականացման համար պատասխանատու մարմին է Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ ԿԳՄՄՆ):

3. Համաձայնագիրն ունի երեք Առդիր՝ Առդիր 1. «Ծրագրի նկարագրությունը», Առդիր 2. «Ծրագրի իրականացում» և Առդիր 3. «Հանձնառության հետ կապված մարման ժամանակացույց» և մեկ Հավելված՝ «Սահմանումներ»:

4. Ըստ Համաձայնագրի՝ Վերակառուցման և զարգացման միջազգային

բանկը (այսուհետ՝ Բանկ) համաձայնում է Հայաստանի Հանրապետությանը տրամադրել քսաներկու միլիոն վեց հարյուր հազար եվրո (€22.600.000) գումարի չափով վարկ (այսուհետ՝ Վարկ)՝ «Կրթության բարելավում» վարկային ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) ֆինանսավորմանն աջակցելու նպատակով: Վարկի մարումը սկսվում է 2037 թ. փետրվարի 15-ից և ավարտվում է 2047 թ. փետրվարի 15-ին: Ծրագրի ավարտի ամսաթիվն է 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:

Վարկի մարման ժամկետը 25 տարի է, որից արտոնյալ ժամկետը՝ 14.5 տարի:

5. Ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից՝ Մաս Ա. Հանրակրթության որակի բարելավում, Մաս Բ. Բարձրագույն ուսումնական հաստատությունների նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆԱՀ) լիամասշտաբ գործարկում, Մաս Գ. Ծրագրի կառավարում, մշտադիտարկում և գնահատում:

6. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

ա) վճարել սկզբնավճար, որը հավասար է Վարկի գումարի մեկ քառորդ տոկոսին (0.25%) (Հոդված II, բաժին 2.03),

բ) վճարել պարտավճար, որը սահմանվում է տարեկան Վարկի չառհանված մնացորդի մեկ քառորդ տոկոսի չափով (0.25%) (Հոդված II, բաժին 2.04),

գ) յուրաքանչյուր տարվա փետրվարի 15-ին և օգոստոսի 15-ին՝ սկսած 2037 թ. փետրվարի 15-ից մինչև 2046 թ. օգոստոսի 15-ը մարել Վարկի մայր գումարը 4.76% մասնաբաժնով, իսկ 2047 թ. փետրվարի 15-ին՝ 4.8% մասնաբաժնով (Հոդված II, բաժին 2.07, Առդիր 3),

դ) Ծրագրի իրականացումն ապահովելու համար, ի դեմս ԿԳՄՄՆ-ի, Ծրագրի իրականացման ընթացքում ունենալ ստորաբաժանում (Ծրագրի իրականացման գրասենյակ) այնպիսի լիազորություններով, կառուցվածքով, անձնակազմով, գործառույթներով, պարտականություններով և համապատասխան ռեսուրսներով, ինչպես սահմանված է Ծրագրի գործառնական ձեռնարկում, և այս բոլորը Բանկի համար ընդունելի պայմաններով (Առդիր 2, բաժին 1, մաս «Ա»),

ե) Ծրագրի պատշաճ իրականացումն ապահովելու համար Բանկի համար ընդունելի ձևով և բովանդակությամբ, ԿԳՄՄՆ-ի միջոցով պատրաստել և ընդունել ձեռնարկ (Ծրագրի գործառնական ձեռնարկ), որը կներառի Ծրագրի վարչական, ֆինանսական կառավարման, գնումների, հաշվապահական հաշվառման, ինչպես նաև մշտադիտարկման և գնահատման ընթացակարգերն ու պայմանավորվածությունները, Ծրագրի կատարողականի ցուցանիշները, Ծրագրի իրականացման գրասենյակի անձնակազմի դերերն ու պարտականու-

թյունները, Ծրագրի մանրամասն նկարագրությունը, Ծրագրի իրականացման մեխանիզմները և մեթոդաբանությունը, նախադպրոցական միկրոծրագրերի և ՆՄՀ ենթածրագրերի ընտրության և դրանց համապատասխան ֆինանսավորման պահանջները, չափանիշները և որոշումների ընդունման գործընթացը (Առդիր 2, բաժին 1, մաս «Բ», պարբերություն 1),

զ) ի դեմս ԿԳՄՄՆ-ի՝ իրականացնել Ծրագիրը Համաձայնագրին և Ծրագրի գործառնական ձեռնարկին համապատասխան: Բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկն այլ բան նախատեսի, չպատվիրակել, չփոփոխել, չեղյալ չհայտարարել կամ չհրաժարվել Ծրագրի գործառնական ձեռնարկի դրույթներից՝ առանց Բանկի նախնական հաստատման (Առդիր 2, բաժին 1, մաս «Բ», պարբերություն 2),

է) ի դեմս ԿԳՄՄՆ-ի՝ Ենթադրամաշնորհներ տրամադրել Շահառուներին՝ Միկրոծրագրեր կամ Ենթածրագրեր ֆինանսավորելու համար՝ Բանկի համար ընդունելի համապատասխանության չափանիշների և ընթացակարգերի համաձայն, որոնք ավելի մանրամասն ներկայացվում են Ծրագրի գործառնական ձեռնարկում (Առդիր 2, բաժին 1, մաս «Գ», պարբերություն 1),

ը) ի դեմս ԿԳՄՄՆ-ի՝ իրացնել յուրաքանչյուր Ենթադրամաշնորհային Համաձայնագրով նախատեսված ՀՀ իրավունքներն այնպես, որ պաշտպանի ՀՀ և Բանկի շահերը և իրագործի Վարկի նպատակները, ինչպես նաև բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկն այլ կերպ կհամաձայնի և, ի դեմս ԿԳՄՄՆ-ի, չպատվիրակել, չփոփոխել, չեղյալ չհայտարարել որևէ Ենթադրամաշնորհային համաձայնագիր կամ դրա որևէ դրույթ կամ չհրաժարվել դրանից (Առդիր 2, բաժին 1, մաս «Գ», պարբերություն 3),

թ) ի դեմս ԿԳՄՄՆ-ի՝ գնահատել, վերանայել, հաստատել և մշտադիտարկման ենթարկել Նախադպրոցական միկրոծրագրերը և ՆՄՀ ենթածրագրերը՝ Ծրագրի գործառնական ձեռնարկի և Համաձայնագրի համաձայն (Առդիր 2, բաժին 1, մաս Գ, պարբերություն 4),

ժ) առանց սահմանափակվելու Համաձայնագրի շրջանակներում հաշվետվողականության այլ պարտավորություններով, ի դեմս ԿԳՄՄՆ-ի, անհապաղ Բանկին տրամադրել առաջընթացի վերաբերյալ ամսական յուրաքանչյուր հաշվետվության պատճենը, որը պատրաստվել և ներկայացվել է Ծրագրի ինժեներաշինարարական աշխատանքները վերահսկող ցանկացած կազմակերպության (ներառյալ՝ ցանկացած ինժեների), Ծրագրի կապալառուների և/կամ ենթակապալառուների կողմից և անհապաղ տեղեկացնել Բանկին Ծրագրի հետ կապված կամ դրա վրա ազդեցություն ունեցող ցանկացած միջադեպի կամ պատահարի մասին, որն ունի կամ կարող է զգալի բացասական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի, ազդակիր համայնքների, հանրության կամ աշխատողների վրա (Առդիր 2, բաժին 1, մաս «Դ», պարբերություն 4, ենթապարբերություններ «բ», «գ»),

ի) ի դեմս ԿԳՄՄՆ-ի՝ Ծրագրի իրականացման ողջ ընթացքում Բանկին

բավարարող ձևով և բովանդակությամբ ունենալ և հրապարակել բողոքարկման մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան ուսումնասիրելու և արդարացիորեն և բարեխղճորեն լուծելու Ծրագրի հետ կապված բոլոր բողոքները, և ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները՝ այդ ընթացակարգի կիրառման արդյունքում կայացրած որոշումները Բանկի կողմից բավարար դիտարկվող ձևով իրագործելու համար (Առդիր 2, բաժին 1, մաս «Դ», պարբերություն 5),

յ) Ծրագրի յուրաքանչյուր Հաշվետվություն, որն ընդգրկում է օրացուցային կիսամյակը, Բանկ ներկայացնել յուրաքանչյուր օրացուցային կիսամյակի ավարտից հետո ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում (Առդիր 2, բաժին II),

ի) որևէ առհանում չիրականացնել մինչև Համաձայնագրի ստորագրման ամսաթիվը կատարված վճարումների համար՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նախքան այդ ամսաթիվը կարող են կատարվել առհանումներ, որոնց ընդհանուր գումարը չի գերազանցում €450,000 եվրոն, սակայն դրանք անել 2022թ. մայիսի 1-ին կամ դրանից հետո կատարված 1-ին Կատեգորիայի ներքո Թույլատրելի ծախսերի մասով (Առդիր 2, բաժին III, մաս «Բ»):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «2022 թվականի հունիսի 9-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները՝ համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

4 հոկտեմբեր 2022 թվականի
ՍԴՈ-1662

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 3(107)/2022 ՍԵՆԵԿԱՆ 283



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**«ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ
ՍԱՀՄԱՆՈՎ ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ)
ԴՐԱՄԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ
ՀԱՆՑԱՎՈՐ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆԸ (ԼՎԱՑՄԱՆԸ) ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆԸ ՀԱԿԱԶԴԵԼՈՒ ՈԼՈՐՏՈՒՄ
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱ-
ՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

4 հոկտեմբերի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Հ. Թովմայանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Է. Շաթիրյանի, Ա.
Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաս-
տանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն.
Երիցյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ
հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին»
սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
◆ 3(107)2022

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով կանխիկ դրամական միջոցների և (կամ) դրամական գործիքների տեղափոխման ժամանակ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացմանը (լվացմանը) և ահաբեկչության ֆինանսավորմանը հակազդելու ոլորտում տեղեկատվության փոխանակման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր՝ 2022 թվականի հուլիսի 28-ի N 1158-Ա որոշմամբ հավանություն է տվել «Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով կանխիկ դրամական միջոցների և (կամ) դրամական գործիքների տեղափոխման ժամանակ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացմանը (լվացմանը) և ահաբեկչության ֆինանսավորմանը հակազդելու ոլորտում տեղեկատվության փոխանակման մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2022 թվականի օգոստոսի 3-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով կանխիկ դրամական միջոցների և (կամ) դրամական գործիքների տեղափոխման ժամանակ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացմանը (լվացմանը) և ահաբեկչության ֆինանսավորմանը հակազդելու ոլորտում տեղեկատվության փոխանակման մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2021 թվականի հուլիսի 20-ին Մոսկվայում՝ Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների միջև մաքսային հայտարարագրում ներառված տեղեկատվության փոխանակման կարգի, ինչպես նաև այդպիսի տեղեկատվության օգտագործման և պահպանության պայմանների սահմանմամբ՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում համատեղ ջանքերի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

2. Համաձայնագիրն ստորագրվել է Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզական Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև: Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն անդամ պետությունների կողմից կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումն ավանդապահի կողմից դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից 10 օրացուցային օրը լրանալուց հետո:

3. Համաձայնագրով սահմանվում է կանխիկ դրամական միջոցների և (կամ) դրամական գործիքների տեղափոխման ժամանակ ֆիզիկական անձի կողմից համապատասխան հայտարարագրերում նշվող տեղեկությունն ստանալու վերաբերյալ հարցում կատարելու և տեղեկությունը տրամադրելու կարգը, ինչպես նաև հայցվող տեղեկատվության տրամադրումը մերժելու հիմքերը: Համաձայնագրի առանձին հոդվածներ վերաբերում են համաձայնագրի շրջանակներում ստացված տեղեկատվության կիրառման, պաշտպանության, պահպանման և ոչնչացման հետ կապված առանձնահատկություններին:

4. Համաձայնագրում օգտագործվող հասկացությունները կիրառվում են «Մաքսային միության մաքսային սահմանով կանխիկ դրամական միջոցների և (կամ) դրամական գործիքների տեղափոխման ժամանակ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացմանը (վացմանը) և ահաբեկչության ֆինանսավորմանը հակազդելու մասին» 2011 թվականի դեկտեմբերի 19-ի պայմանագրում սահմանված իմաստներով:

Համաձայնագրով անդամ պետությունների միջև փոխգործակցությունը և տեղեկատվության փոխանակումն իրականացվում են (այսուհետ՝ տեղեկատվական փոխգործակցություն) Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով կանխիկ դրամական միջոցների և (կամ) դրամական գործիքների տեղափոխման (այսուհետ՝ տեղափոխում) ժամանակ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացմանը (վացմանը) և ահաբեկչության ֆինանսավորմանը հակազդելու նպատակով՝ կանխիկ դրամական միջոցների և (կամ) դրամական գործիքների տեղափոխման ժամանակ ֆիզիկական անձի կողմից ուղևորային մաքսային հայտարարագրում և ապրանքների հայտարարագրում նշված տեղեկությունները ներկայացվելու միջոցով:

5. Համաձայնագրով սահմանվում է, որ Համաձայնագրի այն դրույթները, որոնք նախատեսում են Համաձայնագրի շրջանակներում ստացված տեղեկատվության գաղտնիության ապահովում, ուժի մեջ են մնում Համաձայնագրի գործողության դադարեցման դեպքում կամ դրա մասնակիցների կազմից

անդամ պետության դուրս գալու դեպքում: Անդամ պետությունների պետական գաղտնիք (գաղտնիքներ) կազմող տեղեկությունների փոխանակման կարգը, պաշտպանության պայմանները և միջոցները սահմանվում են անդամ պետությունների միջև հարաբերություններում կիրառվող առանձին միջազգային պայմանագրերով:

6. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

ա) սահմանել կանխիկ դրամական միջոցների և (կամ) դրամական գործիքների տեղափոխման մասին տվյալների բազա ձևավորելու համար պատասխանատու մարմին, ինչպես նաև նշված տվյալների բազայում պարունակվող տեղեկությունները ներկայացնելու համար պատասխանատու մարմին (մարմիններ) (այսուհետ՝ պատասխանատու մարմին), և Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու մասին գրավոր ծանուցումն ուղարկելու հետ միաժամանակ Եվրասիական տնտեսական հանձնաժողովին դիվանագիտական ուղիներով տեղեկացնել այդ մարմինների, լիազորված մարմնի, ՀՀ իրավապահ և մաքսային մարմինների մասին, որոնք մասնակցում են տեղեկատվական փոխգործակցությանը, իսկ նշված մարմինների փոփոխության դեպքում 10-օրյա ժամկետում դիվանագիտական ուղիներով դրա մասին ծանուցել Եվրասիական տնտեսական հանձնաժողովին (հոդված 3, պարբերություններ 1 և 2),

բ) տեղեկատվական փոխգործակցությունն իրականացնել մի անդամ պետության լիազորված, իրավապահ և մաքսային մարմինների այն հարցումների (այսուհետ՝ հարցումը ներկայացնող մարմին) հիման վրա, որոնք գրավոր, ռուսերենով կամ անդամ պետության պետական լեզվով (կից ներկայացնելով ռուսերեն թարգմանությունը) ուղարկվում են ՀՀ պատասխանատու մարմին (այսուհետ՝ հարցումն ստացող մարմին) (հոդված 4, կետ 1),

գ) ապահովել, որ Համաձայնագրի 2-րդ հոդվածի 2-րդ կետում նշված տեղեկություններն ստանալու վերաբերյալ հարցումն ստորագրվի հարցումը ներկայացնող ՀՀ մարմնի ղեկավարի կամ ղեկավարի տեղակալի կողմից և պարունակի Համաձայնագրի 4-րդ հոդվածի 2-րդ կետում շարադրված տեղեկատվությունը (հոդված 4, կետ 2),

դ) ապահովել, որ հարցումն իրականացնելու ժամկետը չգերազանցի հարցումն ստացող ՀՀ մարմնի կողմից հարցումն ստանալու օրվանից 30 օրացուցային օրը, իսկ շտապ հարցումն իրականացնելու դեպքում՝ դա ստանալու օրվանից 10 օրացուցային օրը (հոդված 4, կետ 3, պարբերություններ 1 և 2),

ե) ապահովել, որ հարցումը Համաձայնագրի 4-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված ժամկետներում մասամբ կամ ամբողջությամբ իրականացնելու անհնարինության դեպքում հարցումն ստացող ՀՀ մարմինը հարցումը ներկայացնող մարմնին գրավոր տեղեկացնի հարցումն իրականացնելու

ենթադրվող ժամկետի մասին (հոդված 4, կետ 3, պարբերություն 4),

զ) ապահովել, որ Համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետի «ա», «գ» և «դ» ենթակետերով նախատեսված՝ հարցման իրականացումը մերժելու դեպքերում հարցումը ներկայացնող մարմինը հարցումն ստացող ՀՀ մարմնի կողմից հարցումն ստանալու օրվանից 10 օրացուցային օրվա ընթացքում գրավոր ծանուցվի մերժման պատճառների մասին (հոդված 5, կետ 2),

է) Համաձայնագրի շրջանակներում ստացված տեղեկատվությունը գաղտնի է, և առանց այդ տեղեկատվությունը տրամադրած մարմնի գրավոր համաձայնության, չօգտագործել այլ նպատակներով, քան այն նպատակները, որոնց համար այն հարցվել և ներկայացվել է (հոդված 6, կետ 1, պարբերություն 1),

ը) ապահովել, որ Տեղեկատվական փոխգործակցությանը մասնակցող՝ ՀՀ մարմինները ձեռնարկեն Համաձայնագրի շրջանակներում ստացված տեղեկատվության պաշտպանությանը, պահպանմանը և ոչնչացմանն ուղղված միջոցներ՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան, ինչպես նաև նշված տեղեկատվությունը պահել ոչ ավելի երկար, քան պահանջվում է այն նպատակներով, որոնց համար դա փոխանցվել է (հոդված 6, կետ 1, պարբերություն 2),

թ) ապահովել, որ համաձայնագրի շրջանակներում ստացված տեղեկատվության չարտոնված տարածման, դրա կորստի, ոչնչացման կամ ոչ պատշաճ օգտագործման դեպքում տեղեկատվության հարցումը կատարած ՀՀ իրավասու մարմինն անհապաղ տեղեկացնի տեղեկատվությունը ներկայացրած անդամ պետության իրավասու մարմնին և անցկացնի համապատասխան քննություն՝ անհրաժեշտության դեպքում փոխգործակցելով անդամ պետությունների իրավասու մարմինների հետ (հոդված 6, կետ 1, պարբերություն 3),

ժ) իրականացնել անդամ պետությունների միջև հարաբերություններում կիրառվող միջազգային պայմանագրերի շրջանակներում այն վարչական և քրեական գործերի մասին տեղեկատվության փոխանակումը, որոնց առարկան հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (լվացման) և (կամ) ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված կանխիկ դրամական միջոցները և (կամ) դրամական գործիքներն են (հոդված 7):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով կանխիկ դրամական միջոցների և (կամ) դրամական գործիքների տեղափոխման ժամանակ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացմանը (լվացմանը) և ահաբեկչության ֆինանսավորմանը հակազդելու


ուլորտում տեղեկատվության փոխանակման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

4 հոկտեմբեր 2022 թվականի
ՍԴՈ-1663



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**«ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

4 հոկտեմբերի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Է. Շաթիրյանի, Ա.
Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաս-
տանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Ա. Պողոսյանի,
համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ
հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին»
սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Եվրասիական
տնտեսական միության շրջանակներում աուդիտորական գործունեություն
իրականացնելու մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորություն-
ների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու
վերաբերյալ» գործը:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
◆ 3(107)2022

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր՝ 2022 թվականի օգոստոսի 11-ի N 1231-Ա որոշմամբ հավանություն է տվել 2022 թվականի ապրիլի 19-ին Մոսկվայում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում աուդիտորական գործունեություն իրականացնելու մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել այդ համաձայնագրում առկա պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2022 թվականի օգոստոսի 17-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում աուդիտորական գործունեություն իրականացնելու մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2022 թվականի ապրիլի 19-ին Մոսկվայում՝ աուդիտորական գործունեության կարգավորման և վերահսկողության կազմակերպման ու իրականացման նկատմամբ միասնական մոտեցումներ ձևավորելու նպատակով:

2. Համաձայնագրով կարգավորվում են մեկ անդամ պետության աուդիտորական կազմակերպությունների և անհատ աուդիտորների՝ մյուս անդամ պետություններում աուդիտորական գործունեություն իրականացնելու թույլտվության և մեկ անդամ պետության աուդիտորների՝ մյուս անդամ պետություններում աուդիտորական գործունեություն իրականացնելու թույլտվության հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև սահմանվում են անդամ պետություններում աուդիտորական գործունեություն իրականացնելու և կարգավորելու միասնական մոտեցումները:

3. Համաձայնագրով աուդիտը սահմանվում է որպես աուդիտի ենթարկվող անձի հաշվապահական (ֆինանսական) հաշվետվությունների և (կամ) նրա կողմից ներկայացվող այլ ֆինանսական տեղեկատվության ստուգում՝ դրանց հավաստիության վերաբերյալ անկախ կարծիք արտահայտելու նպատակով, իսկ աուդիտորական գործունեությունը՝ որպես աուդիտի անցկացմանն ու վստահություն ապահովող այլ ստուգումների կատարմանը, ինչպես նաև աուդիտին հարակից ծառայությունների մատուցմանն ուղղված գործունեություն, որն իրականացվում է աուդիտորական գործունեության ստանդարտներին համապատասխան:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

ա) երաշխավորել, որ մյուս անդամ պետության աուդիտորական կազմակերպությունները (բացառությամբ Համաձայնագրի 32-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ կետում նշված աուդիտորական կազմակերպությունների) և անհատ աուդիտորներն իրավունք ունենան Հայաստանի Հանրապետությունում իրականացնելու աուդիտորական գործունեություն (հոդված 3, կետ 1, պարբերություն 2),

բ) երաշխավորել, որ մյուս անդամ պետության աուդիտորները (բացառությամբ Համաձայնագրի 32-րդ հոդվածի 3-րդ կետում նշված անձանց) իրավունք ունենան Հայաստանի Հանրապետությունում մասնակցելու աուդիտորական գործունեության իրականացմանը (հոդված 3, կետ 2),

գ) սահմանել որակավորման քննության անցկացման կարգը, որով նախատեսվում է նաև հավակնորդի՝ որակավորման քննությանը մասնակցելու կարգը, ինչպես նաև որակավորման քննության արդյունքները որոշելու կարգը՝ ապահովելով, որ որակավորման քննության առնվազն մի մասն անցկացվի գրավոր կամ էլեկտրոնային եղանակով (թեստավորման ձևով և այլն) (հոդված 7, կետ 5, ենթակետ ա)),

դ) սահմանել այն մարմինը (մարմինները), որն իրականացնում է որակավորման քննության անցկացումը, ինչպես նաև սահմանել աուդիտորի որակավորման ատեստատի (վկայականի, հավաստագրի) տրամադրման կարգը (հոդված 7, կետ 5, ենթակետեր բ) և գ)),

ե) ճանաչել մյուս անդամ պետությունում տրված՝ աուդիտորի որակավորման ատեստատի (վկայականը, հավաստագիրը) վավերականությունը Հայաստանի Հանրապետությունում, որն անժամկետ է կամ գործում է մինչև դրա գործողության ժամկետի ավարտը (եթե այդպիսի ժամկետ սահմանված է) (հոդված 7, կետ 6),

զ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանել աուդիտորական գործունեության իրականացմանը որպես աուդիտոր մասնակցելու ցանկություն ունեցող ֆիզիկական անձանց՝ աուդիտորական գործունեություն իրականացնելու կամ հաշվապահական հաշվառում վարելու և հաշվապահական (ֆինանսական) հաշվետվություններ կազմելու հետ կապված նվազագույն աշխատանքային ստաժ, որը չի կարող 3 տարուց պակաս լինել՝ նախատեսելով նաև, որ նշված աշխատանքային ստաժի վերջին երեք տարիներից առնվազն մեկ տարին պետք է անցկացված լինի աուդիտորական կազմակերպությունում՝ աուդիտորական գործունեության իրականացման հետ կապված պաշտոններում՝ չխախտելով Համաձայնագրի 32-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթները (հոդված 8, կետ 2),

է) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանել աուդիտորների ուսուցման նվազագույն տևողությունը՝ իրար հաջորդող երկու օրա-

ցուցային տարիների ընթացքում 80 ժամից ոչ պակաս՝ սահմանելով աուդիտորների կողմից ուսուցում անցնելու պարբերականությունը և կարգը (հոդված 9, կետեր 3 և 4),

ը) ապահովել, որ աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների և աուդիտորների ռեեստրը վարվի էլեկտրոնային ձևով և հասանելի լինի «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցում (այսուհետ՝ Ինտերնետ ցանց)՝ աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների և աուդիտորների ռեեստրը վարող մարմնի պաշտոնական կայքում (հոդված 10, կետ 5),

թ) ապահովել աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների և աուդիտորների ռեեստրում պարունակվող տեղեկությունների թափանցիկությունն ու հանրամատչելիությունը՝ բացառությամբ աուդիտորի անձնական տվյալների: Աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների և աուդիտորների ռեեստրում ընդգրկված՝ աուդիտորի անձնական տվյալները շահագրգիռ անձանց տրամադրել միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմքերով և կարգով (հոդված 10, կետ 6),

ժ) երաշխավորել, որ աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների և աուդիտորների ռեեստրում ընդգրկված տեղեկությունները պահվեն արդիական վիճակում (հոդված 10, կետ 8),

ժա) ապահովել աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների և աուդիտորների ռեեստրում ընդգրկված տեղեկությունների նույնականությունը հայերեն և ռուսերեն լեզուներով (հոդված 13, կետ 2),

ժբ) սահմանել աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների և աուդիտորների ռեեստրը վարելու համար պատասխանատու Հայաստանի Հանրապետության մարմինը (մարմինները) և այդ մարմնի կողմից նշված ռեեստրը վարելու կարգը (հոդված 14, կետ 1),

ժգ) մյուս անդամ պետություններին և Եվրասիական տնտեսական հանձնաժողովին (այսուհետ՝ Հանձնաժողով) տեղեկացնել աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների և աուդիտորների ռեեստրը վարելու համար պատասխանատու Հայաստանի Հանրապետության մարմնի (մարմինների) մասին (հոդված 14, կետ 2),

ժդ) ապահովել, որ աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների և աուդիտորների ռեեստրը վարելու համար պատասխանատու՝ Հայաստանի Հանրապետության մարմինն անդամ մյուս պետությունների նույն մարմիններին և Հանձնաժողովին տեղեկացնի Ինտերնետ ցանցում իր պաշտոնական կայքերի մասին, որտեղ տեղադրվում են աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների և աուդիտորների ռեեստրները (հոդված 14, կետ 3, պարբերություն 1),

ժե) մյուս անդամ պետությունում աուդիտորական գործունեություն իրակա-

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՐ ◆ 3(107)2022

նացնելու իրավունք ունեցող անձի կողմից կազմված աուդիտորական եզրակացությունը, եզրակացությունը, հաշվետվությունը Հայաստանի Հանրապետությունում ճանաչել որպես պաշտոնական փաստաթղթեր (հոդված 20, կետ 2),

ժգ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանել պահանջներ, որոնց համապատասխան՝ աուդիտորական կազմակերպությունը, անհատ աուդիտորը պետք է ապահովված լինեն ֆինանսական, նյութական և աշխատանքային ռեսուրսներով, որոնք անհրաժեշտ և բավարար են աուդիտորական ծառայությունների մատուցման համար (հոդված 21, կետ 1, ենթակետ ա)),

ժէ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանել պահանջներ, որոնց համապատասխան՝ աուդիտորական կազմակերպության, անհատ աուդիտորի՝ իրենց կողմից մատուցված աուդիտորական ծառայությունների դիմաց աուդիտորական վարձատրությունը պետք է բավարար լինի աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագրով նախատեսված աուդիտորական ծառայությունը՝ աուդիտորական գործունեության ստանդարտներին համապատասխան մատուցելու համար (հոդված 21, կետ 1, ենթակետ բ), պարբերություն 1),

ժը) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանել պահանջներ, որոնց համապատասխան՝ աուդիտորական կազմակերպության, անհատ աուդիտորի՝ իրենց կողմից մատուցված աուդիտորական ծառայությունների դիմաց աուդիտորական վարձատրությունը պայմանավորված չլինի աուդիտորական կազմակերպության, անհատ աուդիտորի կողմից այն անկախ կարծիքին ներկայացվող ցանկացած պահանջի կատարմամբ, որը կձևավորվի աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագրով նախատեսված աուդիտորական ծառայությունների մատուցման արդյունքում, աուդիտորական կազմակերպության, անհատ աուդիտորի կողմից այդ անձին լրացուցիչ ծառայությունների մատուցմամբ, ինչպես նաև ապագայում որևէ իրադարձության (փաստի) վրա հասնելով (հոդված 21, կետ 1, ենթակետ բ), պարբերություններ 2 և 3),

ժթ) երաշխավորել, որ վարկային կազմակերպության (բանկի), ապահովագրական կազմակերպության, փոխադարձ ապահովագրական ընկերության, ոչ պետական կենսաթոշակային ֆոնդի, այն կազմակերպության տարեկան հաշվապահական (ֆինանսական) հաշվետվությունները, որի արժեթղթերը թույլատրված են կազմակերպված սակարկություններին, ինչպես նաև արժեթղթերի ազդագրում ընդգրկվող տարեկան հաշվապահական (ֆինանսական) հաշվետվություններն աուդիտորական կազմակերպությունների կողմից ենթարկվեն պարտադիր աուդիտի (հոդված 22, կետեր 1 և 2),

ի) աուդիտորական կազմակերպությանը, անհատ աուդիտորին արգելել զբաղվելու Համաձայնագրի 23-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված

աուդիտորական գործունեությունից ու ծառայությունների մատուցումից բացի այլ ձեռնարկատիրական գործունեությամբ (հոդված 23, կետ 1),

իա) ապահովել աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների աշխատանքի որակի արտաքին վերահսկողության իրականացումը (հոդված 25, կետ 1),

իբ) սահմանել աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների աշխատանքի որակի արտաքին վերահսկողության իրականացման կարգը և աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների աշխատանքի որակի արտաքին վերահսկողություն իրականացնող մարմինը (մարմինները) (հոդված 25, կետ 4),

իգ) աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների աշխատանքի որակի ներքին վերահսկողություն իրականացնելիս ապահովել Համաձայնագրի 26-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված հիմնական պահանջների պահպանումը (հոդված 26, կետ 1),

իդ) ապահովել աուդիտորական գործունեության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների, աուդիտորական գործունեության ստանդարտների, աուդիտորների անկախությանն ու մասնագիտական էթիկային ներկայացվող պահանջների խախտում թույլ տված աուդիտորական կազմակերպության, անհատ աուդիտորի, աուդիտորի նկատմամբ ներգործության միջոցների կիրառումը՝ այդպիսի միջոցների կիրառման համար լիազորված մարմինների կողմից (այսուհետ՝ ներգործության միջոցներ) (հոդված 28, կետ 1),

իե) սահմանել ներգործության միջոցները և դրանց կիրառման կարգը (հոդված 28, կետ 3),

իզ) ապահովել, որ ներգործության միջոցները սահմանելիս, հաշվի առնվեն առնվազն Համաձայնագրի 28-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված հանգամանքները՝ ապահովելով կիրառվող ներգործության միջոցների վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը (հոդված 28, կետեր 4 և 5),

իէ) սահմանել աուդիտորական գործունեության կարգավորման գործառույթների (որոնց շարքին են դասվում Համաձայնագրի 28-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված գործառույթները) իրականացման համար լիազորված Հայաստանի Հանրապետության մարմինը (մարմինները)՝ երաշխավորելով դրա անկախությունն աուդիտորական կազմակերպություններից, անհատ աուդիտորներից, աուդիտորներից, աուդիտորների մասնագիտական միավորումներից (ինքնակարգավորվող կազմակերպություններից) (հոդված 29, կետեր 1 և 2),

իը) աուդիտորական գործունեության կարգավորման գործառույթների իրականացման նպատակով աուդիտորական գործունեության կարգավորման գործառույթների իրականացման համար լիազորված Հայաստանի Հանրապետության մարմինն օժտել աուդիտորական կազմակերպություններից, անհատ

աուդիտորներից, աուդիտորներից, աուդիտորների մասնագիտական միավորումներից (ինքնակարգավորվող կազմակերպություններից) անհրաժեշտ տեղեկատվությունն ու փաստաթղթերը պահանջելու իրավունքով, ինչպես նաև պարտավորեցնել աուդիտորական կազմակերպություններին, անհատ աուդիտորներին, աուդիտորներին, աուդիտորների մասնագիտական միավորումներին (ինքնակարգավորվող կազմակերպություններին) նշված մարմնին տրամադրել այդ տեղեկատվությունը և փաստաթղթերը (հոդված 29, կետ 4),

իթ) նպաստել աուդիտորների մասնագիտական միավորումների (ինքնակարգավորվող կազմակերպությունների) ստեղծմանն ու դրանց կողմից իրենց գործունեության իրականացմանը (հոդված 30, կետ 1),

յ) ապահովել պայմաններ աուդիտորական գործունեության կարգավորման գործընթացին աուդիտորների մասնագիտական միավորումների (ինքնակարգավորվող կազմակերպությունների) մասնակցության համար՝ ներկայացնելով Համաձայնագրի 30-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված հնարավորությունները (հոդված 30, կետ 2),

լա) աուդիտորական գործունեության կարգավորման գործառույթների իրականացման համար լիազորված մարմիններին օժտել մյուս անդամ պետությունների համապատասխան մարմինների հետ փոխգործակցություն իրականացնելու իրավունքով, իսկ Հայաստանի Հանրապետությունում աուդիտորական գործունեության կարգավորման գործառույթների իրականացման համար լիազորված մի քանի մարմինների առկայության դեպքում սահմանել մյուս անդամ պետությունների՝ աուդիտորական գործունեության կարգավորման գործառույթների իրականացման համար լիազորված մարմինների հետ փոխգործակցության համար պատասխանատու լիազորված մարմին (հոդված 31, կետեր 1 և 2),

լբ) մյուս անդամ պետություններին ու Հանձնաժողովին ծանուցել աուդիտորական գործունեության կարգավորման գործառույթների իրականացման համար լիազորված մարմինների և մյուս անդամ պետությունների՝ աուդիտորական գործունեության կարգավորման գործառույթների իրականացման համար լիազորված մարմինների հետ փոխգործակցության համար պատասխանատու Հայաստանի Հանրապետության մարմնի մասին (հոդված 31, կետ 3):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում աուդիտոր-

րական գործունեություն իրականացնելու մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

4 հոկտեմբեր 2022 թվականի
ՍԴՈ-1664



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**«ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՀԵՏԱԳԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱՎԻԳԱՑԻՈՆ
ԿԱՊԱՐԱԿՆԻՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

3(107)2022

◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Քաղ. Երևան

4 հոկտեմբերի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Ա. Մուրադյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Եվրասիական տնտեսական միությունում փոխադրումների հետագծման համար նավիգացիոն կապարակնիքների կիրառման մասին» համաձայնագրում

ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր՝ 2022 թվականի օգոստոսի 24-ի N 1327-Ա որոշմամբ հավանություն է տվել «Եվրասիական տնտեսական միությունում փոխադրումների հետազոծման համար նավիգացիոն կապարակնիքների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2022 թվականի օգոստոսի 25-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Եվրասիական տնտեսական միությունում փոխադրումների հետազոծման համար նավիգացիոն կապարակնիքների կիրառման մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2022 թվականի ապրիլի 19-ին Մոսկվայում՝ Եվրասիական տնտեսական միությունում (այսուհետ՝ Միություն) Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների (այսուհետ՝ անդամ պետություններ) տարածքով փոխադրումներ իրականացնելիս ժամանակակից տեխնիկական և տեխնոլոգիական լուծումների կիրառության ընդլայնման միջոցով Միության ներքին շուկայում ապրանքների շրջանառության օրինականության ապահովման նպատակով:

2. Համաձայնագիրն ստորագրվել է Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզական Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև: Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն անդամ պետությունների կողմից կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումն ավանդապահի կողմից դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից:

3. Բացի Համաձայնագրի 1-ին հոդվածով սահմանված հասկացություններից, Համաձայնագրում օգտագործվող այլ հասկացությունները կիրառվում են «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրով և Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերով սահմանված նշանակություններով:

Համաձայնագրով սահմանվում են երկու և ավելի անդամ պետությունների տարածքներով հետագծման օբյեկտների փոխադրումների հետագծման համար (այսուհետ՝ անդամ պետությունների տարածքներով փոխադրումների հետագծում) Միությունում նավիգացիոն կապարակնիքների կիրառման կարգավորման հիմքերը և այդ հետագծման իրականացումը կազմակերպելու մեխանիզմը: Համաձայնագրով սահմանված են նավիգացիոն կապարակնիքների կիրառման պայմանները և կարգը, հետագծման օբյեկտների, ապրանքները տեղափոխող տրանսպորտի տեսակների, ապրանքների փոխադրումների հետագծման մասնակիցների, ազգային օպերատորների և հսկողական մարմինների տեղեկատվական փոխգործակցությանն առնչվող հիմնական դրույթները:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

ա) Համաձայնագրի 3-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետում նշված հետագծման օբյեկտների փոխադրումների հետագծումն ապահովելու նպատակով ՀՀ կողմից հատուկ տնտեսական միջոցներ կիրառելու պարագայում, Հանձնաժողովին տրամադրել հետագծման այդպիսի օբյեկտների մասին տեղեկատվությունը (հոդված 3, կետ 3, պարբերություն 1),

բ) սահմանել ազգային օպերատոր կամ ՀՀ գործադիր իշխանության մարմին (այսուհետ՝ լիազորված օպերատոր (մարմին)), որը լիազորված է ՀՀ հսկող մարմինների և լիազորված օպերատորների (մարմինների) հետ փոխգործակցության համար, և դրա մասին տեղեկացնել Հանձնաժողովին (հոդված 4, կետ 3, պարբերություն 1),

գ) ապահովել, որ ՀՀ օպերատորն ապահովի անդամ պետությունների տարածքներով փոխադրումների հետագծման համար կիրառվող՝ տեղեկատվական համակարգի աշխատանքը՝ մշտական հիմունքներով՝ շաբաթը 7 օր, օրական 24 ժամվա ընթացքում, և երաշխավորել, որ վերոհիշյալ պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար ՀՀ օպերատորը կրի պատասխանատվություն՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան (հոդված 5, կետ 1),

դ) երաշխավորել, որ ՀՀ օպերատորի՝ անդամ պետությունների տարածքներով փոխադրումների հետագծման համար կիրառվող տեղեկատվական համակարգերով ապահովվեն Համաձայնագրի 5-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին պարբերությունով սահմանված տեղեկատվական պահանջները (հոդված 5, կետ 2, պարբերություններ 1-9),

ե) ապահովել, որ Համաձայնագրի 5-րդ հոդվածի 2-րդ կետի չորրորդ պարբերության մեջ նշված տեղեկությունները և տեղեկատվությունը պահվեն 3 տարուց ոչ պակաս կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված՝ ավելի տևական ժամկետի ընթացքում. պահպանման նշված ժամկետը հաշվարկվում

է կոնկրետ փոխադրման հետագծման ժամանակ օգտագործված՝ նավիգացիոն կապարակնիքի ապակտիվացման օրվան հաջորդող օրվանից (հոդված 5, կետ 3),

գ) երաշխավորել, որ անդամ պետությունների տարածքներով փոխադրումների հետագծման համար կիրառվեն Հանձնաժողովի կողմից սահմանվող պահանջները բավարարող նավիգացիոն կապարակնիքներ (հոդված 6, կետ 1),

է) ապահովել, որ անդամ պետությունների տարածքներով փոխադրումների հետագծման համար օգտագործվող նավիգացիոն կապարակնիքը պարունակի նավիգացիոն կապարակնիքի եզակի նույնականացման համարը և ՀՀ տեղեկատվական համակարգում գրանցված ՀՀ օպերատորի մասին տեղեկատվությունը (հոդված 7, կետ 1),

ը) ապահովել, որ կոնկրետ փոխադրման հետագծման ժամանակահատվածի համար նավիգացիոն կապարակնիքը պարունակի Համաձայնագրի 7-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված տեղեկատվությունը (հոդված 7, կետ 2),

թ) ապահովել, որ եթե այլ բան սահմանված չէ Հանձնաժողովի կողմից, ՀՀ լիազորված օպերատորը (մարմինը), որն իրականացնում է անդամ պետությունների տարածքներով փոխադրման հետագծումը, իրական ժամանակի ռեժիմում մյուս այն անդամ պետությունների լիազորված օպերատորներին (մարմիններին) ներկայացնի Համաձայնագրի 12-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ պարբերությանը համապատասխան՝ Հանձնաժողովի կողմից սահմանված տեղեկությունները, որոնց տարածքներով կփոխադրվեն (փոխադրվում են) հետագծման օբյեկտները (հոդված 9, կետ 3),

ժ) ապահովել, որ ՀՀ լիազորված օպերատորը (մարմինը), եթե հետագծման օբյեկտները փոխադրվելու (փոխադրվում) են ՀՀ տարածքով, իրականացնեն այդպիսի փոխադրման մասին տեղեկատվության հավաքագրումը, մշակումը, փոխանցումը (ներառյալ ՀՀ հսկող մարմինն տեղեկատվության փոխանցումը) և այլ գործողություններ, որոնք անհրաժեշտ են ՀՀ տարածքով դրա հետագծումն ապահովելու համար՝ Համաձայնագրի 9-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան ստացված տեղեկությունների հիման վրա (հոդված 9, կետ 4),

ժա) արգելել ՀՀ տարածքով ընթացուղում (փոխադրման ժամանակ) նավիգացիոն կապարակնիքը հանելը, որի ժամանակ կապարակնիքման տարրի անջատումը տեղի է ունեցել առանց ազգային օպերատորի այն տեղեկատվական համակարգի հնարավորություններն օգտագործելու, որտեղ այն գրանցված է, կամ Համաձայնագրի 10-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան՝ Հանձնաժողովի կողմից սահմանված՝ նավիգացիոն կապարակնիքը հանելու գործողությունների կատարման կարգի խախտմամբ՝ առանց հետագծման օբյեկտի դիտարկումը ընթացուղում (փոխադրման ժամանակ)

դադարեցնելու (հոդված 11, կետ 2),

ժբ) ապահովել, որ ՀՀ հսկող մարմինը՝ մյուս կողմերի հսկող մարմինների հետ, միջպետական տեղեկատվական փոխգործակցությունն այն հետագծման օբյեկտների առնչությամբ, որոնց փոխադրումը հետագծվում է Համաձայնագրին համապատասխան, իրականացնի Միության ինտեգրված տեղեկատվական համակարգի օգտագործմամբ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով (հոդված 14),

ժգ) սահմանել ՀՀ օպերատորի ծառայությունների գները (սակագները) (նավիգացիոն կապարակնիքներ դնելը (հանելը), անդամ պետությունների տարածքներով փոխադրումների հետագծման ապահովումը, տեղեկատվության տրամադրումը, հետագծման օբյեկտին՝ նավիգացիոն կապարակնիքների անհրաժեշտ քանակությամբ ապահովումը, Հանձնաժողովի կողմից սահմանվող այլ ծառայություններ)՝ համաձայն ՀՀ օրենսդրության, և երաշխավորել, որ ՀՀ օպերատորի ծառայությունների գները (սակագները) լինեն տնտեսապես հիմնավորված (հոդված 16, կետ 1, պարբերություն 1),

ժդ) ապահովել, որ ՀՀ օպերատորի կողմից անդամ պետությունների տարածքներում հակամենաշնորհային օրենսդրության խախտումների կանխումն իրականացվի ՀՀ պետական իշխանության համապատասխան մարմինների կողմից (հոդված 16, կետ 1, պարբերություն 2),

ժե) Համաձայնագրի 9-րդ հոդվածի 2-րդ կետի իրագործումն ապահովել ՀՀ օպերատորի մասնակցությամբ լիազորված օպերատորի (մարմնի) կողմից ընդունվող՝ ժամանակավոր ինտեգրացիոն տեխնոլոգիական լուծումների իրագործման միջոցով՝ նախքան ծրագրաապարատային համալիրը ստեղծելը և գործողության մեջ դնելը՝ Հանձնաժողովի կողմից սահմանված պահանջներին համապատասխան (հոդված 17, կետ 1),

ժզ) ապահովել Համաձայնագրի 4-րդ հոդվածի 3-րդ կետի իրագործումը Համաձայնագրին ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում (հոդված 18, կետ 2),

ժէ) ապահովել, որ ՀՀ լիազորված օպերատորը (մարմինը) ապահովի Համաձայնագրի 17-րդ հոդվածով նախատեսված՝ ժամանակավոր ինտեգրացիոն տեխնոլոգիական լուծումների մշակումը՝ Համաձայնագրի 12-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ և երրորդ պարբերություններով և 17-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված՝ Հանձնաժողովի ակտերն ուժի մեջ մտնելու օրվանից 90 օրացուցային օրվա ընթացքում (հոդված 18, կետ 3),

ժը) ծանուցել Հանձնաժողովին Համաձայնագրի 17-րդ հոդվածով նախատեսված՝ ժամանակավոր ինտեգրացիոն տեխնոլոգիական լուծումների կայացման մասին ՀՀ լիազորված օպերատորի (մարմնի) պատրաստականության վերաբերյալ՝ ՀՀ լիազորված օպերատորից (մարմնից) այդպիսի տեղեկատվությունն ստանալու օրվանից 10 օրացուցային օրվա ընթացքում (հոդված 18, կետ 4):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Եվրասիական տնտեսական միությունում փոխադրումների հետագծման համար նավիգացիոն կապարակնիքների կիրառման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

4 հոկտեմբեր 2022 թվականի
ՍԴՈ-1665



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ
ՎՐԱ՝ «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ»
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 121-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

11 հոկտեմբերի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմայանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե.
Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն
մեկ հինգերորդի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի պատգամավոր Ա.
Վարդևանյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի
ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման
և սպասարկման բաժնի պետի պարտականությունները ժամանակավոր
կատարող, նույն բաժնի գլխավոր մասնագետ Է. Մնացականյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ
հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի
մասին» սահմանադրական օրենքի 22, 40 և 68-րդ հոդվածների,

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
◆ 3(107)2022

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 121-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքը (այսուհետ՝ նաև Սահմանադրական օրենք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2016 թվականի դեկտեմբերի 16-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2017 թվականի հունվարի 14-ին և ուժի մեջ է մտել 2017 թվականի մայիսի 18-ից:

Սահմանադրական օրենքի՝ **«Խմբակցությունների գրավոր հարցապնդումները»** վերտառությամբ 121-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է.

«2. Խմբակցությունը նույն հերթական նստաշրջանի ընթացքում Կառավարության անդամներին հարցապնդումով կարող է դիմել ոչ ավելի, քան մեկ անգամ»:

Ընդունման պահից ի վեր նշված հոդվածը փոփոխությունների և/կամ լրացումների չի ենթարկվել:

Գործի քննության առիթն Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի (այսուհետ՝ դիմող)՝ 2022 թվականի հունվարի 25-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը և վերլուծելով Սահմանադրական օրենքի վիճարկվող իրավադրույթն ու դրա հետ փոխկապակցված օրենսդրական այլ դրույթներ՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը ելնում է այն հանգամանքից, որ Սահմանադրությամբ Ազգային ժողովի խմբակցություններին վերապահված հարցապնդումների իրավունքը վիճարկվող կարգավորմամբ սահմանափակվել է. նախատեսված է նույն հերթական նստաշրջանի ընթացքում ոչ ավելի, քան մեկ անգամ Կառավարության անդամներին հարցապնդմամբ դիմելու հնարավորություն: Հետևաբար, ըստ դիմողի՝ Սահմանադրական օրենքի վիճարկվող իրավակարգավորմամբ նախատեսված սահմանափակման իրավաչափությունը պետք է դիտարկել խորհրդարանական կառավարման համակարգում խորհրդարանի կողմից վերահսկողական հնարավորության արդյունավետ իրականացնելու համատեքստում:

Ըստ դիմողի՝ Ազգային ժողովում վերահսկողության արդյունավետ գործիքների առկայությունը, առաջին հերթին, բխում է Սահմանադրության անփոփոխելի 1-ին հոդվածով ամրագրված ժողովրդավարության սկզբունքից: Դիմողը նշում է, որ հարցապնդումների իրավունքի քանակական սահմանա-

3(107)/2022
ՍԵՆԵԿԱԿԻ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

փակումը պետք է ունենա լեզուի մասին նպատակ, իսկ այդ նպատակին հասնելու համար ընտրված միջոցը պետք է լինի պիտանի, անհրաժեշտ և համարժեք:

Խորհրդարանական վերահսկողության արդյունավետության առանցքային գործիքներից է հարցապնդումների ինստիտուտը, որի միջոցով հնարավոր է Կառավարությունից պահանջել և ստանալ խորհրդարանական վերահսկողության տեսանկյունից անհրաժեշտ տեղեկատվություն: Ըստ դիմողի՝ հարցապնդումներով դիմելու ինստիտուտը թույլ է տալիս խորհրդարանական ընդդիմությանը ոչ միայն բարձրաձայնել պետական և հասարակական կյանքի տեսանկյունից առավելապես կարևոր հարցերը, այլև հենց Ազգային ժողովում համապատասխան պետական կառավարման մարմնի ղեկավարի անմիջական մասնակցությամբ ստանալ այդ հարցերի պատասխանները, ինչպես նաև վերջնարդյունքում բարձրացնել Կառավարության կոնկրետ անդամի հետագա պաշտոնավարման հարցը: Հետևաբար՝ հարցապնդումների ընթացքում Կառավարության ներկայացուցիչն ավելի քան պարտավորված է հստակ ու բազմակողմանի տեղեկատվություն տրամադրել Ազգային ժողովին իր հետագա պաշտոնավարումը կասկածի տակ չդնելու համար: Դիմողի կարծիքով հետևանքային այս տարբերության պատճառով հարցապնդումները խորհրդարանական վերահսկողության գործիքակազմում լրջագույն կռվաններից մեկն են, հատկապես՝ ընդդիմության համար:

Դիմողն ընդգծում է, որ 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության տեքստի վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ բոլոր այն դեպքերում, երբ սահմանադիրը նպատակ է ունեցել կոնկրետ ինստիտուտի կենսագործման կառուցակարգերի սահմանափակման հնարավորություններն օրենքին վերապահելու, այդ մասին ուղղակիորեն մատնանշել է Սահմանադրության դրույթներում: Դիմողի կարծիքով՝ «(...) Սահմանադրության 113-րդ հոդվածը հարցապնդումներով հանդես գալու իրավունքի պարբերականության մասով որևէ սահմանափակում չի նախատեսում, ինչպես նաև հարցի հետագա կարգավորումը չի վերապահում օրենքին, այլ կերպ ասած՝ առկա չէ օրենքի վերապահումը, ինչը թույլ կտար Ազգային ժողովին հետագայում իր կանոնակարգով մանրամասնել հարցապնդումների պարբերականության հարցը: Համեմատության համար, օրինակ, 2005 թվականի խմբագրությամբ Սահմանադրության 80-րդ հոդվածով հստակ սահմանվում էր, որ «Հարցապնդումներով դիմելու, քննարկում կազմակերպելու և դրանց վերաբերյալ որոշումներ կայացնելու կարգը սահմանվում է Ազգային ժողովի կանոնակարգով»:

(...)

2015թ. խմբագրությամբ Սահմանադրության տեքստի վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ բոլոր այն դեպքերում, երբ սահմանադիրը նպատակ է ունեցել կոնկրետ ինստիտուտի իրացման մեխանիզմների սահմանափակման հնարավորությունները օրենքին վերապահելու, այդ մասին ուղղակիորեն մատնանշել է սահմանադրական նորմում: Այսպես, օրինակ, Սահմա-

նադրության 89-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է, որ «... Քաղաքական կոալիցիա կազմելու սահմանափակումները, պայմանները և կարգը սահմանվում են Ընտրական օրենսգրքով»:

Դիմողը նշում է, որ Սահմանադրության 113-րդ հոդվածն արդեն իսկ նախատեսել է բոլոր այն սահմանափակումները, որոնք սահմանադիրն անհրաժեշտ է համարել ժողովրդավարական հասարակության մեջ հարցապնդումների ինստիտուտի արդյունավետությունը երաշխավորելու համար: Սահմանադրությամբ հարցապնդումների իրավունքը վերապահվում է միայն խմբակցությանը, այլ ոչ թե յուրաքանչյուր պատգամավորի կամ դրանց խմբի: Ըստ դիմողի՝ հարցապնդումների իրավունքի այս սահմանափակումը լիովին համահունչ է ժողովրդավարական հասարակության մեջ այս ինստիտուտի արդյունավետության և այն չարաշահումներից զերծ պահելու լեգիտիմ նպատակին և լուծում է իր առջև դրված խնդիրը: Նմանօրինակ մոտեցումը տեղ է գտել և՛ միջազգային փաստաթղթերում, և՛ տարբեր երկրների սահմանադրություններում:

Դիմողը թվարկում է մի շարք երկրներ, որոնց խորհրդարաններում որպես հարցապնդում ներկայացնելու պարտադիր նախապայման է դրված որակյալ փոքրամասնության առկայությունը՝ անհրաժեշտ թվով պատգամավորների քանակական շեմը՝ պնդելով, որ որևէ այլ սահմանափակում հարցապնդում ներկայացնելու համար նախատեսված չէ:

Դիմողի կարծիքով՝ ժողովրդավարական պետության մեջ հարցապնդումների իրավունքի քանակական սահմանափակումները չեն կարող հետապնդել որևէ լեգիտիմ նպատակ և ոչ այլ ինչ են, քան պառլամենտական փոքրամասնության խորհրդարանական վերահսկողություն իրականացնելու հնարավորությունների արհեստական սահմանափակում: Հասարակությանը հուզող հարցերը, որոնք կարող են դառնալ հարցապնդումների առարկա, չեն կարող սահմանափակվել միայն մեկ ոլորտով, ուստի՝ դիմողը որևէ կերպ հիմնավորված և տրամաբանված չի համարում այն, որ հերթական նստաշրջանի ընթացքում մեկ խմբակցությունը հարցապնդումների իրավունքը մեկ անգամ կարող է կիրառել:

Դիմողը գտնում է, որ սահմանադիրը հստակ արտահայտել է իր կամքը Սահմանադրության 113-րդ հոդվածի միջոցով, որի համեմատությունը մեկ այլ սահմանադրական դրույթի հետ՝ զետեղված Սահմանադրության 88-րդ հոդվածում, «ակնհայտ է դարձնում, որ վիճարկվող կարգավորումն ուղղակիորեն շեղվել է նաև հենց մատնանշված լեգիտիմ կամքից և արհեստականորեն խոչընդոտներ է ստեղծել նման կարևոր ինստիտուտի իրացման համար»:

Դիմողը, ամփոփելով իր հիմնավորումները, պնդում է, որ Սահմանադրական օրենքի 121-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված սահմանափակումը հակասում է Սահմանադրության 1-ին և 113-րդ հոդվածներին, ուստի ենթակա է անվավեր ճանաչման:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 3(107)2022

◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ

2. Պատասխանողի դիրքորոշումները

Ազգային ժողովը (այսուհետ՝ նաև պատասխանող), հիմք ընդունելով Սահմանադրության 88-րդ հոդվածի 3-րդ մասը, համաձայն որի՝ Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ, թվարկում և համառոտ ներկայացնում է Սահմանադրությամբ և Սահմանադրական օրենքով նախատեսված Կառավարության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու ձևերը, այն է՝ հարցապնդումը, մշտական հանձնաժողովների գործունեությունը, վարչապետին անվստահություն հայտնելը, հրատապ թեմայով քննարկումները, պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը, Կառավարության տարեկան զեկույցը՝ իր ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների մասին, պատգամավորների գրավոր և բանավոր հարցերը, Կառավարության գործունեության վերաբերյալ տեղեկություններ ստանալը, քննիչ հանձնաժողովները, և արդյունքում եզրակացնում է, որ Սահմանադրությամբ և Սահմանադրական օրենքով Ազգային ժողովին տրված է բավականին լայն գործիքակազմ՝ իրականացնելու խորհրդարանական վերահսկողություն Կառավարության գործունեության նկատմամբ:

Ըստ պատասխանողի՝ Սահմանադրության 113-րդ հոդվածով ամրագրվել է խմբակցությունների իրավունքը՝ գրավոր հարցապնդումներով դիմելու Կառավարության անդամներին, իսկ Սահմանադրական օրենքի 121-րդ հոդվածով մանրամասնվել է այդ իրավունքի իրականացման ընթացակարգը, ուստի՝ անհիմն է դիմողի այն պնդումը, որ Սահմանադրական օրենքի վիճարկվող դրույթը սահմանափակել է խմբակցությունների՝ հարցապնդումներ ներկայացնելու իրավունքը:

Ամփոփելով բացատրության մեջ ներկայացված հիմնավորումները՝ պատասխանողը եզրակացնում է, որ Սահմանադրությամբ և Սահմանադրական օրենքով բավական լայն գործիքակազմ է նախատեսված Ազգային ժողովի կողմից Կառավարության գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար, հետևաբար՝ դիմողի այն պնդումը, որ Կառավարության գործունեության նկատմամբ հսկողություն իրականացնելու լծակները չեն համապատասխանում Սահմանադրության 1-ին հոդվածով նախատեսված սկզբունքներին, անհիմն է: Այս հիմնավորմամբ պատասխանողը խնդրում է ընդունել որոշում՝ վիճարկվող դրույթը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին:

3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սույն գործով վիճարկվող դրույթի սահմանադրականությունը որոշելու համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդադառնալ հետևյալ հարցադրմանը. **արդյո՞ք խմբակցության՝ Կառավարության անդամներին հարցապնդումներով դիմելու իրավունքի քանակական սահմանափակման նախատեսումը Սահմանադրական օրենքով հեղա-**

պնդում է իրավաչափ նպատակներ և համապատասխանում է Սահմանադրության 113-րդ հոդվածին:

Սահմանադրական դատարանը սույն գործով վիճարկվող դրույթը քննության է առնում Սահմանադրության 4-րդ գլխում ամրագրված Ազգային ժողովի գործունեության կառուցակարգի ընդհանուր և հատուկ իրավակարգավորումների համատեքստում:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործի շրջանակներում առաջին հերթին վեր հանել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի գործունեության կարգավորման իրավական հիմքերը՝ պայմանավորված այն հանգամանքով, որ դիմողի պնդմամբ Սահմանադրության 113-րդ հոդվածը հարցապնդումներով հանդես գալու իրավունքի իրականացման քանակի մասով որևէ սահմանափակում չի նախատեսում, հետևաբար՝ օրենսդիրն իրավագոր չէր Սահմանադրական օրենքով մանրամասնելու հարցապնդումների պարբերականության հարցը:

Սահմանադրության «Ազգային ժողովը» գլխի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրա գործունեության հարաբերությունների կարգավորման իրավական հիմքերի մատնանշման դեպքում, երբ ընդհանուր հղում է արվում Ազգային ժողովի կանոնակարգին (Սահմ. 88-րդ հոդվածի 5-րդ մաս), դրան արված հատուկ հղումները՝ վերացական ձևակերպումներով («մանրամասները սահմանվում են Ազգային ժողովի կանոնակարգով» (Սահմ. 108-րդ հոդվածի 5-րդ մաս), չունեն ինքնուրույն, լրացնող կամ հատուկ կարգավորիչ նշանակություն, այլ կրկնում են ընդհանուր իրավակարգավորումը, կոնկրետացնում են Ազգային ժողովի գործունեության հետ կապված որևէ ինստիտուտի իրավական կարգավորման հիմքերը, մեկ անգամ ևս շեշտադրում են «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի նշանակությունն այդ ինստիտուտի իրավակարգավորման գործում:

Հակառակ դեպքում հակասահմանադրական կարող են որակվել բոլոր այն իրավիճակները, երբ Սահմանադրության յուրաքանչյուր նախորդ փոփոխություններում գոյություն ունեին հատուկ հղումներ Ազգային ժողովի կանոնակարգին, սակայն հաջորդում դրանք սահմանված չեն: Տրամաբանական իրավական մյուս ծայրահեղ եզրակացությունը կարող է լինել այն, որ Սահմանադրության՝ «Ազգային ժողովը» գլխում առանձին ինստիտուտների իրավակարգավորիչ բոլոր հոդվածներում անխտիր հղում պետք է արվի «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքին:

Սահմանադրական դատարանն ուշադրություն է հրավիրում այն հանգամանքին, որ եթե 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության օգտագործած «գործունեության կարգ» հասկացությունը նեղ մեկնաբանման դեպքում հնարավոր էր ընկալել միայն որպես «ընթացակարգ», որը չէր կարող

ենթադրել նյութական իրավական սահմանափակումներ, ապա ներկայիս փոփոխություններով Սահմանադրության՝ «գործում է իր կանոնակարգին համապատասխան» (Սահմ. 88-րդ հոդ. 5-րդ մաս) ընդհանուր բանաձևը չի կարող ենթարկվել այնքան սահմանափակ իրավական մեկնաբանության, որ ենթադրվի, թե Սահմանադրական օրենքում չեն կարող ամրագրվել Սահմանադրությունից բխող մանրամասն իրավակարգավորումներ, ներառյալ՝ որոշակի սահմանափակումներ: Սահմանադրությունը կարգավորում է խորհրդարանական վերահսկողության ձևերի իրականացման ելակետային, առանցքային հարաբերությունները: Հակառակ պարագայում, օրինակ, պատգամավորի ելույթին ներկայացվող ժամանակային սահմանափակումը պետք է նախատեսվեր Սահմանադրությամբ:

Սահմանադրական դատարանը, վերոգրյալից ելնելով, գտնում է, որ Ազգային ժողովի գործունեության կարգի իրավական կարգավորման համակարգում, Սահմանադրությունից բացի, Ազգային ժողովի կանոնակարգին ընդհանուր կամ հատուկ հղումներ անելը չի ենթադրում, որ Սահմանադրական օրենքը չի կարող նախատեսել Սահմանադրությամբ ուղղակիորեն չամրագրված սահմանափակումներ:

Գործադիր իշխանության նկատմամբ խորհրդարանական վերահսկողություն իրականացնելու համար Սահմանադրությամբ ամրագրվել են անհրաժեշտ կառուցակարգեր ու դրանց կենսագործումը երաշխավորող անհրաժեշտ ելակետային դրույթներ, իսկ վերահսկողության իրականացման ձևերի մնացյալ մանրամասնությունների կարգավորումը գտնվում է օրենսդրի կարգավորման տիրույթում: Մասնավորապես՝ Սահմանադրությամբ սահմանվում է, որ Ազգային ժողովը գործում է իր կանոնա-կարգին համապատասխան (Սահմ. 88-րդ հոդված, 5-րդ մաս), իսկ Ազգային ժողովի կանոնակարգը սահմանադրական օրենք է և ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով (Սահմ. 103-րդ հոդված, 2-րդ մաս): Ազգային ժողովի՝ իր կանոնակարգին համապատասխան գործելու սահմանադրական պահանջը ենթադրում է, որ, Սահմանադրությունից բացի, վերջինիս գործունեության կարգավորման նորմատիվային հիմնական իրավական աղբյուրը Սահմանադրական օրենքն է, որն ընդունվում է հենց Ազգային ժողովի կողմից՝ դրանով իսկ ընձեռնելով հայեցողության որոշակի հնարավորություններ սեփական գործունեության իրականացման կարգը սահմանելիս: Վերոգրյալը ենթադրում է նաև Սահմանադրությամբ նախատեսված վերահսկողական գործիքների իրականացման կարգի մանրամասնությունների սահմանում Ազգային ժողովի կողմից, որը որոշակի դեպքերում կարող է դրսևորվել նաև օրենսդիր և գործադիր իշխանությունների բնականոն և արդյունավետ գործելու կարողունակությունն ապահովելու նպատակ հետապնդող վերահսկողության իրականացման այս կամ այն սահմանափակումներով:

Վերոգրյալի հիման վրա՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Ազգային ժողովը՝ որպես ժողովրդավարական լեգիտիմություն ունեցող մարմին, իր գործունեության կանոնները սահմանելիս օժտված է լայն իրավական հնարավորություններով, սակայն սեփական գործունեությունը Սահմանադրական օրենքով կարգավորելու խորհրդարանական ինքնավարությունը գտնվում է Սահմանադրությամբ նախանշված շրջանակներում, մասնավորապես՝ Սահմանադրական օրենքով սահմանված կարգը, ներառյալ՝ վերահսկողության որևէ ձևի իրականացման սահմանափակումները, պետք է ունենան սահմանադրական արդարացում, հետապնդեն սահմանադրական համարժեք շահեր ապահովելու նպատակներ:

4.2. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ «հարցապնդում» ընդհանուր անվանմամբ խորհրդարանական վերահսկողության ինստիտուտի առանձնահատկություններին՝ այլ երկրների խորհրդարանական պրակտիկայի համատեքստում: Ընդհանրապես խորհրդարանական պրակտիկայում, ինչպես պատգամավորների հարցերի, այնպես էլ հարցապնդումների իրավակարգավորումներում կիրառվում են տարաբնույթ սահմանափակումներ՝ բովանդակության վերաբերելիություն (որոշ հարցերի ուղղակի արգելք, սպառնալիքի և վիրավորանքի բացակայություն, բովանդակության կրկնության արգելք, բովանդակության ձևակերպման պահանջներ), մերժման հնարավորություն (նախաձեռնության հաստատում խորհրդարանի մարմինների կողմից), իրականացման քանակական և ժամկետային արգելքներ, սուբյեկտային սահմանափակումներ և այլն:

«Ինտերպելյացիա» ընդհանուր անվանումն ունեցող խորհրդարանական վերահսկողության ձևի ընթացակարգերին բնորոշ չեն ընդհանրությունները, քանի որ խորհրդարանական վերահսկողության այդ ձևը՝ ըստ ընթացակարգի առանձնահատկությունների, իրավական նշանակության և հետևանքների (տեղեկատվական, խորհրդատվական, տարբերվող սանկցիաների կիրառման հնարավորություններ), ամեն մի երկրում յուրահատուկ, մյուսներից էականորեն տարբերվող ինստիտուտ է:

Հետևաբար՝ խորհրդարանների գործունեության տարատեսակ ընթացակարգերում, ներառյալ՝ խորհրդարանական վերահսկողության իրականացման ձևերում կիրառվող սահմանափակումները պետք է գնահատվեն կոնկրետ երկրի սահմանադրական կարգավորումների ու իշխանությունների բաժանման սկզբունքի կենսագործման առանձնահատկությունների, խորհրդարանի կառուցվածքի և գործունեության կառուցակարգի, դրա ձևավորման ու զարգացման առանձնահատկությունների, պատմական ավանդույթների, ինչպես նաև գործադիր իշխանության համակարգի բնականոն և արդյունավետ գործելու կարողունակության ապահովման համատեքստում:

4.3. Հայաստանի Հանրապետությունում խորհրդարանական մշակույթի զարգացման կարևորագույն խթանն Ազգային ժողովի վերահսկողական

կարողությունների սահմանադրական զարգացումն էր: 2014 թվականին հրապարակված «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգը» (այսուհետ՝ «Հայեցակարգ») արձանագրում էր. «Սահմանադրական մակարդակում դեռևս պատշաճ երաշխիքներ չեն ապահովված Ազգային ժողովի օրենսդրական ու վերահսկողական գործունեության լիարժեք իրականացման, ինչպես նաև խորհրդարանական փոքրամասնության հակակշռող դերի արդյունավետ իրականացման համար»¹: Ազգային ժողովի վերահսկողական գործառնությունների իրականացման գործում խորհրդարանական փոքրամասնության հակակշռող դերակատարությունը մեծացնելու համար «Հայեցակարգը» նախատեսեց այդ փոքրամասնությանն «իր դերին համարժեք իրավունքներ վերապահելու» ծրագրային միջոցառումներ: Այս հայեցակարգային դիրքորոշմանը համապատասխան՝ 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրությունն ամրագրեց խորհրդարանական փոքրամասնության իրավունքների մի շարք երաշխիքներ, ինչպես նաև խորհրդարանական վերահսկողության նոր ձևեր, ի թիվս այլնի՝ վերափոխեց նաև հարցապնդման սահմանադրական ինստիտուտը: Սահմանադրական մակարդակում ամրագրում ստացան Ազգային ժողովի մարմիններում խորհրդարանական ընդդիմության ներկայացուցչության վերաբերյալ մի շարք դրույթներ, մասնավորապես՝ Ազգային ժողովի նախագահի տեղակալներից մեկի պաշտոնը վերապահվեց խորհրդարանական փոքրամասնությանը, նախատեսվեց պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի պահանջով իրավունքի ուժով Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովի ստեղծում, որում տեղերը բաշխվում են խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ, և որում նախագահում է պահանջը ներկայացնող պատգամավորներից մեկը, ամրագրվեց Ազգային ժողովի խմբակցությունների միջև մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնների բաշխման վերաբերյալ դրույթ՝ ելնելով խմբակցությունում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությունից, ինչպես նաև խորհրդարանական փոքրամասնության մի շարք այլ լիազորություններ, որոնք կոչված են առավել արդյունավետ դարձնելու խորհրդարանական վերահսկողության իրականացումը:

Հիմք ընդունելով 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության 113-րդ հոդվածը՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 121-րդ հոդվածը կարգավորում է խմբակցությունների՝ Կառավարության անդամներին գրավոր հարցապնդումներով դիմելու իրավունքի կենսագործման կարգը, ինչպես նաև քննարկման արդյունքով որոշումների նախագծեր առաջարկելու հնարավորությունները: Համաձայն Սահմանադրության 113-րդ

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, Երևան, 2014, Տիգրան Մեծ հրատ., էջ 44:

հողվածի 2-րդ մասի՝ «Հարցապնդումների պատասխանները ներկայացվում են Ազգային ժողովի նիստում: Խմբակցության առաջարկությամբ հարցապնդման պատասխանը քննարկվում է: Եթե քննարկման արդյունքով պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի կողմից ներկայացվում է վարչապետին անվստահություն հայտնելու առաջարկ, ապա կիրառվում են Սահմանադրության 115-րդ հոդվածի դրույթները: Հարցապնդման արդյունքով Ազգային ժողովը կարող է առաջարկել վարչապետին քննարկել Կառավարության առանձին անդամի հետագա պաշտոնավարման հարցը»:

Սահմանադրաիրավական փոփոխությունների արդյունքում հարցապնդումներ ներկայացնելու իրավունքը, փաստորեն, վերապահվել է միայն Ազգային ժողովի խմբակցությանը: Ազգային ժողովի խմբակցության կողմից հարցապնդում ներկայացնելու իրավունքին համապատասխանում է դրան հստակ սահմանված ժամկետում (այն ստանալուց ոչ ուշ, քան երեսուն օրվա ընթացքում) Կառավարության անդամի՝ պատասխանելու սահմանադրական պարտականությունը, որի իրացման արդյունքում խմբակցության առաջարկությամբ պատասխանը քննարկվում է: Բացի դրանից, գործող Սահմանադրությամբ առաջին անգամ ամրագրվել են հարցապնդումների քննարկման արդյունքում առաջացող հնարավոր իրավական հետևանքները, դրանք են՝ վարչապետին անվստահություն հայտնելու առաջարկը կամ Կառավարության առանձին անդամի հետագա պաշտոնավարման հարցի քննարկումը վարչապետին առաջարկելը:

Այսպիսով, Սահմանադրական դատարանը եզրակացնում է, որ ՀՀ սահմանադրական մշակույթի զարգացման ընթացքում հարցապնդման իրավական ինստիտուտը պատգամավորական հարցի իրավական ընթացակարգից վերաձվել է էական իրավական հետևանքներ առաջացնող խորհրդարանական վերահսկողության վճռորոշ ձևի, որն առանձնանում է նախաձեռնող սուբյեկտով, հարցապնդումների քննարկման արդյունքում ընդունվելիք որոշումների այլընտրանքայնությամբ, դրանցից ամեն մեկի բովանդակության որոշակիությամբ, ինչպես նաև դրանց իրավական հետևանքների բնույթով:

4.4. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործի շրջանակներում ուսումնասիրել խորհրդարանական ուղղակի վերահսկողության հիմնական ձևերի ընթացակարգերում կիրառվող սահմանափակումներն Ազգային ժողովի գործունեության կառուցակարգում և վերհանել այդ սահմանափակումների բնույթն ու ուղղվածությունը:

Խորհրդարանական վերահսկողությունն օրենսդիր մարմնի առանցքային գործառույթներից մեկն է, որն իրացվում է հստակ ընթացակարգերով, գործադիր իշխանության մարմինների գործունեության դիտարկումների ու ստուգումների անցկացման միջոցով, ուղղված է այդ գործունեության գնահատմանը՝ առանձին դեպքերում համապատասխան հետևանքների կիրառման հնարավորությամբ: Ըստ Ազգային ժողովի գործունեության հիմնական

ձևերի՝ նստաշրջանի և նիստերի հետ առնչության, խորհրդարանական վերահսկողության ձևերը դասակարգվում են՝ նիստերում իրացվող և նիստերից դուրս իրացվող (արտանիստային):

Սահմանադրական օրենքի վերաբերելի կարգավորումների վերլուծություններից հետևում է, որ այն որդեգրել է «**նիստերով անցնող խորհրդարանական վերահսկողության ձևերի ժամանակային ու դրանով պայմանավորված նաև քանակական սահմանափակման ու, ընդհակառակը, նիստերից դուրս կենսագործվող ձևերի իրականացման հարաբերականորեն անսահմանափակ հնարավորություններ**» սկզբունքային մոտեցումը: Ավելին, Ազգային ժողովի գործունեության կառուցակարգի և դրան համապատասխան սահմանված ընթացակարգերի իրավակարգավորումները սահմանելիս օրենսդիրը որդեգրել է դրա աշխատանքային հիմնական ձևերի՝ նստաշրջանների, ու հատկապես՝ նիստերի միջոցով իրականացվող լիազորությունների իրականացման հավասարակշռության, գործունեության արդյունավետության ապահովման նպատակները: Այս իրավաչափ նպատակների իրականացման համար Սահմանադրական օրենքն առանձին վերահսկողական ձևերի իրավական ընթացակարգերում կիրառում է մի քանի տեսակի լուծումներ:

1. Սահմանադրական օրենքը սահմանում է նիստերի միջոցով իրականացվող վերահսկողության որոշ ձևերի երաշխավորված ու կայուն պարբերական իրացման ընթացակարգեր Ազգային ժողովի հերթական նստաշրջանի հերթական նիստերի համակարգում՝ նպատակ ունենալով կանխել խորհրդարանական մեծամասնության կողմից նիստերի օրակարգից այլ հարցերի միջոցով դրանց դուրսմղումը: Օրինակ՝ Սահմանադրական օրենքով սահմանված հերթական նստաշրջանի առաջին հերթական նիստերի ժամանակացույցին համապատասխանող ժամկետներում գումարվող յուրաքանչյուր հերթական նիստերի երեքշաբթի օրվա վերջին հիմնական նիստում պատգամավորները կարող են հանդես գալ մինչև երեքական ընթացակարգի **հայտարարությամբ** (հոդված 124-րդ): Իր բնույթով այդպիսին է նաև պատգամավորների **բանավոր հարցերի** իրացման ընթացակարգը (հոդված 120-րդ): Որպես պատգամավորների իրավունքների իրականացման երաշխիք՝ երկու դեպքում էլ նիստն ավարտվում է հերթագրված վերջին պատգամավորի հայտարարությունից կամ վերջին պատգամավորի հարցին պատասխանելուց հետո:

2. Սահմանադրական օրենքը սահմանափակում է Ազգային ժողովի նիստերի միջոցով իրականացվող վերահսկողության որոշակի ձևերի քանակային կամ որոշակի ժամկետներում կիրառումը, որովհետև դրանց անսահմանափակ կիրառումը կարող է խախտել Ազգային ժողովի նստաշրջանի ու նիստերի պատշաճ ընթացքը, ըստ այդմ՝ առհասարակ խորհրդարանի բնականոն գործունեությունը: Մասնավորապես՝ Սահմանադրական օրենքի 123-րդ հոդվածով սահմանված հասարակական հետաքրքրություն ներկայացնող հրատապ թեմայով քննարկումներ անցկացնելու կարգում

նախատեսված է, որ դրանք կիրառվում են հերթական նստաշրջանի՝ նիստերի շաբաթվա ընթացքում գումարվող նիստերից մեկում: Ընդ որում՝ Սահմանադրական օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասում նշված ժամկետներում գումարվող յուրաքանչյուր հերթական նիստերի երեքշաբթի օրվա երրորդ հիմնական նիստում կարող է անցկացվել մեկ քննարկում: Քննարկումը կարող է առաջիկա հերթական նիստերում անցկացվել, եթե դիմումն Ազգային ժողովի նախագահին է ներկայացվել այդ նիստերից առնվազն մեկ շաբաթ առաջ: Եթե այդ ժամկետում ներկայացվել է մեկից ավելի դիմում, ապա առաջիկա հերթական նիստերում անցկացվում է այն քննարկումը, որի դիմումն ավելի շուտ է ներկայացվել: Նույն նպատակով սահմանափակված է նաև **խորհրդարանական լսումներ** գումարելու՝ խմբակցության իրավունքը. խմբակցությունը յուրաքանչյուր հերթական նստաշրջանի ընթացքում կարող է հրավիրել մեկ լսում (Սահմանադրական օրենքի 125-րդ հոդվածի 3-րդ մաս): Իրականացման քանակական սահմանափակում է կիրառված նաև **վարչապետին անվստահություն հայտնելու խորհրդարանական ընթացակարգում** (Սահմանադրական օրենքի 152-րդ հոդվածի 9-րդ մաս):

Սահմանադրական օրենքի 121-րդ հոդվածով կարգավորված՝ խմբակցությունների գրավոր հարցապնդումների ընթացակարգում օրենսդիրը կիրառել է և՛ **իրականացման քանակական սահմանափակումը** (խմբակցությունը նույն հերթական նստաշրջանի ընթացքում Կառավարության անդամներին հարցապնդումով կարող է դիմել ոչ ավելի, քան մեկ անգամ), և՛ **հարցապնդումների քննարկման քանակական սահմանափակումը** (յուրաքանչյուր շաբաթվա հերթական նիստերում կարող է ներկայացվել և քննարկվել մեկ հարցապնդման պատասխան), և՛ **տարեկան ժամկետային սահմանափակումը՝ միևնույն բովանդակությամբ հարցապնդման համար** (համաձայն Սահմանադրական օրենքի 121-րդ հոդվածի 14-րդ մասի՝ հարցի քննարկման ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում, որևէ խմբակցություն չի կարող միևնույն հարցապնդումով Կառավարությանը կրկին դիմել կամ քննարկված հարցապնդման արդյունքով ներկայացնել վարչապետին անվստահություն հայտնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ):

3. Սահմանադրական օրենքն արգելում է Ազգային ժողովի գործունեության արտանիստային մի շարք վերահսկողական ձևերի կիրառումը՝ խորհրդարանի նիստին զուգահեռ՝ հետապնդելով նիստի բնականոն աշխատանքը չխոչընդոտելու նպատակ: Մասնավորապես՝ Սահմանադրական օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասը թույլ է տալիս Ազգային ժողովի նիստի ընթացքում մշտական հանձնաժողովի նիստ անցկացնել միայն Սահմանադրությամբ կամ Կանոնակարգով սահմանված ժամկետների ապահովման նպատակով: Ազգային ժողովի խորհրդի հերթական նիստերը, որպես կանոն, հրավիրվում են Ազգային ժողովի հերթական նստաշրջանի առաջին հերթական նիստերին նախորդող շաբաթվա ուրբաթ, ինչպես նաև մյուս

հերթական նիստերի շաբաթվա երկուշաբթի օրը՝ Ազգային ժողովի նախագահի սահմանած ժամին (Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մաս): Սահմանա-

դրական օրենքի 125-րդ հոդվածով սահմանված **խորհրդարանական լսումներ** գումարելու և անցկացնելու կարգի համաձայն՝ լսումների անցկացման օրը չպետք է համընկնի Ազգային ժողովի նիստի օրվա հետ:

Ազգային ժողովի հերթական նստաշրջանի նիստերին զուգահեռ կիրառման արգելքներ են սահմանված նաև Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանի գումարման, ինչպես նաև Սահմանադրությամբ Սահմանադրական օրենքով սահմանված ժամկետների ապահովման նպատակով գումարվող հատուկ նիստերի ընթացակարգերում (Սահմանադրական օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մաս, 50-րդ հոդված):

4. Սահմանադրական օրենքն առանց քանակական որևէ սահմանափակման թույլատրում է խորհրդարանական վերահսկողության այն ձևերի կիրառումը, որոնք իրականացվում են Ազգային ժողովի նստաշրջանի ժամանակաշրջանում, սակայն նիստերից դուրս ընթացակարգով: Այդպիսին են, օրինակ, Սահմանադրական օրենքի 119-րդ հոդվածով սահմանված՝ Կառավարության անդամներին գրավոր հարցեր ուղղելու ընթացակարգը, 122-րդ հոդվածով սահմանված՝ մշտական հանձնաժողովների խորհրդարանական վերահսկողության ընթացակարգը:

5. Հայաստանի խորհրդարանականության պատմության ընթացքում խորհրդարանի կանոնակարգերը երբեմն կիրառել են նաև նիստերից դուրս իրականացվող վերահսկողական ձևերի քանակը խթանող իրավակարգավորումներ՝ «նստաշրջանի ընթացքում առնվազն ինչ-որ անգամ» բանաձևով: Այդպիսի մոտեցում էր որդեգրել 2002 թվականի «Ազգային ժողովի կանոնակարգ օրենքը» (18.01.2005թ. փոփոխություններով)¹ սահմանելով, որ խորհրդարանական հանձնաժողովները կանոնակարգով իրենց վերապահված ոլորտներին վերաբերող հարցերով յուրաքանչյուր հերթական նստաշրջանում առնվազն մեկ անգամ պետք է կազմակերպեն խորհրդարանական լսումներ (հոդված 32-րդ, 1-ին մաս), իսկ ժամանակավոր հանձնաժողովների նիստերը պետք է գումարվեն հանձնաժողովի սահմանած օրերին, բայց ոչ պակաս, քան շաբաթը մեկ անգամ (հոդված 27-րդ, 2-րդ մաս):

¹ 2002 թվականի «Ազգային ժողովի կանոնակարգ օրենքը» սահմանում էր, որ «խորհրդարանական խմբակցությունը կամ պատգամավորական խումբը նույն հերթական նստաշրջանի ընթացքում Կառավարությանը հարցապնդումով կարող էր դիմել ոչ ավելի, քան մեկ անգամ, բացառությամբ այն հարցապնդումների, որոնք քննարկելուց խմբակցությունը կամ պատգամավորական խումբը հրաժարվել է» (105.1-ին հոդվածի 1-ին մաս 2-րդ պարբերություն): Այս իրավադրույթը, ամրագրելով հարցապնդումներով դիմելու իրավունքի քանակական սահմանափակում, միաժամանակ բացառություն էր անում այն

Սահմանադրական դատարանն ուշադրություն է հրավիրում նաև այն հանգամանքին, որ հարցապնդման եղանակով խորհրդարանական վերահսկողություն իրականացնելու արդյունքում հետապնդվող նպատակին հասնելու համար անհրաժեշտ է մի դեպքում՝ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի համաձայնությունը (վարչապետին անվստահություն հայտնելու առաջարկ ներկայացնելու համար), մյուս դեպքում (Կառավարության առանձին անդամի հետագա պաշտոնավարման հարցը վարչապետի քննարկմանն առաջարկելու մասին Ազգային ժողովի որոշման ընդունման համար)՝ քվեարկությանը մասնակցող պատգամավորների ձայների մեծամասնությունը, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին: Հետևաբար՝ վերահսկողության այս ձևի կիրառմամբ որոշակի հետևանքների հասնելը փոքրամասնության համար ունի «արգելակող բնույթ», որպիսի պայմաններում հարցապնդումը չի կարող համարվել խորհրդարանական փոքրամասնության համար եզակի և հիմնարար բնույթ ունեցող գործիք: Ուստի՝ դրա իրացման համար նստաշրջանի ընթացքում քանակական սահմանափակումների գոյությունը չի խաթարում խորհրդարանական վերահսկողության իրականացումը:

Այսպիսով՝ խորհրդարանական կառուցակարգի և, հատկապես՝ խորհրդարանական վերահսկողության ձևերի ընթացակարգերի՝ Սահմանադրությամբ ամրագրված և Սահմանադրական օրենքով մանրամասնված իրավակարգավորումների համադրված ուսումնասիրությունը հիմք է տալիս հանգելու հետևյալ եզրակացություններին.

1) Սահմանադիրն Ազգային ժողովի վերահսկողական գործիքներն ամրագրող սահմանադրական նորմերով սահմանել է դրանց իրացման միայն հիմնարար, ելակետային դրույթները, երբեմն նաև մանրամասնությունները, ինչն ինքնին չի կարող բացառել օրգանական օրենքի միջոցով դրանց ընթացակարգերում այլ պայմանների և սահմանափակումների կիրառումը: Ընդ որում՝ հաշվի առնելով խորհրդարանական կառավարման համակարգի առանձնահատկությունները և հատկապես՝ Ազգային ժողովի քաղաքական կամքի ձևավորման հարցում խորհրդարանական ընդդիմության դերի կարևորությունը՝ սահմանադիրը վերահսկողական գործառույթի իրականացման համար անհրաժեշտ փոքրամասնության իրավունքները սահմանելիս որոշ դեպքերում նախատեսել է նաև նշված իրավունքների իրացման համար անհրաժեշտ նվազագույն

դեպքերի համար, երբ դիմող սուբյեկտը, անելով հարցապնդումը, հրաժարվում էր դրա քննարկումից ընդհանուր նիստում: Հետևաբար՝ այդ սուբյեկտը կարող էր հերթական նստաշրջանում անել ևս մեկ հարցապնդում: Այս կապակցությամբ հատկապես կարևոր էր Ազգային ժողովի 2002 թվականի կանոնակարգ օրենքի 105.1-ին հոդվածի 8-րդ մասով սահմանված իրավակարգավորումը, ըստ որի՝ հարցապնդումները և դրանց պատասխանները հրապարակվում էին «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 3(107)2022

ծավալները՝ բացառելով Սահմանադրական օրենքի այս կամ այն փոփոխության միջոցով այդ իրավունքների իրացման ծավալներն անհարկի սահմանափակմամբ փոքրամասնության իրավունքների ոտնահարումը:

2) Խորհրդարանական վերահսկողության ձևերի իրավակարգավորումները դրանց գրեթե բոլոր ընթացակարգերում կիրառում են տարատեսակ սահմանափակումներ, հատկապես՝ խորհրդարանական այն ընթացակարգերի ու վերահսկողության ձևերի նկատմամբ, որոնք իրացվում/կենսագործվում են Ազգային ժողովի ամեն մի նստաշրջանի նիստերում: Նիստերի միջոցով իրականացվող վերահսկողության ձևերի կարգավորման մեթոդ է քանակական առավելագույն սահմանափակումը, իսկ նիստերից դուրս իրականացվող վերահսկողական ձևերի իրավակարգավորումներում կիրառվում են անսահմանափակ թույլատվության (ըստ նախաձեռնող սուբյեկտի հնարավորությունների), երբեմն նաև իրականացման նվազագույն քանակի ամրագրմամբ՝ խթանման մեթոդները:

4.5. Սահմանադրական դատարանը, փաստելով, որ խորհրդարանական վերահսկողության զանազան ձևերի քանակական կիրառման և այլ չափանիշներով սահմանափակումները խորհրդարանական պրակտիկայում լայնորեն տարածված իրավակարգավորումներ են, ուշադրություն է հրավիրում այն հանգամանքին, որ խորհրդարանական վերահսկողության որոշակի ձևերի, ներառյալ՝ հարցապնդման, քանակական սահմանափակումների իրավակարգավորումների սահմանադրականության գնահատումը պետք է կատարվի ոչ թե զուտ քանակական չափանիշներով, այլ օրենսդիր իշխանության մարմնի գործառույթների և գործունեության կառուցակարգի ամբողջական համակարգում:

Ավելին՝ խորհրդարանական վերահսկողության ձևերի սահմանափակման իրական գործոնները ոչ թե կանոնակարգերով սահմանված քանակական ցուցանիշներն են, այլ Սահմանադրությամբ սահմանված օրենսդիր և գործադիր իշխանությունների փոխհարաբերությունների կառուցակարգերը (ներառյալ՝ կառավարման ձևը, իշխանությունների բաժանման համակարգում զսպումների և հակակշիռների զանազան ինստիտուտների առկայությունը կամ բացակայությունը), ինչպես նաև քաղաքական և պետական վարչաձևը տվյալ երկրում՝ տվյալ պահին:

Սահմանադրության 88-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովը, լինելով ժողովրդի ներկայացուցչական մարմին, իրականացնում է օրենսդիր իշխանությունը, վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ, ընդունում է պետական բյուջեն, ինչպես նաև Սահմանադրությամբ սահմանված զանազան այլ գործառույթներ ու լիազորություններ: Սահմանադրության 88-րդ հոդվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Ազգային ժողովի գործունեության ուղղությունները ներառում են իրավասության բավական լայն ոլորտներ, իսկ դրանցից յուրաքանչյուրում ամրա-

գրված են բազմազան լիազորություններ: Ազգային ժողովն իշխանությունների բաժանման համակարգում օրենսդիր իշխանությունն իրականացնող համապետական ներկայացուցչական մարմին է, որի իրավասության տարրերն են օրենքների ընդունումը, երկրի պետական բյուջեի ընդունումը և դրա կատարման նկատմամբ վերահսկողությունը, բազմազան ձևերով վերահսկողությունը գործադիր իշխանության նկատմամբ, միջազգային պայմանագրերի վավերացումը և չեղյալ հայտարարելը, պետական որոշակի մարմինների ձևավորումը, պաշտոնատար անձանց նշանակումը, ընտրությունը կամ մասնակցությունը նման ընթացակարգերին, լիազորությունները երկրի պաշտպանության և անվտանգության ոլորտներում և այլն:

Ազգային ժողովի տարաբնույթ գործառույթների ու դրանց համապատասխան սահմանված լիազորությունների կենսագործումը տեղի է ունենում Սահմանադրությամբ և Սահմանադրական օրենքով սահմանված կառուցակարգի շնորհիվ, որը ներառում է գործունեության համապատասխան ձևերը (նստաշրջան, նիստեր, հանձնաժողովների նիստեր, պատգամավորների գործունեությունը տեղերում և այլն), դրանցից յուրաքանչյուրին համապատասխանող խորհրդարանական ընթացակարգերը՝ օրենսդրական, վերահսկողական և այլն:

Ազգային ժողովի բնականոն և արդյունավետ գործունեության հիմքն իր բոլոր տեսակի գործառույթների հավասարակշռված և ներդաշնակ իրականացումն է: Սակայն մյուս կողմից շատ կարևոր է նաև խորհրդարանական փոքրամասնության իրավունքների իրական ապահովումը, ներառյալ՝ խորհրդարանական վերահսկողական ձևերի իրականացման ոլորտում: Այլ կերպ ասած՝ Ազգային ժողովի գործունեության ընթացքում առաջանում է խորհրդարանի բոլոր գործառույթների հավասարակշռված և բնականոն իրականացման, ու կոնկրետ դեպքում՝ հարցապնդումների՝ որպես խորհրդարանական փոքրամասնության հիմնական իրավունքներից մեկի իրացման քանակական սահմանափակումների հարաբերակցության խնդիրը: Սահմանադրությունն այդ խնդրի լուծումն իրականացրել է՝ հիմք ընդունելով Ազգային ժողովի տարատեսակ գործառույթների իրականացման արդյունավետության, հավասարակշռության, ներդաշնակության պահանջները՝ պայմանավորված այն հանգամանքով, որ այն՝ որպես ներկայացուցչական մարմին, ունի գործունեության հատուկ՝ նստաշրջանային կարգ, այսինքն՝ ժամանակաշրջան, որի ընթացքում գումարվում են խորհրդարանի նիստեր, աշխատում են դրա մարմինները, հանձնաժողովներն ու խմբակցությունները և այլն: Հետևաբար՝ Ազգային ժողովի գործունեությունը կարգավորելիս որդեգրված են այնպիսի մոտեցումներ, որոնք կապահովեն յուրաքանչյուր նստաշրջանի ընթացքում անցկացվող նիստերի գումարման միջոցով խորհրդարանի բոլոր գործառույթներից բխող լիազորությունների իրականացման խնդիրը:

Սահմանադրական կարգավորման գործող կարգի համաձայն՝ յուրաքանչյուր նստաշրջանում գումարվող նիստերի ընթացքում Ազգային ժողովը

պետք է լուծի իր գործունեության բոլոր ուղղություններով համապատասխան լիազորություններին վերաբերող օրակարգային հարցերը: Այս պայմաններում ընդհանուր նիստերում քննվող հարցապնդումների և խորհրդարանական վերահսկողության այլ ձևերի անսահմանափակ կիրառման կամ նույնիսկ սահմանափակ, բայց բավականին մեծ թվով կիրառումը կարող է կազմալուծել խորհրդարանի բնականոն գործունեությունը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ հարցապնդումների քանակական սահմանափակումը չի խեղաթյուրում խորհրդարանական խմբակցությունների՝ Սահմանադրությամբ ամրագրված հարցապնդման իրավունքը, հատկապես, որ այն մեկ հերթական նստաշրջանի ընթացքում արդեն օգտագործված լինելու դեպքում, մինչև հաջորդ նստաշրջանի սկիզբը կարող են օգտագործվել խորհրդարանական վերահսկողության այլ ձևերը (օրինակ՝ գրավոր և բանավոր հարցերը՝ առանց սահմանափակման, Սահմանադրության 115-րդ հոդվածով սահմանված կարգով վարչապետին անվստահություն հայտնելու ինստիտուտին դիմելը և այլն):

Ամփոփելով վերոշարադրյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ խորհրդարանական վերահսկողության որոշակի ձևերի, ներառյալ՝ հարցապնդման քանակական և այլ բնույթի սահմանափակումները նպատակամղված են Ազգային ժողովի հերթական նստաշրջանի նիստերում տարատեսակ լիազորությունների հետ կապված օրակարգային հարցերի քննարկման և լուծման ժամանակային հավասարակշռության, խորհրդարանի բազմաբնույթ գործառույթների կենսագործման համաչափության և, ի վերջո, բնականոն գործունեության ապահովմանը, ինչը որպես հետապնդվող իրավաչափ նպատակ՝ կոչված է նախադրյալներ ստեղծելու դրա իրավասության բոլոր տարրերի հավասարակշռված կենսագործման համար, և կարևոր նշանակություն ունի խորհրդարանի իրավասության բոլոր տարրերը և դրանցից յուրաքանչյուրին համապատասխանող ընթացակարգերը Սահմանադրությամբ և օրենքներով, ինչպես նաև օրակարգով սահմանված ժամկետում արդյունավետ իրականացնելու համար:

4.6. Սահմանադրական դատարանն ուշադրություն է հրավիրում նաև այն հանգամանքին, որ խորհրդարանական վերահսկողության որոշակի ձևերի քանակական սահմանափակումների սահմանադրականության գնահատումը պետք է կատարվի նաև գործադիր իշխանության և դրա բարձրագույն մարմնի սահմանադրական առաքելության և լիազորությունները պատշաճ ու արդյունավետ իրականացնելու պարտականության կատարման համատեքստում:

Սահմանադրական դատարանը, ընդգծելով ժողովրդավարության սկզբունքից բխող արդյունավետ խորհրդարանական վերահսկողության և դրա իրականացման գործում հատկապես խորհրդարանական փոքրամասնության դերի կարևորությունը, միևնույն ժամանակ գտնում է, որ խորհրդարանական վերահսկողությունը չի կարող դիտարկվել որպես

գործադիր իշխանության նկատմամբ անսահմանափակ հնարավորություն: Գործադիր իշխանության նկատմամբ Ազգային ժողովի՝ զանազան գործիքների միջոցով վերահսկողություն իրականացնելու սահմանադրական իրավադրույթները չեն կարող մեկնաբանվել իբրև գործադիր իշխանության գործունեության նկատմամբ **Ազգային ժողովի բացարձակ վերահսկողության հնարավորություն**¹ խաթարելով իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սահմանադրական սկզբունքը:

Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական հայեցակարգից բխում են հանրային շահին հասնելու համար պետական մարմինների միջև օրինական և կառուցողական համագործակցության, տարբեր ուժերին պատկանող պետական կառույցների (ինստիտուտների) միջև փոխադարձ հարգանքի, ինչպես նաև նրանց միջև պատշաճ հավասարակշռության և փոխադարձ վերահսկողության հրամայական պահանջները¹:

Հետևաբար՝ խորհրդարանական վերահսկողությունը և դրա իրականացման ձևերն իրենց բնույթով ու ընթացակարգային առանձնահատկություններով, մի կողմից՝ պետք է ունակ լինեն ապահովել ժողովրդավարական խորհրդարանի կողմից իրականացվող վերահսկողության արդյունավետությունը, դրա գործառույթների ու իրավասության հավասարակշռված իրագործումը, մյուս կողմից՝ հաշվի առնելով իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքը՝ չպետք է խոչընդոտեն գործադիր իշխանությանը՝ իր սահմանադրական առաքելությունն ու լիազորությունները պատշաճ իրականացնելու պարտականության կատարումը: **Հետևաբար՝ խորհրդարանական վերահսկողության իրականացման և գործադիր մարմինների բնականոն ու անխաթար գործելու կարողության ապահովման միջև ողջամիտ հավասարակշռության ապահովումը՝ տարաբնույթ միջոցների, ներառյալ՝ խնդրո առարկա սահմանափակումների կիրառմամբ, սահմանադրական անհրաժեշտություն է:**

Սահմանադրական դատարանը գտնում է, որ անկախ Սահմանադրական օրենքով խմբակցության՝ հարցապնդումներ ներկայացնելու իրավունքի քանակական սահմանափակման առկայությունից՝ դրա կիրառման արդյունքում վրա հասնող հետևանքներից, խորհրդարանական վերահսկողության իրականացման և գործադիր մարմինների բնականոն գործելու կարողության ապահովման միջև ողջամիտ հավասարակշռության ապահովման պահանջը

¹ Տե՛ս Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի՝ (Վենետիկի հանձնաժողով) Ժողովրդավարությունում խորհրդարանական մեծամասնության և ընդդիմության հարաբերության վերաբերյալ CDL-AD(2019)015 չափորոշիչներ (ստուգաթերթ), կետ 24, հասանելի է հետևյալ հղումով՝ [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2019\)015-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2019)015-e), վերջին մուտք՝ 07.06.2022 թ.:

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ 3(107)2022

կենսագործված է վարչապետին անվստահություն հայտնելու, հարցապնդումների իրավունքը սահմանող սահմանադրական նորմերում այն իմաստով, որ վարչապետին անվստահություն հայտնելու առաջարկ ներկայացնելու հնարավորությունը սահմանափակված է հենց սահմանադրի կողմից: Մասնավորապես՝ անկախ հարցապնդումների գործադրման քանակից՝ դրա քննարկման արդյունքում չի կարող բարձրացվել վարչապետին անվստահություն հայտնելու մասին հարցը նրա նշանակումից ոչ շուտ, քան մեկ տարի հետո, արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ, ինչպես նաև անվստահություն հայտնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը չընդունվելու դեպքում ոչ շուտ, քան վեց ամիս հետո: Վարչապետին անվստահություն հայտնելու մասին հարցի բարձրացման սահմանադրական արգելքների դեպքում, փաստորեն, այն խնդիրը, որ կարող էր հիմք հանդիսանալ հարցապնդման համար, ըստ էության, կարող է բարձրացվել խորհրդարանական վերահսկողության այլ ձևերի կիրառմամբ: Մյուս կողմից՝ չկա որևէ իրավական արգելք, որ հարցապնդման իրավունքից օգտվի մեկ այլ խմբակցություն, որը նստաշրջանի ընթացքում չի սպառել իր այդ իրավունքը: Հետևաբար՝ այս առումով ևս Սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող կարգավորմամբ խմբակցության՝ հարցապնդումներ ներկայացնելու իրավունքի քանակական սահմանափակումը չի կարող խաթարել խորհրդարանական վերահսկողության գործիքի էությունը՝ պայմանավորված վարչապետին անվստահություն հայտնելու մասին հարցը բարձրացնելու սահմանադրական կարգավորումների բովանդակությամբ:

Այս առթիվ **Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը «Ժողովրդավարությունում խորհրդարանական մեծամասնության և ընդդիմության հարաբերության վերաբերյալ չափորոշիչներ» ստուգաթերթում**, անդրադառնալով հարցապնդումների ինստիտուտին, նշել է, որ «(...) Ընդդիմության անդամների ձեռքում ամենաուժեղ քաղաքական գործիքը հարցապնդման իրավունքն է (ուղեկցվում է քննարկմամբ), որը հաճախ կապված է անվստահություն հայտնելու իրավունքի հետ (ԵԽԽՎ բանաձև 1601 (2008 թ.), § 2.2.4): Հարցապնդումներին հաջորդում է քննարկում, որտեղ բոլոր քաղաքական խմբերն իրավունք ունեն մասնակցելու (CDL-AD(2009)025, § 37): Փոքրամասնություն կազմող պարզամավորների կողմից հարցապնդման իրավունքի չարաշահման ռիսկը նվազեցնելու նպատակով նման միջնորդությունների համար կարող է սահմանվել սահմանային պահանջ (պահանջում է, որ հարցապնդման հարցումները երաշխավորվեն պարզամավորների որակավորված փոքրամասնության կողմից): Վենետիկի հանձնաժողովը քննարկումների արհեստական սրման վրանագից խուսափելու նպատակով առաջարկել է տարանջատել հարցապնդման ընթացակարգը (որը կարող է հանգեցնել անվստահության քվեի) պարզ հարցումից (CDL-

INF(1996)006, էջ 11): Հնարավոր են նաև պատգամավորների և կառավարության անդամների միջև փոխգործակցության այլ ձևեր, հետևաբար՝ ընդդիմության անդամները կարող են հրավիրել կառավարության պաշտոնյաներին ներկայանալ համապատասխան հանձնաժողով՝ պատասխանելու նրանց հարցումներին: Կրկին, նման հարցերը կարող են պայմանավորված լինել հանձնաժողովի նախագահի հավանությամբ կամ պահանջել որակյալ փոքրամասնության համաձայնությունը (կետ 127)»¹:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ խորհրդարանական ուղղակի վերահսկողության հիմնական ձևերի ընթացակարգերում կիրառվող սահմանափակումների հիմքում ընկած գործոնները պայմանավորված են նաև գործադիր իշխանության վրա փաստական ազդեցության հետևանքներով, մասնավորապես՝ անընդհատ լարվածությամբ, ինչը կարող է խաթարել դրա իրավասության բնականոն իրականացումը: Դրանով է պայմանավորված, մասնավորապես՝ պատգամավորների գրավոր և բանավոր հարցերի համեմատ հարցապնդումների իրավունքի սահմանափակումը, որը կարող է ավարտվել վարչապետին անվստահություն հայտնելու կամ Կառավարության առանձին անդամի հետագա պաշտոնավարման հարցը վարչապետի քննարկմանը ներկայացնելու առաջարկներով: Այս պարագայում առկա է վերահսկողական գործիքակազմի հավասարակշռված կիրառման ապահովման անհրաժեշտություն, ուստի՝ Ազգային ժողովը, օգտվելով իր գործունեությունն արդյունավետորեն իրացնելու համար Սահմանադրական օրենքով կարգավորումներ նախատեսելու, այդ թվում՝ Սահմանադրությամբ վերապահված վերահսկողական գործիքների իրացման պայմանները սահմանելու իրավունքից, քանակապես սահմանափակել է հարցապնդումներ ներկայացնելու՝ խմբակցությունների իրավունքը: Այդ սահմանափակումը, մի կողմից՝ միտված է Ազգային ժողովի գործունեության պատշաճ կազմակերպմանն ու իրավասության արդյունավետ կատարումն ապահովելուն, մյուս կողմից՝ նպաստում է նաև Կառավարության բնականոն գործունեության ապահովմանը:

Միաժամանակ, ինչպես նշվեց՝ սեփական գործունեության կարգավորումներ սահմանելու՝ Ազգային ժողովի հայեցողական հնարավորությունները բացարձակ չեն. դրանք գտնվում են Սահմանադրությամբ նախանշված շրջանակներում, պետք է ունենան սահմանադրական արդարացում և հետապնդեն սահմանադրական համարժեք նպատակներ: Հետևաբար՝ վերահսկողության ձևերի մշտական նվազագույն քանակական սահմանափակումները որոշակի իրավիճակներում կարող են վերանայվել, որպեսզի կոնկրետ իրավիճակում չխոչընդոտեն խորհրդարանական վերա-

¹ Հասանելի է հետևյալ հղումով՝ [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2019\)015-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2019)015-e)

հսկողության արդյունավետ իրականացումը՝ խաթարելով խորհրդարանականության բուն էությունը:

Այսպիսով, հաշվի առնելով գործող իրավակարգավորումներով հարցապնդման ինստիտուտի էությունը և ընթացակարգային ու այլ առանձնահատկությունները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրական օրենքով խմբակցությունների՝ հարցապնդման իրավունքի իրացման քանակական սահմանափակումները սահմանադրորեն ինքնին արգելելի չեն և, մի կողմից՝ ապահովում են այս գործիքի կիրառման արդյունավետությունը՝ պահպանելով իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական սկզբունքը, մյուս կողմից՝ երաշխավորում են օրենսդիր ու գործադիր մարմինների բնականոն գործունեության և սահմանադրական առաքելության անխափան իրականացումը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 170-րդ հոդվածը, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 121-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:
2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

11 հոկտեմբեր 2022 թվականի
ՍԴՈ-1666

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի «ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ
ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԱԶԳԱՅԻՆ
ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ
121-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ ՍԴՈ-1666
ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, 2022 թվականի հոկտեմբերի 11-ին դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 121-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, ՍԴՈ-1666 որոշմամբ **Ո Ր Ո Շ Ե Լ է**։

«1. «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 121-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը: (...):»:

Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասը՝ ներկայացնում եմ հատուկ կարծիք Սահմանադրական դատարանի 2022 թվականի հոկտեմբերի 11-ի ՍԴՈ-1666 որոշման (այսուհետ՝ ՍԴՈ-1666 որոշում) պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ Սահմանադրական դատարանի դատավորների մեծամասնության մոտեցումներից տարբերվող հետևյալ դիրքորոշումները.

1. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի փաստական հանգամանքները Սահմանադրական դատարանը պարզում է ի պաշտոնե, իսկ նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Սահմանադրական դատարանը կաշկանդված չէ սահմանադրական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, բացատրություններով, միջնորդություններով, առաջարկություններով և առարկություններով և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱՅԵ ◆ 3(107)/2022

Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1666 որոշման 3-րդ կետում սահմանադրաիրավական վեճի լուծման համար պարզման ենթակա հանգամանքների շրջանակում անդրադարձել է, մասնավորապես, այն հարցադրմանը, թե արդյո՞ք Ազգային ժողովի խմբակցության՝ Կառավարության անդամներին հարցապնդումներով դիմելու իրավունքի քանակական սահմանափակման նախատեսումը Սահմանադրական օրենքով հետապնդում է իրավաչափ նպատակներ և համապատասխանում է Սահմանադրության 113-րդ հոդվածին:

Սակայն սույն գործով բարձրացված սահմանադրական վեճի լուծման նպատակով, կարծում եմ՝ առանցքային կարևորություն պետք է ունենար սահմանադրաիրավական այնպիսի հիմնահարցերի առաջադրումը, որպիսիք են՝

ա) Ազգային ժողովի խմբակցության՝ որպես Ազգային ժողովի մարմնի սահմանադրաիրավական կարգավիճակի առանձնահատկությունների գնահատումը (Կանոնակարգ, հոդվ. 2, մաս 2),

բ) գործադիր իշխանության նկատմամբ Ազգային ժողովի վերահսկողության համատեքստում խմբակցությունների հարցապնդումների պատասխանների քննարկման սահմանադրաիրավական ու ինստիտուցիոնալ նշանակության հարցերի հետազոտումը,

գ) գրավոր հարցապնդումով Կառավարության անդամներին մեկ նստաշրջանի ընթացքում խմբակցությունների պարբերականության մասով դիմելու իրավունքի սահմանափակման անհրաժեշտության պարզումը, թե որքանո՞վ է արդարացված Ազգային ժողովի կողմից՝ իր իսկ քաղաքական կամքի ձևավորմանը նպաստող, և օրենսդրական նախաձեռնության իրավունքով օժտված մարմնի՝ Ազգային ժողովի խմբակցության լիազորությունների որևէ ձևով սահմանափակումն ի՞նչ նպատակ պետք է հետապնդի հատկապես խորհրդարանական կառավարման համակարգի պայմաններում:

2. Գործադիր իշխանության նկատմամբ Ազգային ժողովի վերահսկողության ձևերի արդյունավետ իրականացման շրջանակում հերթական նստաշրջանի՝ նիստերի շաբաթվա ընթացքում գումարվող նիստերից մեկում Կառավարության անդամները պատասխանում են պատգամավորների բանավոր և գրավոր հարցերին (Սահմանադրության 112-րդ հոդվ.), կամ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի պահանջով նույնպես հերթական նստաշրջանի՝ նիստերի շաբաթվա ընթացքում գումարվող նիստերից մեկում անցկացվում են քննարկումներ հասարակական հետաքրքրություններ կայացնող հրատապ թեմայով (Սահմանադրության 114-րդ հոդվ.):

Սահմանադրության հիշյալ իրավակարգավորումներն իրենց ընթացակարգային բովանդակությամբ որոշակիացվել են «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ազգային ժողովի կանոնակարգ) 119 և 120-րդ հոդվածներում:

Միաժամանակ, Սահմանադրության 113-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին համապատասխան՝ խմբակցությունների հարցադրումների պատասխանները ներկայացվում են Ազգային ժողովի նիստում, և այդ նիստում պատասխանները քննարկվում են խմբակցության առաջարկությամբ:

Մինչդեռ, չժխտելով խմբակցության հարցապնդման իրավունքի իրականացման ընթացակարգերն Ազգային ժողովի կանոնակարգով և սահմանելու անհրաժեշտությունը (Ազգային ժողովի կանոնակարգ, հոդվ. 121)՝ այդուհանդերձ, կարևոր է արձանագրել, որ օրենսդիրը խմբակցությունների հարցապնդման հետ կապված հարաբերությունները կարգավորելիս առաջնորդվել է այն սկզբունքով, որ եթե նույն խմբակցությունը հերթական նստաշրջանի ընթացքում Կառավարության անդամներին հարցապնդումով կարող է դիմել ոչ ավելի, քան մեկ անգամ, այն դեպքում, երբ Կառավարության անդամներին գրավոր և բանավոր հարցերով դիմելու առումով հերթական նստաշրջանի կամ այդ նստաշրջանի նիստերի շաբաթվա ընթացքում գումարվող նիստի շրջանակում որևէ քանակային սահմանափակման մասին խոսք չի կարող լինել:

Այնուամենայնիվ, գործադիր իշխանության նկատմամբ Ազգային ժողովի արդյունավետ վերահսկողության նշանակությամբ պայմանավորված՝ անհրաժեշտ է հաշվի առնել՝ թեև իրավաչափ է սահմանադրական այն պահանջը, որ Ազգային ժողովը, Սահմանադրությունից բացի, գործում է իր կանոնակարգին համապատասխան, որով որոշակի հայեցողություն է դրսևորում սեփական գործունեության իրականացման կարգը սահմանելիս, այնուամենայնիվ, Սահմանադրության 113-րդ հոդվածի առանձին նորմերի համալիր վերլուծությունից կարելի է բխեցնել հետևյալը.

ա) խմբակցության հարցապնդումն Ազգային ժողովի կողմից Կառավարության առանձին անդամի, այդ թվում՝ վարչապետի գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացման ձև է,

բ) խմբակցության հարցապնդման իրավունքն իրացվում է Կառավարության անդամի կողմից այդ հարցապնդմանը Սահմանադրությամբ նախատեսված ժամկետում պատասխան ներկայացնելու միջոցով,

գ) Ազգային ժողովի նիստում ներկայացվում է հարցապնդման պատասխանը, և այդ նիստում հարցապնդման պատասխանը կարող է քննարկվել միայն խմբակցության առաջարկությամբ,

դ) հարցապնդման պատասխանի քննարկման արդյունքով Ազգային ժողովը կարող է առաջարկել վարչապետին քննարկել Կառավարության առանձին անդամի հետագա պաշտոնավարման հարցը,

ե) հարցապնդման պատասխանի քննարկման արդյունքով Սահմանադրությամբ սահմանված կարգով վարչապետին անվստահություն հայտնելու առաջարկ կարող է ներկայացվել պատգամավորների ընդհանուր թվի մեկ երրորդի կողմից:

Միաժամանակ, նույն սահմանադրական կարգավորումների շրջանակում, կարծում եմ, որ Ազգային ժողովի կանոնակարգով սահմանվել են, մի դեպքում՝ սահմանադրական նորմի բովանդակային նշանակությունը լրացնող, իսկ մեկ այլ դեպքում՝ այդ նորմի բովանդակային նշանակությունից տարբերվող իրավակարգավորումներ: Այսպես՝ Սահմանադրության 113-րդ հոդվածի կարգավորումների համատեքստում Ազգային ժողովի կանոնակարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը սահմանում է, որ Ազգային ժողովի խորհուրդը հաստատում է Ազգային ժողովի հերթական նստաշրջանների և նիստերի օրակարգերի նախագծերը, իսկ նույն օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ Ազգային ժողովի հերթական նիստերի ընթացքում օրակարգային հարցերի քննարկումն ընդհատվում է յուրաքանչյուր հերթական նիստերի չորեքշաբթի օրվա երրորդ հիմնական նիստում, որի ընթացքում ներկայացվում և կարող են քննարկվել խմբակցությունների հարցապնդումների պատասխանները:

Հիշյալ կարգավորումների մասով անհրաժեշտ է նշել, որ խմբակցության կողմից կառավարության անդամներին հարցապնդումներով դիմելու իրավունքի պարբերականության մասով սահմանափակումներ սահմանող իրավակարգավորումներն արդեն իսկ նախատեսում են որոշակի պահանջներ, որոնցով պայմանավորված՝ խմբակցությունների հարցադրման՝ որպես վերահսկողության ձևի կիրառումն ուղղվում է ոչ միայն Ազգային ժողովի բնականոն գործունեության արդյունավետ իրականացմանը, այլև փոխկապակցվում իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական սկզբունքի ու դրա նշանակության պահպանման հետ:

Սակայն Ազգային ժողովի կանոնակարգի վիճելի իրավակարգավորումներում, կարծում եմ, առկա են սահմանադրական հիշյալ նորմի բովանդակային նշանակությունից տարբերվող կարգավորումներ, մասնավորապես՝ ներկայացվածի համատեքստում կարելի է նշել այն, որ նույն հերթական նստաշրջանի ընթացքում միևնույն խմբակցությունը հարցապնդումով Կառավարության անդամներին կարող է դիմել մեկ անգամ (հոդվ. 121, մաս 2), կամ հերթական նստաշրջանում գումարվող յուրաքանչյուր շաբաթվա հերթական նիստերում կարող է ներկայացվել և քննարկվել մեկ հարցապնդման պատասխան (հոդվ. 121, մաս 6), կամ հարցապնդման քննարկման տևողությունը 90 րոպե է (հոդվ. 121, մաս 12) և այլն:

3. Միաժամանակ, կարևորելով գործադիր իշխանության նկատմամբ Ազգային ժողովի կողմից արդյունավետ վերահսկողության իրականացման անհրաժեշտությունը՝ անհրաժեշտ է նկատել, որ սահմանադրական այն պահանջը, որ հարցապնդման պատասխանի քննարկման արդյունքով, մի դեպքում՝ Ազգային ժողովը կարող է որոշում կայացնել՝ առաջարկությամբ դիմել վարչապետին՝ քննարկելու Կառավարության առանձին անդամի պաշ-

տոնավարման հարցը, իսկ մեկ այլ դեպքում՝ պատգամավորների ընդհանուր թվի մեկ երրորդը Սահմանադրությամբ սահմանված կարգով կարող է ներկայացնել վարչապետին անվստահություն հայտնելու առաջարկ, այնուամենայնիվ, այդպիսի քննարկումների արդյունքները թեև ունեն որոշակի իրավաբանական բնույթ, այդ թվում՝ ճանաչելով իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի կամ հանգամանքների ինչպես առկայությունը, այնպես էլ բացակայությունը, այդուհանդերձ, այդ արդյունքների սահմանադրաիրավական գնահատականը տրվում է կա՛մ վարչապետի կողմից՝ քննարկելու Կառավարության առանձին անդամի պաշտոնավարման հարցը, կա՛մ պատգամավորների ընդհանուր թվի մեկ երրորդի կողմից՝ վարչապետին անվստահություն հայտնելու առաջարկ նախաձեռնելու միջոցով:

Հետևաբար՝ Ազգային ժողովի նիստում հարցապնդումների պատասխանների քննարկման արդյունքների իրավական հետևանքների առումով ևս, կարծում եմ, որ խորհրդարանական կառավարման համակարգի պայմաններում Ազգային ժողովի քաղաքական կամքի ձևավորմանը նպաստող մարմնի՝ Ազգային ժողովի խմբակցության՝ հարցապնդում ներկայացնելու իրավունքը որևէ ձևով սահմանափակելն արդարացված չէ՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական սկզբունքի պահպանման և Ազգային ժողովի բնականոն գործունեության ապահովման տեսանկյունից:

Այսպիսով, սահմանադրական վեճի համատեքստում ընդհանրացնելով սահմանադրական հիշյալ կարգավորումների համակարգային վերլուծության արդյունքները՝ կարծում եմ, որ Ազգային ժողովի խմբակցության կողմից Կառավարության անդամներին հարցապնդումներով դիմելու իրավունքի պարբերականության մասով Ազգային ժողովի կանոնակարգի՝ սահմանափակում սահմանող «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 121-րդ հոդվածի 2-րդ և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված՝ նույն հոդվածի 6-րդ և 12-րդ մասերը խնդրահարույց են, ինչը նաև նշանակում է, որ վիճարկվող օրենքի համապատասխան դրույթները համակարգման ու հստակեցման կարիք ունեն:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԴԱՏԱՎՈՐ**

Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ

«21» հոկտեմբերի 2022թ.



**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆՈՒՄ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է
ԵՐԵՎԱՆՈՒՄ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ՂԵԿՎԱՐԻՆ**



2022 թվականի օգոստոսի 4-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի ղեկավար Մարտինա Շմիդտին:

Սահմանադրական դատարանի նախագահը կարևորել է Հայաստան-Եվրոպայի խորհուրդ 2019-2022 թվականների «Գործողությունների ծրագիրը»՝ նշելով, որ Եվրոպայի խորհուրդը Սահմանադրական դատարանի առանցքային միջազգային գործընկերներից է, և վերջին մեկ տարվա ընթացքում կողմերի միջև ձևավորվել է որակապես նոր, օրինակելի ու փոխադարձաբար արդյունավետ համագործակցություն:

Իր հերթին, Եվրոպայի խորհրդի գրասենյակի ղեկավար Մարտինա Շմիդտը շնորհակալություն է հայտնել Սահմանադրական դատարանի նախագահին ձևավորված արդյունավետ ու սերտ գործընկերության

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
◆ 3(107)/2022

համար: Եվրոպայի խորհրդի գրասենյակի ղեկավարը ողջունել է Սահմանադրական դատարանի կողմից ներկայումս իրականացվող ներքին ինստիտուցիոնալ բարեփոխումները՝ հավելելով, որ Եվրոպայի խորհուրդը շարունակելու է օժանդակել Սահմանադրական դատարանին այդ ուղղությամբ:

Զրուցակիցները երկուստեք կարևորել են նմանատիպ աշխատանքային հանդիպումների կազմակերպումը և վերահաստատել իրենց լիարժեք հանձնառությունը՝ շարունակելու իրավունքի գերակայության, ժողովրդավարության, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության ու խթանման ասպարեզում համագործակցությունը:

ԴԱՏԱՎՈՐ ՎԱԿԵ ԳՐԻԳՈՐՅԱՆՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՐԱՎԱՖՐԻԿՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹՂ ԴԱՏԱՎՈՐ, ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ԱԼԲԻ ԶԱՔՍԻՆ



ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՎՈՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ 3(107)2022

2022 թվականի սեպտեմբերի 5-ին Սահմանադրական դատարանի դատավոր Վահե Գրիգորյանն ընդունել է Հարավաֆրիկյան Հանրապետության սահմանադրական դատարանի պաշտոնաթող դատավոր, ճանաչված իրավապաշտպան, գրող և հրապարակախոս Ալբի Զաքսին, որը մասնավոր այցով գտնվում էր Հայաստանի Հանրապետությունում:

Ողջունելով հյուրին՝ Վահե Գրիգորյանը շնորհակալություն է հայտնել Ալբի Զաքսին Բարձր դատարանի հանդեպ ցուցաբերված հետաքրքրության և այցելության համար՝ ընդգծելով նմանօրինակ անմիջական շփումների կարևորությունը սահմանադրական արդարադատության ոլորտում լավագույն փորձի փոխանակման համար: Նա նշել է, որ դատավոր Զաքսի՝ իր հայրենիքում ժողովրդավարության, մարդու ազատության և արժանապատվության համար մղած բեղուն, բայց վտանգավոր պայքարը, ինչպես նաև նրա դատական մեկնաբանությունները մարդու քաղաքական ազատությունների սահմանադրական դրույթների վերաբերյալ ներշնչանքի աղբյուր են եղել Հարավաֆրիկայի Հանրապետության սահմաններից դուրս շատ իրավապաշտպանների և դատավորների համար: Իր հերթին դատավոր Զաքսը, շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության և բարձր գնահատականի համար, նշել է, որ մեծ պատիվ է

գտնվել Հայաստանում և հյուրընկալվել Հանրապետության Բարձր դատարանում:

Հանդիպման ընթացքում դատավորներ Վահե Գրիգորյանն ու Ալբի Զաքսն անդրադարձել են սահմանադրական ժողովրդավարության պաշտպանության և իրավունքի գերակայության ապահովման ոլորտում արդի զարգացումներին և մարտահրավերներին, ինչպես նաև մտքեր են փոխանակել այս ոլորտում ազգային բարձր դատարանների և միջազգային կազմակերպությունների փոխգործակցությանը վերաբերող մի շարք հարցերի շուրջ:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ



2022 թվականի սեպտեմբերի 19-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի ղեկավար Մարտինա Շմիդտին և Եվրոպայի խորհրդի իրավական բարեփոխումների և մարդու իրավունքների հարցերով համագործակցության ծրագրերի վարչության փոխտնօրեն Լիլիթ Դանեղյանին:

Ողջունելով հյուրերին՝ Արման Դիլանյանը կարևորել է Հայաստան-Եվրոպայի խորհուրդ 2019-2022 թվականների «Գործողությունների ծրագիրը»՝ շնորհակալություն հայտնելով դրա շրջանակներում Հայաստանի արդարադատական համակարգին Եվրոպայի խորհրդի կողմից ցուցաբերված նշակալի աջակցության համար: Իրենց հերթին Եվրոպայի խորհրդի ներկայացուցիչները վերահաստատել են կազմակերպության պատրաստակամությունը՝ շարունակելու համագործակցությունը Բարձր դատարանի հետ իրավունքի գերակայության, ժողովրդավարական արժեքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության ոլորտներում:

Անդրադառնալով Ադրբեջանի կողմից սեպտեմբերի 13-ին Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքի նկատմամբ սանձազերծված լայնածավալ ագրեսիային՝ Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը շեշտել է կողմերի միջև հավասարության նշան դնող հայտարարությունների անընդունելիությունը և կարևորել է միջազգային հանրության, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի ու դրա մասնագիտացված

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴԵՍՍՏՐԱԿՏ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ 3(107)2022

հաստատությունների կողմից Ադրբեջանի ագրեսիայի հստակ, միանշանակ ու հասցեական դատապարտումը:

Հանդիպման ընթացքում նաև երկուստեք կարևորվել է Սահմանադրական դատարանի և Եվրոպայի խորհրդի միջև ռազմավարական երկխոսության շարունակական զարգացումը փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բոլոր ուղղություններով:

ՄԴ ՆԱԽԱԳԱՀԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ Է ՀՂԵԼ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀԻՆ



Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը շնորհավորական ուղերձ է հղել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նորընտիր նախագահ Շիոֆրա Օ'Լիրիին, որն այս պաշտոնում ընտրվել էր սեպտեմբերի 19-ին: Շնորհավորական ուղերձում մասնավորապես ասված է.

«Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի և անձամբ իմ անունից ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախագահի պաշտոնում ընտրվելու առթիվ:

Վերահաստատում եմ մեր հանձնառությունը՝ շարունակելու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ գործակցությունն իրավունքի գերակայության, ժողովրդավարության, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության ասպարեզում: Վստահ եմ, որ մեր փոխգործակցության ամրապնդումը կարող է մեծապես նպաստել նաև Հայաստանում արդարադատության որակի բարձրացմանը, իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանը և եվրոպական կոնվենցիայի ոգուն ու չափանիշներին համահունչ՝ մարդու հիմնարար իրավունքների երաշխավորման ապահովմանը»:

Շիոֆրա Օ'Լիրին 2015 թվականի հուլիսի 2-ից Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավոր է Իռլանդիայի Հանրապետության

ՍԱԳՄԱՆԱՐԴՈՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 3(107)2022

անունից: 2020-2022 թվականներին դատավոր Օ՛Լիրին եղել է ՄԻԵԴ սեկցիայի նախագահ և ՄԻԵԴ փոխնախագահ: Դատավոր Օ՛Լիրին կստանձնի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախագահի պաշտոնը ս.թ. նոյեմբերի 1-ից:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀՈՒՇԱԳԻՐ

2022 թվականի սեպտեմբերի 29-ին ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմի և ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի միջև կնքվել է համագործակցության հուշագիր իրավագիտության բնագավառում գիտահետազոտական համագործակցության զարգացման վերաբերյալ:

Նոր համագործակցության հուշագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել գիտահետազոտական սեմինարների, քննարկումների, թեմատիկ դասախոսությունների, կլոր-սեղան հանդիպումների ու գիտաժողովների համատեղ կազմակերպում: Սահմանադրական դատարանի աշխատակազմը նաև կցուցաբերի օժանդակություն ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտներին, հայցորդներին, դոկտորանտներին և գիտաշխատողներին իրենց հետազոտական աշխատանքների իրականացման համար՝ տրամադրելով մասնագիտական արդի գրականություն և անհրաժեշտ խորհրդատվություն:

3(107)2022

◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

◆ ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎՎԱՆ ՂԱՏԱՐՈՎՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴ

ՍԵՐՆԴԻ ՀԵՏ

ԴԱՏԱՎՈՐ ՎԱՇԵ ԳՐԻԳՈՐՅԱՆՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ «ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ



2022 թվականի օգոստոսի 31-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից կազմակերպված «Ամառային դպրոց» ծրագրի մասնակիցները ճանաչողական այց են կատարել Սահմանադրական դատարան:

Այցի շրջանակներում «Ամառային դպրոց» ծրագրի մասնակիցներին ընդունել է Սահմանադրական դատարանի դատավոր Վահե Գրիգորյանը, որը մասնակիցներին ներկայացրել է Հայաստանի սահմանադրական ժողովրդավարության պայմաններում Բարձր դատարանի գործառնությունները, լիազորությունների շրջանակը, դերն ու նշանակությունը պետական կառավարման համակարգում: «Ամառային դպրոց» ծրագրի մասնակիցների խնդրանքով դատավոր Վահե Գրիգորյանն անդրադարձել է նաև Սահմանադրական դատարանի դատավորների դերին, ընտրության կարգին և առաքելությանը:

Ճանաչողական այցի շրջանակներում աշակերտները շրջայց են կատարել Սահմանադրական դատարանի վարչական շենքում, եղել են գրադարանում ու ծանոթացել բազմալեզու մասնագիտական գրականության հավաքածուներին:

3(107)/2022

◆ ՍԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

◆ ՍԱՀՄԱՍՏԱՎՈՐՎԱՆ ԴԱՏԱՐԱՆ

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ**

**ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ
ՀԱՆԴԻՊՈՒՄԸ**



ՍԱԳՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐՈՎ
ՏԵՂԵԿԱԳԻՐ 3(107)2022

◆ **2022 թվականի հունիսի 29-ին** Ռուսաստանի Դաշնություն կատարած աշխատանքային այցի շրջանակում տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանի և Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանի նախագահ Վալերի Զորկինի հանդիպումը:

◆ Ողջունելով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահին՝ Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանի նախագահը շնորհակալություն է հայտնել այցի համար ու նշել, որ նմանօրինակ շփումները նոր ազդակ են հաղորդում միջդատարանական երկկողմ հարաբերություններին:

Արման Դիլանյանն իր հերթին շնորհակալություն է հայտնել Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանի նախագահին ցուցաբերած ջերմ ընդունելության համար ու կարևորել Հայաստանի և

Ռուսաստանի սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմինների միջև համագործակցության հետագա զարգացումը:

Հանդիպման ընթացքում կողմերն անդրադարձել են հայ-ռուսական միջդատարանական երկխոսությանը, ինչպես նաև մտքեր են փոխանակել եվրասիական տարածքում փոխշահավետ իրավական ծրագրերի իրականացման հնարավորությունների շուրջ, մասնավորապես՝ սահմանադրական արդարադատության, իրավական փորձի փոխանակման և դատական պրակտիկայի ուսումնասիրության բնագավառներում:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



3(107)2022



ՏԵՂԵԿԱԳԻՐ



ՍԱՀՄԱՆԱՂՈՂՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ

2022 թվականի հուլիսի 15-16-ը Դիլիջանում տեղի է ունեցել «Մարդու իրավունքների միջազգային չափանիշների կիրառությունը ներպետական իրավական համակարգում» խորագրով երկօրյա մասնագիտական աշխատաժողովը:

Մասնագիտական աշխատաժողովի ընթացքում անդրադարձ է կատարվել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին ու նախադեպերին, դրանց կիրառության առանձնահատկություններին ու արդի միտումներին, վերջին տասնամյակներում կոնվենցիոն մեխանիզմների զարգացմանը, ներպետական դատարանների և վերպետական դատարանների փոխհարաբերություններին (սուբսիդիարության սկզբունքի լույսի ներքո), ներպետական իրավական համակարգում մարդու իրավունքների միջազգային չափանիշների կարգավիճակին, տարածաշրջանային մասնագիտացված կազմակերպությունների դերին ու առաքելությանը, ինչպես նաև մտքեր են փոխանակվել հանրային դիսկուրսում դատավորի դերի հիմնահարցի շուրջ: Երկօրյա մասնագիտական աշխատաժողովին մասնակցել են Սահմանադրական դատարանի դատավորները և Բարձր դատարանի աշխատակազմի ներկայա-

ցուցիչները: Միջոցառման հիմնական բանախոսը Նիդերլանդների Թագավորության գերագույն դատարանի դատավոր, Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի անդամ Մարտին Քայերն էր:

Վերոնշյալ աշխատաժողովը կազմակերպվել էր Սահմանադրական դատարանի նախաձեռնությամբ՝ Հայաստանի Հանրապետությունում Նիդերլանդների Թագավորության դեսպանության կողմից ֆինանսավորվող և Եվրասիա համագործակցություն հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի հաղորդակցման ռազմավարության և մասնագիտական կարողությունների ընդլայնում» ծրագրի շրջանակներում:

ՀԱՅ-ՆԻԴԵՐԼԱՆԴԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՂ ԾՐԱԳՐԻ ԱՄՓՈՓԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ



2022 թվականի օգոստոսի 31-ին տեղի է ունեցել Սահմանադրական դատարանի նախաձեռնությամբ, Հայաստանի Հանրապետությունում Նիդերլանդների Թագավորության դեսպանության կողմից ֆինանսավորվող և Եվրասիա համագործակցություն հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի հաղորդակցման ռազմավարության և մասնագիտական կարողությունների ընդլայնում» մեկամյա ծրագրի ամփոփիչ միջոցառումը:

Իր ողջույնի խոսքում Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը կարևորել է նմանօրինակ ոլորտային ծրագրերի իրականացումը՝ արժևորելով միջազգային գործընկերների և քաղաքացիական հասարակության կառուցողական ներգրավվածությունը դատաիրավական ոլորտի բարեփոխումներում: Իր հերթին Հայաստանի Հանրապետությունում Նիդերլանդների Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Նիկոլաս Սխերմերսը ողջունել է Սահմանադրական դատարանում ընթացող ներքին ինստիտուցիոնալ բարեփոխումները և դեսպանության անունից պատրաստակամություն է հայտնել հետագայում ևս աջակցություն ցուցաբերել Բարձր դատարանի նախաձեռնություններին ու ծրագրերին:

Այնուհետև Եվրասիա համագործակցություն հիմնադրամի ներկայացուցիչները ներկայացրել են «Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի հաղորդակցման ռազմավարության և մասնագիտական կարողությունների ընդլայնում» ծրագրային վերջնարդյունքներն ու ամփոփիչ առաջարկությունների փաթեթը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ◆ 3(107)2022

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության
20 դեկտեմբերի 1996թ. կոլեգիայի թիվ 372/2-14 որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ, Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ֆ. ԹՈՒՅԱՆ,
Ա. ԹՈՒՆՅԱՆ, Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ, Հ. ՆԱԶԱՐՅԱՆ, Է.
ՇԱԹԻՐՅԱՆ, Ա. ՎԱՂԱՐՇՅԱՆ

Գլխավոր խմբագիր՝

Ի.գ.թ., դոցենտ Ա. Փխրիկյան

Խմբագիր՝

Ս. Խաչատրյան

Ստորագրված է տպագրության՝ 15.11.2022թ.

Դասիչ՝ 77754

Գրաչափը 70X100 1/16

Տպաքանակը՝ 100 օրինակ

Խմբագրության հասցեն՝

Երևան, Բաղրամյան 10

Հեռախոս՝ 011-58-81-81 (189)

E-mail: armlaw@concourt.am

<http://www.concourt.am>

Вестник Конституционного Суда Республики Армения N 3(107)2022

Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia N 3(107)2022

Bulletin de la Cour constitutionnelle de la République d'Arménie N 3(107)2022